

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌ

ԵՐԵՎԱՆ • 2005

299

*The book was made possible by
"Armen and Bersabe Jerejian Foundation", Inc. USA*

*Գիրքը տպագրվում է մեկնաստությամբ
«Արմեն և Բերսաբե Ճերեճյան հիմնադրանի», ԱՄՆ*

IN MEMORIAM ACAD. N. MARR

Editor P. MURADIAN

3554

Y E R E V A N 2 0 0 5



541

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

АКАДЕМИК
Н. Я. МАРР

К 140-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ
И 70-ЛЕТИЮ КОНЧИНЫ УЧЕНОГО

Под. редакцией П. М. МУРАДЯНА



Е Р Е В А Н 2 0 0 5

Հ Հ Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌ

ԾՆՆԴՅԱՆ 140 ԵՎ ՄԱՅՎԱՆ 70-ԱՄՅԱԿՆԵՐԻ
ՏԱՐԵԼԻՑԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Խմբագրությունը՝ Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻ



Ե Ր Ե Վ Ա Ն 2 0 0 5

*Տպագրվում է Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ*

ՀՏԴ 809.198.1:93/99(093)
ԳՄԴ 81.27+63.2
Ա 371

Ա 371 ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌ: ԾՆՆԴՅԱՆ 140 ԵՎ ՄԱՅՎԱՆ 70-ԱՄՅԱԿՆԵՐԻ
ՏԱՐԵԼԻՑԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ: Խմբագրությամբ՝ Պ. Ս. Մուրադյանի: Եր.:
«Զանգակ-97», 2005.- 220 էջ:

Ժողովածուն ամփոփում է հայագիտության և արևելագիտության վաստակաշատ
երախտավոր ակադ. Ն.Մառի ծննդյան 140 և մահվան 70-ամյա տարելիցներին
նվիրված Արևելագիտության ինստիտուտի հրավիրված գիտաժողովի (16-17
նոյեմբերի 2004 թ.) նյութերը՝ նրա գիտական հետաքրքրությունների շրջանակներին
պատշաճ լրացումներով:

Նախատեսված է արևելագետների և հայագետների լայն շրջանակի համար:

Ա 0503010000 2005 թ.
0003(01)-2005

ԳՄԴ 81.27+63.2

ISBN 99941-1-137-X

© Զեղինակներ, 2005 թ.



Անի քաղաք
15.8.18.

Մեծայարգ պարոն,

Շուտ և շատ ցանկալի է,
որ ձեր անգամ անախատու և անբաց-
փակ թղթերով հարցերուս թանջ թու
չ թողնե՛ք ինձ անտեսել ձեր
համախոհ շինարարու-
թյան ուղի: Դուրսիցս անտես
չե՛ք, ետևից և ինտերնացիո-
նալ, բայց ժամաց և ժամաց և
սխալ չտեսնե՛ք չար թղթերուս
և չհարցե՛ք ինձ — ինչու է,
որ ներդրումս չեմ և
չգտե՛մ ձեր անգամ պատասխան
չեմ անտեսել որ արդիւնք է
ի մեզ և շինարարու շին
անարարութեանը.

Կարգաւարտ Անի
Զ. Ման

Ավագ. Ն. Մառի նամակը 1915 թ. հրատարակված
«Զիբենի» ժողովածուի խմբագիր Համբարձու մ Առաքելյանին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պարույր Մուրադյան

Ավագ. Նիկողայոս Մառի ծննդյան 140 և մահվան 70—ամյա տարելիցը
1. Հանրաճանաչ գիտնականը 9
2. «Կովկասի մշակութային աշխարհի» ձևավորման պարբերաշրջաններն ու
առանձնահատկությունները 15

Աելիտա Դուլուխանյան

Հայոց միջնադարյան առակները Ն. Մառի հետազոտությամբ 20

Գագիկ Սարգսյան

Վիմական բնագրերի վերծանության և հրատարակության Ն. Մառի մշակած
սկզբունքները 27

Կարեն Իզբաշեան

Փաստոսի մականունը եղել, թե՞ դարձել է Բուզանդ 31

Կարեն Մաթևոսյան

Սամվել Անեցու հնագույն ձեռագիրը 37

Մանվել Ջուլայան

Հայոց պատմության հարցերը իտալացի դիվանագետ Պիետրո դելլա Վալեի
աշխատություններում 49

Գրիվեր Փարուլավա

Սրբախոսական գրականության ներածության խնդիրներ 54

Մարի-Աննա Շեվալիե

Կրոնա-ասպետական միաբանությունների ընկալումը՝ Արևելքի քրիստոնյաների
(հայերի և ասորիների) կողմից (XII դ. սկիզբ — XIV դ. սկիզբ) 59

Վազգեն Համբարձումյան

Հ. Օրբելու ներդրումը Մոկսի և առհասարակ հայերենի բարբառների գիտական
ուսումնասիրության մեջ 92

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Պարույր Մուրադյան

«Նարեկի» գիտական անդրանիկ հրատարակությունը (Կ. Պոլիս, 1774) 99

Лусик Степанян

Деяния Теклы (Перевод с древнеармянского, предисловие и комментарии) 119

Պ. Լ. Հովհաննիսյան
Նիկողայոս Ադոնցի անտիպ հուշերը ուսուցչապետ Նիկողայոս Մառի մասին 141

Օ. Մ. Фрейденберг
Гигантский творческий ум 157

ԷՋԵՐ Ն. ՄԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Н. Я. Мара
Исторический очерк грузинской церкви 167

ԱԿԱԳ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻ ԾՆՆԴՅԱՆ 140-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

1. ՀԱՆՐԱՃԱՆԱԶ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Ակազ. Նիկողայոս Մառի շոտլանդացի նախնիք, մասնավորապես Հայրը, հմուտ բուսապան-այդեզործ էր, որ և հրավիրվել էր Արևմտյան Վրաստան՝ գյուղատնտեսական նորամուծություններ կատարելու: Եվ հիրավի, որդու գնահատությամբ՝ «նա ստեղծել էր սուբտորդինակալան բուսատեսականների հսկայական այգի... Նա առաջինը Կովկասում թեյաթիի արմատավորման հաջող փորձ կատարեց Գուրիայում»: Բավական առաջացած տարիքում ճակատգրի բերմամբ նա հանդիպեց երիտասարդ մի վրացուհու, որը և 1864թ. դեկտեմբերի 25-ին ամուսնուն ուրախացրեց նոր ժառանգի՝ Նիկողայոս Հակոբի Մառի ծնունդով:

Որդին ութ տարեկան էր, երբ վախճանվեց ծերունի Հայրը, և մայր ու որդի, տուն ու տեղից զուրկ, ապագա գիտնականի խոսքերով ասած՝ «փաստորեն անտերունջ մնացին»: Սակայն հոր վայելած հեղինակությունն ու մեծրիտանական հպատակությունը նպաստեցին որդուն Քուլթախի դասական գիմնազիա ընդունել տալուն: Գիշերօթիկն ու զբքերը փոխարինեցին Հայրական տանն ու ծնողական գործվանքին: «Իմ ամեն մեկ արարքի համար ինձ կարող էին գիմնազիայից փողոց չպարտել՝ գայլի անձնագիր տալով, սակայն այդ բոլորը ինձ ներում էին, քանի որ այլ իրողություններից բացի՝ ինձ գնահատում էին լավ ձայնով երգեցողության և գիմնազիական համույթի մասնակցության համար (ես կլարնետ էի նվագում)»: «Այդ բոլորը» ասելով ապագա գիտնականը նկատի ունի լեզուներ սովորելու պատանու արտակարգ ընդունակությունները, մանավանդ՝ լատիներենն ու հին հունարենը: Վճռած լինելով հույն հեղինակներին կարդալ ընագրով, Մառը հրաժարվեց գիմնազիական ավարտական քննություններից, թեև ոսկե մեդալի թեկնածու էր, և գիմնազիայում մնաց մեկ տարի ևս: Այս տարիներին արդեն երկու հին լեզվից բացի, նա տիրապետում էր մի քանի այլ լեզուներին ևս՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, գրում էր վրացերեն բանաստեղծություններ, թարգմանություններ էր կատարում օտարալեզու ընագրերից, աշխույժ հետաքրքրություն էր ցուցաբերում արվեստի, լեզվաբանության և մասնավոր Վրաստանի քաղաքական կացության հանդեպ:

Լեզվի և մշակութի նկատմամբ ունեցած խորը հետաքրքրությունը նրան բերեց Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետ, ուր ընդունվեց իբրև կովկասյան թոշակավոր: Միաժամանակ պարագույն էր երեք գիտաճյուղով՝ կովկասագիտական (հայերեն և վրացերեն լեզուներ), արաբա-պարսկաթուրքագիտական և սեմագիտական (եբրայերեն, ասորերեն, արաբերեն): Այս կարգի ընդգրկման գրադուսները պահանջում էին բացառիկ աշխատունակություն, օժտվածություն, գիտություն հանդեպ անբեր հավատ ու նվիրում, որ և լիովին ունենր ուսանող Նիկողայոս Մառը: Ուսուցչապետներից ամեն մեկը կարող էր ակնկալել, թե համալսարանն ավարտելիս Մառը կպահվի իր գիտության մարզում հմտանալու: Սակայն արարագետ Վ.Իոզենը և երբայագետ Դ. Խվոլսոնը շուտով համոզվեցին, որ Մառը պարագույնները

պիտի շարունակի վրացագիտության կամ հայագիտության ամբիոնի գծով: Պարագաները թելագրեցին երկրորդը:

Երիտասարդ հետազոտողի առաջին իսկ հրապարակումները հիմնովին տարբերվում էին կովկասագետների նախորդ սերնդի աշխատություններից: Ն.Մառի հետազոտությունների հիմունքը կովկասում պատմա-մշակութային զարգացման միասնականության սեփական տեսությունն էր: Սկզբունքորեն այլ էին Ն.Մառի պատկերացումները հայագիտության խնդիրների հանդեպ: Նվրոպական հայագիտությունը հայկական աղբյուրներում հիմնականում Արևելքի այլևայլ երկրներին ու ժողովուրդներին վերաբերող տեղեկություններ էր փնտրում կամ հունարեն և ասորերեն բնագրերով կորած երկրի հին հայերեն թարգմանություններ: Բուն հայոց միջավայրում տեղի ունեցող մշակութային-մասնագրական պրոցեսները եկրոպացի հայագետներին քիչ էին զբաղեցնում, ասել է թե հայագիտության բուն խնդիրը շրջանցվում էր: Այս պարագան հարկադրեց Ն.Մառին 1899թ. մայիսի 23-ին իր պաշտպանած մագիստրոսական ատենախոսության ներածական խոսքը խորագրել «Հայագիտության խնդիրների հարցի շուրջ»: Այստեղ շարադրվում էին այն սկզբունքներն ու հիմնադրույթները, որոնք դրված էին նրա հայագիտական հետազոտությունների հիմունքում, մասնավորապես՝ եռահատոր «Ժողովածոյք սուսկաց Վարդանյա» հիմնարար աշխատությունը ներկայացնելիս: Ն.Մառի համոզմամբ «պատմական երկասիրությունների, ինչպես հայոց դպրության մյուս յուրահատուկ բնույթի երկերի ուսումնասիրությունը պետք է կատարվի նրանց փոխադարձ գրական հարաբերակցության հիմքի վրա և հայասարակ բերվի հայագիտության տեսանկյունով: Հին Հայաստանի ներաշխարհը բնավ կանգնած չլի հարթ մակերես չէ: Հայաստանն իր ներսում ապրել է բուռն կյանքով, որ զարմանալի է մեզ՝ արևմտասկզբայական սնամիտություն տարածած կարծիքը յուրացրածներին համար, թե արևելյան ժողովուրդները անշարժություն են մատուցում»:

Թարգմանական հուշարձանների ուսումնասիրությանն էր նվիրված գիտնականի դոկտորական ատենախոսությունը - «Հիպոդոտես, Մեկնություն երգ երգողի: Վրացերեն բնագիրը ըստ X դարի ձեռագրի, թարգմանված հայերենից» (1901թ.): Ն.Մառը ցույց տվեց հայկական և վրացական տարբերակներ ունեցող թարգմանական հուշարձանների հետազոտության կարևորությունը պատմա-մշակութային խնդիրներ քննարկելիս: Նա ի հայտ բերեց և առաջինը ուսումնասիրեց և հրատարակեց հունարենից հայերեն և հայերենից վրացերեն թարգմանված մի քանի հուշարձան, այլևս էինք խոսում ինքնուրույն հուշարձանների թարգմանության մասին՝ հատկապես վարքագրության բնագավառում:

Ի տարբերություն իրեն նախորդած շատերի, Մառը հետազոտողի հաջողությունը պայմանավորում էր մակերեսին չգտնվող նյութի հայտնաբերմամբ: Լեզվաբանության մարդու նա հաճախ գործ ունեի այնպիսի միավորների հետ, որոնք նույնիսկ արձանագրված չէին հեղինակավոր բառարաններում (նա առհասարակ անկարելի էր համարում բառարանների օգնությամբ լեզվաբանության մասին պարապելը), իսկ տեքստաբանությունը զբաղվելիս ելնում էր բուն ձեռագրից: Նրա հրատարակած բոլոր հայերեն, վրացերեն, հունարեն, ասորերեն բնագրերը ձեռագրական տարբեր հավաքածուներում հայտնաբերվել և շրջանառության մեջն էր դրվել իր պրպտումների նորհիվ:

Գիտական գործունեության վաղ շրջանում իսկ նա ճանապարհորդեց էջմիածին և զբաղվեց հայերեն ձեռագրերի քննությամբ, այցելեց Սևանի վանք և պատրաստեց տեղիս գրչագրերի նկարագրություն: Մեկ տասնամյակ անց

(1902թ.) Մառը հնագրական գիտաբանի մեկնեց Երուսաղեմ և այս Արևա: Այստեղ նա հետազոտում ու նկարագրում էր ինչպես վրացերեն, այնպես էլ մասամբ հայերեն և արաբերեն ձեռագրերը: Հենց այս գիտաբանի ընթացքում նա հայտնաբերեց և որոշ ժամանակ անց մասնագուցելի օրինակելիությամբ հրատարակեց երկու բացառիկ կարևորություն հուշարձան՝ Ազաթանգեղոսի արաբերեն խմբագրությունը և Գեորգի Մեհրաբի վրացերեն աշխատությունը: Բնագրագիտական քննությամբ նա պարզեց, որ Ազաթանգեղոսի արաբերենը մինչ այդ անծանոթ վարքային խմբագրություն է, թարգմանված հունարենից, իսկ վերջինս, թեև դեռ այն տարիներին չհայտնաբերված, զայիս է հայերենից: Բելգիացի հայագետ Ժ.Գարիտի հայտնաբերած հունարեն վարքային խմբագրությունը լիովին հաստատեց Ն.Մառի կռահումը: Ցավոք, այդ խմբագրության հայերեն բնագիրը դեռ չէր հայտնաբերված:

Սկզբնաղբյուրը ուսումնասիրելու Ն.Մառի հմտությունը պատկերացնելու լավագույն օրինակ է Գեորգի Մեհրաբի երկի հրատարակությունը: Վրաստանի և Հայաստանի պատմության այդ կարևորագույն սկզբնաղբյուրի հաղորդումները տեղորոշելու և մեկնարանելու համար նա ճանապարհորդեց Շավշք և Կղարջք մեկ առ մեկ ճշտելով հուշարձանները: Այդ ճանապարհորդության գրառումները պատկառելի հատոր են կազմում և ստուգապես այդուր են հիշյալ միավորների պատմության, պատմական աշխարհագրության, հնագիտության, ազգագրության ու բանահյուսության համար: Այս երկու հրատարակությունները (Ազաթանգեղոս և Մեհրաբ) բավական են, որպեսզի Նիկողայոս Մառը մնա կովկասագիտության և արևելյան բանասիրության դասական: Եվ սակայն Ն.Մառը այդ կարգի տասնյակ ուրիշ հատորներ ունի:

Ն.Մառի գիտական ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում վիմագրությանը վերաբերող աշխատությունները: Նրա «Նոր նյութեր հայոց վիմագրության» մենագրության հրատարակմամբ (Անի, Այսաման, Մրեն, Բագավան, Երվանդակերտ, Վերին Թալին, 1893թ.) հիմք դրվեց արձանագրությունների գիտական ուսումնասիրությանը: Ն.Մառը սահմանեց պատմական աղբյուրագիտության մի քանի սկզբունքորեն նոր պահանջներ. վերծանվող բնագրի բացարձակ նույնականությունը քարի վրա փորագրվածի հետ, ընթերցման փաստացիությունը, գրական լեզվից բառազանձային, ոճական ու քերականական բոլոր շեղումների արձանագրում, բնագրի աղբյուրագիտական քննություն, ժամանակագրության ճշտում, պատմական կարևորության սահմանում:

Վիմագրերի գիտանքի հրատարակությունը Ն.Մառը համարում էր հայագիտության առաջնահերթ խնդիրը, քանզի յուրաքանչյուր արձանագրության ավերմամբ գիտությունը կորցնում է ոչնչով չփոխարինվող սկզբնաղբյուր: Դիվանների կազմության գաղափարը պատկանում է նրան «Հայկական վիմագրության հուշարձաններ» վերատառությունում (չարքն այժմ շարունակվում է՝ հույժ անբավարար հաճախականություն): Մառը նշանակալի վաստակ ունի նաև ուրարտական վիմագրության բնագավառում. նրան ենք պարտական Դաշ-քեորիի, Մակվի, Ալաշկերտի, Վանի վիմագրերի վերծանություն-հրատարակություն համար: Դա ուրարտական նյութերի ժողովման և տեղական լեզուներին հարաբերելու առաջին շրջանն էր, մեկնարանություն արդյունավոր փորձերով:

Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետում, ուր սովորել ու աշխատում էր Ն.Մառը, հնագիտությանը չէին զբաղվում, չունեին նույնիսկ այդ բնույթի գործնական պարագայներ, սակայն Հայաստան կատարած առաջին իսկ այցելություններից Ն.Մառը համոզվեց, որ առանց նյութական մշակույթի ճա-

նաչման (պաշտամունքային ու քաղաքացիական կառույցներ, արհեստագործական, կենցաղային առարկաներ և այլն) անկարելի է վերականգնել հասարակական կյանքի մանրակերտը: Դպրոցներն ու արվեստը, բանահյուսությունը է են կարող ճշմարիտ ու իրավական գնահատության արժանանալ առանց պատմական իրողության պարզաբանման: Ուստի Մաուր իր հիմնական հնագիտական ընտրությունը կենտրոնացրեց Բազրատունիների դարաշրջանի մայրաքաղաքի Անիի շուրջ, ուր Արևելքն ու Արևմուտքը, քրիստոնեական ու մուսուլմանական աշխարհները հանդիպում էին միմյանց, ուր տեղի էին ունենում երկրի քաղաքական ու տնտեսական տեղաշարժերը:

Առաջին իսկ գիտարշավների արդյունքները դերագանցեցին սպասելիքները, և հենց այդ պարագան ստիպեց Ն.Մաուրին մի ողջ տասնամյակով հետաձգել պեղումները և գրազվել պատրաստությունը (Անիին վերաբերող տեղեկությունների կուտակում, պեղման միջոցների հայթայթում, պեղածո նյութերի պահպանություն, ապահովում, պեղումներ կատարող մասնագետների պատրաստում): Եվ երբ սկսվեցին պարբերական գիտարշավները և հրապարակվեցին գիտական ղեկավարի անդրախելի հաշվետվությունները, գիտական շրջանակները համոզվեցին, որ միջնադարյան քաղաքի հետազոտությունը զորու է լուսարանելու բազում թնջուկային խնդիրներ: Ն.Մաուր պարզեց, թե ավատատիրական Հայաստանում ու կովկասում դասակարգային ներհակությունները հատկորոշվում էին ոչ թե էթնիկական հիմքով, այլ քաղաքական-տնտեսական և ապա վարչական փոփոխությունները բնավ էն նույնանում էթնիկական փոփոխությունների հետ: Բազաթ թափանցած դրսեկ տարրերն ու մոտիվները չէին փոխում տեղական մշակութային անցուղարձի ընթացքը:

Առանձնակի հետաքրքրություն ու արձագանք էին առաջ բերում Անիի ճարտարապետությանը (անկախ պաշտամունքային թե քաղաքացիական լինելու պարագայից) վերաբերող Ն.Մաուրի ու նրա աշխատակիցների հրապարակումները: Ստեղծվեցին առանձին մատենաշարեր «Հայոց ճարտարապետության հուշարձաններ», «Անիական շարք» և այլն: Վ.Բարթոլդի և Յու.Սմիլնովի ղեկավարությամբ հիման վրա Ռուսական հնագիտական ընկերությունը 1915թ. Ն.Մաուրի Անիում կատարած աշխատանքը ճանաչեց Մեծ ոսկի մեդալի արժանի: Անհրաժեշտ է սակայն նշել, թե գիտնականն զբաղվում էր ոչ միայն Անիով. նա միաժամանակ հետախուզական աշխատանքներ էր կատարում Գառնիում, Դվինում, Գեղամա լեռներում ուսումնասիրում էր վիշապները: Փաստորեն Անիի թանգարանը վերածվել էր գիտահետազոտական կենտրոնի:

Նիկողայոս Մաուրին նախ աղյուսկտ (օժանդակ), ապա ակադեմիկոս ընտրելը (1909, 1912թթ.) չփոխեց նրա զբաղումներն ու նախասիրությունները. նա չդարձավ այսպես կոչված կաթնետային գիտնական: 1916թ. իր աշակերտների հետ (Ն.Աղոնց, Հ.Օրբելի, Ս.Տեր-Ավետիսյան և այլք) պատերազմական դրոժողությունների ոլորտ ընդգրկված մշակույթի հուշարձանները՝ գրչագրերը, փորագրությունները, սևաքարերը, վիմագրերը փրկելու համար մեկնեց Հարավային Հայաստան: Նա Ռուսաստան ապաստանած հայ վախատակների օգնության ձեռք մեկնելու կազմակերպիչներից էր, ըստ պատկանելույն դիմումներ էր կատարում, կոչեր հրապարակում, նպաստամատուցյց դասախոսություններ կարդում:

Մեր ժողովրդի կյանքում այս ծանր տարիներին Ն.Մաուր շարունակում էր հրատարակել իր հիմնած մատենաշարերը՝ «Հայ-վրացական բանասիրության տեքստեր ու հետազոտություններ», «Հայ-վրացական մատենադարան», «Քրիստոյա Արևելք»: 1915թ. ողբերգական անցքերի անմիջական արձագանքն էր նրա հրապարակած «Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաստանը»

աշխատությունը, ուր բացահայտվում են Հայկական քաղաքակրթության նվաճումները:

Ն.Մաուր գիտություն խոշորագույն կազմակերպիչ էր: Երբ Կովկասում համալսարան բացելու նրա ջանքերը ապարդյուն անցան (գաղափարի ջերմ պաշտպաններից էր նաև Հ.Թումանյանը), ապա ուշադրությունը կենտրոնացրեց գիտահետազոտական կենտրոններ ստեղծելու վրա: Այդպիսիք էին Անիի հնությունների թանգարանը, Կովկասի պատմա-հնագիտական ինստիտուտը, իսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ Նյու-Յորքում մշակույթի ակադեմիան, Լեզվի և մտածողության ինստիտուտը: Գիտության կազմակերպմանն էին ծառայում հայագիտությունը վերաբերող գրքերի բազում գրախոսությունները՝ պահանջվող, բայց բարյացակամ գրչով գրված: Թե ինչպիսի ուսուցիչ էր նա, կարելի է դատել նրա աշակերտներով, որպիսիք էին անվանի գիտնականներ Ն.Աղոնցը, Ի.Վ.Ջավախիշվիլին, Ի.Մեշչանինովը, Գր.Ղափանցյանը, Ա.Շանիձեն, Վ.Արևելք և այլք:

Նիկողայոս Մաուր խիստ հետևողական, սկզբունքային և կրակոտ հետազոտող էր, խորապես համակարգված մտածողությունը: Եվ այդպիսին մնաց իր գիտական գործունեության ողջ ընթացքում: Այդ երևաց նաև իր ղեկավարած ինստիտուտի գիտխորհրդում ունեցած վերջին ելույթում, երբ նա հարկադրված էր քննարկման դնել հայոց և վրաց արուբենները լատինական գրչությունը փոխարինելու հարցը: Ն.Մաուր ամենայն կրքոտությամբ ապացուցում էր նման հարցադրման անհնարությունը: Հուզմունքի ու գոյությունից պոսթիվում ավարտվեց կաթվածով: Ամոքման փորձերը ապարդյուն անցան, և 1934թ. դեկտեմբերի 20-ին, ճիշտ 70-ամյակի օրերին, նա կնքեց իր մահկանացուն:

* * *

Հարկավ ոչ պատահականորեն, վերևում խոսք չեղավ ակադ. Ն.Մաուրի լեզվաբանական, մասնավորապես տեսական լեզվաբանական աշխատությունների մասին: Խնդիրն այն է, որ մինչ XX դարի 50-ական թվականները Մաուրի լեզվաբանական դրույթները համարվում էին անմիջակ հայտնագործություններ, իսկ նրանց հեղինակը պաշտամունքի արժանի: Այս պարագան, ինչպես Հ.Օրբելին կասեր, ոչ այնքան գիտական համոզմունքի արդյունք էր, որքան դրույթները կրկնելով՝ հին ու նոր լեզուներ սովորելուց ազատվելու հնարավորություն: Ն.Մաուրի «աշակերտներ» կոչվածների մեջ կային մարդիկ, որոնք հաճախ չէին էլ կարող նրա աշխատությունների ընթերցող լինել: Ն.Մաուրի կամ այլոց կողմից «նոր ուսմունք» կոչվածը փաստորեն անյուրեղին լուծելու վարկածների թնջուկ էր, որ հեղինակը առաջադրել էր մասամբ լեզվաբանական փնտրտուքի ճանապարհին, մասամբ էլ փորձելով նոր ժամանակների դասակարգային գաղափարախոսությունը հիմնավորել լեզուների պատմության իրողություններով: Տեսական առումով Ն.Մաուրի լեզվաբանական դեգերումները կարող էին անցանկալի հետևանքների բերել և մի օր վերջ գտնել, ինչպես այդ կատարվեց վերոհիշյալ 50-ական թվականներին: Դժբախտաբար նորօրյա մշակված հայտնուն գնահատությունը մոռացության մատնեց Մաուրի լեզվաբանական ճշմարիտ շատ գլուստեր ու ծառայություններ, դրանց թվում՝ հայ-վրացական բազմաթիվ ստուգաբանություններ (երանի նրանք երբևէ հավաքվեն ու հրատարակվեն առանձին հատորով), հին ու նոր մի քանի լեզուների քերականություններ (այդ թվում և Հայերենի ու քարթվիկական լեզուների), մի շարք հուշարձանների բառամթերքի ուսումնասիրություն և, վերջապես, լեզվի և մտածողության խնդիրներին վերաբերող շատ հարցեր: Ուզում ենք ասել՝ Մաուրի լեզվաբանական ժառանգությունը հետազոտության

առանձին բնագավառ է, որ պիտի կատարվի պատմաբանի, բանասերի, բնագրագետի, բանագետի Համաժամանակյա պատրաստություն ունեցող լեզվաբան-կրթական-արևելագետի կողմից:

Ցավոք, վերջին տասնամյակներին Մառի լեզվաբանական հայացքները շուրջ ճամարտակողներին շատերը այդ պատրաստությունն ու կարողությունը չունեն, անհաղորդ են Մառի գիտական բուն ժառանգությանը, ուստի քամահրանքով են խոսում այդ մեծ գիտնականի գործերի մասին (ոմանք կրկնում են Ի. Անիչկովի բարրաջանքները, ոմանք էլ Վ. Ալպատովի անգիտությունը են մերժում ակադ. Ն. Մառի՝ գիտությունը զբաղվելու իրավունքը): Նման մի առիթով գորավար Լ. Երեզը պատկերավոր էր ասել՝ *Собака лает, а караван идет* (Շունը հաչում է, իսկ քարավանը շարունակում իր ճամփան): Հայագետ-արևելագետ ակադ. Ն. Մառը ճիշտ այդ հավերժի ճամփորդն է, որի ապացույցներին մեկն էլ նրա հիշատակին ձոնվող գիտական ժողովածուներն ու ամենօրյա հիշատակումներն են:

2. «ԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԻ» ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կովկասի ուսումնասիրությունը, ինչպես և սպասելի էր, սկսվեց ազգագրական, պատմական, մշակութային ու լեզվական հարցերի շուրջ նյութերի հավաքմամբ փաստագրմամբ՝ տեղացի կամ դրսեկ հետազոտողների հետաքրքրություն չընթանալով: Սակայն Կովկասի բազմազգ բնակիչների պատմական լիարժեքության և մշակութային ընդհանրություն ընկալման բացակայությունը հանգեցնում էր կամ անտիկ ու միջնադարյան աղբյուրների ավանդական մեկնաբանության, կամ՝ այսպես կոչված դպրություն չունեցող էթնիկ միավորների լեզվի ու սովորությունների մեկուսի գիտարկումների գրառման երբեմն բնավ ոչ ճշգրիտ էթնո-մշակութային տերմինների կիրառումով ու բնութագրմամբ: Ուստի կատարվող այդ ուսումնասիրությունների հիմամբ դժվար էր խոսել Կովկասի պատմամշակութային անցյալի տարածքային ու ժամանակադրական լիարժեքության մասին:

Եվ այնուամենայնիվ, արդարացի չէր լինի հանդիմանել Ուսարին, Շիֆներին, Դիրին, Բրոսերին, Պատկանյանին, Իոսելիանուն և մյուս հետազոտողներին՝ նրանց աշխատություններում համակովկասյան հետաքրքրություն բացակայության կամ դիտարկումների ընդգրկման անձուկության համար, քանի որ նրանց նպատակադրումը կանխորոշված էր հասու նյութով ու ավանդական էթնո-մշակութային դրույթներով:

Եթե այս շրջանակներում ներելի է խոսել հետազոտության մեթոդաբանության մասին, ապա այն կարելի է որակել իբրև ավանդավորական, քանի որ նույնիսկ Շիֆների ու Բրոսերի պես ակադեմիական գիտության ներկայացուցիչները հեռու էին համակովկասյան պատմա-մշակութային միջավայրի պատկերը ներկայացնելու հնարավորությունից. «Ինչպես Ուսարի, այնպես էլ Դիրը, - նկատում էր Նիկողայոս Մառը, - խստորեն պահպանում էին փաստը արձանագրելու եղանակը՝ առանց տեսական որևէ կարգի լուսաբանության: Այս եղանակը հիանալի է, սակայն մինչև որոշակի սահման, այլապես մեր գիտարկած փաստերը ընդունում են խիստ մակերեսային բնույթ, ստաջ է դալիս հենց ամենակարևոր փաստերը միագնաց հետաքրքրությունների կադապարային շրջան... Միայն ակադ. Շիֆներն էր զբաղվում հետազոտության փրկստիպական կողմով, սակայն նա էլ... տվյալներ չունեց հարցը ուսումնասիրության համեմատական հիմքի վրա դնելու համար» (A, 1316, թերթ 8-13): Բայց, ահա, Բրոսերն զրկված չէր հայերեն և վրացերեն լեզուները, հայկական և վրացական հասարակությունների պատմությունները համեմատական ուսումնասիրության հնթարկելու հնարավորությունից, և նա այդ համադրումը կատարում էր բավական հաճախ, սակայն հիմնականում քննության աղբյուրագիտական կտրվածքով, մինչդեռ ազգային պատկերացումների շրջանակից դուրս եկող պատմության փաստերի քննարկման վերլուծությունը նրա համար ևս մնաց դժվարահաղթահարելի իրողություն, իսկ մերօրյա ընկալմամբ նա հարկավ լեզվաբան չէր, որով և բացառվում է նրա եզրակացությունը, թե վրացերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի հնդ - իրանական ճյուղին: Գրեթե նույնական տեսակետ էր պաշտպանում նաև Ֆր. Բոպը, թեև նա և Բրոսերն մանրամասնությունների մեջ նկատելիորեն զանազանվում էին:

Կատարվող աշխատանքների հետի հետադարձությունը պատկերացնելու համար քաղաքական է նկատվում, որ մեկ տասնամյակում (1861-1871թթ.) Պ.Ուսլարը արևադարձային, չեչեններին, խուսններին, լակերներին, դարգելներին, լեզգիներին մասին գրել է վեց ուսումնասիրություն, որոնք մշակվել և գերմաներեն են թարգմանել Ա. Շիֆների ձեռքով: Հաճախականությունը մեծ էր նաև կովկասյան ժողովուրդների լեզուների՝ ո՞ր լեզվաընտանիքին պատկանելու հարցը արծարծելիս: Մաքս Մյուլլերը, օրինակ, կովկասյան լեզուները մտցնում էր թուրանականների շարքը, մինչդեռ Ֆր. Մյուլլերը կովկասյան լեզուները կրողներին համարում էր բնիկներ, իսկ նրանց լեզուները՝ առանձին լեզվախումբ: Նրա եզրակացությունները վճռական պաշտպանություն գտան «Կովկասը և նրա ժողովուրդները» (1887թ.) և «Կովկասյան հիմքի լեզուներ» (1895թ.) լեզվաբանական և ազգագրական առումներով Հավասարապես հետաքրքիր գրքերի հեղինակ Ռ.Էրկերտի մոտ: Այստեղ մենք կգտնենք կովկասյան և սեմական լեզուների հնարավոր ազգակցության մերժողական անդրադարձումները:

Վրացիների և քարթվիկական լեզուների ուսումնասիրություն մարզում էական են Պետերբուրգի համալսարանի պրոֆեսորներ Դ.Չուբինաշվիլու և Ա.Յագարելու ծառայությունները: Գործնականում նրանցով էլ ավարտվում է կովկասագիտական հետազոտությունների հայեցակարգի ձևավորման առաջին պարբերաշրջանը:

XIX ավարտին նշանակալի էին ուսուսական արևելագիտության նվաճումները թեմատիկ թե մեթոդաբանական առումներով, երբ լեզվի, մշակույթի, ազգաբանության և դպրության հարցերը սկսվեցին դիտարկել իբրև զարգացման միասնական ընթացիկ բաղադրիչներ, հաճախ դուրս գալով խնդրի էթնիկական ու աշխարհագրական սահմաններից: Ունիվերսալիզմը դառնում էր հետազոտության հիմնական մեթոդ:

Նիկողոշյու Մառի գիտական գործունեությունն սկսվեց արևելագիտության հետաքրքրությունների խորացման հենց այս շրջանում, և կովկասյան լեզուների տեղի տասնամյակներ արծարծված հարցը էջը կարող է գրավել նրա ուշադրությունը, մանավանդ, որ Ն.Մառը տիրապետում էր տեղական մի քանի հին գրավոր ու կենդանի խոսակցական լեզուների ունենալով հուսալի պատմաբանասիրական պատրաստություն: Իր գիտական գործունեության առաջին կրկու տասնամյակներին նա զբաղված էր գերազանցապես բանասիրական - բնագրագիտական բնույթի խնդիրներով: «Ժողովածոյք առակաց Վարդանայ» եռահատոր հիմնարար ուսումնասիրությունից հետո Ն.Մառը հիմնեց մի քանի մինչև այսօր չհնացող մատենադարան՝ «Հայ - վրացական բանասիրության բնագրեր և ուսումնասիրություններ», «Հայ - վրացական մատենադարան», «Քրիստոնյա Արևելք» և ուրիշ համեմատաբար մանր մատենաշարեր:

Այս շարքեր ընդգրկված Ն.Մառի կամ նրա աշակերտների աշխատությունները՝ պատմության, հնագիտության, արվեստի, վիճագրության, մատենագրության ու բանահյուսության բնագավառներում մինչև օրս էլ հիմքի ճանաչվում են որպես ակադեմիական կովկասագիտության ճշմարիտ նվաճումներ: Ն.Մառի լեզվաբանական տեսությունների քննադատները չպետք է մոռանան, որ բացի Մառ - լեզվաբանից գոյություն ունի Մառ - հնագետ, պատմաբան, մշակութաբան, բնագրագետ, վիճագրագետ և լայն ընդգրկման բանասեր, և այդ բոլոր մարզերում նա անվերապահ հեղինակություն է, դասական:


Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում Մառի ուսմունքի քննադատների ուշադրությունը հրավիրել հետևյալ պարագաների վրա. Հարթթախություն - Հարթթախ եզրը նույնքան պայմանական է, որքան

սեմաբանություն - սեմականը, հետևաբար նրանից չպիտի սարսել, այլ անհրաժեշտ է պարզել, թե ինքը տեսություն հեղինակը ե՞րբ և ի՞նչ բովանդակություն է տեսել նրա մեջ: 1908-1916 թվականների հրապարակումներում Ն.Մառը հարեթական է կոչում քարթվիկական լեզուները, ուշադրությունը կենտրոնացնելով սեմական լեզուների հետ ունեցած նրանց ընդհանրությունների վրա, որի մասին նա Հայաստանը էր իր գիտական հետաքրքրությունների սկզբնական շրջանում: Երկրորդ շրջանը ընդգրկում է 1916-1920-ական թվականները և բնութագրվում է հարեթական լեզուների շրջանակի ընդարձակմամբ. նրանց շարք են մուծվում արևազա - արիգերները, չեչենները և դադստանյան լեզուները: Տեսություն հեղինակի խոսքերով «Մեկ կողմից շրջադարձը դեպի Կովկասի լեռնային կենդանի լեզուները հյուսիսում, այլ կողմից՝ դեպի Հարավի մեռյալ սեպագիր լեզուները հասունանում էր տեղականորեն, բայց անհետաձգելի դարձավ այն պահից, երբ մենք մոտենում էինք հարեթաբանության զարգացման նոր շրջանին»: Ա.Չիքոբավան այս շրջանը անվանում էր կովկասաբանական: Երրորդ շրջանը կարճատև է՝ ընդգրկում է գիտնականի 1920-1923 թվականների աշխատանքները և, նույն Ա.Չիքոբավայի բնութագրությամբ, այն կարելի է միջերկրային կոչել, քանի որ նրա մեջ են ընդգրկում պելասգերները, էտրուսկերները և բասկերները: Այնուհետև արդեն մենք գործ պիտի ունենանք ստաղիալ զարգացման տեսության հետ, երբ հնեկվրոպական լեզուները ընկալվում էին իբրև հարեթական լեզուների փոխակերպություն:

Թե ինչ կատարվեց այս տեսության հետ և այն ինչպես քննադատության ենթարկվեց լեզվաբան գիտնականների և ամենակարող քաղաքագետների կողմից հանրահայտ է, բայց ցավն այն է, որ «նոր ուսմունքի» հետ, այսինքն տեսական կառույցի հետ անեծքի ենթարկվեցին բազում կարևորագույն փաստական դիտարկումներ: Այսպես, օրինակ, առաջին պարբերաշրջանի «Հարեթական» եզրը փոխարինվեց «Իբերո-կովկասյան լեզուներ» հասկացությամբ, թեև լեզուների այդպիսի խմբակցության փաստը վաղուց և ոչ առանց հիմքի կասկածանքի է ենթարկվում շատ հեղինակությունների կողմից: Ի.Դյակոնովի և Ս.Ստարոստինի 1988թ. հրատարակված «Սուրբոտ - ուրարտական և արևելակովկասյան լեզուներ» աշխատության մեջ ասվում է, որ «այժմ կարելի է տալ ուրարտական բառերի 40% և խուրիական շուրջ 30% ստուգաբանություն, որոնց համար շատ թե քիչ ճշգրտված է նշանակությունը: Կարծում ենք, որ խուրիտա-ուրարտական լեզուները հյուսիս-արևելակովկասյան լեզվաընտանիքի առանձին ճյուղ են կազմում»: Հետևաբար Ն.Մառի դիտարկումները «հյուսիսում կենդանի լեռնական լեզուների» և «Հարավի սեպագրերի մեռած լեզուների» վերաբերմամբ շարունակում են զբաղեցնել լեզվաբաններին:

Մեր համոզմամբ՝ հիմնադրել չեն հին գրական հայերենում այսպես կոչված հարեթական տարրերի առկայությունը Ն.Մառի արձանագրած իրողությունները, որոնք նրան ներկայանում էին իբրև մինչարիական ենթաշերտ (սուրստրատ) հայերենում: Այս մակարդակում կարելի է, ինչպես մեզ թվում է, համաձայնել նույնիսկ հայերենի երկակի բնույթի լեզու կոչելու նրա փորձին: Հայով թե արդարացված համարվի լեզվական հնէաբանություն (պալեոլիթոլոգիա) Ն.Մառի տեսության մերժումը: Նույնը վերաբերում է լեզվի և մտածողության հարցադրումներին: Այս տեսությունների հիմամբ է, որ կյանքի վերջին տարիներին Ն.Մառը անհրաժեշտ համարեց «Կովկասի պատմության շուրջ ըստ լեզվի տվյալների» աշխատանք հրատարակել (1933թ.), և ամենայն արդարացի չեն այն լեզվաբանները, որոնք առանց կովկասագետ լինելու դատաստանական վճիռներ են կայացնում գիտական կովկասագիտության ճշմարիտ հիմնադրի

3554



Հասցեին. «Կովկասը,- գրում էր Ն.Մառը իր վերոհիշյալ հրատարակման մեջ,- երբեք չի եղել պատահական Հանդիպումների և պատահական սոսկական բնակավայր հյուսիսից դեպի հարավ և կամ թիկուզ հարավից հյուսիս, արևելքից արևմուտք կամ արևմուտքից արևելք հոսող տարբեր ծափում ունեցող, միմյանց խորթ, սասայական առուսով Հակոտնյա ժողովուրդների դանդախների պարանոց: Այդ հակասում է իրականությանը»:

Նվ հիրավի, խորհրդային պատմագրության մեջ XX դարի քսանական թվականներից մշակվեց բավական ունիվերսալ, թիկուզ երբեմն խիստ գաղափարականացված պատմագրական հայեցակարգ հասարակական գիտությունների մեթոդների, դրողունների ու նպատակների ընդհանրության մասին: Անշուշտ, նման մոտեցումը ոչ հազվադեպ հանգեցնում էր պատմական անցյալի համահարթման, առանձին ժողովուրդների մշակութային ժառանգությունն որոշ զրվագների գիտակցական ակամատ-սոսկական անտեսման, սակայն մեկնաբանման տարածայնություններն ու անցյալի իրողություններին դիմելը ազգային — քաղաքական բախումների էջին բերում, այլ կերպ՝ հակամարտության գաղափարախոսության էջին վերածվում: Անհնար է միտել թե այդ տարիներին ևս ակադեմիական պատշաճություն սահմաններից դուրս եկող և ազգային պատմությանը նախընտրելի անցյալ սպառնալից մենագրություններ էին հայտնվում, բայց նրանք քիչ էին ազդում ազգային ինքնագիտակցության վրա և մնում էին պատմության ճանաչողական գործառնություն շրջանակներում:

Շատ չանցած, սակայն, պատմական գիտության քաղաքականացումը բերեց նրան, որ կուսակցական կանխադրություններն ու ազգայնական միտումները սկսեցին նշանակալի դեր խաղալ, իսկ պատմական աղբյուրներին քիչ կարևորություն տրվեց, խարդավանքը երբեմն հասնում էր բնագրից անցանկալի վկայությունների օտարման կամ նույնիսկ երբեք այլ էթնիկ միավորի ներկայություն վկայող նյութական մշակույթի հուշարձանների ոչնչացման, մանավանդ եթե նրանք խոսնաբարում էին պատմական հիշողության շրջանակներում վերախմաստավորմանը: Պատմագիտությունը, որքան էլ ցավալի է, հաճախ իջեցվում էր սիրողական մակարդակ և այն տարվողները գանդվածային լրատվության էջերից ահարեկում էին ակադեմիական գիտության ներկայացուցիչներին:

Նման պարագայում հախուռնություն կարող էր պատել նաև գիտության սպասավորներին, և նրանցից ոմանք իրոք դիջեցին իրենց հետազոտական սկզբունքները: Հանդիմանության են արժանի մասնավորապես Այսրկովկասի պատմության ու մշակույթի մասնագետները, որոնք իրենց տրամադրության տակ ունենալով ակահամեմատ ավելի շատ պատմողական ու նյութական աղբյուրներ, պարտավոր պիտի զգային պահպանել մեկնաբանության գիտական նորմը: Սակայն տարածաշրջանային պատմության ուրվագիծ կազմելու բոլոր փորձերը վերջացան հարեան պետությունների մասնագետների դրոյթների և վարկածների քննադատությամբ: Մինչդեռ Հարավային Կովկասը բազմազգությամբ քանիցս գերազանցող և վարչական կառուցվածքով շատ ավելի խրթին կազմ ներկայացնող Հյուսիսային Կովկասը հաղթահարեց տարածայնությունները և ներկայացրեց հնագույն ժամանակներից գեթ մասամբ ընդհանրացնող պատմություն: Թերևս այստեղ ևս ոչ քիչ էլուծված խնդիրներ մնացին, սակայն հյուսիսկովկասյան ժողովուրդների պատմությունների ընդհանրությունները պատշաճ մակարդակով բացահայտված ու գնահատված են:

Մենք, Հարավային Կովկասի ներկայացուցիչներս, պետք է հաղթահարենք մեր իսկ ձեռքերով այս վերջին երկու-երեք տասնամյակներին ստեղծված

դժվարությունները և փորձենք վերադառնալ մեր տարածաշրջանի պատմությունը, մշակույթն ու մասնագրությունը ուսումնասիրելու ավանդական եղանակներին ու նորմերին: Որքան էլ ազնիվ ու մտահոգ լինեն մերձակա և հեռավոր արտասահմանի մեր գործընկերները, ինչ պատրաստությամբ էլ նրանք առանձնանան, միջազգային որ հիմնադրամն էլ նրանց հետազոտությունը ֆինանսավորի, ինձ թվում է, թե այնուամենայնիվ, նրանք կը ժխարսնան ընկալել Կովկասի, ինչպես ժամանակին էին ասում «կենդանի անցյալը»:

Իմ խորին համոզմամբ՝ մենք պիտի հիշենք, որ «ազգայնական միտումը որքան մոտ է մեզ՝ նույնքան ուժգին է (սակայն և հնում) նա նենգավորում անդամ սեփական ժողովրդի պատմությունը, ոչ միայն չի օժանդակում խնդրի էություն լուսարանմանը Կովկասի վերաբերմամբ, այլև կամա թե ակամա խեղաթյուրում է իսկական աղբյուրները» (Ն.Մառ, A-408, թերթ 2-4):

Ճիշտ է՝ «պատմությունը սերունդների հիշողություն է», սակայն «Հիշողությունների կռիվը», ով էլ այն գրած լինի, էլ կարող մեզ համար սեփական պատմության մանրակերտ ծառայել:

ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԳՐԱՐՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԸ Ն.ՄԱՌԻ ԴԵՏԱԶՈՏՄԱՄԲ

Նիկողայոս Մառի «Ժողովածոյք առակաց Վարդանայ» հետազոտութիւնը եղել է հեղինակի մագիստրոսական ատենախոսութիւնը, որի վրա նա աշխատել է երկար տարիներ: Սկզբում առաջադիր խնդիր է եղել հետեւյալը. «Ի՞նչ է հայերեն «Աղվեսագիրքը» ստեղծվել և արդյոք այն եղել է թարգմանութիւն արարական համանուն գրքից, թե՛ ընդհանրապէս արարական «Лисья книга»-ն թարգմանվել է հայերենից: Երբ դիտնականը ձեռնարկում է «Աղվեսագրքի» ուսումնասիրութիւնը, պարզվում է, որ այն չափազանց տարողունակ հետազոտական բնագավառ է, և գիտական ճշմարտութիւնը պարզելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ հնարավորին չափ հարուստ ձեռագրական նյութ: Այդ նպատակով անմիջապէս դիմում է բոլոր այն գրադարաններին, որտեղ կային կամ կարող էին լինել հայ առակագիրների երկերը պարունակող ձեռագիր մատյաններ: 1899-ի ապրիլի 1-ին գրված և գրքին կցված համառոտ խոսքում նա խոստովանում է, որ բոլոր գրադարանային հիմնարկներում աշխատող մարդիկ իր դիմումներին վերաբերվել են հավասար ուշադրութեամբ, և երախտագիտութեամբ խոր զգացումը պարտավորեցնում է իրեն բոլորին հավասարապէս անել ջերմ ու սրտագին շնորհակալութիւն¹:

Նիկողայոս Մառի հետազոտութիւնը հիմնարար է և ավարտուն: Ավելին, նրա գիտականութիւնը այնքան շեշտված է, որ հասանելի է միայն նեղ գիտական շրջանակներին համար: Այս փաստը ամենից ավելի դիպուկ բնորոշել է նրա արժանավոր աշակերտը՝ Հովսեփ Օրբելին, իր «Васили средневековой Армении» գրքում: Նա շեշտում է այդ աշխատանքի նախատեսված լինելը խիստ սահմանափակ գիտնական-մասնագետների համար, որոնք պետք է լինեին բունասեր-արեւելագետներ²: Հ. Օրբելին խոր փոստանք է հայտնում այն իրողութեան համար, որ իրականում այդ ժողովածուները պարունակում են այնպիսի գանձեր, որոնք դարերով սիրված են եղել հայ ժողովրդի լայն գանգվածների կողմից և գիտական համակարգման ձևով ներկայացնելը հեռացրել է գրական այդ նյութը մեծաքանակ ընթերցողներից: Հովսեփ Օրբելին Ն. Մառի հրատարակած առակների և գրույցների մեջ տեսնում է պատմական մեծ արժեք. չնայած նրանց մեջ հաճախ չեն պահպանված պատմական անձերի անունները, սակայն նրանցում կան այնպիսի նյութեր, որոնք չենք գտնում ժամանակի տարեգրքերի երկերում³:

Ն.Մառի երեք ժողովածուներին անդրադարձել է նաև Մանուկ Աբեղյանը՝ իր «Հայոց հին գրականութեան պատմութեան» երկրորդ հատորում: Թեմատիկ նյութը գետեղել է «Առակագրութիւն» ընդհանուր խորագրի տակ և անդրադարձել Միխիթար Գոշի ու Վարդան Այգեկցու ստեղծագործութեանն ու առակներին՝ փորձելով նաև տալ նրանց հնարավորին ամբողջական

կենսագրականները⁴: Մ.Աբեղյանի համար լիովին ելակետային են այն գրույթները, որոնք առաջադրված են Ն.Մառի հրատարակած ժողովածուներում:

Առակը հնագույն գրական տեսակ է, և ինչպես վկայում է ժամանակը, ու ինչպես հաստատում են տարբեր ազգերի գրականութիւնների պատմութիւնները, այն այսօր էլ կա որպէս ժանր՝ պահպանող անցյալի գրական արժեքների հարուստ գանձարանը: Պատահական չէ, որ 20-րդ դարի 80-ական թվականների «Պատմա-բանասիրական» հանդեսի երկու տարբեր համարներում վաստակաշատ գրականագետներ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդ.Ջրբաջյանը և բան.գիտ.դոկտոր Պիոն Հակոբյանը, ծանրակշիռ ուսումնասիրութիւններ են նվիրել հայ առակագրութեանը նոր փաստերով լրացնելով Ն.Մառի հիմնավորած գիտական տեսակետը Վարդանյան առակագրութեան վերաբերյալ: Էդ.Ջրբաջյանի ուսումնասիրութիւնը կոչվում է «Հայկական մի առակի միջազգային գուգահեռներ»⁵: Նա իր հոդվածով անդրադարձել է Ն.Մառի «Ժողովածոյք առակաց Վարդանայ» ժողովածուի երկրորդ մասում եղած թիվ 356 առակին, որն ունի «Իշխան և այլի» խորագիրը: Նրա կարծիքով ոչ Ն.Մառը և ոչ էլ Հ.Օրբելին իրենց ուսումնասիրութիւններում չեն նշել այդ առակի ծագումը: Մինչդեռ առակը որպէս ժողովրդական պատում ներկայացրել է Հ.Թումանյանը⁶: Այն իր բովանդակային նույնութեամբ առկա է գերմանացի հայտնի գրող Ա.Շամիսոյի «Այրի կնոջ աղոթքը» բանաստեղծութեան մեջ: Նույն առակը տեղադրված է կաթողիկ հայ հոգևորական Հովհաննես Մործորեցու «Քարոզգրքի»⁷ հենց սկզբնամասում: Նմանօրինակ փաստարկները միայն հաստատում են Նիկողայոս Մառի վերոհիշյալ ժողովածուի այն գրույթները, թե առակների հորիզոնները չափազանց լայն են: Պիոն Հակոբյանն անդրադարձել է առակների տեսութեան խնդիրներին ուրվագծելով այդ ժանրի տեսական մտքի ձևավորումը միջնադարյան Հայաստանում: Նա գրում է. «Տակավին անցյալ դարի 90-ական թթ. հայագետն (խոսքը Ն.Մառի մասին է- Ա.Դ.) անհերքելի փաստերով ապացուցեց, որ միջնադարյան հայ գրականութեան անմահ ստեղծագործութիւններից ամենից ավելի առակներն էին, որ առաջին ժողովածուները կազմելու օրերից շատ չանցած թարգմանվեցին ու որդեգրվեցին հարևան ազգերի կողմից և արժանացան միջազգային ճանաչման»:

Պ. Հակոբյանի համար միջնադարյան առակագրութեան ժանրային բնութագրման ելակետեր են Ն.Աղոնցի «Дионисий Фракийский u армянские толкователи» գրքի համապատասխան հատվածը⁸ և Ստեփանոս Սյունեցու մշակած առակների ու առասպելների տեսութիւնը, որը որդեգրեցին Գրիգոր Մապիստրոսը, Հովհաննես Երզնկացին, Առաքել Սյունեցին և ուրիշներ: Առաքել Սյունեցին «Յաղագս քերականութեան համառոտ լուծմունք» երկում ներկայացնում է այնպիսի առակներ (իհարկէ պատմելով խիստ համառոտ և ենթադրելով, թե գրանք գիտեն իր ժամանակի ուսյալ մարդիկ- Ա.Դ.), որոնք կան Ն.Մառի ժողովածուներում⁹: Առաքել Սյունեցին առակի ժանրը բնորոշելուց հետո օրինակով հաստատում է այդ գրական տեսակի կիրառական լայն շրջագիծը, որի մեջ մտնում է նաև փիլիսոփայութիւնը. «Բայց թէ զի՞նչ է

¹ Н.Март, Сборники притч Вардана, часть I Исследование, СПб, 1899, стр. IV.
² Տե՛ս И.А.Орбели, Избранные труды, т.1, Ереван, 1968, стр 222.
³ Նույն տեղում :

⁴ Մանուկ Աբեղյան, Հայոց իմ գրականության պատմություն, հատոր 2, Երևան, 1946, էջ 142-187:
⁵ Տե՛ս «Պատմա-բանասիրական» հանդես, 2, Երևան, 1997, էջ 71-80:
⁶ Նույն տեղում էջ 73:
⁷ Պ.Հակոբյան, Առակների տեսությունը միջնադարյան Հայաստանում (Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», Երևան 1995, հ.1, էջ 169):
⁸ Н.А.Донц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 159.
⁹ Առաքել Սյունեցի, Յաղագս քերականութեան համառոտ լուծմունք, Լու Աճնյու, 1982, էջ 80-81:

«առական» եւ զի՞նչ «աւրինակն»: Առական, այսինքն՝ թէ սուտն է, բայց առ եւ արկ՝ եւ լինի «աւրինակ»: Դարձեալ առական սուտ է, եւ աւրինակն՝ ճշմարիտ: Վասն որոյ իմաստասէրքն ի սուտ իրաց եւ յառասպելաց սահմանէին զառական, իսկ Տէրն մեր զճշմարտութիւնն զնէր աւրինակ: Իսկ տեղիք սոցա այսպէս են. ոմանք յառաջ քան զբանն եւ է ի մէջ բանին, եւ է, որ ի վերջքն, այսինքն աւրինակն յառաջ քան զբանն, զի ճշմարիտ է բանն, իսկ առական ի վերջքն: Իսկ երկուսն կրթման ի մէջ բանին նստին: Եւ այսոքիկ են առասպելախառնութիւնք քերականիս, վասն որոյ սաէ Պորփիր ի վեցերորդ գլուխն, որ վասն ձայնին ճատ է...»¹⁰:

Առակի գրական տեսակի տարածական, բազմաշերտ, կենսական լինելն էլ Հենց Ն.Մառին թերազրել էլ Հայկական առակագրութեան Հիման վրա ներկայացնել Արեւելքի եւ Արեւմուտքի միջնադարյան գրական կապերը՝ բացելով նրանց հանգույցներից դժվարագույնները:

Առակի դաստիարակչական բնույթը գիտակցել են բոլոր դարերում եւ պատահական չէ, որ 1878 թվականին, Բաքվում, Խորեն քահանայ Միգաբեկյանցը հրատարակում է Մխիթար Գոշի, Ողոմպիանու եւ եզովպոսի ընտիր առակները՝ զբանց կցելով համառոտ, սակայն իմաստուն մի նախաբան՝ առակի կարևորութեան վերաբերյալ. «Այո՛, իմաստուն մարդիկը գտան այդ հնարը միմիայն առակներով: Այն, ինչ որ առակներով էր հայտնել եւ զգուշացնել թագավորից սկսած մինչև հետին ուսմկին, անհնարին էր հայտնել եւ խրատել այսպէս»¹¹:

Ն.Մառի Վարդանյան առակների ժողովածուի երրորդ գիրքը՝ տեսական ծավալուն մասը, անհնար է կարդալ առանց մասնագիտական կենտրոնացման ու մտային խոր հիացմունքի: Նախ պետք է խոստովանել, թե այն կատարյալ ընթերցելու համար պետք է կարողանալ օգտվել շուրջ տասնհինգ լեզուներից:

Օրինակ, եթե Ն.Մառը եվրոպական առակագրութեան մասին մեջբերումներ ունի եվրոպացի գիտնականներից, ապա ֆրանսիացուներ, անգլիացուներ, գերմանացուներ, իտալացուներ կատարում է նրանց մայրենի լեզուներով, առանց ուսուցանելու կամ հայերենի թարգմանություն: Ի դեպ, նա հաճախ ուսուցանել իր խոսքում այդ լեզուներով էլ բերում է նրանց գրքերի կամ հոդվածների խորագրերը եւ դրանց հեղինակներին անունները: Մառը գրում է խիստ գիտական, սակայն աշխույժ ու փոքր ինչ «չարածճի» ոճով: Նա երբեմն հեզնում է որոշ եվրոպացի բանասերների փաստագրերի եզրակացությունները եւ մի առանձին հաճույքով կես առ կես (այդպես մեղանում եզնիկ Կողբացին էր գրում իր «Եղծ աղանդոցում»), հերքում է նրանց ասպացուցելով նրանց տեսակետների ողջ խախտությունը: Բերենք օրինակ. Ն.Մառը ընդհամախոսում է անգլիացի բանասեր Jacobs-ին, ըստ որի Երեմիա վարդապետը 12-րդ դարի վերջին «Աղվեսագիրքը» արաբերենից թարգմանել է Հայերենի. «Однако категорическое заявление Jacobs-a о том, что Варданет Иеремия перевел в конце XII века Лисью книгу с арабского на армянский язык, оказалась плодом фантазии»¹². Թե ինչու է սխալվել անգլիացի հետազոտողը, Ն.Մառը բացատրում է շատ հստակ: Պարզվում է, որ նա իր փաստերը քաղել է ֆրանսիացի բանասեր Դյու Մերիլի մի գրքից, որը կոչվում է «La Poésies inédites du moyen âge, précédées d'une histoire de la Fable Esopique (Paris,

1854): Դյու Մերիլը գրում է. «Առակը, թվում է, Հայաստանում ունեցել է յուրովի ժողովրդայնություն, գրականության պատմությունը պահպանել է երեք առակագրի անուններ՝ Մխիթար՝ կոչված Գոշ, Վարդան եւ վարդապետ Երեմիա՝ մի անանուն ժողովածուի հեղինակ... ինչպես «Աղվեսագիրքը» («Livre du renard»)»¹³: Հետո նա ավելացնում է, թե այդ առակներից ամենահինը չի անցնում 12-րդ դարից այն կողմ, եւ նրանք կրկնում են չափազանց ստրկորեն եղովպոսի եւ Հինդուստանի ամենաժողովրդական առակները: Ն.Մառը բացատրում է, թե Դյու Մերիլն էլ իր այդ կարծիքը կազմել է Neumann-ի գրածով, իսկ վերջինս էլ օգտվել է Ջոնարթի եւ Սեն-Մարտենի կազմած «Choix de Fables de Vartan» գրքից: Առակագիր Երեմիան Դյու Մերիլի շարադրանքում թյուրիմացություն արդյունք է՝ Ն.Մառի համոզմամբ արաբական «Աղվեսագիրքը» չի կարելի համարել դասական արաբական գրականության ստեղծագործություն, այն արաբական-քրիստոնեական գրական հուշարձան է՝ Նրա կարծիքով Լոնդանի վերագրվող առակների գիրքն էլ քրիստոնեական-արաբական գրական ծագում ունի¹⁴:

Չպետք է մոռանալ մի հանգամանք՝ «Ղուրանի» սուրահներից մեկը կապվում է Լոխմանի անվան Հես եւ իր բովանդակությամբ շատ նման է Սիկարի խրատներին, Սողոմոնի Առակներին ու ժողովուրդին¹⁵:

Նկատենք, քրիստոնյա արաբական գրականության ամենաականավոր դեմքը Աբուլֆարաջը, որը գիտեր նաև հայերեն, ունի խրատական մի ժողովածու, որի մեջ հավաքել է Արեւելքի եւ Արեւմուտքի անտիկ աշխարհի խրատական-առակախոսական պատմությունները¹⁶:

Տեսական հետազոտություն այս առաջաբանում Ն.Մառը պատմում է, թե ինչպես է փլուզվել իր ասենախոսությունների համաստ պլանը վերածվելով ընդարձակ պրոբլեմների խմբի: Նա պարզորոշ տեսել է Վարդան Այգեկցու առակագրական ժողովածուի նմանողությունը ստեղծված գրական կտորները եւ կարևորել բուն հեղինակի առակների վրայից հետամուտ շերտերը հեռացնելը, գտնել Վարդանի ձեռքով գրածները, միաժամանակ պարզել նաև այդ շերտերի հեղինակային պատկանելությունն ու ժամանակային ծագումը: Նա խոստովանում է նաև, որ իր հետազոտությունն մեջ ստիպված է եղել ընթացա անդրադառնալ Հայ հին գրականության եւ պատմության զանազան հարցերին ընդհանրապես¹⁷:

¹³ Լույն տեղում:

¹⁴ Լույն տեղում, էջ 3:

¹⁵ Լույն տեղում, էջ 47:

¹⁶ Լույն տեղում, էջ 49:

¹⁷ Լոխմանի վերագրվող «Ղուրանի» սուրահում կա մի պատկեր, որը հիշեցնում է Գրիգոր Նարեկացու «Մատենա ողբերգութեան» պոեմի համապատասխան հատվածը:

Գրիգոր Նարեկացի

Չի եթ գլիծ մի ծովուց ի յորակութիւն դեղոյ յեղեղեցից,

...եւ գպուրակս յոգուց անտառաց շամբից եղեգանց

Ի հատուծս գոյութեան գրչաց կազմեցից...

(ԲԱՆ Թ, Ա)

Լոխման

26. Եւ եթ երկրիս վրայ եղած ծառերը գրիչներ լինէին եւ ծովը նրանց յետոյ եօթնապատիկ թանաքի ծով դառնայ, Աստուծո խօսքերը չէին սպառւի. իրա Աստուծո գորտուր իմաստուն է: (Տես՝ Ղուրան, թարգմանեց Արաբերենից հայերենի Արք. Ամիրխանյանց, Վաղնա, 1909 էջ 391:

¹⁸ Абуль-Фарадж, Книга занимательных историй, Москва, 1957, стр. 4.

¹⁹ Н.Март, Сборники притч Вардана, стр. 8.

¹⁰ Առ Սյունեցի, Յաղագս քերականութեան..., էջ 81:

¹¹ Գոշ Մխիթարի, Ողոմպիանու եւ եզովպոսի ընտիր առակները, թարգմանութիւն Խորեն քահանայի Միգաբեկյանց, Բազու, 1878, էջ ա:

¹² Н.Март, Сборники притч Вардана, СПб, 1899, стр. 2.

Տեսական ուսումնասիրության երրորդ գլուխը կոչվում է «Просторице и крватки Вардановские сборнику»²⁰:

Նա մանրամասն բացատրություններով ներկայացնում է Վարդանյան առակների կամ «Աղվեսագրքի» առաջին տպագիր օրինակները: Առաջինը տպագրվել է Ամստերդամում, 1668-ին և կոչվել է «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուեսագիրք»: Տխողոսաթերթի հակառակ կողմում չափածո ներքող կա՝ նվիրված Մովսես Խորենացուն: Սա հասկանալի է, որովհետև տպագիր երկի առաջին գործը Մովսես Խորենացուն վերագրված Աշխարհացույցն է եղել:

Երկրորդ հրատարակությունը Մարսելին է՝ 1676-ին: Այն վերստին Մովսես Խորենացու Աշխարհացույցի հետ է և այդ գրքի մասին ֆրանսերենով գրված է՝ «L'abrégé géographique de Moïse de Khoren avec un recueil de fables, connu chez les arméniens sous le titre de livre de renard. En arménien. Marseille, 1676 (1678)»²¹:

Երրորդ հրատարակությունը վերստին Մարսելում է՝ 1683-ին, վերստին Աշխարհացույցի հետ միասին:

Չորրորդ հրատարակությունը, թվացյալ էջմիածնում տպագրված, իրականում հրատարակված է Լիվոռնոյում, 1698-ին: Այդ գրքի մանրամասն նկարագիրը կա «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտության մեջ. «Մովսես Խորենացի: Աշխարհացույց: - Աղուեսագիրք: Առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության, տպագրությունը Երեմիա վարդապետ Մեղրեցու, 1698»²²: Նկարագրության վերջում կարդում ենք. «Գ.Լ.ոսյանի («Հայ գիրքը և տպագր.արվեստը») կարծիքով գիրքը տպագրվել է Լիվոռնոյում Ս.Էջմիածնի և Ս.Սարգսի տպարանում»²³:

Ն.Մառի հետազոտության երկրորդ և երրորդ մասերը լույս են տեսել ավելի վաղ 1894-ին և հազեցած են գիտական աղյուսակներով ու բազմաթիվ հավելվածներով: Երրորդ մասի առաջին հավելվածը էջմիածնի Մատենադարանի տասը ձեռագրերի մանրամասն նկարագիրն է, որոնց մեջ կան նաև Վարդանյան ձեռագրերը: Աղյուսակը ունի հետևյալ պատկերը.

Հավելված Լ-ին, էջմիածնի տաս ձեռագրերի նկարագիրը՝

№ 1, № 57, № 453, № 1631, № 1636, № 1637, № 1639, № 1711, № 1722, № 1755

Թիվ 1711 ձեռագրի նկարագրության մեջ Ն.Մառը նույնությամբ, զրարարով մեջբերում է «Վարք Վարդանայ վարդապետի» գործը, որի սկզբի մասը ձեռագրում պահպանված է²⁴:

Վեցերորդ հավելվածում ուսերեն և զրարար լեզուներով գետեղում է «ԲԱՆՔ, Վասն խորող աղուեսուն և չարութեան նորայ» առակավոր զրույցը, որի բնագիրը համեմատական ձևով կազմել է Փարիզի Ազգային գրադարանի Հին Ֆոնդի № 135 գրչագրում եղածից և «Բագմավէպի» 1881 թվականի համապատասխան մասից: Բնչպես նկատելի է Ն.Մառը, այս երկու բնագրային տարբերակները չենք տարբերել: Մենք պարզեցինք, որ «Բագմավէպի» օրինակում բացակայում է Փարիզի ձեռագրում եղած

բարոյախոսական ավարտը. «Յուցանէ առակս, թէ կան շատ նենգաւոր մարդիք, ևս առակը սատանայ, որ բազում հնարիւնք ջանայ և զանազայն խարխուլիմամբ որսայն զմարդիք և ձգեն ի յորոգայթ մեղացն և ինքեանք ծիծաղին ի կորուստ մեղաւորացն և յետայ մատնին ի հուր գեհնին ի յանգեքմանն ի տանջանս ինքեանք և արբանեակքն իրեանց: Եւ զմեզ ազատեայ Քրիստոս Աստուած մեր ի յանրեւոյթ աղուեսուն, այսինքն ի սատանայ է ի պտորանաց նորայ. ամէն»²⁵:

«Բագմավէպի» օրինակի հրատարակողը իրավացիորեն նկատում է եվրոպական գրականության մեջ նման նյութերի նկատմամբ եղած բացառիկ լուրջ վերաբերմունքը. «...Եթե հայկական միջավայրում ոմանք նման զրույցը ստիկ զվարճություն են համարում, ոմանք էլ չենք բան, ապա եվրոպական գիտնականների համար ոչ սակավ հարգի են նման զրույցները որպես միջնադարյան ավանդությունք և բանահյուսությունք»²⁶: Եվրոպական բանասիրությունը այդ մտտեցումները պահպանել է առ այսօր: 1970 թվականին Փարիզում հրատարակվել է ֆրանսիական գրականության հին հուշարձաններից մեկը՝ «Աղվեսի վեպը» («Le roman de Renart»): Բնագիրը, ինչպես երևում է ֆրանսերեն խորագրից, միջին ֆրանսերենով է, իսկ հրատարակությունը գիտական է, ունի նախաբան-հետազոտություն, բառարան, բառերի բանալի, «Աղվեսի վեպի» հրատարակությունների ցանկ: Ընդարձակ առաջաբանի հեղինակն է Ժան Գյու Ֆուռնեն: Նա «Աղվեսի վեպի» մասին բերում է անվանի գրականագետներ Հակոբ Գրիմի և Լեոպոլդ Սուլցբի կարծիքները, ըստ որոնց այդ վեպը ժողովրդական ու Հին ծագում ունի և առաջին հերթին կապվում է գերմանական ակունքների հետ²⁷: Միաժամանակ Լ.Սուլցբը համոզված է, որ բանավոր ստեղծագործությունը ստեղծվել և եկել է բոլոր հորիզոններից՝ Հնդկաստանից, ասիական գրականությունից, միջնադարյան բանահյուսությունից, այդ պատմություններն ու զրույցները, դուրս են եկել ամբոխից և ձևափոխումների են ենթարկվել բանավոր խոսքում²⁸:

Նիկողայոս Մառի ներկայացրած պատումը ունի իր ժողովրդական համառոտ տարբերակը Սարգիս Հայկունու «Ժողովրդական առակներ» գրքում: Սարգիս Հայկունու գրքի Բ մասը կոչվում է «Աղվեսավէպ» և մեզ հետաքրքրող առակը վերնագրված է «Գէլ ու աղուէս» և ստեղծված է Ալաշկիրտի բարբառով²⁹: Բնականաբար Ն.Մառը ծանոթ չէր այս առակին:

Ի վերջո, հետևելով Ն.Մառին, կարևորագույն խնդրին անդրադառնանք վերջում. նա գիտականորեն ապացուցում է, որ արարերեն «Աղվեսագիրքը» թարգմանված է հայերեն համանուն ժողովածուից և այդ եզրահանգումը հաստատող բազում փաստեր է բերում: Նա նշում է, որ հայկական «Աղվեսագրքում» զասական գրաբարի կողքին կան ուսմական լեզվով գրված հատվածներ, որոնք արարերենի միակերպության համեմատ շատ բազմաբնու լեզու են ներկայացնում և չեն կարող թարգմանության արդյունք լինել: Բացի այդ, նա բազմաթիվ էջերով և հարուստ լեզվական օրինակներով նկատում է հայերեն բառերի հնոքերը արարական թարգմանության մեջ: Այսպես, օրինակ, թարգմանիչը երբեմն հայերեն բառը ճիշտ չհասկանալով՝ այդ բառը բոլորովին այլ բառով է փոխարինում: Օրինակ, Աղվեսի մասին պատմող առակում զլզլոյն բառը արարերեն դարձել է գալ գայլուն և նույն առակի արարական

²⁰ Լույն տեղում, էջ 97:

²¹ Լույն տեղում, էջ 99:

²² Ն.Ոսկանյան, Զ.Կորկոտյան, Ա.Սավալյան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, Երևան, 1988, էջ 126:

²³ Լույն տեղում, էջ 129:

²⁴ Լույն տեղում, էջ 48-49:

²⁵ Ն.Մառը ևս իր գրքի տողատակում նշում է այս հատվածի բացակայությունը «Բագմավէպի» օրինակում (տես նույն տեղում, էջ 192):

²⁶ «Բագմավէպ», Վենետիկ, 1881, պրակ 9, էջ 193:

²⁷ «Le roman de renart», Paris, 1970, p.15.

²⁸ Լույն տեղում, էջ 16:

²⁹ Ա.Հայկունու, Ժողովրդական առակներ, Վարդաշապատ, 1907, էջ 32:

թարգմանութեան մեջ անհարկի հայտնվել է դայլը, որը գոյութիւն չունի նույն առակի հայերէն բնագրում³⁰:

Նիկողայոս Մառը 1894 թվականի հրատարակութիւններում դնում է գրաբար լեզվով երկու հիշատակարաններ, որով արտահայտում է նախ իր մեծագուշն սերը հայ հնագուշն լեզվի և մշակութի նկատմամբ և երկրորդ միջնադարի ոգով նրանցում հաղորդում է էական տեղեկատվութիւն: Առաջինը գրված է 1895-ի մայիսի 26-ին, Ս. Պետրբուրգում. «Գոցես անդանաւ և ազգի ազգի տեսութիւնս ի նուաստէս արարեալս և ծանաթութիւնս զանձնէ Վարդանայ Այգեկցոյ և զորոց նմին ընծային և գունակ գունակ ժողովածոյք առակաց, այլ և լուր պառ սոյն երկրորդ մասն ցուցակ սխալանացն, զորս աստէն ի կրկին ընթեռնուլ նկատեսցուք և սոքին երանի թէ բնաւ ոչ ելանիցեն ի դեմսս, բայց ավաղ տեսանեմ ահա ուրեք ուրեք զլեզուակսս գոցեսն զնենգաւոր կապս աչացն, թէպէտ և յոյժ փոքունս թուով: Իսկ կար իմ այսչափ էր»³¹: Իսկ երկրորդ բաժնի հիշատակարանը հետեւյալն է. «Փառք Աստուծոյ և երրորդութեան: Յառաջին ամի ամենայն ուստաց կայսեր Նիկողայոսի երկրորդի, ի հայրապետութեան ամենայն հայոց կաթողիկոսի Մկրտչի Առաջնոյ, որ Հայրիկ բարեոք ասի, յաւուրսն յորս ի մայրաքաղաքին հիւրընկալիւր հովիւ սրբազնագոյն հայկազեան ազգին, ի թուականութեան հայոց ՌՅՄԴ յամենան մարերի յանգ հանաւ տպեցումն տառիցս, որ է մասն երկրորդ, առատ ծախիւք Արեւելեան լեզուաց բաժնի Ս. Պետրբուրգի համալսարանի Կայսերականին և ջանիւք սպասաւորիս հայապետութեան Ն. Մառի, որ և զաչեմք զհանդիպողսդ տառիցս, չարեաւ մի՛ յիշէր զիս և ահամայ սխալանացս անմեղադիր լբուրք»³²:

Միջնադարի ոգով գրված այս հիշատակարանը ջերմութեամբ է լցնում հայազիտութեանը նվիրված ամեն անհատի՝ այն հզոր, նույնիսկ աներեւակայելի թվացող գիտնականի նկատմամբ, ինչպիսին է եղել և մնում է Նիկողայոս Մառը այս մնայուն և անգերազանցելի աշխատութեամբ, որի մասին առավել ճշգրիտ ու տեղին է ահաղեմիկոս Հովսեփ Օրբելու հետեւյալ նկատումը: Նա Ն. Մառին անվանում է հանճարեղ գիտնական, որը Անիի պեղումներով հարստացրեց ոչ միայն հայազիտութիւնը, կոպկասազիտութիւնը, այլ և Առաջավոր Ասիայի միջնադարյան պատմութիւնը³³:

ՎԻՍԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՅՐԱՏԱՐԱՎՈՒԹՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՐԻ ՄՇԱԿԱԾ ՍԿԶՐՈՒՆԲՆԵՐԸ

Այլազգի հայազեանների շարքում Նիկողայոս Մառի անունը հայերիս համար առավել հարգատ է ու նվիրական: Այդ հանգամանքը, հարկավ, պայմանավորված է ոչ միայն բազմաբնույթ ու արժեքավոր հայազիտական ուսումնասիրութիւններով, այլ և նրա արգասավոր գործունեութեամբ մեր ժողովրդի մտապատկերում սրբացված Անի մայրաքաղաքում:

Անիի հնագիտական ուսումնասիրութիւնը Ն. Մառի գիտական հետաքրքրութիւնների լայնածավալ ընդգրկման կարևորագույն բաղադրիչներէց էր, որին նա Ռուսաստանի Կայսերական հնագիտական հանձնաժողովի հանձնարարութեամբ ձեռնամուկ եղավ 1890-ական թվականների սկզբին: Մառը հետախուզական պեղումներ իրականացրեց Ակնեում, Դվինում, Զվարթնոցում, Գառնիում, 1892թ. սկսեց շուրջ մեկ ու կես տասնամյակ տևած Անիի պեղումները:

Պետրբուրգի համալսարանի հայազիտութեան ամբիոնի պրիվատ-դոցենտ Ն. Մառի հնագիտական գործունեութիւնն ի սկզբանե գուգորդված էր ինչպես շրջապատութիւնների ժամանակ հանդիպած հուշարձանների, այնպես էլ պեղումներով հայտնաբերված շինութիւնների ու կոթողների վրա պահպանված արձանագրութիւնների հավաքմամբ և ուսումնասիրութեամբ:

Նիկողայոս Մառի հետաքրքրասիրութիւնը վիժական արձանագրութիւններ ի նկատմամբ և դրանց աղբյուրագիտական նշանակութեան գիտակցումն, անշուշտ, ձևավորվել էր ավելի վաղ՝ Պետրբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետում ուսանելու, այնտեղ ժամանակի խոշորագույն գիտնական-մասնագետներին աչակերտելու տարիներին: Նա քաջածանոթ պետք է լիներ վիժագրերի հավաքման և արձանագրական ժողովածուների Corpus-ների կազմման եվրոպական փորձին, որն սկզբնավորվել էր դեռևս XV դարում իտալացի, «արձանագրագիտութեան հայր» Հորջորջված Կիրակո Անկոնացու (1391-1452) հավաքչական գործունեութեան և 1603թ. Հեյդելբերգի համալսարանի պրոֆեսոր Գրուտերի 12000 լատինական վիժագրերի ժողովածուի հրատարակման շնորհիվ:

Ռուսական պատմագիտական մտքի կողմից Կովկասի տարածաշրջանում սփռված հաղարավոր տարալեզու վիժագրերի հավաքման, ուսումնասիրման և հրատարակութեան նպատակագրութիւնը դրսևորվեց դեռևս 1879թ., երբ նախապատրաստվում էր Ռուսաստանի հնագիտական համագումարը: Նախնական նիստերից մեկում հարց բարձրացվեց համագումարի օրակարգում ընդգրկել Կովկասում գտնվող հուշարձանների որմերին հայերեն, վրացերեն և այլ լեզուներով պահպանված արձանագրութիւնների հավաքման և դրանք Corpus-ների ձևով հրատարակելու հարցը: Որպես համագումարի նախապատրաստման կոմիտեի որոշման առաջին արձագանք 1881թ. ռուսերեն լույս է տեսնում Ն. Էմիլիի հայտնի ժողովածուն՝ նվիրված Կարսի, Անիի և շրջակայքի հուշարձաններից հավաքված արձանագրութիւններին:

Հայ վիժագրութեան պատմութեան մեջ արձանագրութիւնների համակարգված հավաքման առաջին փորձի հեղինակ հիշվում է Ներսես Աշտարակեցին, որի արխիվում պահպանված 1825թ. օգոստոսի 31-ի մի նամակից տեղեկանում ենք, որ նա Սանահնի վանքի առաջնորդ Հարութիւն վարդապետ Տեր-Բարսեղյանց Շնորհացուն հանձնարարել է «Հաւաքել զամենայն զիշատակագրութիւնս գտանեցեալ ի վերայ բարաւորաց դրանց եկեղեցեաց կամ ի վերայ որմից նոցին ի

³⁰ Н. Мара, Сборники притч Вардана, стр. 51.

³¹ Ն. Մառ, Ժողովածոյք առակաց, Վարդանայ, Պետրբուրգ, 1894, էջ IV:

³² Նույն տեղում, էջ 344:

³³ И. А. Орбели, Избранные труды, т. 1, стр 223:

ներբուստ և արտաբուստ և կամ ի վերայ գերեզմանաքարանց հնագուևինս հոգևորականաց և մարմնականաց, և զգուշաւոր ուղղագրութեամբ բերել առ մեզ վասն տպել տալոյ»:

Քաջբերուևու մի հաղորդումից տեղեկանում ենք, որ նա օգտվել է Հարու-թյուն վարդապետի հավաքածուից, սակայն մեզ այն չի հասել:

Մինչև XIX դ. կեսերը լույս են տեսնում տեղադիր հեղինակներ Մ. Բժշկյանցի (1830), Հ. Շահաթուրյանցի (1842), Զայալյանցի (1842-58), հետագայում նաև Ա. Մխիթարյանցի (1856, 1865, 1870), Ն. Սարգիսյանի (1869), Սեղբակյանի (1872), Միրախուրյանի (1884-85), Սմբատյանցի (1895) և այլոց աշխատությունները: Սրանցում տեղ էին գտել Հարությունյան արձանագրություններ: Սակայն այդ Հրատարակություններն ընդգրկումով, վերձանութուններին մակարդակով չէին կարող հավակնել Corpus կոչված ժողովածու լինելուն:

Այս հանգամանքը լրջորեն գիտակցում էր Ն. Մառը և իր հայագիտական գործունեության կարևորագույն առանցքներից մեկն է դարձնում հայերեն արձանագրություններին համակարգված հավաքման, ժամանակակից գիտական մեթոդներով վերձանության, վիմագիր տեքստերի համակողմանի քննության ու Հրատարակման, այն ժամանակվա համար դժվարին, բայց հայագիտության զարգացման համար օգտակար ու անհրաժեշտ գործը: Այն է Corpus-ների պատրաստումն ու Հրատարակումը:

Այս գործընթացի սկիզբը նա, փաստորեն, դնում է 1892-1893թթ. Ռուսահայաստանում հնագիտական հետազոտություններ կատարելու ժամանակ: Կայսերական Հնագիտական Հանձնաժողովին հղած պեկուլյուս նա գրում է, որ այդ աշխատանքների ժամանակ ինքը «էական ուշադրություն է դարձրել հայկական արձանագրություններին, դրանց ընդօրինակմանը, նորերի լուսանկարմանը և հայտնիների ստուգմանը: Այդ աշխատանքների շնորհիվ, շարունակում է նա, բացահայտվեց ոչ միայն հայկական արձանագրություններում թաքցված բարձրարժեք սովյաներ, այլև դրանց անհետաձգելի հավաքման անհրաժեշտությունը»:

Ն. Մառի վիմագրագիտական պատրաստվածությունը, վիմագրերի որպես աղբյուրագիտական կարևորագույն վավերագրերի նրա գնահատանքը և, անշուշտ, գիտակազմակերպական կարողություններն առիթ են դառնում, որ Կայսերական Հնագիտական Հանձնաժողովը նրան հանձնարարի հայերեն և վրացերեն արձանագրությունների Corpus-ների կազմումը:

Այդ ձեռնարկի նախապատրաստման համար 1903թ. հունիսի 10-ին Թիֆլիսում հրավիրվում է գործով շահագրգիռ անձանց խորհրդակցություն: Դրան նախորդել էր Մառի փնտրտուքները և խորհրդակցությունները՝ հայ և վրացի համապատասխան մասնագետների այդ գործում ներգրավելու նպատակով: Նա մտադիր էր հայերեն արձանագրությունների Corpus-ի կազմման աշխատանքներում ընդգրկել գիտական շրջանակներում արդեն որոշակի ճանաչում ունեցող անձանց. երվանդ Լայալյանին, Գալուստ Տեր-Միրոսյանին, Հակոբ Մանանդյանին, Ստեփան Մախատյանցին, Մեսրոպ Տեր-Մովսիսյանին: Ցանկություն էին հայտնել իրենց մասնակցությունը բերելու Ն. Աղոնցը և Սմբատ Տեր-Ավետիսյանը: Սակայն այս կարևոր ձեռնարկին վիճակված չէր իրականանալ: Այդ կապակցությամբ, հետագայում, Ն. Մառը գրում է. «Դեռ 1903թ. հունիսի 10-ի խորհրդակցությունում պարզ դարձավ, որ այդ ժամանակ չկային համապատասխան պայմաններ, կողկտիվ գիտական աշխատանքի մեկ բոլոր մասնակիցների համար ընդունելի գիտական ուղղություն»:

Այս խնդրում Ն. Մառի հետևողականությունը մասնակիորեն իրականացավ հետագայում, երբ Կ. Կոստանյանցից ստացավ նրա կազմած «Վիմական տարեգրի» ձեռագիրը, որը Մառի խմբագրմամբ և առաջաբանով լույս տեսավ 1913թ. Պետերբուրգում:

Ն. Մառին ի սզբանն պարզ էր, որ այդ ժողովածուն չի համապատասխանում Corpus-ի ոչ գիտական և ոչ էլ մեթոդաբանական սկզբունքներին, այդուհանդերձ նա նշում է Կոստանյանցի ժողովածուի անհրաժեշտությունն ու օգտակարությունը:

XX դարի սկզբներին Ն. Մառի անունը և համբավը բավական հայտնի էր հայ գիտական և հասարակական շրջանակներում: Այս իրողության առհավատազա կարող է ծառայել մի ուշադրավ փաստ: Հովհաննես Թումանյանը «Հայագիտության ազգային ֆոնդը» հուշագրությունում 1912թ. պատմում է. «Մի քանի շաբաթ առաջ Պետերբուրգի հայ գաղութը՝ ուշադրության առնելով հայոց պատմագրության և հայագիտության խեղճ վիճակն ու մեծ կարևորությունը խորհրդակցություն ունեցավ հայկական տպագրության 400-ամյակին նախաձեռնել հիմնելու հայոց պատմագրության և հայագիտության ազգային ֆոնդ, որի նպատակը լինելու է. հավաքել, թարգմանել, ուսումնասիրել և հրատարակել...»: Այնուհետև նշված են այդ նպատակները, որոնցից մեկն էլ «Էջմիածնի, Վենետիկի, Վիեննայի, Պետերբուրգի, Բեռլինի, Փարիզի, Լոնդոնի և այլ տեղերի թանգարանների ու մատենադարանների հայոց պատմության վերաբերյալ նյութերն ու ձեռագիրները և հայոց վանքերի ու հին հիշատակարանների արձանագրությունները»: Ուշադրության է արժանի ևս մի կետ «այս ծավալ տալ պեղումներին և հրատարակել նրանց արդյունքներն ու հետազոտությունները»:

Այդ աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է համարվում կազմակերպել մի ընկերություն, կամ առնչել այս գործը եղած ազգային հիմնարկություններից մեկի հետ:

Խորհրդակցությունում, որին մասնակցում էին նշանավոր գիտնականներ և գաղութի ականավոր անդամներ, ընտրվում է հանձնաժողով, որի մեջ մտնում էին «ակադեմիկ Մառ, պրոֆ. Գարաբաջ, պրոֆ. Վարդանյան, պրիվատ-դոցենտ Աղոնց, պետական խորհրդի անդամ պ. Օ. Լուկասյան, պետական դոմայի անդամ Հովհ. Սաղաթելյան, իսկական պետական խորհրդական Գր. Տիրաբեյան, նկարիչ Վ. Սուրենյան և Պատկանյան»:

Վիմագրագիտության բնագավառում Ն. Մառի գիտակազմակերպական գործունեությունը զուգընթաց հարկ է անդրադառնալ նաև արձանագրությունների հավաքման, ընդօրինակման, վերձանության, մեկնաբանական սկզբունքներին և մեթոդաբանություններին: Անվանի վիմագրագետ Ա. Բարխուդարյանը սեղմ բնութագրելով Մառի վիմագրագիտական մոտեցումները, առանձնացնում է մի շարք հիմնական սկզբունքներ, այն է «պահպանել վիմագրերի բերություն և հնագրությունը բոլոր հատկանիշները, այլ խոսքով՝ տալ արձանագրության ճիշտ պատճեն կամ նկար, մանրամասն բանասիրական, լեզվական ու պատմական վերլուծության նկարագրել նրա ձևն ու բովանդակությունը, պարզել նրա նշանակությունը մշակույթի պատմության համար»:

Մ. Բարխուդարյանն այդ սկզբունքները համարում է «...մեր իրականության մեջ նոր մոտեցում, առաջավոր գիտության մուտքը արձանագրագիտության մեր մեծահարուստ ժառանգության բնագավառը»:

Վիմագրագիտության մեջ Ն. Մառի որդեգրած սկզբունքները, մասամբ լրինեց արտացոլումն են գտել «Վիմական Տարեգրի» նրա հեղինակած քննական առաջաբանում: Այստեղ Ն. Մառն առաջարկում է մի շարք գրություններ, որոնց շնորհիվ Կ. Կոստանյանցի ժողովածուն կդառնար առավել ամբողջական, առավել գիտական ու արժանահավատ և ինչ որ չափով կհամապատասխաներ Corpus-ի սկզբունքներին:

Նշենք այդ առաջարկությունները մի քանիսը.

- արձանագրությունները բնագրի տեքստը համեմատել նախորդ բոլոր հրատարակությունների հետ և նշել տարբերությունները,

• նախորդ հրատարակությունների հղումներն առավել ամբողջական դարձնել,

• ներկայացնել ոչ միայն ճարտարապետական հուշարձանների վրա եղած արձանագրությունները, այլև կոթողներինը (տապանաքարեր, խաչքարեր) և առարկաներինը,

• նախորդ հրատարակություններից որպես հիմք ընտրել առավել արժանահավատ վերծանվածը,

• յուրաքանչյուր արձանագրություն համար նշել բնակավայրը, հուշարձանի անունը և տեսակը, հուշարձանի որ մասում է գտնվում և այլն,

• ցանկերում բացի անձնանուններից և տեղանուններից պետք է նշել նաև տոները և սրբերին:

Նշվածներին պետք է հավելել Ն.Մառի անիական վիմագրադիտական դպրոցում ձևավորված ևս մի շարք հիմնարար սկզբունքներ ու մեթոդներ:

• յուրաքանչյուր արձանագրություն դիտարկել որպես ամբողջական պատմամշակութային վավերագիր:

• պետք է հավաքել և հրատարակել բոլոր արձանագրությունները, անկախ ընտյթից, մեծ ու փոքր լինելուց, պահպանվածություն աստիճանից:

• ընդօրինակման և հրատարակման ժամանակ խստորեն պահպանել արձանագրությունների գրչական, ուղղագրական և բոլոր այլ կարգի առանձնահատկությունները:

• հրատարակություններում վերծանողի հավելումներն ու շտկումները պետք է առնվեն պայմանական նշանների մեջ:

• հրատարակություններում վերծանություններին կից պետք է դետեղվեն արձանագրությունների գրչագրերն ու լուսանկարները:

Վերադառնալով «Վիմական Տարեգրին» հարկ է արձանագրել, որ այնտեղ առկա թերությունները Ն.Մառը չի պայմանավորում միայն Կ.Կոստանյանցի կամ նախորդ արձանագրահավաքների մասնագիտական որակներով: Նա, ցավով, մատնանշում է Հայկական արձանագրությունների բազմակողմանի քննությունը նվիրված հատուկ ուսումնասիրությունների բացակայությունը: Ն.Մառը նկատում էր վիմագրերի լեզվին, քերականությանը, բազմաբնույթ տերմիններին, տեղանուններին ու անձնանուններին վերաբերող հետազոտությունները:

Վիմագիր սկզբնաղբյուրների բարձր գնահատանքը, զբանք գիտական նոր, առաջավոր սկզբունքներով ու մեթոդներով հավաքելու ու հրատարակելու անհրաժեշտության գիտակցումն ու աշխատանքը չահեկանորեն փոխանցվեց Մառի գործընկեր-աշակերտներին, հատկապես հետագայում, արձանագրությունների հավաքման գործում մեծապես ավանդ ներդրած Հովսեփ Օրբելուն, Աշխարհբեկ Քալանթարին և ուղեկից հանդիսացավ հայ վիմագրագիտության զարգացման ամբողջ գործընթացի համար:

* [Վիմագրերի հավաքման ու ղիվանցման հրատարակելու գիտական կարևորության և հրատարակության մասին Ն.Մառը բազմիցս դիմել է կայսերական Յնագիտական հանձնաժողովին և այլ պատկան կազմակերպությունների ու կարող անձանց: Այդ կարգի զեկուցագրերի մի փունջ հրատարակված է «Բանբեր Յայաստանի արխիվների» հանդեսում (1984, N 3, էջ 39-48): - Խմբ.]

ՓԱՒՍՏՈՍԻ ՍԱԿԱՆՈՒՆԸ ԵՂԵԼ, ԹԵ՛ ԴԱՐՁԵԼ Է ԲՈՒԶԱՆԴ

Փաւստոս Բուզանդի մականունն հնից եկող միակ մեկնարանութիւնը պատկանում է Ղազար Փարպեցուն, որը նրան դիտում է իբրև Բիւզանդացի (այսինքն Կոստանդնուպոլսեցի), այդ մականունը սերելով Կոստանդնուպոլսի հին անունից՝ Բիւզանդիոնից¹: Ճիշտ է, ոմանց կարծիքով Փաւստոսի շարադրանքը Ազաթանգեղոսի համեմատութեամբ անյաջող է՝ «կարծեցին ոմանք բանք ինչ յարմարք և դիպողք»: Մայրաքաղաքում ուսում առած մէկը չէր կարող այնպիսի «անհաճոյս յողաց բանս» անցկացնել իր պատմութեան մէջ: Հնարաւոր է, ինչ որ մէկը յափշտակել է հեղինակի գործը և շարադրել ըստ իր սեփական ճաշակի: Հնարաւոր է նաև, որ միջամտող անկար մէկն է եղել, վնասել է երկին, սխալները ծածկել Փաւստոսի անունով - «ուրուք անկարեալ դիպողս այլաբանեալ վնասեաց, և անուստի Փաւստոսին զիւրոյ յանգեալութեանն սխալանս համարեցաւ ծածկել»: Այսպէս թէ այնպէս, Հայոց Երկրորդ պատմութիւնը (ինչպէս Փարպեցիի անուանում է իր նախորդի գրածը) յայտնի է եղել նրան Փաւստոս Բիւզանդացու անունով: Անգամ նրա տարակուսանքը հեղինակի վերաբերեալ խօսում է յօդուտ այդ դրոյթի: Եւ եթէ Փարպեցու գործի գիտական բնագրում տեղ է գտել Բուզանդացի ձևը², ապա հարկաւոր է յիշել, որ հրատարակութեան հիմքը կազմում է 1672թ. մի ձեռագիր, որը անունը վաղուց ի վեր փոխել էր իր նախնական տեսքը (տես ստորև): Այն զաղափարը, որ Երկրորդ պատմութեան հեղինակ Փաւստոսը կրել է «Բիւզանդացի» մականուն, մուտք է գործում աւանդութիւն առնուազն Փարպեցու օրօք և յարատեւում մինչև վերջին ժամանակներս: Փաւստոսի բնագրում իր այժմեան տեսքով կայ մի յետին յիշատակագրութիւն, ուր նրա աշխատութիւնը ներկայացուած է որպէս «ժամանակագիր կանոնք Փաւստեայ Բիւզանդեայ ժամանակագիր մեծի պատմագրի, որ էր ժամանակագիր Յունաց»³:

Առաջին անգամ այդ ընդհանուր տեսակէտը վերանայուեց 1947թ., որը լոյս տեսաւ (յետմահու) Սոսիփանոս Մալխասեանցի ձեռքով կատարուած Փաւստոսի աշխարհաբար թարգմանութիւնը՝ ճոխ առաջարանով և ծանօթագրութիւններով: Ականաւոր հայագէտը ասում է. «Բուզանդ բաւը ոչ թէ անձի յատուկ անուն է, այլ աշուղական կոչում, ինչպէս հնուց ի վեր սովորութիւն է եղել, որ մեր աշուղները ընտրել են իրենց համար կոչումներ պարսկական և տաճկական բառերից (Մայաթ-Նովա, Մէյադ, Զիվանի և այլն). նոյնպէս վարուել է և անձանթ Փաւստոս հեղինակը, պարսկական բուզանդ բառը ընտրելով իբրև

¹ Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ.Տեր-Սլրոշեան և Սո. Մալխասեան, Տիֆլիս, 1904, էջ 4.11, 21, 23: Նոյն քաղաքը յիշելիս Մովսէս Խորենացին օգտագործում է Բիւզանդիա (սեռական՝ Բիւզանդիոյ) կամ Բիւզանդիոն ձևերը (Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ.Արեղեանի և Ս.Յարութիւնեանի, լրացումները Ա.Բ.Սարգսեանի, Երեւան, 1991, էջ 279.1, 306.21, 361.5 և 252.13, 24 (280.13, 257.7, 12 (333.5, 339.16), 275.7, 17, 297.8, 13, 18, 325.4, 333.9, 355.3, 341.9, 12, 13, 17, 346.9):

² Ղազ. Փարպ., էջ 3-4:

³ Անդ, էջ 3.29:

⁴ Փաւստոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս, չորրորդ տպագրութիւն, Վենետիկ - Ս.Ղազար, 1933, էջ 68:

աշուղական կոչում: Սրանով պարզուամ է և բուզանդարան բառի նշանակությունը՝ իբրև բուզանդների ժողովածու, նմանությունը երգարան, տաղարան բառերի և նշանակում է ժողովածու գրքյաների, մեկնություն կամ ազատ թարգմանություն բանաստեղծություններ...»⁵:

Բյուրովին նոր մատեցում էր դա, կարելի է միայն զարմանալ, որ գիտական մամուլում այն որևէ արձագանք չգտաւ: Ստ. Մալխասեանցի մեկնաբանությունը լրիւ անտեսել է Փաւստոսին նուիրուած իր ակնարկում Ա.Մարտիրոսեանը⁶, նոյնպէս են վարուել «Հայ ժողովրդի պատմութիւն» ակադեմիական բազմաՀատորեակի Հեղինակները⁷: Եթէ չեմ սխալուած, միայն «Հայկական Հանրագիտարանն» է գրանցել Ստ. Մալխասեանցի կարծիքը անանուն մի յօդուածում⁸:

Բայց ահա, 1986թ. Ա. Փերիխանեանը ելոյթ է ունենում Հայոց միջնադարեան գրականութեանը նուիրուած միջազգային գիտաժողովում (Երևան, սեպտեմբերի 15-19, 1986) և նոյն թուականին հրատարակուած ամբողջութեամբ իր տեսակէտը խնդրոյ առարկայ Հարցի վերաբերեալ: Կրկնելով Ստ. Մալխասեանցի թեզը Փաւստոսի մականուան վերաբերեալ և վերականգնելով բուզանդ բառի պարթևական նախատիպը որպէս *bōzand, նա գալիս է այն եզրակացութեան, որ այդ բառը «նշանակում է երգիչ և դրանով «Փաւստոսի» աշխատութեան սկզբնական խորագիրը, որ է Բուզանդարան պատմութիւնը, դառնում է յստակ-բուզանդարան կարող է նշանակել միայն 'պատմամեթրիկ/երգերի ժողովածու', 'վէպ', և ամբողջը թարգմանուած է 'Վիպական պատմութիւններ' (Le sens de l'arm. buzand s'établissant comme 'rapsode', le titre original du livre de 'Fauste' (Buzandaran patmut' iwnk') devient clair: buzandaran peut signifier rien d'autre que 'collection de récits/chants épiques' > 'épopée', et le tout se traduit comme 'Histoires de l'épopée')¹⁰

Այդ մտտեցումն իսկոյն գտաւ ընդհանուր ճանաչում: Մերժելով «Բիւզանդացի» մականունը և կասկածի ենթարկելով անգամ «Փաւստոս» անունը, Նինա Գարսոյեանը իր շատ արժէքաւոր գործը հրատարակեց «Բուզանդարան պատմութիւնը» վերնագրով¹¹. Ի. Թոմսոնը լոնդոնային միացաւ Ա.Փերիխանեանի կարծիքին¹², նոյնպէս վարուեց Ժ.-Պ. Մահէն¹³, Ե.Ռնուն¹⁴ և

կարծես Լ.Աւերդյանը¹⁵: Տուրք է տուել այդ գալթակղիչ տեսակէտին նաև տողերիս Հեղինակը¹⁶: Տեսակէտի տարածմանը նպաստել է, անշուշտ, այն Հանգամանքը, որ Փաւստոսի ոճը ունի բացայայտ վիպական երանգ (թէպէտ և միջնադարեան մատենագիտական ցանկերում նա իր տեղն է գտել միւս պատմիչների կողքին¹⁷, նրա երկը մեզ է Հասել պատմական աշխատութիւնների ձեռագիր ժողովածուների կազմում¹⁸, իսկ յետին մի յիշատակարանում նա դիտուում է իբրև «ժամանակագիր մեծ պատմագիր»¹⁹):

Սակայն բազմակողմանի վերլուծութիւնը և յատկապէս դրաւոր աւանդոյթը յանգեցնում են այլ եզրակացութեան: Անկարելի է անտեսել Ղազար Փարպեցու խօսքերը Փաւստոսի վերաբերեալ, Փաւստոսի պատմական երկը գրուել է 6 դարի 70-ական թուականներին, իսկ Ղազարինը՝ նոյն դարի 90-ականներին, Հետևաբար Ղազարը Հանդէս է գալիս իբրև իր դրական նախորդի ժամանակակից կամ կրտսեր ժամանակակից: Եթէ ընդունենք Ստ.Մալխասեանցի և Ա.Փերիխանեանի տեսութիւնը, ապա Ղազար Փարպեցին, աչքի առաջ ունենալով Երկրորդ պատմութեան տիտղոսաթերթը, կամ չի Հասկացել բուզանդ բառի նշանակութիւնը, կամ դիտաւորեալ աղաւաղել է այն: Թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ վարկածները թուում են անհեթեթ: Յունա-հռոմէական «Փաւստոս» անունը Հայերի Համար միշտ եղել է օտար և բնական եղանակով այն աւելի առնչուած է ինչ-որ բիւզանդացու, քան Հայ «աշուղի» Հետ: Աւելացնենք նաև, որ Հայ գրական աւանդոյթում Փաւստոսը դիտուել է իբրև պատմիչ և ոչ «ասող»:

Միաժամանակ, խնդրոյ առարկայ մականուան յիշատակումը գրական այլ երկերում, ինչպէս նաև ձեռագրական աւանդոյթը միանգամայն բաւարար եղանակով լուսարանում են Բուզանդ ձևի առաջացումը, Բիւզանդացի > Բուզանդ անցումը: Նախ և առաջ Բիւզանդացի կառուցվածքը կորցնում է վերջաւորութիւնը, և ահա թովմայ Արծրունին²⁰, Ասողիկը՝ և Կիրակոս Գանձակեցին²² յիշում են մեր պատմիչին Բիւզանդ անունով: Զուգահեռաբար փոփոխութիւն է ապրում իւ երկբարբառը՝ Մամուէլ Անեցին²³ և Զաքարիայ Սարկաւազը²⁴ ճանաչում են պատմիչին արդէն որպէս Բուզանդ: Երկբարբառի այդպիսի փոփոխութիւնը ընկալանաւ է Հայերէնում: Է դարի 30-40 – թուականներին արձանագրութեան մեջ Հանդիպում ենք ԱՐՆՈՑ բառին.

¹⁵ Pseudo – Yovhannēs Mamikonean, The History of Tarōn [Patmout' iwn Tarōny], Historical Investigation, Critical Translation and Historical and Textual Commentaries by Levon Avdoyan, Atlanta Press, Atlanta, Georgia, 1993, էջ 15 և այլուր:

¹⁶ Կ. Ն. Իւզրաշեան, Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը, Երևան, 1989, էջ 99:

¹⁷ Յ. Աւետեան, Հայկական մատենագիտութիւն, հ. Ա, Երևան, 1959, էջ LII, LIII:

¹⁸ Տե՛ս օրինակ, Մատենադարան, հայերէն ձեռագրերի ժողովածու, # 1482 (1678թ.), # 1882 (1641թ.), # 4584 (1668թ.):

¹⁹ Տե՛ս ծան. 4:

²⁰ Թովմայ վարդապետի Արծրունի Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս եւած Զ. Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 275 (նոյն ձևով է յիշում նաև Կոստանդնուպոլիս քաղաքը, էջ 89):

²¹ Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, երկրորդ տպագրութիւն, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 7, 69:

²² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ.Ա.Սնիք – Օհանջանեանի, Երևան, 1961, էջ 7:

²³ Մամուէլի քահանայի Անեցոյ Հաւարմունքի գրոց պատմագրաց ..., Վաղարշապատ, 1898, էջ 3:

²⁴ Չարաբեայ Սարկաւազի Պատմագրութիւն, հ. Գ, Վաղարշապատ, 1870, էջ 3:

⁵ Փաւստոս Բուզանդ, Հայոց պատմութիւն, քարգմանութիւն, ներածութիւն և ծանօթագրութիւններ ակադեմիկոս Ստ.Մալխասեանցի, Երևան, 1947, էջ 310 (ծան. 1):

⁶ Տե՛ս Հայ մշակոյթի նշանաւոր գործիչներ, Ե.-ԺԸ դարեր, Երևան, 1976, էջ 35-44:

⁷ Հայ ժողովրդի պատմութիւն, հ. Բ, 1984, էջ 35-44 (Ե. Տըր – Սիմասեան, Ա.Բ. Յարութիւնեան):

⁸ Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 12, 1986, էջ 314:

⁹ Anahit Périkhanian, Sur arménien buzand, Armenian Studies – Études arméniennes, In memoriam Haig Berbérian, Dickran Kouymjian Editor, Calouste Gulbenkian Foundation, 1986, pp. 653-657, Գիտաժողովի նիւթերը հրատարակուած են 1986թ., Ա.Փերիխանեանի ամփոփումը հայերէն՝ էջ 229-230, ռուսերէն՝ էջ 154-155 (առանց Ստ.Մալխասեանցի անուան յիշատակումի):

¹⁰ Անդ, էջ 657:

¹¹ The Epic Histories Attributed to P'awstos Buzand (Buzandaran Patmout' iwnk'). Translation and Commentary by Nina G.Garsoian, Cambridge Massachusetts, 1989.

¹² The History of Lazar P'arpeci, trans. by Robert W.Thomson, Scholars Press, Atlanta, Georgia, 1991, էջ 34, (էջ 2, ծան. 4):

¹³ J. - P. Mahé, Entre Moïse et Mahomet: réflexions sur l'historiographie arménienne, Revue des Etudes Arméniennes, t. XXIII, 1992, էջ. 121-153.

¹⁴ Christianismes orientaux, Introduction à l'étude des langues et des littératures, les Éditions du Cerf, Paris, 1993, էջ 141.

Պ.Մուրադեանը համոզիչ կերպով ցոյց է տալիս, որ դա արուն (կամ արին) ձևի հոգնակի սեռականն է, նախնական ձևը լինելով արին²⁵: Բարբառներում հիւսելը բայը գտնուում է հուսել, դիւրին > դուրին, իւրեանք > ուրանք, ձիւթել > ծութել, ձիւն > ձուն, այլուր > ալուր են²⁶: (Օգտուելով առիթից յիշենք, որ Նար-Դոսի հերոսներից մեկը «նիւթ» բառը արտասանում է նութ, իսկ երևանի Բուժանիս թաղամասի անունը ծագում է «Բիւթանիս» (Գործ. ԺԶ, 7) տեղանունից): Նոյն այդ միտումը դարձրել է Բիւզանդացի մականունը Բուզանդացի, ինչպես այն յիշատակում է Ղազար Փարպեցու ամբողջական հնագոյն ձեռագրում:

Գրչագրերում Փաւստոսի երկը վերագրում է Բիւզանդին²⁷ կամ Բուզանդին²⁸ (մեծ մասամբ սեռականով):

Ապացուցելով իրենց թեզը, թէ՛ Ստ. Մալխասեանցը և թէ՛ Ա. Փերիխանեանը որպէս ելակէտ ընդունում են Բուզանդարան պատմութիւնը կառուցվածքը, որը կրկնուելով չորս անգամ, Վենետիկի հրատարակութիւններում հանդէս է գալիս իբրև Փաւստոսի չորս զպրութիւններից կազմուած երկի իւրաքանչիւրի վերնագիր: Իրօք, Վենետիկի բոլոր հրատարակութիւններն ունեն այդ՝ այն էլ գլխատառով շարուած վերնագրերը, մինչդեռ իրապէս դա ձեռագիր աւանդութի բացառապէս խախտում է: Վենետիկի ձեռագրերի տուեալները ճշտիւ արձանագրուած են հանգուցեալ Սահակ վրդ. ձեռնագրերի վերջերս հրատարակուած Ցուցակում²⁹: Խնդրոյ աւարկայ գրչագրերն են՝ # 1176, ԺԶ դ., # 1188, ԺԶ դ., # 721, ԺԷ դ., # 1646, ԺԷ դ., # 2460 (1780 թուականի տպագրի ընդօրինակութիւն), նկարագրուած են 887, 890, 915, 919 և 925 համարների տակ: Առանձին դէպքերում գրքերի վերնագրերը պարունակում են հեղինակի անունը: Այսպէս, # 1176, թ. 288 ր. – Դպրութիւն Հինգերորդ Բուզանդեա. #1188, թ. 38 ա – Չորրորդ զպրութիւն Բիւզանդեայ. նոյն ձեռագիր, թ. 122 ր. – Դպրութիւն Հինգերորդ Բուզանդեայ. # 1721, թ. 290- [Չ]որրորդ զպրութիւն Բուզանդեայ, թ. 370 ր. – [Բ]ուզանդեայ վեցերորդ խոստարանութիւն պատմութեանց. կանոնք ժամանակագիր մատենից: Սայն մատենի գրիչը յիշում է հեղինակին հետեւայ եղանակով՝ Բուզանդ պատմագր[ի] օրինակը մինչև աստ էր (թ. 375ա): Սակայն դայթակղիչ դեր կատարած Բուզանդարան պատմութիւնը կապակցութիւնը հանդէս է գալիս միայն մի դէպքում, Փաւստոսի երկին անհարազատ մի առաջարկում – Բուզանդարան պատմութիւնը. խոստարանութիւն նախագիտելի. այս ինչ է զպրութիւնս երրորդ ևն...³⁰ Առաջարանը յետին

²⁵ П. М. Мурадян, Армянская эпиграфика Грузии, Картли и Кахети, Ереван, 1985, стр. 19-21.

²⁶ Երախտապարտ եմ տ. Անահիտ Յանեանին, որը յատուկ քաղցեց և իմ տրամադրեց մէջ քերտուած օրինակները, տես նաև նրա յօդուածը՝ Գրարարի ոչ և իւ երկարաբառների պատմական հնչյունաբանութեան շուրջը, «Հայոց լեզուի պատմութեան հարցեր» ժողովածու, Բ պրակ, 1885, էջ 37-58:

²⁷ Տեսնել օրինակ՝ Մատենադարան, # 1867, p. 220ա, 321 p; # 2748, p. 132p; # 3071, pp. 285 ա, 308p, 382p և այլք: Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպ. Պողոթեան, Երուսաղէմ, Ի. Բ., 1967, # 307, pp. 204 p, 265 ա, 305 ա; # 303, a. 1649 էջեր 274, 356, 407; Ի. Ե., 1971, # 1553, p. 216 ա; Ի. Ա., 1966, # 230, pp. 287 p, 343 ա, 377 ա:

²⁸ Մատենադարան, # 1867, p. 280 ա; # 4584, pp. 193 ա, 207 ա, 216 ա; Ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Ի. Բ., # 436, p. 326 ա:

²⁹ Հ. Ս ա հ ա կ վ ր դ . Ճ ե մ ճ ե մ ե ա ն , Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Ի. Ա. Ղազար, 1996: 1998 թ. նոյեմբերի 20-ին ես հմարատրոյիմ եմ ունեցել ամենամբ տեսնելու այդ գրչագրերը և ակամայից համոզուելու, որ Ցուցակը ամենայն հարազատութեամբ վերարտադրել է ձեռագրերի համապատասխան տողերը:

³⁰ Փ ա լ ս տ ո ս Բ ու զ ա ն դ ա ղ ա ղ յ յ Պ ա տ մ ո թ ի ն Հ ա յ ո յ , 1933, էջ 13:

ժամանակի ներմուծութիւն է, այս հարցի վերաբերեալ բանասէրները միաձայն են. նինա Գարսոյեանի կարծիքով այն մուտք է գործել յետ – Բագրատունեաց շրջանում³¹: Ի՞նչ հիւմք ունենք ենթադրելու, որ վիլյակոչուած գրութիւնում «բուզանդ» արտայայտութիւնը ունի հատուկ իմաստ, մինչդեռ բոլոր միւսների երևակայութեան մէջ նա տպաւորուել է իբրև «Բիւզանդացի» մականունան վերափոխումներից մէկը:

Այսպիսով, հրատարակիչների ձգտումը ապահովել Վենետիկի հրատարակութիւններին առաւել պատկերաւոր տեսք, թիւրիմացութեան մէջ է գցել զիտնականներին և նպաստել սխալ եզրակացութիւններին: Այդ կապակցութեամբ աւելորդ է նշել, որ Փաւստոսի անդրանիկ տպագրութիւնը (Կոստանդնուպոլիս, 1730) և Բ. Պատկանեանի կողմից պատրաստուածը (Ս. Պետերբուրգ, 1883) գերծ են մնացել նման վրիպումից:

Ստորև որպէս օրինակ վերարտադրում ենք Մատենադարանի # 1867 (1622 թ.) գրչագրի խորագրերը, որոնք կրկին անգամ ցոյց են տալիս «Բուզանդարանի» իսկական տեղի ու դերը

թ. 190 ա – Բուզանդարան պատմութիւնը. խոստարանութիւն նախագիտելի է³².
թ. 220 ա – Չորրորդ զպրութիւն Բիւզանդեայ. չորրորդ խոստովանութիւն զոր ասացելոցս եմ կարգել զզպրութիւն կանոնք զարք և դարք պատմութեանց. զրոյցաց խոստումն.

թ. 280 ա – Դպրութիւնը Հինգերորդ Բուզանդեա.
Հինգերորդ խոստարանութիւն զոր ասելոցս եմ՝ կարգել զզպրութիւն զպրութեանց կանոն ժամանակագիր մատենից.

թ. 321բ – Բիւզանդեայ վեցերորդ խոստարանութիւն պատմութեանց. կանոնք ժամանակագիր մատենից:

Փաւստոսի երկը մեզ է հասել իբրև ինչ-որ ժողովածուի մաս. այդ ժողովածուն ունեցել է անուշաղն 6 բաժին, ընդ որում երրորդը, չորրորդը, հինգերորդը և վեցերորդը կազմել են համապատասխան եղանակով Փաւստոսի Պատմութեան առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ զպրութիւնները: Դժուար է պատկերացնել, ինչպէս մի խմբագիր այդ մասերը միւսներից անջատելու նպատակով, նշել է նրանց «Բուզանդարան պատմութիւնը» արհեստական վերնագրով:

Դպրութիւնների վերնագրերից պարզ երևում է, որ Բիւզանդ / Բուզանդ ձևերը հետեւում են մէջընդմէջ: Նոյնը յատուկ է նաև յետին վերնագրին «Բուզանդարան պատմութիւնը» բանաձևին զուգահեռ գրչագրերը պահպանել են «Բիւզանդարան պատմութիւնը»³³ և «Բիւզանդական պատմութիւնը»³⁴ ձևերը: Միանգամայն հնարաւոր է, որ այս դէպքում առաջնայինը Բուզանդարանն է, իսկ միւսները՝ դրա «գիտական» ուղղումները. սա ոչինչ չի ասում յօդուտ այն կարծիքի, որ «Բուզանդը» ընդհանրապէս նախորդել է «Բիւզանդացուն»: Ճիշտ հակառակը բուզանդ ձևը յետին է և արդիւնք է հայերէնին յատուկ հնչիւնական փոփոխութիւնների³⁵:

Ինչ վերաբերում է «Բուզանդարան պատմութիւնը» արհեստական կառուցվածքի նշանակութեանը, ապա -արան մասնիկը պարզորոշ կերպով պահոցի իմաստ ունի: Բուզանդարանը Բուզանդ-ներ է պարունակում, ընդ

³¹ The Epic Histories Attributed to P'awstos Buzand, էջ 41:

³² Երրորդ զպրութեան վերնագիրը բացակայում է:

³³ Ցուցակ Ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Ի. Ա., # 230, p. 259 ա, Ի. Բ., # 436, p. 261 ա:

³⁴ Մատենադարան, # 3071, p. 286 ա; # 6321, a. 1624, p. 12 ա:

³⁵ Փաւստոս Բուզանդի Ձեռագրի ցուցակից. Գ. Տ է թ - Վ ա ր դ ա ն ե ա ն , Փաւստոս Բուզանդի հրատարակութիւններն ու ձեռագրերը. - Հայկազեան հայագիտական հանդէս, Ի. ԺԺ, Պէյրոս, 1999, էջ 9-63:

որում բառս հանդէս է գալիս փոխաբերական իմաստով, իբրև Փաւստոս Բիւզանդացու աշխատութեան առանձին դպրութիւնների խորհրդանիշ: Խոստաբանութեան մէջ «բուզանդարան» բառը առնչուում է «պատմութիւն»-ի հետ, յոգնակիրով: Գրութեան հեղինակը հատուկ ընդգծում է դպրութիւնների քանակը «Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ՝ պատմութեանցս. ժամանակագիր կանոնք մատենից, և առ նմին դպրութիւնք երեք, այս ինք են սոքա չորք մատեանք. և չորեքին միոյ իրաց յիշատակարանք են... Եւ չորս խոստմունս չորից չորեցունց դպրութեանցս յիւրաքանչիւր իւր գլուխս պատրաստեցի մինչև ի կատարած սորին...»³⁶:

Այսպիսով, այն երկը, որը Ղազար Փարպեցին սահմանում էր որպէս «Հայոց երկրորդ պատմութիւն» հեղինակել է Փաւստոս Բիւզանդացին, որի մականունը հետագայում տարածուեց նաև փոփոխուած «Բիւզանդ» կամ «Բուզանդ» ձևով: Յատկանշական է, որ այն բանասէրները, որոնք կասկածի տակ չէին դնում հեղինակի իսկական անունը (Մանուկ Աբեղեանը, Հրաչեայ Աճառեանը և շատ շատերը), յիշում են նրան պարզապէս իբրև «Բուզանդ»՝ մի ձևով, որ միանգամայն հարազատ է հայերէնին: Նոյն փոփոխութիւնն է կրել անգամ պոլսեցի Հայերի մօտ տարածուած Բիւզանդ անձնանունը, որը Հր.Աճառեանի վկայութեամբ, ԺԹ դարում հնչում էր Բուզանդ³⁷:

Այսպիսով, «Հայոց երկրորդ պատմութեան» հեղինակը մտել է գրականութեան մէջ և ճանաչում ստացել որպէս Փաւստոս Բիւզանդացի: Դրանով Սոս. Մալխասեանցի և Ա.Փերիխանեանի սրամիտ և իրօք գայթակղիչ ստուգարանութիւնը, նրա կապը պարթևերէնի ենթադրական *bōzand-ի հետ դառնում է երևակայական: Բայց թէ ո՞վ է եղել իրապէս այդ՝ բիւզանդական անուն-մականուն կրող և միաժամանակ ամէնից հայկաբան պատմիչը՝ մնում է դեռևս առեղծուած:

³⁶ Փ աւ ս տ ո ս ի Բ ու զ ա ն դ ա ց ո յ Պ ա տ մ ո ս ի ն Հ ա յ ո յ, էջ 011:

³⁷ Հ ր . Ա ճ ա ո ե ա ն , Հ ա յ ո յ անձնանունների բառարան, Խ. Ա, Երևան, 1942, էջ 415:

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՊՈՒՅՆ ԶԵՆՈՒԳՐԵՐ

Հայ մատենագրութեան ԺԲ դարի նշանավոր ներկայացուցիչներից է Հովհաննես Սարկավազի Անիի դպրոցի սան, քաղաքի Մայր տաճարի ավազերեց Սամվել Անեցին, որն իր «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտ ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ» վերնագրով ժամանակագրութունը գրել է կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (1113-1166) պատվերով: Տարբեր հեղինակներ Անեցու ժամանակագրութեան ավարտման տարեթիվ են համարել 1177, 1179, 1180 թվականները: Մեր համոզմամբ պատմիչը տեղեկութունների հիշատակումն ավարտել է 1163 թվականով, ինչը երևում է ժամանակագրութեան թվակիր հնադույն ընդօրինակութունից, կատարված Կամբջաձորի վանքում 1176 թ.¹:

Անեցու ժամանակագրութունը հրատարակել է Արշակ Տեր-Միքելյանը 1893 թ. Վաղարշապատում, ձեռքի տակ ունենալով էջմիածնի մատենադարանի 13 ձեռագիր, հնագույնը՝ ԺԳ դար (Մատենադարան, ձեռ. թիվ 1898), մյուսները՝ ԺԶ-ԺԷ դարերի: Բնագրի մասին հրատարակիչը նշում է. «Ներկայ հրատարակութիւնն արուած է մանրամասն համեմատութեամբ գրչագիրների: Այդ համեմատութիւնից կերեւայ պարզապէս, որ Սամուէլի Պատմութիւնը շատ է ենթարկուել կողմնակի անձանց աւելացումների: Դորան նպաստել է այն անգամանքն, որ այս պատմութիւնն առաւել շատ յարմարութիւններ է ունեցել այդ քմահաճութիւնների համար. Սամուէլի պատմութիւնն միակն է մեր մատենագրութեան մէջ, որ ցրուած է մի ժամանակագրական համեմատական աղիւսակի մէջ... գրչակներ բաց տեղեր տեսնելով պատմութեան ընթացքի մէջ՝ կաւելացնէին եւ գանազան պատմական տեղեկութիւններ, լինէին դոքա գրաւոր աղբիւրներից թէ ի լրոյ: Ուստի եւ հասկանալի է, թէ ինչու շատ կտորներ մէկում կան, միւսում չկան»²:

Սամվել Անեցին Հայ մատենագրութեան մեջ առաջինն է, որ որդեգրել է Եվսերիոս Կեսարացու «Քրոնիկոնի»³ սկզբունքը ժամանակագրական դուզադիր նեղ սյունակները տեղադրել էջի կենտրոնում իսկ տեղեկութուններին հատկացրել է էջի աջ եւ ձախ կողմերի համեմատաբար լայն աղյուսակները: Այն հատվածներում, ուր տեքստը ծավալով շատ է, աղյուսակն ընդհատվում է, եւ սկսվում սովորական շարադրանքը՝ էջի ողջ լայնքով, որի ավարտին կրկին հաջորդում են աղյուսակները: Բնականաբար, ամեն տարի էջ, որ ժամանակագիրը գուզադիր տեղեկութուն ունի ուստի աղյուսակներում բավականաչափ ազատ տեղեր են մնում: Հենց դրանք էլ գրավել են հետագայի

¹ Կ. Մաթեոսյան, Սամուել Անեցու «Ժամանակագրության» ավարտման թվականը եւ պատվիրատուն, «Պատմա-բանասիրական հանդես», 1992, թիվ 1, էջ 156-162: Նույնի՝ Սամուել Անեցի (կենսագրական լրացումներ), «Էջմիածին», 2003, Զ, էջ 47-57:

² Սամուէլի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտ ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջարանով, համեմատութեամբ, յաւելումներով եւ ծանօթագրութիւններով Արշակ Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893, էջ ԻԵ-ԻԸ (այսուհետեւ՝ Անեցի): Անեցու երկն ավելի վաղ թարգմանվել ու հրատարակվել է լատիներեն եւ ֆրանսերեն:

³ Եւսերի Պամփիլեայ Կեսարացույ ժամանականք, Վեներտիկ, 1818:

ընդօրինակող գրիչներին ու բանիմաց ընթերցողներին, որոնք տարբեր տեղեկություններով յուրովի «լրացրել» են ազատ տեղերը:

Բարեբախտաբար, մեր օրերն են Հասել Անեցու երկի մի քանի հնագույն ընդօրինակություններ, որոնք թույլ են տալիս փրկահանգներ Հեղինակային բնագիրը: Հնագույն օրինակների առկայության շնորհիվ Հնարավորություն է առաջանում ի մի բերել հետազայում տարբեր Հեղինակների ներմուծած ժամանակագրական բազմազան տեղեկությունները: Եթե Ա. Տեր-Միքելյանը հրատարակության ժամանակ, ինչպես ասվեց, 13 մատյան է օգտագործել, ապա այժմ միայն Մեարոպ Մաշտոցի անվ. Մատենադարանում Սամվել Անեցու ժամանակագրության 33 ընդօրինակություն կա, որոշ օրինակներ էլ տեղ են գտել արտերկրի Հայերեն ձեռագրերի Հավաքածուներում: Այս բոլորի հետազոտումը մեր պատմությունը կարող է հարստացնել լրացուցիչ տվյալներով:

Հարկ է նաև նշել, որ ընդօրինակողները եւ ուրիշներ ոչ միայն տեղեկություններ են մուծել ժամանակագրության տարբեր մասերում, այլև շարունակել են այն 1163 թվականից հասցնելով մինչև 14-րդ, երբեմն՝ 17-րդ դար: Թերևս դրա համար նրանք որոշ հիմք են տեսել ժամանակագրության վերնագրում՝ «յաղազս գիւտ ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս», արձանագրելով իրենց համար «ներկա» ժամանակի դեպքերը:

Անեցու բուն ժամանակագրությունը բավական փոքրածավալ գործ է: Եթե ձեռագրերում այն 120-140 էջ է կազմում, արդի միջին չափի զրքում, աղյուսակներով հանդերձ, շուրջ 100 էջ է զբաղեցնելու: Ընդ մինն անհրաժեշտ է հրատարակել աղյուսակներով, քանի որ դրանք առանձին հետաքրքրություն են ներկայացնում եւ Հեղինակից շատ մեծ ջանք են պահանջել: Ա. Տեր-Միքելյանն իր հրատարակության մեջ դրանք զանց է առել պատճառաբանելով «անընթերցանելի» լինելն ու բուն «ժամանակագրական համեմատությունների բազմաթիւ սխալներ» ունենալը:

Ժամանակագրական անհամապատասխանություններ աղյուսակներում հիրավի կան, սակայն դեպքերի հիշատակման այս եղանակը հնարավորություն է տալիս որեւէ իրադարձության թվականը տեսնել ժամանակագրական տարբեր հարթություններում: Դիցուք նշված է որեւէ դեպք, իսկ աղյուսակներում՝ թվականը՝ Քրիստոսի ծննդից հաշված, բյուզանդական որ կայսեր, Հայոց որ թագավորի, Հայոց որ կաթողիկոսի որերորդ տարում էր, Հայոց մեծ թվականի որ թվականին: Այստեղ հիմնական ուղենիշը փրկչական եւ Հայոց մեծ թվականներն են, սակայն կան դեպքեր, ուր կաթողիկոսի աթոռակալության տարվա նշումն է որոշիչը տվյալ իրադարձության տարեթիվը պարզելու գործում:

Մխիթար Անեցու աղբյուրներին անդրադառնալիս Հ. Մարգարյանը նշում է, որ պատմիչը Սամվել Անեցու ժամանակագրությունը համարում էր ամենահավաստին. «քանի որ վերջինիս հեղինակն արդեն հաղթահարել էր այն տրանջան աշխատանքը, որն անհրաժեշտ էր բոլոր աղբյուրները պրպակելով համապարփակ ու ամփոփ ժամանակագրություն կազմելու համար»: Այդ տրանջան աշխատանքի արդյունքն այսօր չի կարելի անուշազրույթյան մատնել:

Այժմ անդրադառնաք այն ընդօրինակություններին, որոնք, մեր կարծիքով, հիմնային նշանակություն ունեն Անեցու ժամանակագրության ուսումնասիրության գործում:

Առաջինը Կամբջաձորի օրինակն է (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 6ա-108ա): Ընդօրինակվել է Ավետիս գրչի ձեռքով. «ի ՌԻԵ (1176) թուականութեանն Հայոց ի սիեզերահազակ ուխտս Կամբջաձոր»: Գրված է թղթի վրա (16,8x12 սմ), բոլորգրով (միասյուն, տող 19-21), բաց շագանակագույն թանաքով, աղյուսակները եւ սկզբնամասի որոշ սկզբնատողեր վարդագույնով: Բնագրի վրա որոշ փոքրիկ հավելումներ են արված մուգ թանաքով, այլ գրչի ձեռքով:

Երկրորդը Հոռոմոսի օրինակն է (Մատենադարան, ձեռ. թիվ 3613, էջ 1ա-71ա):

Ձեռագրի գրիչն ու ստացողը Մխիթար Անեցի արեղան է, որը հիշատակարանում իրեն անվանում է Հոռոմոսի վանքի աշակերտ. «Ձմեղաւոր ստացաւոս եւ զաշխատաւորս զՄխիթար եւ ծնաւզան մեր եւ եղբայրսն յիշել աղաչեմ», «...գչուաւ գրիչս զՄխիթարիչ Անեցի սուտանուն արեղայ եւ աշակերտ բանին ի վանացն Հոռոմոսի, սնեալ սու ոտս Սուրբ Յովանիսի յիշեալիք ի Քրիստոս աղաչեմ»:

Չի բացառվում, որ ձեռագրի գրիչը Հետագայում հռչակված պատմիչ, Անիի Մայր տաճարի փակակալ Մխիթար Անեցին լինի: Անունների ու ժամանակաշրջանի համապատասխանությունից բացի, նկատենք, որ Սամվելի ժամանակագրությունը սեփական օգտագործման համար ընդօրինակողը պատմագիտական նախապիտույթություններ ունեցող մեկը պետք է լինի:

Ձեռագիրը գրված է թղթի վրա, բոլորգրով, սեւ թանաքով (միասյուն, տող՝ 18 եւ 26), ունի 79 թերթ (16,5x11,5 սմ), աղյուսակները կարմրագիծ: Երկրորդ գրիչը փոքր հավելումներ է կատարել բաց գույնի թանաքով:

Երրորդը պայմանականորեն համարենք Անիի օրինակ, քանի որ այն 1236 թվականին Կիլիկիա է տարվել Անիից (Երուսաղեմ, Սրբոց Յակոբյանց վանք, թիվ 1801, էջ 387-557, Երևանի Մատենադարան, մանրածագավան թիվ 750): Գրչություն ժամանակի հիշատակարան չունի: Սակայն ձեռագիրը մի կազմի մեջ է ամփոփված հմուտ գրիչ Հովհաննեսի 1187 թ. Հոռոմոսում ընդօրինակած Բարեաղ Կեսարացու «Վեցօրէից» գրքի հետ (որպես երկրորդ մաս): Բնագրերը մի կազմի մեջ են եղել 1236 թվականից առաջ, որի մասին կարելի է եզրակացնել ժամանակագրության վերջին թերթի վրա եղած հիշատակարանից. «Ի թուականին Հայոց ՈՁԵ (1236), ի գմնդակ ժամանակի, յանիծեալ յազգէն Քամա,

⁴ Անեցի, էջ ԻԵ-ԻԷ:

⁵ Մխիթար Անեցի, Մատենա աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Երևան, 1983, էջ 31:

⁶ Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 108ա, հմտ. Ե-Ժ դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, աշխատասիրությամբ Ա. Մաթետոյանի, Երևան, 1988, էջ 219:

Շիրակի սահմանակից Արշարունիք գավառում գտնվող Կամբջաձորի վանքը հայտնի էր իր բանիմուտ վարդապետներով ու հնուտ գրիչներով: Ավետիսի սույն ընդօրինակությունը, որպես Սամվել Անեցու ժամանակագրության անաղարտ օրինակներից մեկը, արժանացել է հետազոտողների ուշադրությանը: Գ. Դովսեփեան, Յիշատակարան ձեռագրաց, Խ. Ա. Անթիլիս, 1951, էջ 464, Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., կազմեց Վ. Գ. Հակոբյան, Խ. Ա. Երևան, 1951, էջ 20, Գ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Կրասնոսիբսկի ԺՔ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 11, 88:

⁷ Մատենադարան, ձեռ. , թիվ 3613, էջ 35բ, 26բ:

⁸ Մխիթար Անեցու պատմության հրատարակիչ Հ. Մարգարյանը նշում է, որ աշխատությունը գրելիս Մխիթարը Սամվելի երկն օգտագործել է առավել չափով, «իբրեւ ամենահավաստի ժամանակագրական ուղեցույց», եւ անհավանական չի համարում, որ օգտվել է Սամվել Անեցու «հնքնագիր» օրինակից (Մխիթար Անեցի, էջ 31-33): Թեև պատմիչ Մխիթարը որպես կանոն հիշատակվում է որպես քահանա, իսկ սույն ձեռագրի գրիչը՝ արեղա, սակայն տվյալ ժամանակաշրջանի համար սա չի կարող վերջնական որոշիչ լինել, քանի որ աղբյուրները վանական միաբանության մեջ հիշատակում են երկու կարգի արեղա՝ «բնարեղա» եւ «աշխարհական արեղա» (Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք Ի Փոքր եւ Ի Սեօ Հայս, Վենետիկ, 1864, էջ 191, Կ. Մաթետոյան, Անի, Ս. Եղմիածին, 1997, էջ 126):

կոչեցեալ անդադար (իմա՝ թաթար - Կ.Մ.) ի պաշարեալ զմայրաքաղաքն Անի, եւ զամենիսեան ի սուր սուսերի մաշեալ, գործութիւնն անարգեալ եւ զգրեանս զերի վարեալ: Եւ զերքս այս կոչեցեալ Վեցաւրեա, բերաւ յաշխարհ Կիլիկիացոց եւ ստացա զգիրքս քահանա անուն կոչեցեալ Հայրապետ...»: Փաստորեն հիշատակագիրը նշում է ձեռագրի առաջին մասի սկզբում եղած վերնագիրը, իսկ հիշատակարանը գրում է երկրորդ մասի վերջին թերթին, որը ցույց է ապրիս 1236-ին մատյանները մեկ կազմի մեջ լինելու հանգամանքը: Չի բացառվում, որ դրանք միասին կազմել է հենց Հովհաննես գրիչը, քանի որ նա ոչ միայն Բարսեղ Կեսարացու գործի ընդօրինակողն էր, այլեւ ստացողը («զմովանէս զաշխատասիրոցս եւ զստացողս յիշեալիք...»)⁹։ Հայտնի էր նաեւ որպէս կազմարար¹⁰: Ամեն դեպքում, փաստն այն է, որ 1236-ին մատյանները մի կազմի մեջ Անիից հասել են Կիլիկիա:

Ժամանակագրության վերնագիրը գրված է կիսախորանի գլխագրաբլի մեջ, բնագրի առաջին տառը զարդապիր է, հանդիպակաց կողմում ունի լուսանցապարզ (էջ 387ա): Մատյանը գրված է թղթի վրա, բոլորգրով (միասյուն, տող 22), սյունակները գծված են կարմիրով:

Ն. Պողարյանը Անեցու բնագրի մասին նշում է. «Ժամանակագրական աղիւսակներ համառօտ տեղեկութիւններով, առանց յետնադրոյն այն յավելումներուն որոնք կը գտնուին Արշակ Տէր Միքելեանի հրատարակութեան մէջ»¹²:

Երեւանի Մատենադարանի եւ Երուսաղեմի Հավաքածուներում կան եւս մի քանի ձեռագրեր¹³, ուր Անեցու բնագիրը համեմատաբար անխաթար է, սակայն այս երեքը՝ Կամբջաձորի, Հոռոմոսի, Անիի օրինակները, որոնք

պատմիչի ապրած դարաշրջանի ծնունդ են, միանգամայն բավարար են ժամանակագրության նախնական պատկերը վերականգնելու համար: Իսկ դա անհրաժեշտ է, որպէսզի Սամվել Անեցին ապատվի իրեն վերագրվող տեղեկություններից: Օրինակ, դեռ հրատարակության առաջարկում Ա. Տեր-Միքելեյանը գրում է, որ Սամվելը «միայն մի տեղ է իւր անունը յիշում, այն է՝ «եւ ընկերք սորա (Սարգիս Փառխոտացու)»¹⁴ տէր Խաչատուր եւ Գրիգոր եւ Յովհաննէս եւ Սամուէլ ամենեքեան սոքա Անեցիք»¹⁵: Բնագրի համապատասխան մասում էլ գետեղված է հետեւյալը. «Ի ՇՀԼ թվին փոխ յաշխարհէս մեծ վարդապետն Սարգիս որ էր ի Փառխոտայ՝ որդի քահանայի միոյ՝ եւ աշակերտ սորա Երեմիա. որ եւ յասելն վարդապետին թէ լուս լիք, զամս Գ. լուս եկաց՝ ընդ միտս եւ ընդ Աստուծոյ խօսէր, որ եւ Անձրեւ կոչեցաւ: Եւ ընկերք սորա տէր Խաչատուր եւ Գրիգոր եւ Յովհաննէս եւ Սամուէլ ամենեքեան սոքա Անեցիք»¹⁶: Այս հատվածը չկա վերը մեր թվարկած ձեռագրերից եւ ոչ մեկում: Փաստորեն Սամվել Անեցին նման բան չի գրել եւ իր անունն էլ ժամանակագրության մեջ չի հիշատակել: Մինչդեռ Տեր-Միքելեյանի հրատարակությունից հետո այս տեղեկությունը Անեցու «հեղինակությունը» անցել է գրքից գիրք: Այլ աղբյուրներից Հայտնի է, որ Երեմիա Անձրեւիկը, Սամվել Անեցին ու մյուսները աշակերտել են Հովհաննէս Սարկավագին (հենց նա էր Փառխոտից), եւ ուսումնասիրողները տարակուսել են, թե ինչ Սարգիս մասին է խոսքը¹⁷:

Իրականում Անեցին մի քանի անգամ հիշատակում է Հովհաննէս Սարկավագին, նրա թղթերից մեջըբերումներ անում, գրում է նաեւ վարդապետի մահվան մասին. «ՇՀԼ Փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ մեծ վարդապետն Սարկավագն ի Հաղբատ»¹⁸: Այս տեղեկությունն առանց մեկ տառի տարբերության տեղ է գտել մեր թվարկած երեք ձեռագրերում: Հրատարակության մեջ այն հետեւյալն է՝ «ՇՀԼ մահն փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ վարդապետն մեծ որ Սարկավագն կոչիւր ի Հաղբատ»¹⁹:

Անիի բյուզանդական նվաճման մասին գրողներից ոմանք հետեւյալ մեջըբերումն են անում Անեցու ժամանակագրությունից. «Տէր Պետրոս եւ ազատ Սարկավագ եւ Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳագիկ եւ զԱնի հտուն ի կայսրն Յուսուպ. վասն որոյ ելին ի բլնիկ աշխարհէն իւրեանց՝ Տէր Պետրոս եւ Գրիգոր Վասակայ որդին, Գագիկ եւ այլք իշխանք Հայոց եւ եկին ի Հոռոմս»²⁰: Դարձյալ, մեր նշած հիմնային երեք ձեռագրերից ոչ մեկը չունի նման տեղեկություն: Այստեղ խնդիրն այն չէ, թե հիշատակությունն ինչ չափով է իրականությանը համապատասխանում, պարզապես այն չի պատկանում Սամվել Անեցու գրչին:

⁹ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 6, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1972, էջ 163-164:

¹⁰ Նույն տեղում, էջ 162:

¹¹ Հովհաննեսից հայտնի է 1181-1187 թթ. Հոռոմոսում ընդօրինակած երեք ձեռագիր: Նրա եղբայր Վարդանը վանքի ավագ միաբաններից էր: 1199 թ. նրանք երկուսով հիշատակվում են որպէս մի Ավետարանի կազմողներ: Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 10, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1990, էջ 605, Կ. Մաթեոսյան, Անի, էջ 267-270:

¹² Նույն տեղում, էջ 163:

¹³ Անեցու ժամանակագրության Մատենադարանի թիվ 1897 ձեռագիրը ձեռագրացուցակում համարվում է 12-րդ դարի մատյան (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, 3. Ա, Երեւան, 1965, էջ 670): Գրիչ Հայրապետ վարդապետի թողած հիշատակագրություններում տեղի ու ժամանակի վերաբերյալ որեւէ նշում չկա, չկան նաեւ այլ գրիչների միջամտություններ: Ա. Մաթեոսյանը հիշատակագրությունները հրատարակել է 13-րդ դարի անթվականների շարքում (ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Ա. Մաթեոսյան, Երեւան, 1984, էջ 905): Թեեւ բնագիրն ավարտվում է հիմնային ձեռագրերից հայտնի վերջին տեղեկությամբ (Գրիգոր Տղայի աթոռակալության մասին), սակայն այս մատյանում կան տեղեկություններ, որոնք հետագայի հավելումներ են: Հետեւաբար նախօրինակն արդեն ունեցել է հավելումներ (եթե դրանք հեղինակը Հայրապետը չէ): Դատելով այն բանից, որ Անեցու մոտ բացակայող եւ այստեղ եղած մի տեղեկություն զուգորդվում է Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության եւ Մխիթար Այրիվանեցու հայտնած տեղեկության հետ («Սերժեցան ի հայրենեաց որդիքն Կիրիկի» (Մատենադարան, ձեռ. թիվ 1897, էջ 71բ), «մերժեցան ի հայրենիս յիւրեանց որդիքն Կիրիկի» (ժամանակագրություն Ստեփանոսի Օրբելյանի, հրատ. պատրաստեց Ա. Աբրահամյան, Երեւան, 1942, էջ 16), «Սերժեցան ի հայրենեաց որդիքն Կիրիկի թագաւորի» (Մխիթարայ Այրիվանեցույ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 61), ձեռագիրը կարող է լինել ամենավաղը 13-րդ դարի վերջերի գործ:

¹⁴ Պետք է լինի՝ Երեմիա Անձրեւիկի: Նա եւ հիշատակված անեցիները աշակերտել են Հովհաննէս Սարկավագին:

¹⁵ Անեցի, էջ Ե:

¹⁶ Նույն տեղում, էջ 128:

¹⁷ Ա. Աբրահամյանը «Սամվել Անեցու մոտ Սարկավագ անունը Սարգիս ձեռով» հիշելը համարում է «աւտոգրփած» եւ այն փորձում է լուծել Կամբջաձորի օրինակից, աշակերտների անուններ պարունակող վկայության հետ կապ չունեցող, բայց Սարկավագի մահվան մասին հայտնող տեղեկությունը մեջբերելով: Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննէս Իսաստաբերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 32:

¹⁸ Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 105բ, ձեռ. թիվ 3613, էջ 69ա, Երուսաղեմ ձեռ. թիվ 1801, էջ 553:

¹⁹ Անեցի, էջ 129:

²⁰ Նույն տեղում, էջ 107-108:

Դեռևս Մաղաքիա Օրմանյանը Պետրոս Ա կաթողիկոսի մասին գրելիս «Գեառադարձի գրույցը» ենթադրեցելով պատմելով այն մասին, թե ինչպես Տրապիզոնի Ջորջհանքի ժամանակ Լաստիվերցու նկարագրած՝ մեռածը լցնելու ժամանակ ջրի ցորձակումը հետագա պատմիչները դարձրել են հրաշք, ավելացնում է. «գետին ընթացքին կենայուն կամ ետ դառնալուն պարագան յետիններ՝ միայն յիշուած է, որ չունին խոհակամարտու պատմիչներ՝ Լաստիվերցոյն եւ Վարդան»²¹: Իսկ «հետո եկողները» ձեռքով պատմութեան «աճուճը» ցույց տալու համար գրում է՝ «Անեցիին մօտ կը կարգանք. «Տէր Պետրոս արգել զգեան ժամ մի հրաշքը ամենագոր սուրբ նշանին, առաջի Վասիլ թագաւորին»²²: Ստացվում է, որ «հրաշքին» առաջին «քաղաքացիութուն» սփռող Սամվել Անեցիին է, մինչդեռ մեր համառոտարան պատմիչը ընդհանրապես չի անդրադարձել Պետրոսի Տրապիզոն այցին²³:

Նույնպիսի մի հավելում է արված Բարսեղ Անեցի կաթողիկոսի մասին՝ թե նա «զամենայն հակառակին Հնազանդեցուցանէ՝ որք էին յայնմ ժամանակի Զ (6) կաթողիկոսը. գնացել ար անձ սուլտանն Մելիքազ, որ ի Խորասան, բազում համարձակութեամբ ընդ քաղաքամէջսն Պարսից ձիով եւ խաչալամով, որ առաջի ամբարձեալ էին ի ձողի»²⁴:

Այս եւ տասնյակ այլ մեծ ու փոքր տեղեկություններ, որ տարբեր հրատարակություններում տեղ են գտել որպես Սամվել Անեցու վկայություններ, իրականում այլոց ներմուծումներն են նրա ժամանակագրություն մեջ: Դրանք նույնպես արժեքավոր են, ուստի ճիշտ կլինի, որ Անեցու ժամանակագրության գիտական հրատարակության մեջ, որպես հավելված, ժամանակագրական կարգով ներկայացվեն նաև այդ ընդմիջարկյալ տեղեկությունները:

Վերադառնանք հիմնալին ձեռագրերին: Դրանք նույնպես ունեն փոքր հավելումներ, բերեալստաբար հեշտութեամբ տարբերվող:

Հոռոմոսի օրինակում Հայոց ՆՁԷ (1038) թվականի դրիմաց աղյուսակում բուն գրչությունից տարբերվող բաց գույնի թանաքով գրված է. «Շինուած Հոռոմոսի վանացն. վերի. սբ Յով(հանէս)ի. ի թ(ա)ղ(ուոր)էն Յով(հան)իս կատարեցաւ»²⁵: Այս փոքրիկ հիշատակությունը ուշագրավ է մի քանի առումով: Նախ ժամանակագրորեն ստույգ է, քանի որ Հոռոմոսի Ս. Հովհաննես եկեղեցու շինարարական արձանագրություն մեջ հիշատակվում է նույն 1038 թվականը: Երկրորդ, Հոռոմոսի վանքի մասին հավելումն արված է հենց Հոռոմոսում գրված ձեռագրում: Երրորդ, Հոռոմոսի Ս. Հովհաննեսը անվանված է «վերի», գուցե այն պատճառով, որ բարձունքի վրա է կառուցված: Չի բացառվում, սակայն, որ Ախուրյանի հոսանքն ի վար եղել է Ս. Հովհաննես անունով մեկ այլ եկեղեցի կամ մատուռ («վարի» կամ «ներքին»), որից Հոռոմոսի եկեղեցին տարբերակել են «վերի Ս. Հովհաննես» անվանելով:

Այս տեղեկությունը չկա Անեցու ժամանակագրության հրատարակություն մեջ (հետևաբար այն 13 ձեռագրերում, որոնցից կատարվել է հրատարակությունը):

²¹ Ս. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջմիածին, 2003, էջ 1406:

²² Նույն տեղում, հմտ. Աճեցի, էջ 106:

²³ Ա. Տեր-Միքելյանի հրատարակությունից մեր հիշատակած վերջին երկու եւ Աճեցու չպատկանող մի քանի այլ մեջբերումներ անելով Լ. Բաբայանը պատմիչի մեղադրում է պատմական փաստերը հաշվի չառնելու, դրանք կամայական ենթակայացնելու եւ այլ «մեղքերի» մեջ: Լ. Բաբայան, Դավազներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրություն, Երևան, 1981, էջ 180-185:

²⁴ Նույն տեղում, էջ 117-118:

²⁵ Մատենադարան, ձեռ. թիվ 3613, էջ 60բ:

Կամրջաձորի եւ Հոռոմոսի օրինակները բնագրից տարբերվող գրով ու թանաքով հավելումներ ունեն Գրիգոր Վկայասերի աթոռակալության նշման հատվածում: Կամրջաձորի օրինակ «Տէր Գրիգորէս ամս Ի», հավելում՝ «զՎկայսէր որդի Մազիստունի»²⁶: Հոռոմոսի օրինակ՝ «Տէր Գրիգորիս Ի», հավելում՝ Ի տունին ավելացրել է մասնիկ եւ սասցել Խ, կից գրել նաև Բ (այսինքն՝ ԽԲ)՝ «Տէր Գրիգորիս որդի Գրիգորի Մազիստունի թողուլ զՀայրենի պատիւն հետեւեցաւ կրօնաւորութեան եւ բռնազատեալ նստուցաւ յաթոռ Հայրապետութեան եւ Վկայասէր անուանեցաւ, դնաց ի Կոստանդինուպոլիս եւ բազում ճառս սրբոց թարգմանեաց ի Յունաց ի Հայս»²⁷: Գրիգորիսի թվերը 20-ից 42-ի հասցնելով, երկրորդ գրիչը 64բ, 65ա, 65բ էջերում մաքրել է աղյուսակի կաթողիկոսական սյունակի թվերը եւ գրել նորերը, որից հետո ՇԾԵ (1106) թվականի դիմաց ավելացրել է՝ «Տէր Բարսեղ ամս Զ»²⁸:

Հրատարակության մեջ այս հատվածում նշված է. «Տէր Գրիգորիս՝ ամս ժէ» եւ ծանոթագրված, որ ձեռագրերից երեքն ունեն հավելում՝ «որ վկայասէրն կոչելը՝ որդի Մազիստունի», եւ երկուսը՝ «ամս Թ»²⁹: Ակներեւ է, որ Հոռոմոսի ձեռագիրը հրատարակության ժամանակ օգտագործված մատյանների կամ դրանց նախօրինակների համար որպես նախօրինակ չի ծառայել:

Հոռոմոսի ձեռագրի փոքրիկ հավելումների օրինակից դատելով կարող ենք ասել, որ Անեցու ժամանակագրության մյուս ընդօրինակությունները հնարավոր է նույնպես այդպիսի կտորներ ունենան, որոնց հավաքումն ու հրատարակումը աղբյուրագիտական առումով կարելու է:

Հիմնալին ձեռագրերը հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու Անեցու ինքնագիր մատյանի ինչպես ընդհանուր կառուցվածքի, այնպես էլ որոշ մանրամասների մասին: Օրինակ, աղյուսակներից դուրս, ընդարձակ տեքստով պատմելով Բագրատունի վերջին թագավոր Գաղիկ Բ-ի գահազրկման եւ Բագրատունյաց թագավորության անկման մասին, Անեցին նշում է. «զի դադարեաց իշխանութիւնն թագաւորական՝ պարտ է եւ ի կանոնացս դադարեցուցանել», ապա թվարկում Հայոց թագավորների թվականներից բացի մնացած ժամանակագրական շարքերը՝ «զմարդեղութիւն Արարչին ըստ սահմանելոյս սկիզբն դնելով, եւ կայսերացն եւ զհայրապետականն եւ զթուականն»³⁰: Դրան անմիջապես հաջորդում են աղյուսակները, որոնք կրկին հինգն են, սակայն Հայոց թագավորների թվականների սյունակում Անեցին մի սրտառու է խոսք է գրել. «Աւա՛ղ զի ոչ գոյր թագաւոր Հայոց, կարծեմ խափանել կամ ի այս գաւազանն: Բայց թէ՛ գայն չարժէք ոչ անէր Աստուած զգառն տւգս ի վերայ մերոյս ազգի, զի ետես Արարչին զհպարտութիւն մեր եւ հակառակ կալով կակծեցոյց զմեզ որպէս ի Հնումն զԽորայէլ, զի թէ՛ յանդրանիկն ոչ ինչայեաց, զիսրդ ի կրտսերս խնայէր, որ նման գոլով կրտսէր որդւոյն քամահեցաք զտէրութիւն նորա»³¹: Քանի որ ժամանակագրական սյունակի լայնությունը բավարարում է ընդամենը երկու կամ երեք երկաթապլիտ տառ

²⁶ Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 97բ: Անիի օրինակում տեղեկությունը հավելում չունի՝ «Կաթողիկոս Տեր Գրիգորիս ամս Ի», Երուսաղեմ, ձեռ. թիվ 1801, էջ 538 բ:

²⁷ Մատենադարան, ձեռ. թիվ 3613, էջ 62բ:

²⁸ Մատենադարան, ձեռ. թիվ 3613, էջ 62բ-65բ:

²⁹ Աճեցի, էջ 112: Հետագայի գրիչները Գր. Վկայասերի թվերը ժԷ (17) գրելով ուղղել են Աճեցու, որը աղյուսակի սկզբում 1165 թ. դիմաց արժանակալության տարիները նշելով Ի (20), նրա հաջորդական թվերը նշանակելով հասել է 1182 թ. եւ արձանագրել Բարսեղ Աճեցու կաթողիկոսանքը (1182-1165-17): Վկայասերին 17 տարի է հատկացնում նաեւ Միսիթաթ Աճեցին (Միսիթաթ Աճեցի, էջ 69):

³⁰ Աճեցի, էջ 109:

³¹ Աճեցի, էջ 110:

(թիվ) գրելու, ապա պարզ է, որ այսպիսի ծավալով գրությունը, անգամ մանրատառ լինելով, ձգվում է էջից էջ³²: Հիմնային բոլոր ձեռագրերում այս հատվածը գրություն ճիշտ նույն ձևով է ժամանակագրական նեղ սյունակի մեջ: Սա նշանակում է, որ այն հենց այդպես է եղել Անեցու ինքնագիր մատյանում:

Հիմնային ձեռագրերում բնագրային անհամապատասխանությունները չեն չին են: Կամրջածորի օրինակում սելջուկ առաջնորդի անունը նշված է «Ալիսուլան», իսկ Անիի և Հոռոմոսի օրինակներում «Ալիսուլան»: Ձեռագրերի ամբողջական համեմատությունը կարող է երեւան բերել նման այլ օրինակներ:

Այժմ տեսնենք, թե ինչպես են Հիմնային ձեռագրերը ներկայացնում ժամանակագրության ավարտը: Անեցու երկր գուրկ է վերջարանից: Եթե ժամանակագրության սկզբում պատմիչը գեղեցիկ ոճով գրում է պատվիրատու Գրիգոր Գ Պաշտպանուն շարադրանքի ընթացքում այս կամ այն հարցի առիթով նրան բացատրություններ տալիս³³, փառաբանում գործերը, ապա ավարտում է 1161-1163 թթ. Անիի շուրջ ծագած վրաց-մահաբանական պատերազմի վերաբերող դեպքերի պարզ հիշատակությամբ: Այն հետեւյալն է. «Ոժ (1161): Յայսմ ամի թագաւորն Վրաց Գորգի ան զԱնի ի յունիս ի ԺԳ(13) և ապա յօգոստոս ամսամոսին կոտորեաց զՇահարմէն և թն չազարաւ զՁՈ-սն (80 000) և այսորիկ ականատես եղաք մեք: Ի ԳՈ (3000) գրով այն էր զոր գերեաց թող գանկեալ զգրիակունս՝ որ ծածկէր զանդաստանս մեր:

ՈժԱ (1162): Ապա ի միւս ամիս յօգոստոսի Ա (1) ան զԴւին քաղաք և ԿՈ (60 000) գերեաց և քանդեաց զուստ աղաւթանոցս նոցա:

ՈժԲ (1163): Ապա զաւրածողով լինեալ սուլտանն Խորասանայ՝ եկեալ ի դուռն քաղաքիս Անույ և զարհուրեցոյց զբնակիչք սորա. յետ Լ (30) աւուր զնազ գաղտագողի աղուեսաբար և հար զթագաւորն Գորգի և զաւար նորա էան և զարձաւ ի տեղի իւր»³⁴:

Հաջորդ թվականին Գեորգին ստիպված էր Անի կրկին վերադարձնել Շեղադրյալներին, որը վկայված է տարբեր սկզբնաղբյուրներում³⁵, սակայն այս փաստն այլևս տեղ չի գտել Սամվելի երկում: Կամրջածորի օրինակի մեջ 1163 թվականի դեպքի հիշատակությունից հետո գրված է զարդագիծ ավարտանշան³⁶: Սակայն, դրանից հետո առկա է եւս չորս վկայություն

- 1166 թ. Գրիգոր Գ-ի մահը և Ներսես Դ-ի նրան հաջորդելը.
- 1167 թ. երկրաշարժ Երզնկայում,
- 1168 թ. Թորոս իշխանի մահը.
- 1173 թ. Ներսես Դ-ի մահը և Գրիգոր Տղայի հաջորդելը:

Մանրագրային Հիմնային ձեռագրերի ամենավերջին հիշատակություններին:

Կամրջածորի օրինակ

«ՈՒԲ (1173): Փոխի մահուամբ առ Բրիստոս տէր Ներսէս, և փոխանորդէ զաթոռն տէր Գրիգոր Տղայ կոչեցեալն»³⁷: Դրանից հետո ձեռագրի երկրորդ գրիչը (հավելումների հեղինակը) այլ գրով ավելացրել է Գրիգոր Տղայի տարիների թիվը՝ Ի (20):

³² Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 96բ-97ա, թիվ 3613, էջ 62ա-62բ, Երուսաղեմ, թիվ 1801, էջ 537բ-538ա:

³³ Անեցի, էջ 3, 39, 51, 97, 109, 116, 123, 128:

³⁴ Մատենադարան ձեռ., թիվ 5619, էջ 106բ-107ա, հմտ. Անեցի, էջ 137-138:

³⁵ Դեպքերի հանգամանակից պատմությունը տես Գ. Գ. Մարգարյան, Գյուսիսային Հայաստանի և Վրաստանի մի դարերի պատմության մի քանի հարցեր, էջ 119-116:

³⁶ Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 107ա:

³⁷ Մատենադարան ձեռ., թիվ 5619, էջ 107ա:

Հոռոմոսի օրինակ՝

«ՈՒԲ (1173): Փոխի մահուամբ ի Բրիստոս տէր Ներսէս, և փոխանորդէ զաթոռն տէր Գրիգոր Տղայ»³⁸: Այլ գրով նշված է կաթողիկոսի տարիների թիվը՝ Ի (20)³⁹:

Անիի օրինակ՝

«ՈՒԲ (1173): Փոխի մահուամբ առ Բրիստոս տէր Ներսէս, և փոխանորդէ զաթոռն տէր Գրիգոր», գրված է վերջնական, որից հետո այլ գրով ավելացված է «Տղա կոչեցեալն»⁴⁰:

Հիմնային ձեռագրերում եղած վերջին հիշատակությունների միանման լինելը վկայում է այն մասին, որ դրանց համար նախօրինակ ծառայած ձեռագրում կամ ձեռագրերում ժամանակագրությունն ավարտվել է հենց այդ թվականով և այդ հիշատակությամբ: Հնարավոր է, որ այդ վկայությունները եւս պատկանում են Անեցուն: Սակայն այս հարցը որոշ պարզաբանման կարիք ունի:

1163 թվականի «ի տեղի իւր» բառերով ավարտվող հատվածից հետո Հոռոմոսի օրինակում նախ նշվում է Երզնկայի երկրաշարժը, նոր միայն Գրիգոր Գ-ի մահը: Անիի օրինակում Երզնկայի երկրաշարժն ընդհանրապես չի նշվում: Եթե մինչ այդ բոլոր երեք մատյանների գրիչները պահպանել են գրչության արվեստի հիմնական պահանջը՝ հավատարմությունը նախօրինակին, ապա 1163-ից հետո եղած վկայությունները միանման չեն⁴¹:

Նկատենք, որ Ներսես Դ-ի մահվան և Գրիգոր Տղայի ավժուակալության մասին տեղեկության առկայության պատճառով ուսումնասիրողներից ոմանք Անեցու պատվիրատու են համարել հենց վերջին կաթողիկոսին⁴², առանց հաշվի առնելու, որ բոլոր հայրապետների գահակալությունը միայն մի քանի բառ նվիրող պատմիչը Գրիգոր Գ Պաշտպանուն մասին գրում է փառաբանական երկու էջ, իսկ խոսքի վերջում ուղղակի գրում նրան՝ «Եւ այստանաւր զայսոսիկ ծանուցուք մերոյ հրամանատուիդ...»⁴³:

Ուշադրություն է արժանի, որ պատմիչի նշումը 1161 թ. Գեորգիի հաղթանակի ականատեսը լինելու մասին «և այսորիկ ականատես եղաք մեք», նույնպես պատվիրատուին հասցեագրված ուղիղ խոսք է: Կարելի է ենթադրել, որ Անեցին իր դրածը կաթողիկոսին Հոռոմոս էր ուղարկում ավարտուն հատվածներով: Եթե այդպես է, ապա առնվազն 1163-ի աշնանը (Գեորգիի պարտությունը տեղի է ունեցել ամռանը)⁴⁴, կաթողիկոսին ուղարկված հատվածը

³⁸ Մատենադարան ձեռ., թիվ 3613, էջ 70բ:

³⁹ Գետազայի գրիչը հիշատակության վերջին Տղա բառի առաջին տառը «պ» դարձնելով ու հաջորդող «ղ» տառը ջնջելով բառը դարձրել է Պահլավունի, որից հետո նշել տարիները թիվը՝ Ի:

⁴⁰ Երուսաղեմ, ձեռ. թիվ 1801, էջ 556բ, նույն թվականի նույն հիշատակությամբ է ավարտվում նաև Երուսաղեմի թիվ 783 ձեռագիրը:

⁴¹ Մատենադարան ձեռ., թիվ 3613, էջ 70բ: Մխիթար Անեցի գրում է՝ «...յաջորդէ զաթոռն երբայրն Ներսէս ամս է», իսկ Ավետիսի «...յաջորդէ զվնի նորա եղբայր նորուն տեր Ներսէս», աղյուսակում՝ «Տեր Ներսէս ամս է» (Մատենադարան ձեռ., թիվ 5619, էջ 107ա): Երկու գրիչները ոչ թե ընդօրինակում, այլ փաստը ներկայացնում են ազատ շարադրանքով:

⁴² Այդպես է գրված Գայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության մեջ, հայկական հանրագիտարանում և այլուր: Գայ ժողովրդի պատմություն, հ 3, Երևան, 1976, էջ 805, Գայկական սովետական հանրագիտարան, հ. 10, Երևան, 1984, էջ 161, Ս. Մելիք-Քախչյան, Հայոց պատմության աղբյուրագիտություն, Երևան, 1989, էջ 171, և այլն:

⁴³ Անեցի 123, Մատենադարան ձեռ., թիվ 5619, էջ 102բ:

⁴⁴ Գ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 113:

պետք է վերջինը լինեն, քանի որ Գրիգոր Գ Պաշտպանին այդ ժամանակ արդեն ծանր հիվանդ էր⁴⁵:

Հետաքրքիր է, որ Կամրջաձորի օրինակում 1113 թվականի դիմաց աղյուսակի սկզբում Գրիգոր Գ Պաշտպանու մասին նշված է «Տէր Գրիգորիս ամս Ծ (50)»⁴⁶: Կարելի է ենթադրել, որ ժամանակագրության վերջին մասի գրությունն պահանջ կաթողիկոսի իր ամբողջական 50-րդ տարվա մեջ է եղել՝ 1113+50=1163: Հոռոմոսի օրինակը գրողն արդեն ամբողջացրել է տվյալը՝ «ԾԳ (53)»⁴⁷, նկարի ունենալով կաթողիկոսի գահակալման բոլոր տարիները (1113-1166):

Այժմ մի փոքր անդրադարձ կատարենք պատմիչ-պատվիրատու առնչություններին՝ զուգահեռ անցկացնելով Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի եւ Սամվել Անեցու միջև: Բանն այն է, որ ե՛ւ Ասողիկը ե՛ւ Անեցին կատարել են կաթողիկոսական պատվեր, երկուսն էլ աշխատել են Անիում (թերեւս օգտվել նույն գրադարանից) եւ նրանց երկերն ունեն կառուցվածքային որոշ ընդհանրություններ: Ասողիկը շահեկանորեն տարբերվելով իր նախորդ պատմիչներից, Պատմության սկզբում թվարկում է այն հեղինակներին, որոնց երկերից օգտվել է: Նա գրում է. «Որպէս եւ ճշմարիտ թուողն ժամանակաց Եւսերի Պամփիւլեայ սկսեալ ի մարզն առաջին... Եւ զկնի նորա Սոկրատէս: ...Իսկ ըստ Հայունս նախ եւ առաջին քաջն Ագաթանգեղոս, որ նորաքանչ Հրաշից եւ Հարչարանաց սրբոյն Գրիգորի եւ աստուածածանօթութեանս մերոյ է պատմիչ: Եւ զկնի մեծն Մովսէս...»⁴⁸: Թվարկելով ընդհանուր առմամբ ինը հայ պատմիչի, Ասողիկը խոսքն ուղղում է իր պատվիրատու Սարգիս կաթողիկոսին:

Նույնն է անում Սամվել Անեցին, ժամանակագրության սկզբում գրելով՝ «...Երեւելագոյն քան գլոյսիս եղեւ Եւսերի երանելի, ի մէջ առաջնոցն եւ վերջնոցն, եւ զհետ նորա Սեկրատէս պատմագիրն այլօք բազմօք: Իսկ մերայինս ազգի ասել առաջին պատմագիրն զԱգաթանգեղոս որ գրեաց զպատմառ յուսաւորեալոյ զՀայս սրբոյն Գրիգորի՝ նորաքանչ Համբրութեամբ: Եւ ապա Մովսէս Խորենացի...»: Անեցին ճիշտ նույն կարգով թվարկում է հայ պատմիչներին, հաճախ բնութագրական միեւնույն բառերով, միայն վերջում ավելացնում Ասողիկի անունը՝ «Եւ ի վերջին ժամանակս Ստեփաննոս վարդապետ մականուն Ասողիկ...»⁴⁹, որից հետո դիմում է իր պատվիրատու Գրիգոր կաթողիկոսին:

Աղբյուրների թվարկումից հետո Ասողիկը Սարգիս կաթողիկոսին հայտնում է, որ դրանցից «յամենեցունց ի սոցանէ» օգտվել է՝ «Հաւաքեալ ծաղիկս Հեշտայի աշաց» եւ մատուցել նրա իսկ հրամանի համաձայն՝ «ի հարկեցուցանող հրամանաէ քոյ ստիպեալ»⁵⁰: Իսկ պատմության երկրորդ հանդեսի սկզբում նշում է, որ վաղ շրջանի մասին գրել է. «...քաղուածոյս Աստուածայնոց գրոց կարճ ի կարճոյ Համառօտի...»⁵¹:

Նույն կերպ Սամվել Անեցին աղբյուրների թվարկումից հետո դիմելով պատվիրատու Գրիգոր կաթողիկոսին գրում է, որ գործը ձեռնարկել է նրա կամքով՝ «յաղթեցայ ի սիրոյ կամաց ձերոց, առ ի գրել, գոր կամեցար», աղբյուրներից նյութեր ժողովել համառոտարար. «ժողովեցից ի սոցանէ կարճ ի կարճոյ զախորժակս ձեր՝ զբանից Հանդէս»⁵²:

Ինչպես որ Ասողիկն է դեպքերի սովորական շարադրանքը հասցնելով պատվիրատու Սարգիս Ա կաթողիկոսի գահակալությունը, այստեղ մի առանձին դրույն նվիրում նրան՝ պատմելով, թե ինչպես «նստուցանեն զնա յաթոռ կաթողիկոսութեան մեծաշուք պատուով» եւ զովաբանական խոսքեր չի խնայում, գրելով՝ «զի ոչ ինքն զկնի պատուոյն՝ այլ պատիւն զկնի ինքեան ընթացաւ»⁵³: Նույն ձևով էլ Անեցին ժամանակագրորեն հասնելով Գրիգոր Գ-ի ամբողջականությանը, գաղափարներում է աղյուսակագրի տեքստը եւ գրում էջով մեկ, պատմելով, թե ինչպես «Տէր Գրիգորիս մեծաշուք պատուով նստեալ յաթոռ...» հուշակվեց «փառաւորութեամբ ոչ միայն ի մերազնեայ արանց, այլեւ յաւտարանեւ թագաւորաց եւ յիշխանաց...»⁵⁴ եւ այլն:

Ակնհայտ է, որ Անեցին աչքի առաջ է ունեցել կաթողիկոսական պատվեր կատարող իր նախորդ պատմիչի օրինակը:

Բնական պիտի լինեն տեսնել երկու հեղինակների աշխատությունների եզրափակումը նույն սկզբունքով: Ասողիկը Պատմության ավարտել է «Բան վախճանի փառատրական ի սպառուած յիշատակարանիս» հատվածով, ուր նշում է թվականը՝ 1004, երախտագիտությունը գրում պատվիրատուի մասին եւ հիշատակ հայցելով եզրափակում երկը: Մոտավորապես նույնը պիտի աներ նաև Սամվել Անեցին, եթե ավարտեր իր ժամանակագրությունը: Սակայն այն չունի եզրափակում, որի պատճառ կարող էր լինել պատմիչի կամ նրա պատվիրատուի մահը: Գրիգոր Պաշտպանու մահը 1166 թ. կարող էր Անեցու գործի դադարեցման կամ առանց վերջարանի մնալու պատճառ հանդիսանալ:

Վերադառնալով Անեցու ժամանակագրության ավարտման թվականի եւ հիմնային երեք մատյաններում եղած 1173 թվականի վերջին հիշատակության խնդրին, կարող ենք հետեւյալ ենթադրություններ անել: Անեցին հայրենի քաղաքին վերաբերող հարցերում բավական հետեւողական է, քանի որ, ինչպես ինքն է գրում 1124 թ. դեպքերի կապակցությամբ, Գրիգոր Գ Պաշտպանին քաղաքի ամիրայի հետ «ուխտ սիրոյ ունէր... վասն իւր սեփական ամբողջոյս»⁵⁵: Այսինքն, պատվիրատու կաթողիկոսն Անին համարում էր իր սեփական աթոռը (նրա նախորդը Բարսեղ Անեցին, 1081-1105 թթ ամբողջակալում էր Անիում) եւ հետաքրքրված էր քաղաքի հետ կատարվող անցքերով: Անեցին 1161-ին վրաց Գեորգի թագավորի քաղաքը գրավելու եւ 1163-ին մահմեդականներից նրա կրած պարտությունը արձանագրելուց հետո չէր կարող չնշել մեկ տարի անց քաղաքի՝ մահմեդականներին վերադարձվելու փաստը: Բայց նրա ժամանակագրական սյունակի 1164 կամ 1165 թվականի դիմաց որեւէ նշում չկա: Կամրջաձորի օրինակում Անեցու զրամ վերջին հատվածը եզրափակող «սեղի իւր» բառերն առնված են սյունակի երկու կողմերից եկող վերադարձի մեջ (մի նշան, որ չկա բնազդի այլ մասերում), որը, մեր կարծիքով, գալիս է նախօրինակից, որտեղ այս կամ մեկ այլ եղանակով արտահայտված է եղել այդ հատվածի՝ վերջինը լինելու իրողությունը: Հոռոմոսի եւ Անիի օրինակներում այդ նույն հատվածը դուրս է բերված աղյուսակից եւ գրված է էջով մեկ:

⁴⁵ Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 1622: Գրիգորը համառորեն համոզում էր եղբորը՝ Ներսես Շնորհալույն, ստանձնելու կաթողիկոսությունը: Երկար ընդդիմանալուց հետո, տեսնելով եղբոր անմխիթար վիճակը, 1166 թ. ապրիլին Ներսեսը համաձայնում է ձեռնադրվել, որից երեք ամիս անց մահանում է Գրիգոր Գ Պաշտպանին:
⁴⁶ Մատենադարան ձեռ., քիվ 5619, էջ 103ա:
⁴⁷ Մատենադարան ձեռ., քիվ 3613, էջ 67ա:
⁴⁸ Ստեփանոսի Տարոնեցույ Պատմութիւն, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, ՄԴր, 1885, էջ 6-7:
⁴⁹ Անեցի, էջ 2-3:
⁵⁰ Ստեփանոսի Տարոնեցույ Պատմութիւն, էջ 7:
⁵¹ Ստեփանոսի Տարոնեցույ Պատմութիւն, էջ 59:

⁵² Անեցի, էջ 3:
⁵³ Ստեփանոսի Տարոնեցույ Պատմութիւն, էջ 259-260:
⁵⁴ Անեցի, էջ 122, Մատենադարան ձեռ., քիվ 5619, էջ 101բ:
⁵⁵ Անեցի, էջ 127, Մատենադարան ձեռ., քիվ 5619, էջ 105ա:

Հարց է առաջանում, ո՞վ եւ ե՞րբ է հավելել վերջին չորս (Անիի օրինակում՝ 3) վկայությունները: Դրանցից առաջինը (Հոռոմոսի օրինակում երկրորդը) վերաբերում է Գրիգոր Գ Պահլավունու մահվանը՝ «ՌժԵ (1166): Վախճանի Տէր Գրիգորէս եւ յաջորդէ զկնի նորա եղբայր նորուն տէր Ներսէս»⁵⁶: Դեպքի այսպիսի սառն արձանագրումը չի ներդաշնակում պատմիչի պատվիրատուին վերաբերող նախորդ փառաբանական արտահայտությունների հետ: Կաթողիկոսի անունն Անեցին շարադրանքում գրում է Գրիգոր կամ Գրիգորիս (այդպես է նաև այունակների վերնամատում), իսկ այստեղ, հիմնային բոլոր ձեռագրերում նշված է Գրիգորէս: Այս եւ վերը բերված փաստարկները ենթադրել են տալիս, որ ժամանակագրություն մեջ վերջին չորս տեղեկությունները չեն պատկանում Սամվել Անեցուն: Սակայն այդ վկայությունները հեղինակային բնագրին են ավելացվել շատ վաղ, հնարավոր է հենց 1173 թվականին (Անեցու կողմից գործը զազարեցնելու տասնամյակին), քանի որ 1174-ին Անին կրկին անցավ վրացիներին, որի մասին ժամանակագրության մեջ նշում չկա: Ճիշտ է, Սամվել Անեցուն ավելացումների հեղինակ չենք համարում, որպեսզի համոզված լինեինք, թե նա զանց չէր առնի այդ փաստը: Սակայն հավելում անողն Անիից շատ էլ հեռու չի եղել, դատելով թեկուզ հեղինակային բնագրի եւ հիմնային ձեռագրերի գրչություն վայրերից (Անի, Հոռոմոս, Կամրջածոր): Ամեն դեպքում, իրողությունն այն է, որ Սամվել Անեցու ժամանակագրությունը բազմազման համար բնօրինակողներին է տրվել 1173 թվականին կամ դրանից հետո (մինչև 1176 թ.), երբ իր մեջ ներառում էր 1163 թվականի դեպքի հեղինակային վերջին արձանագրմանը հաջորդած երեք կամ չորս հավելյալ տեղեկություն:

Հետաքրքիր է, որ Սամվել Անեցու կրտսեր ժամանակակիցն ու Անիի Մայր տաճարում նրա գործի շարունակող Մխիթար Անեցին իր Պատմությունը հասցրել է մինչև 1193 թվականը, ինչպես ինքն է գրում՝ «լայն եւ տարած բանիք յընդարձակեալ մինչ ի Ոսթ թուականս»⁵⁷: Վստահաբար նա գիտեր, որ Սամվելի ժամանակագրությունն ավարտվել է Հայոց ՌժԲ (1163) թվականով, հավելումներով՝ ՌԻԲ (1173) թվականով եւ գուցե հենց այդ նկատառումով իր գործը եզրափակել է Ոսթ (1193) թվականին՝ տասնամյակների որոշակի պարբերականություն պահպանելով:

Այսպիսով, Մաշտոցի անվ. Մատենադարանի թիվ 5619 եւ 3613, ինչպես նաև Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի թիվ 1801 ձեռագրերը պարունակում են Սամվել Անեցու ժամանակագրության, հետագայի հավելումներից հիմնականում զերծ մնացած բնագիրը: Դրանք կարող են հիմք դառնալ պատմիչի երկի նոր հրատարակության համար:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԻՏԱԼԱՅԻ ԴԻՎԱԼԱԳԵՏ ՊԻԵՏՐՈ ԴԵԼԼԱ ՎԱԼԼԵԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

XVII դարի առաջին քառորդի Հայոց պատմության աղետալի իրադարձությունների ճակատագրական ժամանակաշրջանի վերաբերյալ եվրոպացի հեղինակները՝ մեզ հաղորդում են մանրամասն ու կրթման էլ բացառիկ արժեք ունեցող տեղեկություններ: Նրանցից մեկն էլ իտալացի դիվանագետ Պիետրո դելլա Վալլեն է՝ ձիշտ է, այս հեղինակների մի մասը բուն Հայաստանում չի եղել, սակայն չպիտի անգիտանալ, որ Հայոց երկրի մի զգալի հատվածը գտնվում էր Սեֆյան Իրանի գերիշխանության ներքո, հետևաբար, նույն այդ Իրանի հասարակական-տնտեսական, քաղաքական, վարչական, իրավական կարգերը համարյա նույնն էին նաև Հայերի և Հայաստանի համար:

Պիետրո դելլա Վալլեն (1586-1652թթ.) դեռ երիտասարդ հասակում աչքի էր ընկել որպես բանաստեղծ և դրականագետ: 1614 թվականին իր մեկենաս նեապոլցի Մարիո Սկիպանոյի խորհրդով ձեռնարկում է մի մեծ ճանապարհորդություն դեպի Արևելք: Նույն թվականին նա ժամանում է Կոստանդնուպոլիս, ուր մնում է մի տարի ու սովորում թուրքերեն: Կոստանդնուպոլիսից նա ուղևորվում է Կահիրե, ապա Երուսաղեմ, իսկ այնուհետև՝ Դամասկոս, Հալեպ և Բաղդատ: Այստեղ նա ամուսնանում է ասորուհի Սիրտի Մաանիի հետ և ընտանիքով 1616 թ. մեկնում Իրան: Իտալացի ուղեգիրը սիրալիք ընդունելություն է արժանանում Շահ Աբասի կողմից: Չնայած հարազատ պայտուն է 1618 թ. մասնակցում է Արդեբիլի մոտ թուրքերին շահի տված ճակատամարտին ու մանրամասն նկարագրում այն: 1621 թ. Պիետրո դելլա Վալլեն մեկնում է Սպահան, այնուհետև՝ Շիրազ, այցելում է Պերսեպոլիսի ավերակներն ու այդ բոլորը մանրամասն նկարագրում իր աշխատության մեջ: Իրանում նա մնում է մինչև 1623 թ., այնուհետև ուղևորվում է Հնդկաստան: Վերադառնալով Հայրենիք, 1626 թ. մարտին Հոռոմում նա արժանանում է Ուրբանոս VIII պապի ընդունելությունը, որը նրան առաջարկում է բարձր պաշտոն պատկան պայտունում:

Պիետրո դելլա Վալլենի ուղեգրությունը, ինչպես նաև Շահ Աբասի մեծարմանը նվիրված նրա հատուկ աշխատությունը ժամանակի միջազգային

¹ Այդ հեղինակներից էին Գեորգ Թեկամանդեր ֆոն դեր Յաբելը՝ ավստրիական Ռուդոլֆ կայսեր դիվանագետներից մեկը (տես նրա Item Persicum ou description du voyage entreprise en 1602, Paris, 1887. Brève, mais non moins détaillée et véridique description du voyage en Perse..., Altenbourg, 1609), Անտոնիո դե Գուլեան, տես նրա "Relation des grandes guerres et victoires obtenues par le roy de Perse Chah Abbas contre les empereurs de Turquie Mahomet et Achmet son fils". Par le P. Fr. Anthoine de Gouvea, traduit de l'original portugais. Rouen, 1646. Գարսիա դե Սիլվա Ֆիգերան, տես L'Ambassade de D. Garcias de Silva Figueroa en Perse, contenant la politique de ce grand empire, les moeurs du roy Schah Abbas et une relation exacte de tous les lieux de Perse, des Indes, où cet ambassadeur a esté l'espace de huit années qu'il y a demeuré. Traduite de l'Espagnol par monsieur de Wicqueford, Paris, 1667 և այլք:

² Sten Pietro della Vallé, Voyages de Pietro della Vallé, gentilhomme romain dans la Turquie, l'Égypte la Palestine, la Perse, les Indes Orientales et autres lieux, Vol. I-IV, Paris, 1661-1663, Նույնի՝ "Histoire apologétique d'Abbas, roy de Perse, traduite de l'Italien de messire Pierre de la Vallé", Paris, 1631.

⁵⁶ Մատենադարան ձեռ., թիվ 5619, էջ 107ա:
⁵⁷ Մխիթար Անեցի, էջ 59

սուր հարաբերությունների վերաբերյալ պարունակած ստուգապատում ու թարմ նյութերի շնորհիվ վաղուց են դրավել մասնագետների ուշադրությունը: Ուղեգրի շախատությունը կազմված է նամակների ձևով՝ ուղղված իր բարեկամ Մարտի Ալիպանիին: Շահ Աբասի պալատում եղած ժամանակ դեյլա Վալլեն իրանական տիրակալին խորհուրդ էր տալիս դաշինք կնքել իր պալատը գնապանություն ուղարկված ուսուցիչների հետ ընդդեմ թուրքերի: Ուղեգրի նամակները, չնայած երբեմն ավելորդ մանրամասնություններին ու ձգձգվածությունը, կարգացվում են հափշտակությունը:

* * *

Պիետրո դեյլա Վալլեի մոտ պահպանվել են ստուգապատում տեղեկություններ Շահ Աբասի կազմակերպած մեծ սյուրբոյունի (բռնագողթի) հետևանքով Իրան հաստատված հայերի վիճակի մասին: Այդ հարցերին անդրադարձել էին նաև նրան նախորդող եվրոպացի մյուս հեղինակները: Համաձայն նրանց, հեռատես այս քաղաքական գործիչը, տեսնելով իր ուղեգրի օգուտը և մտածելով, թե ինչպե՞ս և թե ի՞նչ միջոցներով հնարավոր է խոչնդոտել թուրքական զորքերի մուտքն Իրան, որոշել է ամայացնել էրզրումի և Թավրիզի արանքում ընկած երևանի ու Նախիջևանի ուղղությունները: Եվ ի հաստատումն Ա. Դավրիժեցու և մեր մյուս հայ հեղինակների եզրակացությունների, իրանական տիրակալը մեծապես ձգտել է արհեստներին և առևտրին հմուտ հայերի օգնությամբ դարդացնել բուն Իրանի անտեսությունը:

Մեծով մասամբ հայկական հողի վրա տեղի ունեցած թուրք-իրանական ուղեգրի ընդհարումները ծանր ու անտալի հետևանքներ ունեցան Հայաստանի ու հայ ժողովրդի համար: Ավերվում ու քարոքանք էին լինում քաղաքներն ու գյուղերը, հրկիզվում դաշտերն ու այգիները և, որոշ եվրոպացի հեղինակների վկայությամբ, թունավորվում նույնիսկ ջրի աղբյուրները: Պիետրո դեյլա Վալլեն, անդրադառնալով թուրք-իրանական ընդհարումներին, բերում է հոգեցունց մի մաստ այն մասին, որ շահին հաճոյանալու համար իրանական որոշ զորավարներ շահին են ուղարկել կոտորածի ենթարկված հայ խաղաղ բնակիչների սրի քաշված գլուխները՝ որպես թշնամու բանակից գերեվարյալների: Նկարագրված իրողությունը եղակի երևույթ էր թուրք-իրանական ընդհարումների ժամանակ: "Այս չարագուշակ երևույթը՝ կարծում ենք դեյլա Վալլեի մոտ, հաճախ շատ մեծ դժբախտությունների պատճառ է դառնում, քանզի խոստացված վարձատրության դիմաց զինվորները երբեմն ոտնձգություններ են կատարում իրենց իսկ հայրենակիցների կյանքի նկատմամբ և կտրում թշվառ անմեղների գլուխները հող էլ, թե թշնամիներ չեն ... ինձ հավաստացորեն պատմել են, թե ինչպես մի ոմն չար ու նեղ խան, նպատակադրվելով թագավորին ինչքան հնարավոր է շատ սրի քաշված գլուխներ ուղարկել, սպանել է իր հպատակ քրիստոնյա հայերին, որոնք իրենց երկար մորտաներով նմանվել են թուրքերին ու գերեվարյալների գլուխներ անվան առկ ներկայացրել թագավորին"³:

Թուրք-իրանական ընդհարումների ժամանակ, Պիետրո դեյլա Վալլեի վկայությամբ, ուղեգրի դաշտերում զինվորական իրենց տաղանդով աչքի են ընկել Շահ Աբասի կողմից հովանավորված ու առաջ քաշված մի շարք ծագումով հայ զորավարներ: Խոսքը վերաբերում է, նախ և առաջ, Ալավերդի խանին, որը աղբյուրների հավաստիացմամբ, եղել է թուրքերի դեմ տարած հաղթանակների

³ Pietro della Vallé, III, էջ 177:

գլխավոր ճարտարագետը: Դեռևս Շահ Աբասի մոտ մեկնած պորտուգալացի դիվանագետ Անտոնիո դե Գուվեան էր վկայում, թե Իրանի տիրակալը միշտ սիրել է կրկնել. «Ամբողջ Պարսկաստանը ենթարկվում է ինձ, իսկ ես՝ Ալյահվերդի խանին»⁴: Պիետրո դեյլա Վալլեի մոտ Ալյահվերդի խանի մասին մենք կարդում ենք հետևյալ ուշադրավ տեղեկությունները. "Ալյահվերդի խանը՝ գրում է նա, քրիստոնյա էր, ծագումով՝ հայ, սակայն վրացիների երկրից: Երիտասարդության տարիներին, որպես սարուկ վաճառվեց առաջին անգամ երեսուն տեղեկով: Եվ դրանից հետո բազմիցս վաճառվելով, ի վերջո անցավ թագավորի (իմա շահի) ծառայությանը և իր սեփական արժանիքների համար ներկայիս թագավորի (Շահ Աբասի) ժամանակ ... սա իր կյանքի ընթացքում դարձավ գերագույն հրամանատար բոլոր մյուսների նկատմամբ: Հիրավի, Պարսկաստանում չկար մի որևէ այլ ոք, որն իր հետ համեմատվեր ոչ իր արժանիքով, ոչ էլ իր խոհեմությամբ"⁵:

Եվ դարձյալ՝ Պիետրո դեյլա Վալլեն և այլ եվրոպացի հեղինակներ են մեզ հուշում իրանական բանակի մյուս հայ զորավարների, պետական այրերի, նահանգապետների, կառավարիչների մասին, որոնցից են "Շիրազի Իմամ Կուլի խանը՝ սերած Հայաստանից, [իրանական] զորքերի գերագույն հրամանատար (գեներալխիմուս) Կարջևա խանը՝ հայ քրիստոնյայի որդի և այլք"⁶:

Պիետրո դեյլա Վալլեի վկայությամբ, Իրան բռնագողթված հայերի վիճակը, մասնավորապես սկզբնական ժամանակաշրջանում, եղել է աղետալի: Գիլան ու Մաղանդարան տեղափոխված հայերին շահը նպատակադրվել էր օգտագործել որպես այգեգործներ, շերամապահներ, կառուցող վարպետներ և այլն: Իրանի այս նահանգների ճահճուտներն արտաքսված մոտ 50 հազար հայ ընտանիք, չգիտանալով կլիմայական ծանր վիճակին, մահացավ: Մի մասն էլ ընդունեց իսլամ և ենթարկվեց էթնիկական դիմահեղման:

Հայ բնակչության մի զգալի մասը տեղավորվեց Մաղանդարանի նոր կառուցված Ֆառահաբադ քաղաք և նրա շրջակայք: Մաղանդարան բուն տեղափոխվածների միջև, Պիետրո դեյլա Վալլեի խոսքերով ասած, "...նրանց, ովքեր զբաղվում էին այգեգործությամբ, օրինակ՝ հայերին, ... թագավորը... հատկացրեց հողամասեր": Շահն իր նոր քաղաքացիներին հատկացնում էր ոչ միայն առանձին հողակտորներ, այլև վարկ՝ համոզված լինելով, որ նրանք ի վիճակի չեն լինելու վճարելու իրենց պարտքը և ի վերջո, ինչպես նշում է դեյլա Վալլեն, իսլամանալու են: Հիրավի հայ գյուղացիներն ընկնում են ծանր կացության մեջ, իսկ եթե առիթից ուղղում են օգտվել եվրոպացի միսիոներները և նրանց պարտքերի վճարման դիմաց կաթոլիկացնել, շահը, դեյլա Վալլեի ասելով, հայտարարում է. "միտանակ Փրանկներ, այսինքն՝ լատինականներ դառնալու, ինքը շատ կուզենար, որ նրանք (իմա՝ հայերը - Մ. Զ.) ընդունեին իր հավատքը և դառնային մահմեդականներ"⁷:

Իրան բռնագողթված հայերի վիճակը դեյլա Վալլեն համեմատում է հրեաների բերլիակական ստրկության հետ և նշում, որ նրանք այստեղ "...գտնվում են ...բարբարոսների անտանի լծի տակ, դաժան ստրկության պայմաններում: Այս իրավիճակում էին, անշուշտ, նախ և առաջ ժողովրդական զանգվածները: Տանելի վիճակ և քիչ թե շատ բարենպաստ պայմաններ ստեղծվեցին հայ խոջայությունների կողմից: Շահ Աբասի՝ հայ խոջայության

⁴ Antonio de Gouvea, էջ 253:

⁵ Pietro della Vallé, III, էջ 67:

⁶ Pietro della Vallé, III, էջ 105:

⁷ Pietro della Valle, 62լ. աշխ.:

նկատմամբ ցուցաբերած "սերը" թելադրված էր նախ և առաջ Իրանի գերագույն պետական շահերով: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ դեյլա Վալլեն գրում է, թե ջուղայեցիները իրանական թագավորի նկատմամբ հավատարիմ են մինչև վերջ, և նրանք շահ Աբասի համար այն են, ինչ ճենովայեցիները իսպանական թագավորի համար: Երկու դեպքում էլ առևտրական թագավորները կապված են առևտրական բուրժուազիայի հետ:

Ի դեպ, Նոր Ջուղայի և ջուղահայերի մասին դեյլա Վալլեն մեզ թողել է ընդարձակ էջեր, որոնք Նոր Ջուղայի հայ բնակչության հետ առևտրական շահերի արտահայտություններ են: Զբաղվելով միջազգային առևտրով, ջուղահայերի վերնախավը (խոջայությունը) դեյլա Վալլեի վկայությամբ դարձել էին մեծահարուստներ: Թուրքիայում,- գրում է իտալացի հեղինակը,- հայ վաճառականները նույնպես դիզել են հարստություններ, սակայն նրանք "... առևտրական հայաժանրի են ենթարկվում"⁸: Եվ առհասարակ՝ քրիստոնյա հայերը թուրքիայում ենթարկվում են «...թուրքերի անտանելի բռնակալությանը»⁹: Թուրքիայում,- վկայում է մեր հեղինակը,- քրիստոնյա հպատակների վախն այնքան մեծ էր, որ ոչ ոք չէր հանդգնում հարուստ երեւալ կամ շքեղ մի տուն կառուցել: Իրան հակառակ, Իրանում, դեյլա Վալլեի վկայությամբ, հայ քրիստոնյաները «կարող են ազատորեն կրել այն հագուստները, որոնք կրում են պարսիկները: Նրանց թույլատրվում է կրել կանաչ գույնի (հագուստ), մի բան, որը խստագույնս արգելված է քրիստոնյաների համար թուրքիայում»¹⁰:

Արդ, վերագառնանք հայ ժողովրդի համար այնքան աղետալի թուրք-իրանական պատերազմների նկարագրմանը, որին հաճախ ականատես է եղել դեյլա Վալլեն, մասնավորապես 1618 թվականի թուրքական արշավանքին Հայաստանի վրայով դեպի Իրան՝ կապուտան փաշա (ծովակալ) և մեծ վեզիր Խալիլ փաշայի (ի դեպ, նա նույնպես հայ էր ծագումով) հրամանատարությամբ: Շահ Աբասը այս նոր թուրք-իրանական ընդհարումների ժամանակ, որպեսզի անակնկալի բերի թուրքական բանակը, կարգադրեց իր հայազբի զորավար Կարչխա խանին ասպատակել Վանն ու հրգրումը և ավերել այն, որը և կատարվում է՝ ևս մի անգամ Հայաստանի այս մասի բնակչությանը պատճառելով անլուր տառապանքներ¹¹: Այսուհանդերձ, թուրքիայի բանակին հաջողվում է թավրիղի մոտ տեղի ունեցած մեծ ու արյունալի ճակատամարտում պարտության մատնել իրանական զորքերին, և այստեղից էլ ուղղվել դեպի Արդեբիլ՝ դեպի Իրանի խորքերը: Վախենալով, որ Արդեբիլը, ուր թաղված էին իր նախնիները, շուտով կընկնի թուրքերի ձեռքը և կպղծվի նրանց կողմից, շահը, դեյլա Վալլեի վկայությամբ, մտածում էր քանդել Արդեբիլի Սեֆյան տիրակալների գերեզմանները և տեղափոխել հարավ՝ ավիլի ապահով շրջաններ: Հենց այդ ժամանակ էլ Կարչխա խանը դարձյալ թավրիղի մոտ թուրքերին հասցնում է վճռական հարված: Այդ լուրն ստանալուց հետո, շահը, իր հետ վերցնելով դեյլա Վալլեին, մեկնում է դեպի թավրիղ՝ հաղթական Կարչխա խանին դիմավորելու: Տեսնելով նրան, շահը ուղղակի նետվում է նրա ոտքերը, հուզված արտասանում, թէ՛ դու փրկեցիր Իրանի պատիվը: Այդ բոլորը նկարագրվում են դեյլա Վալլեի կողմից՝ որպես անմիջական ականատես: Եվ թուրքերը ստիպված են լինում հաշտություն խնդրել Իրանից, որը և կնքվում է թավրիղից ոչ հեռու՝ Փուշ-ի շիրքեստե կոչված վայրում: Այդ մասին

⁸ Pietro della Vallé, II, էջ 187:

⁹ Լույն տեղում, էջ 193:

¹⁰ Լույն տեղում, էջ 172:

¹¹ Pietro della Vallé, IV, էջ 10, 15 և այլն:

մանրամասն մեզ տեղեկացնում է դարձյալ դեյլա Վալլեն 1619 թվականի հոկտեմբերի 21-ի թվակիր նամակում:

Իրանադիտությունը և հայադիտությունը զբաղվող մասնագետների համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Պիետրո դեյլա Վալլեի այն ծավալուն էջերը, որոնք վերաբերում են իրանական բանակի կառուցվածքին և այդ առթիվ հեղինակի կատարած նուրբ դիտարկումներին¹²:

Հուսակ ուրեմն՝ հատուկ ընդգծենք, որ Պիետրո դեյլա Վալլեի աշխատությունը բացառիկ ու կարևոր աղբյուր է Իրանի տիրապետության տակ ընկած Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական, վարչա-հարկային, մշակութային, հայադավան ու կաթոլիկադավան եկեղեցիների դավանական վեճերի, Հայաստանի տարբեր մասերում և իրանահայերի մոտ կաթոլիկ քարոզիչների ծավալած գործունեության և հարակից այլ բազմաթիվ հարցերի շուրջը: Ցավալի է, որ առ այսօր իտալացի այս հեղինակի արժեքավոր աշխատությունը մեղանում գեոևս չի արժանացել անհրաժեշտ գնահատանքի և ուսումնասիրության:

¹² Pietro della Vallé, II, էջ 72-96:

ՍՐԲԱՆՈՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Վարքագրությունը քրիստոնեական միջնադարի եկեղեցական-արարողական, գեղարվեստական, դիտակտիկ-դաստիարակչական և պատմական բնույթի գրականություն է: Առաջին կիրառությունը վարքագրական երկն անբաժան էր դարձնում ժամասացությունից և եկեղեցու պատերից ներս մատնացուցում նրա սեղը՝ կարգացում էր սրբի հիշատակի օրը: Ինչ վերաբերում է երկրորդ, երրորդ և չորրորդ կտրվածքներին՝ վարքագրությունը հասցեագրվում էր միջնադարյան ընթերցողին, նրա էսթետիկական և էթիկական պահանջմունքներն էր բավարարում, պատմական հետաքրքրասիրությանը գոհացում տալիս: Հենց ժամասացության արարողական ծառայության գործողության ընթացքում, բարոյական դաստիարակության մարզում ևս, ինչպես նաև պատմական հետաքրքրասիրության բավարարման գործում վարքագրական ստեղծագործություն էր պայմանավորում: Իմաստը, առարկան կամ երևույթը ոչ վերացականորեն, ոչ խառը, այլ իրական անմիջականությամբ գեղեցիկ ու աչնիվ ձևով էր հաստատվում ընթերցողի կամ ունկնդրի ներաշխարհում: Սա էր անհամար ընթերցող հայթայթվում վարքագրությունը:

Սակայն քրիստոնեական աշխարհայացքից ու մշակույթից կտրված ընթերցողը կգոժվարանա վարքագրությունն ընկալել որպես գեղարվեստական գրականություն: Կոժվարանա նաև կոլմնորոշումների բազմակողմայնություն պատճառով, և այն պատճառով նաև, որ էսթետիկական միանգամայն ինքնատիպ ընկալում է այն մեզ մատուցում: Քրիստոնեությունը բավականաչափ «սխիստ» նայից նախորդ դարաշրջանների մշակութային նվաճումներին, երես թեքից անտիկ արվեստի հիմնական հակումներին: Վերածննդի ընթացքում և հետագայում ձևավորված էսթետիկական արժեքների կողքին ևս քրիստոնեական արվեստի նմուշները բավական տարօրինակ են լիվում:

Նույնիսկ այն մտածումը երևաց, որ աստվածաչնչական գաղափարախոսությունը ներծծված աշխարհում գեղեցիկ ու վեհի հասկացողությունը և ճաշակը կարծես կորել է:

Իրականում եղելությունը միանգամայն այլ է. Ս. Գրքի էջերում արդեն աշխարհի արարչության գործողությունը երևան է գալիս ոչ միայն իբրև բացարձակ զորականության արդյունք, այլև որպես բարձրագույն էսթետիկական գործողություն: Իմաստության ու բարության կարողություններն աշխարհին ճշմարիտ արվեստի ստեղծագործության տեսք է սպել, համապատասխանությունը ու ամբողջականությունը օժտել (Առակ, Ը, 22-31): Այս գեղեցկությունը ու դաշնությունը հիանալու զգացմունքն է արտացոլում Սողոմոն արքան. «Ձի որ գեղեցկությունն արարչապետն է՝ նա հաստատեաց պնոսա» (Իմաստ. ԺԳ, 3): Այլ պատճառով թագավոր տիրոջը «արվեստավոր» է կոչում: Այլուր նույն գրքում կարդում ենք. «Ամենայն աշխարհ պայծառացեալ լուսով լուսանորէր» (ԺԷ, 19): Գեղեցկությունը, ասում էր երանելի Ավդուստինոսը, մեզ ուղեկցում է գեպի նախասկիզբը, վերին ճշմարտությունը. գեղեցկությունը որոշում է գոյության աստիճանը, որակը: Իսկ սուրբ Աթանաս Աղևաքանդրացին ասում էր. «Արարայալ տիեզերքը կարծես զբավոր մեզ սեղեկացնում և բարբառում է իր Տիրոջ ու Արարչի մասին»: Ս. Գրքի օր

Նյութացին ուսուցանում է. «Գեղեցկությունը մի բան է, որով ներկայանում է Աստված»: Նույն հեղինակը այսպես էլ է ասում. «Տիեզերքը ամենակարող գործությամբ արտակարգ հորինված երգ է: Այնպես որ՝ Աստված «կատարյալ սեր, ոչ միայն կատարյալ փառքով է հայտնվում, այլև կատարյալ գեղեցկությամբ ևս, ուստի և արարչագործության կանխագույն իմաստության միաբեր Ս. Գրքում ձևավորվեց՝ ինչպես գեղարվեստական հղացում» (Ե. Տրուբեցկոյ): Քրիստոնեական աշխարհգիտությունում աշխարհը «տիեզերք» է անվանակոչված, ինչը միաժամանակ համադր, համահունչ և գեղեցիկ է նշանակում: Ընտրելագույն համոզելությունները ու խորքով տիեզերքի և առակային անհաստության արարչի գեղեցկության վերաբերյալ է մեզ վարդապետում ս. Դիոդորոս Արևապագացին:

Աստվածային արարչության պսակի՝ մարդու մասին ս. Բարսեղ Սեկեացին ասում է. «Մարդը գեղարվեստական ստեղծուածք, արարչի կողմից իմաստով էր մ սիրով է արարված»: Այս Հայացքին նմանատիպ դասողություն գտնում ենք եկեղեցու ուրիշ հայրերի գրություններում, օրինակ ս. Գրիգոր Նյութացու «Յաղագս կազմութեան մարդոյ» գրքում: Նոր ժամանակների աստվածարանական մտածողությունը համաձայնում է Հնին: Վլ. Լոսկին մեկնարարում է՝ «Պոետ երկնի ու երկրի. - մենք կարող ենք ասել Աստծո մասին եթե բառացիորեն թարգմանենք հունարեն բնագրից Հալատոյ հանգանակը»:

Մարդու ստեղծագործական արդյունքների շարքում, Պոդոս քահ. Ֆլորենցիացու համար, արվեստը ամենից բարձրն է, այն «աստվածատեղծ է», մշակույթի հիմունքը «աստիճան է», որով Աստված վար է իշխում գետնի վրա, իսկ մարդը բարձրանում երկինք: «Գոյություն ունի Ռուբլյովի երրորդություն, այս ինքն է Աստուած».- ասում է Պոդոս Ֆլորենցիացին: Իսկ ըստ Հայր Սեբեդյ Բուլգակովի՝ արվեստը «վերին եղելությունաց ամփոփում է վարի աշխարհի խորհրդանիշներում», կամ «Արվեստը եկող դարի (նկատի ունի երկնային գոյությունը - Գ. Փ.) իմաստությունն է, նրա զգացողությունը, նրա փիրիսոփայությունը»:

Իսկ մարդկության ամենասառչնակարգ արվեստապետները, իրենց հերթին, հորդորում են. քնարերգությունը «աստվածային է, Աստուծով հորինված» (Ռուսթավելի), քնարերգությունն ու կրոնական մտածողությունը հանկուկային են (Պետրարկա), «տիրական շարժարանքների խորհուրդը ամենագեղեցիկն է, եթե աշխարհում որեէ բան գոյություն ունի» (Ֆլորեր), «Քնարերգության էություն կապակցությունը ևս մտածում եմ, որ ըստ հոգևոր կառույցների բազմադասականության այն կամ ամենևին արժեքուրկ է, և կամ՝ նրա նշանակությունը անչափելի է, ինչը ինքնին նրան Աստծուն է նմանեցնում» (Պոլ Վալերի):

Այնպես որ՝ ոչ միայն ոչինչ չի խանգարում կրոնականն ու էսթետիկականը միմյանց առնչելուն, այլև նրանք լուելյայն փարվում են միմյանց: «Ստեղծագործությունը, որի ակունքը սերն է և աստվածային կրքով է արարված, երևում է և, հնարավոր է, ամենից ավելի երևելի է դառնում գեղեցկություն ու մտացության ոլորտում» (Կապրիանոս վարդապետ):

Այս ամենի հետևանքով Սուրբ գիրքը դիտարկում են ոչ միայն իբրև հայտնության իմաստություն, այլև իբրև տիրական ակներև գեղեցկության հայտնության ակունք երեքանձնյա մեկ էություն տիրոջ, համարում են բացարձակ գեղեցկության, ամենայն գեղեցկություն սկզբնաղբյուր: Այս կամ այն ժողովրդի հոգևոր բանահայտության ժանրերի (տեսակների) մեջ սրբախոսությունն ու հիմներգությունը առանձնացնում են այն նշանով, որ այսպիսի բնագրում ճշտությունը դիմելու և մոզելավորման էսթետիկական

սկզբունքն է առաջնորդողը: Առաջինը հոգևոր արձակ են համարում, իսկ երկրորդը՝ քննարկություն: Մեր քննարկման առարկան էլ այս է՝ սրբախոսությունը, մասնավորապես վրաց վարքագրությունն իբրև հոգևոր գեղարվեստական արձակ:

Արդեն ասվեց, թե վարքագրական ստեղծագործության կազմակերպմանը չորս դիտարկում է մասնակցում պատարագային-արարողական, գեղարվեստական-էթիկական, դաստիարակչական և պատմական-ճանաչողական: Վճռորոշը (գերակշռողը) երկրորդ դիտարկումն էր. քանի որ (ինչպես ասվեց) ճիշտ նրա գործությունն է ժամասացության մեջ հաստատուն դարձնում բնագիրը (մեկ կողմից) և ճանապարհ հարթում գեպի ընթերցողը (մյուս կողմից): Գրական ընթացիկ կողմնորոշման, գործառնությունների այսպիսի բազմակողմայնությունը սինկրետիզմ է կոչվում, և այն սովորական ու հասկերող է ողջ միջնադարի մշակույթի համար (համեմատյալն էր ընդհուպ մինչև Վերածննդի դարաշրջանը):

Մշակութային ո՞ր միջավայրում, ինչի՞ և ո՞ւմ համար էր կայանում վարքագրական ստեղծագործությունը. երկրորդ և երրորդ հարցերը սովորաբար հազվագյուտ են հնչում նոր ժամանակների գրական երկի քննարկման ժամանակ: Ճիշտ այն պատճառով, որ վարքագրությունը սինկրետիկ բնույթի գրական հուշարձան է, և նրա գերիշխող գեղարվեստական կողմնորոշումը կապված է գործնական-կիրառական գործառնությունների հետ. ստեղծագործությունը լավ հասկանալու, նրա հենց էթիկական և բնույթի յուրահատկությունը վերահասու լինելու համար անհրաժեշտ է տեքստի ոչ էթիկական գրությունների նկատմամբ: Պետք է աչքի առաջ ունանալ ինչի՞ սպասումով, ինչո՞ւ է իր ձեռքն առնում այն ժամանակների ընթերցող վարքագրական ստեղծագործություն:

Ռուսական վարքագրական դարձյալի ուսումնասիրողն ասում է. «Հոգևոր ներկայությունը մեր մեջ այն մարդու, որը վաղուց արդեն հեռացել է այս աշխարհից, ներկայություն, որ մեզ համար (նկատի ունի ժամանակակից մարդուն - Գ.Փ.) ջերմ հիշողության փոխաբերական նշանակություն ունի, հին ուսու կենսագրի համար զանազան էր կենդանի իրողության տպավորություն» (Վ.Վյուչևսկի): Սրբի սրբության «կենդանի իրողության տպավորություն» և միջավայր պիտի ստեղծի վարքագրական ստեղծագործությունը ընթերցողի համար. կերպարի հետ «հոգևոր ներկայություն» զգացում արթնացնի և նմանվելու ցանկություն առաջացնի: «Վարք և վկայաբանություն սուրբ նահատակ Կոստանդին Վրացու» երկի անանուն հեղինակը (ԱԽ.) ասում է՝ Քրիստոսի համար նահատակվածի վաստակը նկարագրվում է «ի փառաբանում սուրբ նահատակների և ի նմանողություն, որոնք աստվածային լսանդ ունեին», իսկ Գիորգի Կրտսերը «Գիորգի Սուրբարեցու վարքի» (ՃԼ.) հենց սկզբում մեկնաբանում է՝ այսպիսի ստեղծագործությունն ստեղծվում է «որպեսզի մենք նրանց չարչարանքը և վաստակը հիշելով օր-օրի թևավորվենք և արժանավորություն ընդօրինակվենք և փառասանանք»:

Սրբախոսական երկի շարքային ընթերցողին (երբեմն նաև գրականության հետազոտողին) թվում է, թե վարքագրական ստեղծագործությունը քարոզչական նպատակադրումով է գրվում: Նման տպավորությունը թյուր է: Քրիստոնեական գաղափարների քարոզչության, ամբապնդման համար այլ ժանրեր կան (ճառեր, մեկնություններ, ջատագովական, քարոզներ, հայրախոսական մատենագրություն): Հենց պատարագի ընթացքն իսկ ընկալվում էր իբրև մարդու քրիստոնեական կազմավորման միջոց: Թեոփանոս ճգնավոր եպիսկոպոսը մեզ ուսուցանում է. «Եկեղեցու արտաքին կառուցվածքն ու նրա բոլոր կարգերը՝ պատարագային, սրբասացական և կարգավորական, գլխավորը չեն, այլ ծառայում են քրիստոնեայի ներքին բարոյական-կրոնական

կառույցը ներկայացնելուն, դաստիարակություն ու սահմանումին»: Սրբախոսությունն էլ այս ծառայությունն է կոչվում: Վկայակոչեց մեկ դրվագ վրաց «Վարք Հովհան Զեդազնեցու» վարքագրական հուշարձանից (Մ.Ս.), ուր պատմվում է քրիստոնեության նոր դարձի եկած երկրում՝ Վրաստանում հավասան ամբաստանության համար եկած «աստի հայրերի» գործունեության պատմությունը: Սուրբ Հովհանը դիմում է աշակերտներին. «Նորագործներ են այս երկրի մարդիկ. պատշաճ է ձեզ, որ դնաք մարդ առ մարդ և ամբաստնեք եղբայրներին, որոնք մեր տեր Քրիստոս խոստովանեցին ոչ ձեր վարդապետության խոսքով, այլ ինչով ձեր կերպարն եք ներկայացնում»: Ամենայն որոշակիությունը է ասված, թե քրիստոնեյա գործչի առաջին պարտականությունը վարդապետելը, շիթ ջարդչությունը չէ, այլ դաստիարակությունը, ճշմարտության գործնական ներարկումը՝ սեփական կենաց օրինակով: Անդրեաս սարկավագ Կուրեան ասում է. «Ուղղափառությունը դաստիարակության կանոնների բանաձևերի, ծեսերի կրտսեր չէ, հեղինակավոր տեքստերի գրադարանը չէ... այն, ամենից առաջ, հոգևոր կենաց որոշակի կառույց է, հոգևոր տակտ և հենց նաև ճաշակ»: Այս հոգևոր կառույցի արմատավորմանը, «ճաշակի» զարգացմանը, աշխարհզգացության ինքնացման ընթացքն էր վարքագրության, շարականագրության ու որմնակարգության միասնական նպատակը, դրան է կոչված քրիստոնեական արվեստը:

«Վարքագրության խնդիրը, ինչպես երևում է, այն է, որ արմատավորի սահմանյալ էմոցիոնալ-բարոյական միջավայր, առանձնահատուկ «ուղղափառ» աշխարհզգացողություն... այն է՝ գրականություն, որը հենց այնպես չեն ի մի հավաքել մտածողության նույն կարգի կանոնական կրողները, այլև ներկայացնելու այն ամենից ավելի անմիջական, բարոյին հասու, զանգվածային մակարդակով: Վարքագրությունը մեզ պատմում է ոչ միայն մտածողության կարգի, այլ նաև այն մարդկանց զգացողությունների մասին, ում համար նշանակված է»:

Սահմանվեց հոգևոր կառույցի, մշակութային կողմնորոշման, մտածողության և զգացողության կարգի, «էմոցիոնալ-բարոյական միջավայրի» այն շրջանակը, որի հիմնավորման - դաստիարակմանն է ձգտում սրբախոսությունը: Այս ամենը բնավ չի նշանակում այնպիսի սոսկական գործնականություն, գործնական օգտակարության վիճակի այնպիսի խոսքում ստեղծագործության մեջ, որը կարողանար սովորել բնագրի էթիկական արժեքը: Ճիշտ գեղեցիկ (կամ վեհ) ձևով, կերպարման սկզբունքով, անձնավորության էմոցիոնալ կենաց կողմնորոշմամբ են իրականացվում վարքագրական ստեղծագործության իրողության կողմից, աշխարհզգացողության կողմից թելադրվող օգտակարության մոտիվները, նոր ժամանակների ստեղծագործական նրբագույն երկերն իսկ, որոնք «մաքուր արվեստի» նմուշներ են համարվում, ուր գեղարվեստական երևակայությունն ու ստեղծած աշխարհը, որ մեզ միանգամայն հեռացնում են հոգեղենից, այնուամենայնիվ լիովին զուրկ չեն գործնական կողմնորոշումից և հաջողությամբ ծառայում են հասարակական կյանքի հոգևոր կերտմանը, բարոյական զարգացումին, ճանաչումով արժեքների ձեռքբերմանը: Այդ պատճառով է, որ գրականագիտական հետազոտությունների մեջ հաճախ նման հարցերին ավելի մեծ ուշադրություն է դարձվում, քան ստեղծագործության զուտ գեղարվեստական-էթիկական խնդիրներին: Այս կապակցությամբ Հեգելը իր ժամանակին գանգատվում էր. «գեղարվեստական ստեղծագործությունը չպետք է գնահատենք միայն այն հայացքով, որ այն օգտակար միջոց է արվեստի շրջանից դուրս գոյություն ունեցող մեծ ու պատմական նպատակի: Գեղարվեստական երկը չպետք է դիտարկենք որպես օգտակար միջոց»:

Վրաց գրականության մեջ «Ընձենավորն» առաջին է՝ միայն էսթետիկական հայեցակետով կառուցվածը, ուր գեղարվեստական պատկերումը միայն գեղեցիկության մոդելավորմամբ է գրադրված և նրա արդյունքը լիովին ինքնարավ է: Նրա հեղինակն ասում է.

Բանաստեղծելն նախուստ ի վեր իմաստության մասն է կազմում՝
Աստվածային, աստվածաբար ընկալելի:
Ունկնդիրներին՝ հույժ օգտավետ,
Դարձյալ երկրայնոց հաճելի՝ լավ մարդը որ ունկն դնի:

Բանաստեղծը մեկնարանում է. քնարերգությունը աստվածային իմաստության խոստովանանք է մեզ համար, բացարձակ գեղեցիկությունից եկած լույսի հանդեպ բացում է մեր հոգու պատուհանը և մեզ դեպի այն կանչում, վեհացնում մեզ: Սակայն, մյուս կողմից, օժանդակում նաև մեր հոգեղեն կենաց լավացմանը («երկրայնոց հաճելի»), քանզի երկնային գեղեցիկության խոստովանության հետևանքով՝ դեպի մտերմի սատարություն է մեզ մղում, օժանդակում հասարակական ներդաշնակությանը: Այսպիսով՝ քնարերգությունը հասարակության համար մեծ օգնություն բերելու կարողություն ունի և հանձնառու է:

Սակայն բազմակողմ նպատակամղումը (սինկրետիզմը), ինչ խոսք, օգտակարության, գործնական կողմնորոշման պարագան ավելի է խտացնում վարքագրական բնագրում: Այն էլ նկատի առնենք, որ վարքագրությունը կրոնական գրականություն է, նրա գաղափարախոսական հիմքը Սուրբ գիրքն է, սրբ մարդկանց (թեկուզ հանճարների) մտավոր կարողությունների հորդությունից չի գալիս, այլև հայտնության իմաստություն է, բացարձակ ճշմարտության տիրույթ է: Նրա էջերում ամուր, սակայն հստակորեն են սահմանված ու չափավորված մարդկային գոյության բոլոր անկյուններն ու բոլոր պարագաները՝ քրիստոնեությունը անցողակի գոյության բոլոր նրբերանգներն ու բոլոր պահերը խիստ պատասխանատու է համարում հավերժական գոյության հեռանկարի դիմաց: Հասկանալի է՝ արվեստը նույնպես քրիստոնեությունը ծառայեցնում է այս հեռանկարին, այս նպատակների նպատակի օգտին մղում: Հենց աշխարհիկ արվեստի ամենաազդեցիկ ներկայացուցիչներն էլ իրենց նվիրում էին այս գերնպատակի ծառայությանը:

ԿՐՈՆԱ-ԱՄՊԵՏԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԿԱՆՈՒՄԸ՝ ԱՐԵՎԵԼՔԻ ԲՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ (ՉԱՅԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ) ԿՈՂՄԻՑ (XII ԴԱՐԻ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՎ XIV ԴԱՐԻ ՍԿԶԲԵ)

Ասպետական միարանությունների, մասնավորապես, դրանցից երկուսի՝ տաճարականների և Երուսաղեմի Սուրբ Հովհաննեսի Հիվանդանոցի վաղաժամ ներկայությունն Անտիոքի իշխանությունում, Կիլիկիայի հայկական իշխանությունում և Եդեսիայի կոմսությունում նպաստել է դրանց անդամների և Արևելքի քրիստոնյաների միջև կապերի հաստատմանը: Կիլիկյան չափով գտնվում էր այդ պետությունների ազդեցության ոլորտում: Նա որդեգրել է նրանց որոշ սովորույթները, հիմնադրել ավատատիրական կազմակերպություն, հաստատել լատինական ղեկան և փոխառել Ֆրանկների կողմից սպաներին տրվող որոշ տիտղոսներ, ինչպիսիք են մարեշայի և սպարապետի տիտղոսները: Այս փոփոխությունների ղեկավարող մասը, թվում է, թի իրականացվել է Լևոն I-ի թագավորության օրոք¹: «Անտիոքի ասիզները», որոնք մինչ 1266 թ. հայերենի է թարգմանել Սմբատ սպարապետը², նույնպես օգտագործվել են թագավորությունում: Չնայած այս էական փոփոխություններին, հայկական արքունիքը պահպանել է իր ինքնությունը ու առանձնահատկությունները: Կիլիկյան Հայաստանում լավ ընդունելություն է արժանացել, մասնավորապես գերմանական կայսրերի Հովանու ներքո գտնվող տևտոնական միաբանությունը, քանզի Լևոն I-ը թագավորական գահը ստացել էր կայսրից՝ Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադի միջնորդությամբ³: Ասպետական մյուս միարանությունները չեն ընդգրկվում մեր ուսումնասիրության շրջանակում, թեպետ դրանց, մասնավորապես, Սուրբ Դազարի միաբանությունը պատմությունը, ամենևին զուրկ չէ հետաքրքրությունից: Մենք ունենք արևելյան քրիստոնյաների բազմաթիվ սկզբնաղբյուրներ, որոնց հեղինակները, մասնավորապես, նրանցից ոմանք, ջուղարերի են որոշակի հետաքրքրություն այս միարանությունների հանդեպ: Մեր արամադրության տակ կան ժամանակագրություններ, պատմություններ, ժամանակագրական աղյուսակներ, հիշատակարաններ, ծիսական աշխատություններ, Հայոց եկեղեցուն նվիրված աշխատություններ, եղբերգություններ, ինչպես նաև լատիներեն տառերով (latinisante) գրված սկզբնաղբյուրներ, ինչպիսիք են ղեկանազիտական

¹ V. Langlois, Le Trésor des Chartres d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, Venise, 1863, p. 19, 30-31, 40-52; Cl. Mutafian, Le royaume arménien de Cilicie. XII^e-XIV^e siècle, Paris, 1993, 2001, p. 45. Լևոնը (1150-1219), ով Ռուբինյան հարստությունից էր, Կիլիկյան Հայաստանի իշխանն էր 1187-1198 թթ. և դարձավ այս երկրի առաջին թագավորը 1198 թ. հունվարին: Նա թագավորեց մինչև իր վախճանը՝ 1219 թ.:

² Assises d'Antioche, trad. française et texte établis par L. Alichan, Venise-Saint-Lazare, 1876. Սմբատը (1206/8-1275) հայոց թագավոր Յեթում Ա-ի եղբայրներից էր, որը վարում էր թագավորության սպարապետի պաշտոնը:

³ Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադը միաժամանակ կայսերական ջանքերն էր և պապի նվիրակը: Հայնրիխ VI կայսեր վախճանից հետո, թագ ստանալու համար՝ Լևոնը դիմել է նրան:

փաստաթղթերը և հայոց արքունիքից Ելնոյ՝ այս թեմային առնչվող այլ գրություններ, որոնք պատրաստվում ենք քննարկել: Բացառությամբ ասորական երեք ժամանակագրի՝ Միխայել Ասորու⁴, Անանուն Եդեսացու⁵ և Բար Հերբերտի⁶, արևելյան քրիստոնյա բոլոր հեղինակները, որոնց պատրաստվում ենք հղել հայեր են: Նրանք հաշվի են առնում խաչակրաց առաջին արշավանքի հաջորդ օրն Արևելքի լատինական պետություններում, ինչպես նաև Անտիոքի իշխանության արևմտյան սահմանում գտնվող Կիլիկիայի հայկական պետությունում հաստատված կրոնա-ասպետական միաբանություններին առնչվող իրադարձությունները⁷: Ասպետական այս միաբանությունների մասին հիշատակող հայերը, մեծ մասամբ, սերում են Կիլիկյան Հայաստանից, իսկ հակորիկյան դավանանքի ասորի ժամանակագիրները գերակշռող մասը՝ ծագումով Եդեսիայի կոմսությունից է: Այս հեղինակները որոշակիորեն ծանոթ են եղել կրոնա-ասպետական միաբանություններին. այդ ծանոթությունը ըստ այս կամ այն հեղինակի, եղել է փոքրիշատե ստույգ, քանզի 1130-ական թվականներից ի վեր, ասպետական այս միաբանությունների անդամներին կարելի է հանդիպել Եդեսիայի կոմսությունում և Անտիոքի իշխանությունում:

⁴ Միխայել Ասորին եղել է Անտիոքի հակորիկյան համայնքի պատրիարքը (1166-1199): Նրա աշխատությունների թվում է համընդհանուր պատմությանը նվիրված մի ուսումնասիրություն, որն ավարտին է հասնում 1195 թ. (Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche (1166-1199), éd. et trad. par J. Chabot, t. III, Paris, 1905) (այսուհետև՝ Michel le Syrien):

⁵ «Ամանուն Եդեսացին» ունի բազմաթիվ աշխատություններ, որոնցից են «Ղոզկոր իրադարձությունների գիրքը» և «Քաղաքացիական ժամանակագրությունը»: Վերջին աշխատությունը, որը սկիզբ է առնում VIII դարի իրադարձություններից, ավարտվել է 1237 թ. հետո, սակայն մեզ հասել է մինչև 1234 թ. ընդգրկող ժամանակաշրջանի շարադրանքը: Այդուհանդերձ, այս ժամանակագրությունը, թվում է, թե պատկանել է երկու հեղինակի, որոնցից առաջինը եղել է մի հոգևորական Եդեսիայից, ով կարող էր բնակվել Բարսումայի վանքում: Յնմտ. M. Amouroux-Mourad, Le Comté d'Edesse, 1098-1150, Paris, 1988, p. 3-4.

⁶ Գրիգոր Աբու-Ֆարաջը, որին անվանում են Բար Յերբետ, ծնվել է Մալաթիայում, այնուհետև՝ ապրել լատինական պետություններում և Կիլիկիայում, հետո մեկնել է Միջագետք և Ասորպատական, որտեղ, 1264 թ., հասել է մափրիանի (maphrien)՝ Անտիոքի պատրիարքարանի արևելյան կողմի մեծ մետրոպոլիտի (հակորիկյան) աստիճանի: Նա ունի կրոնական մի ժամանակագրություն (The Chronology of Gregory Abū' l Faradj, the son of Aaron, the Hebrew physician commonly known as Bar Hebraeus being the first part of his political history of the world (այսուհետև՝ Bar Hebraeus), trad. ang. du syriaque par E.-A. Wallis Budge, 2 vol., London, 1932) և մի ժամանակաբանություն: Նա վախճանվել է 1286 թ.:

⁷ Այս հեղինակների աշխարհագրական տեղայնության զանազանօր կախված է նրանց դավանանքներից:

⁸ Եդեսիայի կոմսությունում ասպետական միաբանություններին արված առաջին նվիրատվությունների մասին տես M. Amouroux-Mourad, նշվ. աշխ., էջ 141: Կիլիկիայում այս միաբանությունների գործունեության սկզբնական շրջանի մասին տես J. S. C. Riley-Smith, The Templars and the Teutonic Knights in Cilician Armenia.—The Cilician Kingdom of Armenia, éd. par T. S. R. Boase, Edimbourg & London, 1978, p. 92-117: M.-A. Chevalier, Quelques aspects de la présence des templiers en Cilicie.—Յայ-Ֆրանսիական պատմամշակութային առնչություններ. VII միջազգային գիտաժողովի նյութեր. «20-րդ դարի Ֆրանսիան և հայերը», 20 և 22 սեպտեմբերի 2000 թ., Երևան, 2001, էջ 88-102:

Այն, թե ինչպես են արևելյան քրիստոնյա հեղինակները ներկայացնում ասպետական միաբանությունները⁹, մեզ մղում է խորհելու բազմաթիվ խնդիրների շուրջ. ինչպես են հայ և ասորի հեղինակները հիշատակում ասպետական այս միաբանությունները: Արդյո՞ք նրանք միշտ են դրանք ներկայացնում հաստատված: Այս հաստատությունների ո՞ր կողմերի վրա են նրանք շեշտը դրել: Ասպետական միաբանություններին բնորոշ ներքին և արտասովոր բնույթի ո՞ր առանձնահատկություններն են հեղինակները վրա ամենամեծ ազդեցությունը գործել: Ի՞նչ համընդհանուր պատկեր են նրանք արտացոլում: Արդյո՞ք ժամանակի ընթացքում նրանց տեսակետը զարգացում է սպառնալի: Արդյո՞ք այն փոփոխվել է ըստ հեղինակի պաշտոնի, միջավայրի և պատմողի ներգրավվածությունից և աստիճանի:

I — Հիշատակման զանազան ձևեր

Ասպետական միաբանությունները ներկայացվում են տարբեր ձևերով՝ ըստ քննարկվող հեղինակների էթնիկական և կրոնական պատկանելության, ինչպես նաև այս միաբանությունների հարցում նրանց իմացության աստիճանի:

Ա — Կրոնա-ասպետական միաբանությունների հիշատակության բացակայությունը

Որոշ հայ հեղինակներ չեն մտահոգվում դրանք հիշատակելու անհրաժեշտությամբ, անգամ այնպիսի հանդամանքներում, երբ դրանց ներկայությունն, ի դեպ, ապացուցված է: Այսպես է Գրիգոր IV Տղա կաթողիկոսի պարագայում, ով իր «Սալահ Էդ-Դինի կողմից Երուսաղեմի զբաղման ողբում»¹¹ հիշատակում է Այյուբյան սուլթան Սալահ Էդ-Դինի կողմից Պաղրաս ամրոցի զբաղման մասին, որը տեղի է ունեցել 1188 թ. սեպտեմբերին: Կաթողիկոսը սակայն չի հոգացել հիշատակել թե՛ այդ միջոցին այս զղյակի տիրակալ տաճարականների ներկայությունը և թե՛, առավել ևս, նրանց վերապահված ճակատագրի մասին:

«Նրանք [Սալահ Էդ-Դինի զորքերը — Մ.-Ա. Շ.] գնացին ճամբարելու մի ընդարձակ հարթավայրում,

Մի լճի մոտ, որը գտնվում է այս վայրերում,

եվ շրջապատեցին բերդամրոցը,

Որն անվանում են Սարա (Պաղրաս)»¹²:

Երբեմն հիշատակարանների հեղինակները կամ զբիչները նույնպես անուշադրության են մատնում ասպետական միաբանությունները, այն դեպքում, երբ հիշատակում են ուղղակիորեն դրանց առնչվող

⁹ Ինչ վերաբերում է ասպետական միաբանությունները միջնադարյան հասարակությանը ներկայացնելուն, տես հետևյալ աշխատությունը. H. Nicholson, Templars, Hospitallars and Teutonic Knights. Images of the Military Orders, 1128-1291, Leicester, London and New York, 1995.

¹⁰ Գրիգոր IV Տղան (1133-1189) կաթողիկոս է եղել 1172-1189 թթ.:

¹¹ Recueil des Historiens des Croisades. Documents arméniens, t. I, Paris, 1859 (այսուհետև՝ RHC, DA, t. I), p. 272-307.

¹² RHC, DA, t. I, p. 303. Լատինական և ֆրանկական սկզբնաղբյուրներում նաև Գաստոն անվանված Պաղրասն Ամանոսի հարավում գտնվող բերդամրոց էր, որն ուղղված էր դեպի Կիլիկիայի հարթավայրը: Նա պաշտպանում էր Ասորվոց դրոնքը հարավ-արևելքից և գտնվում էր Անտիոքից նվազագույնը 30 կիլոմետր դեպի հյուսիս:

իրադարձութիւնները մասին: Երբ 1219 թ. Հայոց թագավոր Լևոն Ա-ն վախճանվել է՝ նա իր թագավորութիւնը հանձնել է իր կրտսեր դստերը՝ Զաբելին (Իգարեի)՝ հրահանգելով թագավորութեան խնամակալ Գաստոնի տիրակալ Ադանին և պալլ Կոստանդին Պապեոնցուն՝ նրան ամուսնացնել իր դիրքին համարժեք որևէ մեկի հետ¹³: Այսպիսով, 1123 թ., թագուհին ամուսնացել է Անտիոքի իշխան Բոզեմուռը IV-ի որդի Ֆրիլիպի հետ: Այդուհանդերձ, նոր թագավորը, որին Հայ իշխանները մեղադրում էին լատինամետ սրամարդութիւններ ունենալու, Հայկական դահլին պատկանող հարստութիւնները խաբուելով հափշտակելու և Անտիոքի իշխանութիւն տեղափոխելու մեջ, ճերբակալվել է և մահացել 1225 թ.¹⁴: Պալլ Կոստանդինն այդ ժամանակ ցանկացել է Զաբելին ամուսնացնել իր որդու՝ Հեթումի հետ: Զաբելը մեկնել է պատասանելու հիվանդախնամների մոտ, որոնց՝ նրա հայր Լևոնը 1210 թ. տվել էր Սելեկիա քաղաքը¹⁵: Այս դիպվածի առիթով է, որ պատարագամատուցներից մեկն զրինջ Հովհաննեսը հայտնում է. «Եկն առ մեզ Սարգիս հայրն և երկր մեզ վատ դրոյց, որ եկեալ Լևոն թագաւորին թագուհի ի Կիպուաւսա ի Սելեկիա, որ տեսայր զիր դուստրն, որ էր Հեթում թագաւորին թագուհի: Եւ տարան զթագուհին ի Սելեկիա, և անդ ետես զմայրն իւր, և խաբեց զթագաւորին հայրն զպարսն Կոստանդին, և մտաւ ի Սելեկիա, և մտեց հետ իր մաւրն, և զպարսնն հանին քաշնաւք բերդէն: Այս այսպէս գործեցաւ, և ենք տահի և յերկեղի. այլ յառաջկայն Աստուծոյ է գիտելի»¹⁶:

Հովհաննեսը կամ անտեղյակ լինելով բերդամրոցը հիվանդախնամների միաբանութեանը պատկանելու իրողութեանը և կամ ամոթահար չանելու համար այս հեղինակավոր միաբանութեանը՝ նրան մերժեցնելով թագուհու դիրքորոշմանը, որը դատապարտում է, չի հիշատակում ո՛չ միաբանութեան երբայրների ներկայութեան և ո՛չ էլ այս գործին նրանց մասնակցութեան մասին:

Իրենց ժամանակագրութիւններում ասպետական միաբանութիւնների մասին հիշատակում են նաև այլ հեղինակներ, բայց դա պարբերաբար չի արվում: Երբեմն պատահում է, որ նրանք անտեսում են զրանք՝ այն դեպքում, երբ նրանց զեբր կամ ներկայութեանն անմխտելի է:

Միխայել Ասորին, որն, ի դեպ, խիստ ուշադիր է կրոնա-ասպետական միաբանութիւններին առնչվող փաստերի հանդեպ, բազմաթիվ առիթներով մոռանում է հիշատակել զրանց մասին: Օրինակ՝ երբ Կիլիկիայում Մանվել Կոմնենոսի արշավանքի ժամանակ, 1158 թ., լատինական պլխավոր առաջնորդները զենացել են բասիլեպին ընդառաջ, որպեսզի նրան հաշտեցնեն Հայ իշխան թորոսի հետ, տաճարականները ներկա են եղել, սակայն պատրիարքն այդ մասին ակնարկ իսկ չի անում: Նա այդ մասին չի նշում նաև, երբ իր պատմութեան մեջ հետաքրքրվում է Հալեպի դեմ ուղղված հույների,

լատինների և հայերի միացյալ արշավանքով¹⁷: Իսկ երբ նա հիշատակում է 1160-ական թվականների սկզբին մի գողի Պաղրաս գալու մասին, չի հատկեցնում, որ ամրոցի տիրակալները տաճարականներն էին¹⁸:

Ասորական մեկ այլ, ավելի ուշ ժամանակաշրջանի հեղինակ՝ Բար Հերբեոսը ևս հիշատակում է այս վերջին զվարճալի պատմութեան մասին, շարունակելով չմատնանշել, թե ովքեր են Պաղրասի սեփականատերերը, որը տրամաբանական է, եթե նկատի ունենանք, որ XII դարին վերաբերող իրադարձութիւնները նա քաղել է, ի դեպ, Միխայել Ասորու պատմութիւնից¹⁹: Այստեղ ստույգորեն գտնում ենք միևնույն հատվածը: Հեղինակը չի հիշատակում տաճարականների մասին նաև այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է մահմեդականների պարագայում Պաղրասի ամրոցի թալանին՝ Սալահ էդ-Դինի կողմից դրա գրավումից հետո կամ դրա պաշարմանը հայերի կողմից²⁰:

Չնայած այս մի քանի բացթողումներին, վերոնշյալ ասորի երկու հեղինակը, ընդհանուր առմամբ, համեմատաբար իրազեկ են այն գործողութիւններին, որոնց միաբանութիւնները մասնակցել են:

Բ – «Ֆրանկները» տոհմաբանական հիշատակումը

Կրոնա-ասպետական միաբանութիւնները շրջանցելու փուլին հաջորդած՝ դեպի նրանց հիշատակումը տանող առաջին քայլը՝ «Ֆրանկների» հետ նրանց նույնացումն է: Իրոք, այս անվանումը, որը համեմատաբար անստույգ է և թեպետ կարող է բացահայտել նրանց համալրման աշխարհազգրական ծագումը, առանց հաշվի առնելու նրանց հաստատութեան առանձնահատկութիւնները, միաբանութիւնների անդամներին ձուլում է այլ ֆրանկների հետ, անկախ այն բանից, թե նրանց ճանաչարհները ոչ հեռավոր անցյալում են խաչաձևվել²¹, թե նրանք նախկինում են հաստատվել Սուրբ երկրում: Այս առումով հատկանշական է Զաբելի Սելեկիա մեկնելուն առնչվող պատմիչ Կիրակոս Գանձակեցու²² արած պատմութիւնը. «Իսկ թագուհին ոչ հաւանէր լինել կին մանկանն». այստեղ արած չոգաւ ի Սելեկիա առ Ֆրանկսն որ անդ, զի մայր նորա ֆրանկ էր ազգաւ ի Կիպրոս կղզւոյ: Եւ առեալ

¹³ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությանը Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 187-190; Kirakos de Gandzak, Histoire d'Arménie, trad. française. – Marie-Félicité Brosset, Deux historiens arméniens, Saint-Petersbourg, 1870, p. 92-93; La Chronique attribuée au Connétable Smbat, introduction, trad. et notes de G. Dédéyan, Paris, 1980, p. 93-94; Տե՛ս նաև Cl. Mutafian, ԳՂՎ. աշխ., էջ 50-52:

¹⁴ Կիրակոս Գանձակեցի, ԳՂՎ. աշխ., էջ 187-190; Kirakos de Gandzak, op. cit., p. 93; Chronique du royaume de la Petite Arménie par le connétable Sempad. – RHC, DA, t. I, p. 647-648; La Chronique attribuée au Connétable Smbat, p. 95-96; Cl. Mutafian, ԳՂՎ. աշխ., էջ 52-54:

¹⁵ Delaville-le-Roulx, Cartulaire général de l'Ordre des Hospitaliers de Saint-Jean de Jérusalem (1100-1310), t. II, 1894-1906, p. 115-116, N 1344.

¹⁶ Հայերեն ծեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 166, թիվ 122:

¹⁷ «1740 թվին հույների կայսր Մանվելն ասպատակեց Կիլիկիան: [...] Երուսաղեմի և Անտիոքի թագավորները՝ ֆրանկների պատրիարքի հետ միասին եկան և գտան նրան ու համաձայնություն կայացրին նրա հետ, նրան վերահաշտեցրին Ռորոսի հետ, որին բերին նրա մոտ [...]: Բոլոր քրիստոնյա հույները, ֆրանկներն ու հայերը միավորվեցին՝ Հալեպը, Դամասկոսը և ամրոց Սիրիան գրավելու համար»: Michel le Syrien, ԳՂՎ. աշխ., էջ 316:

¹⁸ «Եվ այդ տարի, ֆրանկները ցանկացան բռնել մի ավազակի, որը Պաղրասում էր: Նա կախավ և գնաց ու գտավ Նուր Էդ-Դինին»: Նույն տեղում, էջ 318:

¹⁹ «Եվ [այդ] տարում կար մի ոմն ֆրանկ, որը Պաղրասում կողոպտիչ էր և քանի որ ֆրանկները ցանկացան բռնել նրան, նա փախավ ու գնաց Նուր Էդ-Դինի մոտ»: Bar Hebraeus, ԳՂՎ. աշխ., էջ 287:

²⁰ Նույն տեղում, էջ 336-337:

²¹ Կիրակոս Գանձակեցի (1203-1272)՝ 301-1265 թթ. Հայաստանի պատմության հեղինակ է: Որոշ ժամանակ մոնղոլների գերին լինելուց հետո նա կարողացել է փախչել: Նրա պատմությունը հարուստ է այդ ժողովրդի նվաճումներին վերաբերող տեղեկություններով:

²² Խոսքը վերաբերում է Կոստանդինի որդի Գեթումին:

կոտանդինի զգորսն ամենայն պաշարեաց զքաղաքն, մինչև յոչ կամաց ետուն զթագուհին ի ձեռն նորա: Եւ տարեալ ամուսնացոյց զնա որբւոյ իւրում»²³:

Այս մեջբերումը բացահայտում է այն փաստը, որ Քրանկներն ընդունել են Զարեհին, և ընդգծում, այսպիսով, մինևունյն ազգի մարդկանց միջև համերաշխության ձևերից մեկը, որովհետև Զարեհի մայրը՝ Սիրիլ թագուհին, Կիպրոսի Ամարի I թագավորի դուստրն էր²⁴: Այսպիսով, կամ Քրանկներին հատուկ համերաշխության որոշակի ձևը ցույց տալու նպատակով, կամ երևույթների Սուրբ-Հովհաննեսի հիվանդախնամների մասին տեղեկություններ չունենալու հետևանքով (այս վերջին վարկածն, այդուհանդերձ, մեր օրերի հեռավորությունից ամենաարժանահավասն է, քանզի Կիրակոսն իր պատմության մեջ, որևէ այլ տեղ չի հիշատակում ասպետական միաբանությունների՝ նույնիսկ իրրև «Քրանկների» մասին), հեղինակը միաբանությունները վերածում է ազգի, որից նրանք ծագել են, ամենևին հաշվի չառնելով նրանց գործունեությունն ու առաքելությունը:

9 – Ասպետական միաբանությունների ասպետներն իրրև «Քրանկներ»

Այս մարտնչող կրոնավորներին բնորոշելու համար, մասնավորապես ասորի գրիչները և անհշան չափով՝ որոշ հայ հեղինակներ բավական հաճախ օգտագործել են մեկ այլ՝ «եղբայրներ» արտահայտությունը: Արևելյան քրիստոնյաների շրջանում, անկախ այն բանից, ասորիների թե հայերի, այս անունը պահպանվել է այն ձևով, ինչպես այն ժամանակ արտասանել են լատինները և արտացոլվել է նրանց համապատասխան լեզուների հնչյունական տառագրությունների մեջ: Այս հարցն ավելի հստակեցնելու համար, Միխայել Ասորու ժամանակագրության հրատարակության մեջ Ժ. Շարուն այդ բառը թարգմանում է՝ տառադարձելով այն իրրև «Փրեր» (Phrêr)²⁵, ամենևին չբացատրելով «եղբայրներ» իմաստը²⁶: Մեկ անգամ նույնիսկ տաճարականներին նա բնութագրում է իրրև «Փրեր եղբայրների»²⁷. փաստորեն, Միխայել Ասորին «Փրեր» բառն օգտագործում էր իրրև հատուկ անուն, իսկ «եղբայր» բառն իրրև հասարակ անուն (որն օգտագործվել է՝ կարևոր չէ, թե ինչ կարգի վանականի համար), իսկ «Փրեր եղբայրներն» այն ժամանակ եղել են առանձնահատուկ վանականներ, քանզի նրանք պատկանել են «Փրեր» կատեգորիային, այն է՝ ասպետական միաբանություններին: Ե.-Ա. Վալիս Բրուլը, Աբուլ Ֆարաբի ժամանակագրության իր անգլերեն թարգմանության մեջ, պահպանում է Քրանսերեն «եղբայրներ» (frères) բառը²⁸ (կամ երբեմն, այնուամենայնիվ, այն դեռում է փակագծերի մեջ, անգլերեն «Brothers» կամ «Brethren» բառերի կողքին) և մի հստակ պարագայում նույնիսկ գրում է. «Maistir of the Frîrê»²⁹, այն է՝ եղբայրների ղեկավար, ավելի մեթոդիկ, ասորական հնչմանը: Ինչ վերաբերում է Ա. Արունային, Անանուն եղեսպուցու ժամանակագրության իր

Քրանսերեն թարգմանության մեջ ընդգծելու համար այդ առանձնահատուկությունը՝ եղբայրներ բառն առնում է փակագծերի մեջ³⁰:

Հայ հեղինակներից Գրիգոր Երեցի³¹ ևս հիշատակում է «եղբայրների» մասին (առանց մատնանշելու այս կամ այն ասպետական միաբանությանը նրանց պատկանելությունը)՝ Քրանսերեն բառի՝ հայերենի հնչյունական տառագրությունը, որը նրա ժամանակագրության թարգմանության մեջ լայնաբերական ներկայացրել է և բացատրել է: Դյուլյորեն³², այն դեպքում, երբ Ա. Է. Դոստուրյանն իր նորագույն թարգմանության մեջ հայերեն «Քրերը» բառը (խոսքը վերաբերում է «եղբայր» բառին՝ հայերենի հոգնակի մասնիկով) թարգմանում է (կամ ավելի շուտ մեկնաբանում) ուղղակիորեն իրրև տաճարականներ³³: Հիշատակարաններից մեկում ևս նշված է. «պատերազմողս, որ կոչին փրերը»³⁴, կապված 1187 թ. հուլիսին Հաթիհի ջախջախումից հետո Սալահ է-Դինի կողմից նրանց դերիվարվելու հետ: Սմբատ սպարապետն այն ժամանակագրությունում, որն անհարկի նրան է վերագրվել³⁵, մատնանշում է կրոնա-ասպետական միաբանությունների անդամներին երկու ձևով և, այսպիսով, անցում է կատարում հեղինակների մի խմբից մյուսին, քանզի նրանց մասին հիշատակում է կամ իրրև «եղբայրների»³⁶, կամ «խաչով նշված հանդերձանքներով եղբայրների»³⁷ (չնայած ըստ հեղինակի՝ այս ձևակերպումը կիրառելի է ավելի շուտ տաճարականների համար)³⁸, կամ տաճարականներ³⁹ և կամ հիվանդախնամներ⁴⁰, ովքեր մատնանշվում են իրրև այդպիսիք (այդուհանդերձ, նա երբեք չի հիշատակում տեկոտնական ասպետների մասին):

«Եղբայրների» այս անվանման առիթով կանխատեսելի է երկու վարկած. մի կողմից խոսքն առնչվում է, հավանաբար, Քրանսիական արտահայտությունը պահպանելու՝ արևելյան քրիստոնյաների գրականության ցանկությունը, իսկ մյուս կողմից էր ունենալ շատ ավելի ընդարձակ իմաստ, քան անհրաժեշտ էր կրոնա-ասպետական միաբանությունների էությունը

³⁰ Anonymi auctoris chronicon ad A. C. 1234 pertinens II, trad. de A. Abouna, introduction, notes et index de J. M. Fiey, CSCO, SS, 154, Louvain, 1974, p. 141 (այսուհետև՝ *Anonyme syriaque*).
³¹ Գրիգոր Երեցի եղել է քահանա, նա շարունակել է Արևմուտքում Մատթեոս Եղեսպոցի ցանկամբ հայտնի Մատթեոս Ուռուպեցու ժամանակագրությունը մինչ 1162 թ.:
³² Chronique de Grégoire le Prêtre. — *RHC*, DA, t. I, p. 171-172, 184, 188, 189, 194 (այսուհետև՝ *Grigor Yerets*): Chronique de Matthieu d'Edesse (962-1136) avec la continuation de Grégoire le Prêtre jusqu'en 1162, trad., annotée et éd. par Edouard Dulaurier, Paris, 1858, p. 337-339, 350-351, 354-357, 361 (այսուհետև՝ *Matthieu d'Edesse*).
³³ Armenia and the Crusades, 10th to 12th centuries. The Chronicle of Mathew of Edessa, introduction, commentaire et trad. de Ara Edmond Dostourian, Lanham, New York, London, 1993, p. 262-264, 270-271, 273-277 (այսուհետև՝ *A. E. Dostourian*).
³⁴ Չայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-Ժ դդ., աշխատասիրություն՝ Ա. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 272, թիվ 280:
³⁵ Այս ժամանակագրությունն ավելի շուտ կարող է լինել նրա եղբայրներից որևէ մեկի ջանքեր (chancelier) Վասիլի († 1275) աշխատությունը, որը Սսի արքեպիսկոպոսն էր և ջանքերը: ժամանակագրության հնարավոր հեղինակի մասին տե՛ս Ժ. Դեղեյանի ներածությունը, *La Chronique attribuée au Connétable Smbat*, p. 26.
³⁶ Լույն տեղում, էջ 45, 62-63:
³⁷ Լույն տեղում, էջ 59, 116-117:
³⁸ Գմմա. Ժ. Դեղեյանի դիտողություններն այս առիթով. Լույն տեղում, ծանոթագրություն թիվ 63, էջ 62:
³⁹ *La Chronique attribuée au Connétable Smbat*, p. 96.
⁴⁰ *Chronique du royaume de la Petite Arménie*, p. 645, 648; *La Chronique attribuée au Connétable Smbat*, p. 89.

²³ Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 189: Այս հատվածին հանդիպում ենք հետևյալ հրատարակության մեջ. Kirakos de Gandzak, նշվ. աշխ., էջ 429:
²⁴ C. Toumanoff, Les dynasties de la Caucasic chrétienne de l'Antiquité jusqu'au XIX^e siècle. Tables généalogiques et chronologiques, Rome, 1990, p. 428.
²⁵ Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 201-203, 207-208, 235, 286-287, 314:
²⁶ Լույն տեղում, էջ 201-203, 314, 324-325:
²⁷ «Ֆրանկները ցանկանում էին, որ իրենց տրվեն այն ամրոցները, որոնք հայերը զավթել էին այս Փրեր եղբայրներից»՝ հույների համար: Լույն տեղում, էջ 314:
²⁸ Bar Hebraeus, նշվ. աշխ., էջ 283, 308-309, 370, 381, 389-390:
²⁹ Լույն տեղում, էջ 288:

չաղափարեալու և լավագուշտնս ներկայացնելու համար: Նրանց լիզուներում չուեննալով համարժեք այս անվանումը նրանց թույլատրել է ընդգծել այս միաբանութիւնների անդամների առանձնահատկութիւնը այլ միաբանութիւնների համեմատութեամբ: Մյուս հիպոթեզը, որը չի հակասում նախորդին, հանգում է նրան, որ հեղինակները, որոնց առնչվում է խոսքը, կրոնա-ասպետական միաբանութիւնների մասին չունենին խիստ հստակ գիտելիքներ և, հետևաբար, նրանց անդամներին անվանում էին ոչ թե ըստ այն միաբանութեան, որին նրանք անդամակցում էին, այլ պարզապէս, «եղբայրներ» ընդհանուր անվամբ: Այս տեսութիւնը հաստատում է տաճարականների և հիվանդախնամների միակցումով, ինչն արել է Միխայիլ Ասորին «Փրանկ «Փրեների» պատմութիւնում», որտեղ տաճարականներին ներկայացնում է իրրև հիվանդանոցների հիմնադիրներին⁴¹, մի գործունեութիւն, որը բնորոշ է երուսաղեմի Սուրբ-Հովհաննեսի հիվանդանոցի միաբանութեանը (իսկ ավելի ուշ՝ տեստնականների Սուրբ-Մարիի միաբանութեանը), սակայն ոչ մի պարագայում՝ տաճարականների միաբանութեանը, որն, ինչպես և մյուս բոլոր կրոնական միաբանութիւնները, կատարել է, այդուհանդերձ, նշանակալի բարեգործութիւններ: Այնուամենայնիվ, այլ հեղինակներ, ինչպես Սմբատ սպարապետը, իրազեկ են ասպետական միաբանութիւններին առնչվող իրարբանութիւններին, և այդ ընթացքում տաճարականներին երբեմն նույնացնում են հիվանդախնամների հետ: Կարելի է կարծել, որ հստակութեան բացակայութիւնը բնորոշ է ասորի հեղինակներին՝ այս միաբանութիւնների անդամների հետ հարաբերութեան բացակայութեան հետևանքով: Սակայն սրա հավանականութիւնը մեծ չէ, և թեև նկատի ուենանք վերջիններիս վաղուց հաստատվելը Երեսիայի կոմսութիւնում⁴²:

Դ – Միաբանութեան անվանը համապատասխանող հիշատակում

Կրոնա-ասպետական միաբանութիւնների եղբայրները անվանման երրորդ եղանակը նրանց մասին հիշատակումն է այն միաբանութեան անվամբ, որին նրանք անդամակցում են: Անվանման այս ձևը որդեգրել են այն հեղինակները, ովքեր այդ միաբանութիւնների մասին ունեցել են համեմատաբար ամբողջական գիտելիքներ: Թողափորական ընտանիքի անդամները և շրջապատը, խոսքը վերաբերում է անձամբ թագափորին, թագափորական աստիճանավորներին կամ պրեկատներին, պարբերաբար առնչվելով նրանց հետ, նախահակված են եղել զրել նրանց մասին: Հիրափի, տաճարականները, հիվանդախնամներն ու տեստնական ասպետները զտնվում էին հայ գահակալի արքունիքում: Նրանց կարելի էր տեսնել թագափորի կողքին արարողութիւնների և կրոնական նշանակալից իրարբանութիւնների ժամանակ: Այսպիսին էր, օրինակ, Ռայմոնդ-Ռուբենի թագափորման պարագան՝ 1212 թ., Աստվածապաշտութեան օրը: Տեստնականների Սուրբ-Մարիի հիվանդանոցի առաջնորդ Հերման զր Սայգան և Սելեկիայի սենյորը՝ երուսաղեմի Սուրբ-Հովհաննէսի հիվանդախնամը, ինչպես նաև այս միաբանութիւնների այլ անդամներ, զտնվում էին Լևոն Ա-ի մոտ⁴³: Արևելյան

քրիստոնյաների շրջանում՝ ասպետական միաբանութիւններին՝ իրենց անվամբ, հիշատակում են միայն հայերը (բացառութեամբ Անանուն եղեսպոցի՝ ժամանակագրութեան մեջ մի հիշատակման)⁴⁴ և ինչ վերաբերում է այս հայերին՝ ամենաստույգն ամենարարձր դիրքեր զբաղողներն են: Այդ նշմարելի է լատիներեն լեզվով գրված գանազան հրովարտակներում, որոնք հրապարակել է հայկական թագափորութեան դիվանը⁴⁵: Օրինակ՝ 1210 թ. ապրիլի 15-ին Լևոն Ա-ն նվիրատվութիւն է արել «հիվանդախնամների միաբանութեանը»: Նա հիշատակում է «հիվանդախնամների Սուրբ միաբանութեան առաջնորդի և վանքի» մասին և իր, ինչպես նաև իր գարմիկ Ռայմոնդ-Ռուբենի ու իրենց հոգային տարածքների ճակատագիրը վստահում է «եղբայր Գարին զը Մոնտեգյուրին» և միաբանութեան վանքին⁴⁶: Այս թագափորի հիվանդախնամներին շնորհած այլ հրովարտակներ, ըստ էութեան, նույնքան հստակ են: Ինչ վերաբերում է տեստնականներին՝ սպա 1212 թ. ապրիլին Լևոն Ա-ն հիշատակում է «տեստնականների հիվանդանոցի Սուրբ միաբանութեան եղբայրները [...]»⁴⁷ մասին: Կիլիկյան Հայաստանի թագափորը, որը Պաղրաս ամրոցին տիրելու պատճառով տաճարականների հետ բացահայտ առճակատման մեջ էր՝ հատկապես հիշատակում է միաբանութեան և նրա անդամների մասին: 1199 թ. հրովարտակում նա հիշատակում է «տաճարականների առաջնորդի և վանքի» մասին⁴⁸, 1201 թ. հոկտեմբերի 1-ի թվակիր՝ պապ Իննովկենտիոս III-ին հղած նամակում՝ «տաճարականների առաջնորդի» և «տաճարականների» մասին⁴⁹: Նույնը կարելի է ասել նրա դիվանի հստակացրած այլ փաստաթղթերի մասին: Հեթում Ա-ն⁵⁰ ու նրա կինը՝ Զաբել թագուհին, 1236 թ. հունվարի 22-ին

par J. C. M. Laurent, 1864, p. 177-178; Wilbrand d'Olbenbourg, Itinerarium Terrae Sanctae.— S. de Sandoli, Itinera hierosolymitana Crucesignatorum (Saec. XII-XIII), t. 3, Jérusalem, 1983, p. 222-223.

⁴⁴ «Տաճարական և հիվանդախնամ եղբայրների թվում գտնվող ավելի քան հարյուր հիսուն ազնվականի բռնեցին և ուղարկեցին Դամասկոսի բանտ»: Sten Anonyme syriaque, p. 148.

⁴⁵ Կիլիկյան Հայաստանում թագափորության ջանքերը հաճախ Սսի արքեպիսկոպոսն էր: Այդուհանդերձ, պարտականությունների կատարման ընթացքում նրան օժանդակում էին լատինական մի ջանցիլը և գրիչներ: Գնմտ. V. Langlois, Գշվ. աշխ., էջ 19: Կարելի է մտորել, թե ինչ չափով է լատինական ջանցիլը ազդեցություն ունեցել կրոնա-ասպետական միաբանություններին հղված հրովարտակները ներկայացնելու եղանակի վրա:

⁴⁶ Delaville-le-Roulx, Գշվ. աշխ., էջ 115-116, թիվ 1344:

⁴⁷ V. Langlois, Գշվ. աշխ., էջ 117-120; E. Strehlke, Tabulae Ordinis Teutonici ex tabulari regii herolinensis codice potissimum, éd. préface et ajouts de H. E. Mayer (dans 2^{ème} éd.), 1^{ère} éd., Berlin, 1869, 2^{ème} éd., University Toronto Press, Jérusalem, 1975, p. 37-39, N 46; K. Forstreuter, Der Deutsche Orden am Mittelmeer (Quellen und Studien zur Geschichte des Deutschen Ordens, Bd. 2), Bonn, 1967, S. 234 (8-րդ գլուխը վերաբերում է Հայաստանին, էջ 59-67. հավելվածում (էջ 234-237) կարելի է գտնել հրովարտակների մասնակի հրատարակությունը, որը սրբագրում է Եսրելիկի հրապարակումը):

⁴⁸ Innocent III, Epistolae.— Patrologie latine, J.-P. Migne, vol. 214, 1855, col. 810-812, N 252; Acta Innocentii PP. III (1198-1216) e registri vaticanis aliisque eruit, introductione auxit, notisque illustravit, P.-T. Haluscynskij, Typis polyglottis vaticanis, 1944.

⁴⁹ Innocent III, id., col. 1003-1006, N 43; Acta Innocentii PP. III, id., p. 559, N 7.

⁵⁰ Գեթում Ա-ն (1215-1270) Գեթումյան հարստության առաջին հայ թագավորն էր: Քանի որ Լևոն Ա-ն վախճանվել էր առանց արու ժառանգ ունենալու, Գեթումն ամուսնացել է, այնպիսի հանգամանքներում, որոնց արդեն առիթ ունեցանք հիշատակել, այս թագավորի դստեր՝ Զաբելի հետ: Նա թագավորել է 1226-1269 թթ.:

⁴¹ Michel le Syrien, Գշվ. աշխ., էջ 203:
⁴² M. Amoureux-Mourad, Գշվ. աշխ., էջ 141: Գեղիմակը հիշատակում է այս կոմսությունում հիվանդախնամներին արված նվիրատվությունների մասին 1130-ական թվականների սկզբից ի վեր:
⁴³ «Wilbrandi de Oldenborg, Peregrinatio».— Peregrinatores medii aevi quatuor, Buchardus de Monte Sion, Ricoldus de Monte Crucis, Odoricus de Foro Julii et Wilbrandus de Oldenborg, Leipzig, éd.

«սուրբ և կրոնական առաջնորդ Հերմանի և Աստծո համար թանկագին ասպետավագ եղբայր Լիոտտոլդի միջոցով գերմանացիների հիվանդանոցի միաբանություն» են նվիրում Հարունիե քաղաքը և նրա հանդակները. միևնույն փաստաթղթում այս միաբանությունը ևս անվանվում է իբրև «գերմանացիների հիվանդանոցի եղբայրների բանակ»⁵¹: Կիլիկյան Հայաստանի գահի ժառանգորդ և Անտիոքի իշխան Ռայմոնդ-Ռուբենը նվիրատվություն է անում «Երուսաղեմի հիվանդանոցի հիվանդանոցի միաբանությանը» և ճշգրտորեն հիշատակում այս միաբանության անդամներին (ովքեր հաստատում են այս արտոնությունը), ինչպես նաև նշում նրանց հասարակական դերքը⁵²: Իր այլ փաստաթղթերում ևս նա շարունակում է միևնույն ձևով հիշատակել հիվանդախնամների միաբանության մասին՝ բացատրելով մի քանի նրբերանգների, ինչպիսին է՝ «Երուսաղեմի չքավորների հիվանդանոցի միաբանությունը»⁵³: 1219 թ. մտադրել նա նաև հարկերից ապստող մի հրովարտակ է շնորհել «տեստանականների Սուրբ-Մարիի հիվանդանոցի առաջնորդին և եղբայրներին»⁵⁴: Մեծ սենյոր Կոստանդին Մարվանդիքարը միաբանության հետ, այդուհանդերձ, ունենալով վիճարկելի հարցեր, 1271 թ. հունիսի 15-ին, վեճի կարգավորման ընթացքում, հայերեն կազմված հրովարտակում հարգալից նշում է. «գերմանացի հիվանդախնամների մեծ առաջնորդ, եղբայր Հովհաննեսը»⁵⁵: Իսկ պապ Իննովկենտիոս III-ին հղած նամակում Հովհաննես կաթողիկոսը քննում է Լեոնին և «տաճարականներին» հակադրած վեճը⁵⁶:

Իր «ժամանակագրական աղյուսակում»՝ Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Բ-ն⁵⁷ իբրև «այսման ֆրէրք»՝ հականե-հանվանե հիշատակում է տաճարականների (իբրև Պելերինի վրյակի սեփականատերերի)⁵⁸ և տեստանական ասպետների մասին Մոնֆորի վրյակի վերականգնման նրանց ձեռնարկման առիթով⁵⁹:

Հեթումյան թագավորական ընտանիքի երկու նշանավոր անձինք ևս հետաքրքրվել են կրոնա-ասպետական միաբանությունների եղբայրներով: Խոսքը վերաբերում է Հեթում Ա-ի եղբայր Սմբատ սպարապետին վերագրվող ժամանակագրությունը, որը հիշատակում է «տաճարական ասպետների»⁶⁰,

«հիվանդախնամների առաջնորդի»⁶¹ մասին, բայց խաչակրաց հինգերորդ արշավանքի ժամանակ եգիպտոսում ռազմական արշավանքը գլխավորող կիլիկյան առաջնորդների և նրանց զորքերի կապակցությունը նաև հաղորդում է. «Իրենց առաջնորդների հետ մեկտեղ՝ եղբայրների միաբանությունները, տաճարականներն ու հիվանդախնամներն՝ իրենց բոլոր վանականների հետ միասին»⁶²: Երկրորդ անձը, Հայթոն պատմիչը կամ Հեթում Կոնիկոսյան⁶³, իր «Մաղիկե պատմությանց Արևելից» գրքում հիշատակում է Ղազանի կոչով Տյուրոս իշխանի կազմակերպած զորահավաքի մասին, որին մասնակցում էին «maistres [du Temple] e de l'Hospital e leur covent»⁶⁴: Նույն հեղինակն իր «ժամանակագրությունում» մատնանշում է ասպետական միաբանությունների կյանքում ակնառու փաստեր և, հետևաբար, դրանց մասին հիշատակում է հաճախ: Նրա պատմությունը ստույգ է, քանզի նշված են առաջնորդների և որոշ բարձրաստիճան անձանց անունները: Օրինակ 1227 թ. կարելի է հիշատակում գտնել հիվանդախնամների առաջնորդ եղբայր Գարին գր Մոնտեպյուլի մահվան («Եւ վախճանեցաւ մայաւուն Ոսպեթլուն ֆրէր Կարին տ[ը] Մոնդալոյ»)՝⁶⁵ կամ 1244 թ. նաև տաճարականների առաջնորդ եղբայր Արման գր Պերիգորի («Մայաւուն Դամիլուն ֆրէր Հերմանդ տը Փէւկաւրդն»)՝⁶⁶ և շատ ուրիշների վախճանի մասին: Հիշատակարաններից մեկում Հեթումը կրկին անդրադառնում է Ակրայի գրավմանն ալ-Աշրաֆ Սալիլի կողմից, մի իրադարձություն, որը տեղի է ունեցել 1291 թ., այն քաղաքի, «որ էր տուն իշխանութեան Դամիլուն և Ոսպեթալին և այլոց անուանաւոր իշխանաց»⁶⁷:

Հիշատակարաններ կազմած այլ հեղինակներ հատկապես հիշատակում են ասպետական միաբանությունների մասին և շարունակ այդ անում են Սեն-Ժան դ'Ակրայի անկումի առիթով: Այսպիսին է Գեորգ Լամբրոնացու պարագրաֆը:

⁵¹ V. Langlois, նշվ. աշխ., էջ 141-143; E. Strehlike, նշվ. աշխ., էջ 65-66, թիվ 83; K. Forstreuter, նշվ. աշխ., էջ 235-236:
⁵² Եղբայր Գարին դը Մոնտեպյուն՝ հիվանդախնամների միաբանության մարեշալ, եղբայր Գուրբերը՝ Անտիոքի հիվանդախնամների միաբանության ասպետավագ, եղբայր ժիրան Դեդուլյուն և եղբայր Բեռնարը: Delaville-le-Roulx, նշվ. աշխ., էջ 70-71, թիվ 126:
⁵³ Նույն տեղում, էջ 175, թիվ 1441:
⁵⁴ E. Strehlike, նշվ. աշխ., էջ 41-42, թիվ 51:
⁵⁵ L. Alishan, Sissouan ou l'Arménie-Cilicie, description géographique et historique, Venise-St. Lazare, 1889, p. 239; Les Gestes des Chiprois.— RHC, DA, t. II, note d, p. 840.
⁵⁶ Innocent III.— PL, t. 215, col. 692-694, N 120.
⁵⁷ Դեթում Բ-ն (1266-1307) Լևոն Բ-ի որդին էր: Նա ընդմիջումներով թագավորել է Կիլիկյան Հայաստանում 1288-1293, 1295-1296, 1299-1301 թթ.: Երկփեղկվելով իր կրոնական հակումների և քաղաքական պատասխանատվությունների միջև: 1301-1307 թթ. նա եղել է երիտասարդ թագավոր Լևոն Գ-ի խնամակալը:
⁵⁸ Table chronologique.— RHC, DA, t. I, p. 484.
⁵⁹ Նույն տեղում, էջ 485: Պելերինի դոյակը և Մոնֆորը գտնվում էին Երուսաղեմի թագավորությունում: Պելերինի դոյակը հիմնադրվել էր պապեստիկյան ծովափում՝ Հայֆա և Կեսարիա քաղաքների միջև, իսկ Մոնֆորը տաճարականների այս ամրոցի հյուսիս-արևելքում էր:
⁶⁰ La Chronique attribuée au Connétable Smbat, p. 96.

⁶¹ Նույն տեղում, էջ 89:
⁶² Նույն տեղում, էջ 92: Խաչակրաց հինգերորդ արշավանքը, որը 1216 թ. քարոզում էր Ոմորիոս III պապը, ղեկավարել են Զուևգարիայի Անդրե II թագավորը և Ավստրիայի Լեոպոլդ VI դուքսը: Չնայած 1217 թ. Զուևգարիայի թագավորի պարտությանը, Զովհաննես Բրիենցու նախաձեռնությամբ մի արշավանք է ձեռնարկվել Եգիպտոսի ուղղությամբ: Տաճարականների առաջնորդ Գիյոմ դը Շարտրը և հիվանդախնամների առաջնորդ Գարին դը Մոնտեպյուն մասնակցել են 1218 թ. մայիսին սկսված այդ արշավանքին:
⁶³ Միաժամանակ պատմիչ, պայլ և սպարապետ Դեթում Կոնիկոսյան (1240/5-1314), որին անվանում են նաև Հայթոն, եղել է Դեթում Ա-ի եղբոր՝ իշխան Օշինի որդին: Այս անձնավորության մասին տես CL. Moutafian, Héthoum de Korikos, historien arménien, un prince cosmopolite à l'aube du XIV^e siècle // Cahiers de recherches médiévales, N 1, Orléans, 1996, p. 174-183.
⁶⁴ Haythoum, La flor des estoires des parties d'Orient.— RHC, DA, t. II, p. 196-199 (ֆրանսերեն տարբերակը. լատիներեն տարբերակում՝ էջ 320-321): Թարգմանվում է՝ «տաճարականների և հիվանդախնամների առաջնորդներն իրենց եղբայրների հետ»: Stéu «La Fleur des histories de la terre d'Orient», prince Hayton, début XIV^e siècle, trad. du moyen français, présenté et annoté par Christiane Deluz.— D. Regnier-Bohler (dir.), Croisades et pèlerinages, récits, chroniques et voyages en Terre sainte, XII^e-XVI^e siècle, Paris, 1997, p. 851-852. Պարսկաստանի մոնղոլ խան Ղազանի հրամանատարությամբ մամեյուկների դեմ XIV դարի սկզբին՝ ֆրանկների, հայերի և մոնղոլների միացյալ (կամ ծրագրված) արշավանքների մասին տես A. Demurger, Jacques de Molay, Paris, 2002, p. 139-157.
⁶⁵ Դեթում պատմիչի ժամանակագրությունը (XIII դ.)— Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյանը, Երևան, 1956, էջ 65:
⁶⁶ Նույն տեղում, էջ 66:
⁶⁷ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 718, թիվ 579:

«գմեծաճոհակ եւ զգեղեցկաչեն քաղաքն Աքա, զոր ունէին ազգ Յրէկացն, տունն Դամփլուն, եւ Ոսպեթալին»⁶⁸: Նույնը վերաբերում է Հովհաննես Երզնկացուն⁶⁹. «Իսկ Չև (1291) թուին, որդին Ալֆէ մելիք Աչրաֆ անուն, խակամիտ և զաղանարարու, առ գմեծաճոհակ և բազմամբոխ քաղաքն զԱքայ, զոր ունէին ազգ Ֆրերացն, տունն Դամփլուն և Ոսպեթալին»⁷⁰:

Եկեղեցական որոշ գործիչներ ևս կրոնա-ասպետական միաբանութիւնների մասին հիշատակում են զրանց անուններով: Մխիթար Տաշրացին⁷¹ սեղեկացնում է, ի դեպ, պապի նվիրակի հետ իր զրույցին տաճարականների առաջնորդի և հիվանդախնամների ասպետավագի ներկայութեան մասին⁷²: Սյունիքի Հայ եպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանը⁷³ վկայում է, որ Ակրան ծառայում էր «իբրև նստավայր և մայրաքաղաք Փրանկների երեք՝ տաճարականների, հիվանդախնամների ու գերմանացիների թագավորների համար»⁷⁴: Իսկ ինչ վերաբերում է Սամուել Անեցու շարունակողին, ապա նա հիշատակում է «տաճարական եղբայրների» Ֆրիդրիխ II-ին՝ եպիսկոպոսի սուլթանին Հանձնելու պատրաստակամութեան մասին⁷⁵:

Ասպետական միաբանութիւնների հիշատակման այս դանազան եղանակները ամենահեղհեղուկից մինչև ամենահստակն ու ամենաճշգրիտը, արդեն վկայում են, թե ինչպես են արևելյան քրիստոնյաները զրանց ներկայացրել և թե վերջիններս ինչպես են ընկալել նրանց կենսակերպը, դերը Արևելքի յատկանական երկրներում, նրանց զարգացումը: Արևելյան քրիստոնյաների աշխատութիւններում, նվագագույնը մասամբ, Հաշվի են առնվել նաև կրոնա-ասպետական միաբանութիւնների սուպերիորութեանը բնորոշ բոլոր եզրերը և զրանով պայմանավորված նրանց գործողութիւնները:

II – Ասպետական միաբանութիւնների ընկալման բազմակողմանի եզրերը

Ա – Եղբայրների կրոնական և հոգևոր գործունեութեան եզրերը

Արևելյան քրիստոնյաներին եղբայրներն ավելի աշխուժորեն հետաքրքրում են իրենց ռազմական սիրանքներով, քան վանական կենսակերպով և հոգևոր

գործունեութեան ոլորտով: Այդուհանդերձ, ասպետական միաբանութիւնների գործունեութեան կրոնական կողմը նկատելի է այն արտահայտութիւններում, որոնք օգտագործվել են բնորոշելու համար այս միաբանութիւնները կամ նրանց անդամակցողներին: Այս առումով ամենահարուստ սիաստաթղթերը Հայկական թագավորական գիվանից դուրս եկած վավերագրերն են, որոնցում քահակալներն օգտագործում են որոշ միաբանութիւնների նկատմամբ տաճիող իրենց հարգանքը և երբեմն նույնիսկ մեծարանք բացահայտող մակդիրներ: Հաշվի առնելով Լեոն Ա-ին և տաճարականների հակադրած տարածայնութիւնը, հեշտութեամբ հասկանալի է դառնում, որ նման հարգալից վերաբերմունքի ավելի շուտ արժանացել են հիվանդախնամներն ու տևտոնականները: Լեոն Ա-ն նշում է «հիվանդախնամների սուրբ միաբանութեան»⁷⁶, իսկ Ռայմոնդ-Ռուբենը՝ «սրբազնագույն միաբանութեան»⁷⁷ մասին: Երուսաղեմի Սուրբ Հովհաննեսի հիվանդախնամների հոգևոր կյանքն այսպես է գովաբանվել այս հրովարտակներում, և միաբանութիւնը ձևք է բերել սրբի համար: Տևտոնականների գործունեութեան կրոնական կողմը շատ ավելի ակնհայտ է Լեոն Ա-ի 1212 թ. ապրիլի թվակիր նվիրատվական հրովարտակում, որից բերում ենք մի քաղվածք. «Ես նվիրաբերում եմ և զիջում տևտոնականների հիվանդանոցի Սուրբ միաբանութեան հարգարժան կրոնավոր եղբայրներին, ովքեր փոխարինում են մակարայեցիներին՝ Իսրայելի տոհմի պաշտպանութեան գործում և որոնց «միաբանն» եմ և ցանկանում եմ միանալ նրանց բարեգործութիւններին ու աղոթքներին»⁷⁸:

Այստեղ Լեոնը մեծապես առաջ է անցնում պարզունակ մակդիրներից՝ վկայելու համար տևտոնական ասպետների կրոնական գործունեութեան մասին և միաժամանակ հիշատակում է աղոթքներով լի նրանց կենսակերպի և բարեգործութիւնների մասին: Բացի դրանից, նա գուրահեռներ է անցկացնում Կիլիկյան Հայաստանում՝ հավատքով պայմանավորված նրանց ռազմական գործունեութեան և Հին Կտակարանի ընտանիքներից՝ մակարայեցիների գործունեութեան միջև, որն Իսրայելում մարտնչել է Անտիոքոս IV Եպիփանոսի դեմ⁷⁹: Միևնույն փաստաթղթում և ավելի դասական եղանակով հիշատակվում է «տևտոնականների հիվանդանոցի սուրբ միաբանութեան» մասին, ինչպես մինչ այդ՝ հիվանդախնամների պարագայում:

Ինչպես Լեոն Ա-ի շրջանառութեան մեջ դրած նախորդ հրովարտակում, նրա հաջորդները՝ Հեթում Ա-ն ու Ջաբելը տևտոնականների Սուրբ Մարիի միաբանութեանը շնորհած նվիրատվութեան մեջ օգտագործում են գրառումների միևնույն գրքի գովաբանական եղանակները:

«Քանի որ մենք տեսել ենք, որ գերմանացիների հիվանդանոցի սուրբ և կրոնական միաբանութիւնը լի է ու լիացած բարյացակամութեամբ և կրում է խաչի կնիքը, մարտնչում է Քրիստոսի խաչի թշնամիների դեմ և զրանով մարտերում հաղթում է իր թշնամիներին, նշանավորվել է և հզորացել

⁶⁸ Նույն տեղում, էջ 702, թիվ 570:

⁶⁹ Հովհաննես Երզնկացին, որը ծնվել է 1250-ական թթ. շրջանում և վախճանվել 1330 թ., ղեկավարել է Հակոբ Ա կաթողիկոսի հիմնադրած դպրոցը:

⁷⁰ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 711, թիվ 574: 1291 թ. Այն ժամանակ Երուսաղեմի թագավորության մայրաքաղաք Սեն-ժան դ'Ակրա քաղաքի ամրություն մասնավոր սուլթան Կալաթի հալիլի՝ ալ-Մանսուր Կալաունի որդու գործերի հետևանքով՝ նշանավորել է Մերձավոր Արևելքում խաչակիրների հիմնադրած պետությունների անկումը: Լատինների մեծամասնությունը տեղափոխվել է Կիպրոս կղզի:

⁷¹ Մխիթար Տաշրացին ապրել է XIII դարում: Նրան՝ աստվածաբանության դոկտորին (վարդապետին) Կոստանտին Ա կաթողիկոսն առաքելությամբ ուղարկել է Ակրա:

⁷² Relation de la conférence tenue entre le docteur Mekhitar de Dashir, envoyé du catholicos Constantin 1^{er}, et le légat du pape, à Saint-Jean d'Acre, en 1262. – RHC, DA, t. I, p. 695-696.

⁷³ Ստեփանոս Օրբելյանը (1260 ?-1304) զբաղեցնում էր Սյունիքի մետրոպոլիտի պաշտոնը և ստացել էր «պրոտոֆրոնտեսի» կոչում (առաջին փոխամորդ եպիսկոպոսի, որը բոլոր եպիսկոպոսների համար ամենաբարձր աստիճանն էր):

⁷⁴ Stépannos Orbélian, Histoire de la Siounie, trad. de l'arménien par M. Brosset, v. 1, Saint-Petersbourg, 1864, p. 245.

⁷⁵ Samuel d'Ani, Table chronologique. – Maric-Félicité Brosset, Collection d'historiens arméniens, Saint-Petersbourg, 1876, t. II, p. 470-471.

⁷⁶ Delaville-le-Roulx, նշվ. աշխ., էջ 115-116, թիվ 1344; էջ 164-165, թիվ 1426; էջ 165-166, թիվ 1427:

⁷⁷ Նույն տեղում, էջ 70-71, թիվ 1262; էջ 122-123, թիվ 1355:

⁷⁸ V. Langlois, նշվ. աշխ., էջ 117-120; E. Strehlke, նշվ. աշխ., էջ 37-39, թիվ 46; K. Forstreuter, նշվ. աշխ., էջ 234:

⁷⁹ Նույն տեղում: Մակարայեցիների վրա հղումները հաճախակի էին խաչակրաց արշավանքների դարաշրջանի ֆրանկների ժամանակագրություններում, և ասպետական միաբանությունների ասպետները հաճախ համեմատվում էին Հին Կտակարանի այս հերոսների հետ: Stéu A. Demurger, Chevaliers du Christ. Les ordres religieux-militaires au Moyen Age, XI^e-XVI^e siècle, Paris, 2002, p. 188-189. Մակարայեցիները պարբերաբար հղվել են նաև միջնադարյան հայ պատմագրության մեջ:

հիվանդներին ծառայելով, ընչազուրկներին միշտ նվերներ է մատակարարել: [...] Քանի որ զերմանացիների սուրբ միաբանությունն եղբայրներին իրականացնում են Գրոց և քրիստոնեական ամբողջ օրենքը և նրանք ձգտել են միջանկյալ այս կյանքին և արժանի դարձել Աստծո անմահ և հավերժական թագավորությունը, ինչպես գրված է. «Եւ ուր ես եմ, այնտեղ կը լինի եւ իմ ծառան»⁸⁰, և կրկին «որովհետեւ ուր երկու կամ երեք հոգի հաւաքուած լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մէջ»⁸¹: Հանուն այս սուրբ միաբանության, Աստծո բնակավայրի մինչք հայտարարում ենք և ցանկանում ենք նրանց բարեգործությունների ընթացքում լինել նրանց շարքում»⁸²:

Թագավորական գույզն այս հատվածում ընդգծում է տևտոնականների Սուրբ Մարիի միաբանության երեք գլխավոր սկզբունքները՝ հոգևոր բնույթը («սուրբ», «կրոնական» և «կրոն է խաչի կնիքը» արտահայտություններով), սակայն, նույնիսկ հոգևորից բացի, քաղվածքի վերջին մասում ընդգծվում է, մասնավորապես, տևտոնականների տեղն ու դերն աստվածային նպատակների իրականացման գործում: Որոշակի ոգևորությունը հիշատակվում է նրանց շառավիղների և ուսուցանող հզորության, ինչպես նաև նրանց բարեգործությունների հետ անբաղկատիվորեն կապված հյուրընկալության մասին («հիվանդներին ծառայել», «նվերներ ընչազուրկներին»): Այսպիսով, ըստ հայ թագավորների՝ միաբանության աստիճանների հոգևոր բնույթն այն սկզբունքն է, որով նրանք առաջնորդվում են բոլոր գործողությունների ընթացքում: Հոգևոր այս ոլորտն, այսպիսով, միաբանությանը վեր է դասում ամեն ինչից և իր ազդեցությունը թողնում նրա բոլոր գործողությունների վրա (կրոնական գործունեություն, ուսուցանող գործողությունների և ամենաընչազուրկների հանդեպ տածվող ուշադրություն)՝ դրանց հաղորդելով սուրբ բնույթ:

Որոշ ժամանակագրությունների հեղինակներ ասպետական միաբանություններին անդամներին այս կողմի մասին զգալ են տալիս անձնականների, հավելումների կամ անվանական խմբերի միջոցով, որոնք նրանց են միակցում: Գրիգոր Երեցը ներկայացնում է դրանցից մի օրինակ տաճարականներին համեմատելով «երկնքի դեսպանորդներին»՝ հետ և նրանց անվանելով «զորք, որը սիրում է Բրիստոսին»՝ երբ նրանք օգնություն են հասել հայ իշխան Թորոս Բ-ի եղբայր Ստեփանեին⁸³:

Իսկ երբ Սմբատ սպարապետին վերագրվող ժամանակագրության հեղինակը մեզ տեղեկացնում է «խաչով նշված հանդերձանքներով եղբայրների» մասին⁸⁴, զբաղվում նա ցանկանում է նկարագրել ոչ միայն խաչի ոսկեգօծ թիկնոցը, որը կրում են տաճարական ասպետները, այլև նրանց ներկայացնելու այս եղանակով ընդգրկում է այն ամենն, ինչն այս խորհրդանիշը ներառում է:

Որոշ հեղինակներ շատ ավելի ճշգրիտ են ներկայացնում ասպետական միաբանությունների վանական կյանքը: Ներկայացված է աղքատության, ողջախոհության և հնազանդության երեք խրատը: Միխայիլ Ասորին շեշտը դնում է, մասնավորապես, եղբայրների անձնական աղքատության վրա. «Իրև

սեփականություն բացարձակապես ոչինչ չունենին, սակայն իրենց տիրույթները դարձնում էին համընդհանուր սեփականություն»⁸⁵: Հակոբիկյան պատրիարքը հիշատակում է մի ասույթի մասին, որը վերաբերում է նրան, ով կարող էր չհետևել այս խրատին. «Եթե հայտնի է դառնում, որ որևէ մեկը համայնքից ինչ-որ բան է թաքցրել կամ եթե հայտնաբերում են, որ նա մահախայտ ունեցել է որևէ բան, որը չի տվել համայնքին՝ նրան արժանի չեն համարում հուղարկվողիլ»⁸⁶:

Այս ասպետների բարոյական անաղարտության մասին հիշատակվում է նաև Միխայիլ Ասորու ժամանակագրությունում («Ինչ վերաբերում է նրանց՝ նրանք իրենց պարտագրում էին ապրել վանականի կյանքին հատուկ կանոններով, առանց կին առնելու»)՝⁸⁷, ինչպես նաև Հուսիկ անունով գրչի՝ XIII դարում գրած հիշատակարանում. «Մերձ յաստուածապահ զդեկին Պաղրատ, ի սահման Անտիոք քաղաքի, [...] յորում բնակեալ են աստուածահաճոյ հարք և կուսակրաւն ճգնաւորք»⁸⁸: Խոսքը վերաբերում է Պաղրատում հիմնավորված տաճարականների քահանաներին և ասպետներին:

Հակոբիկյան պատրիարքի աշխատություններում հնազանդությունն ի հայտ է գալիս քողարկված. «Ոչ մեկի թույլատրված չէ [...] հեռանալ առանց դեկավարի թույլատրության [...] և ոչ էլ ասել «Ես չեմ գնա», երբ ստացվում է ինչ-որ սեղ գնալուն և այնտեղ մեռնելուն առնչվող հրաման»⁸⁹:

⁸⁵ Michel le Syrien, ԳՂՎ. աշխ., էջ 202: Նա նաև ասում է. «Յուրաքանչյուրն, ով դառնում էր եղբայր՝ համայնքին էր տալիս այն ամենն, ինչ ուներ»: «Նրանք ունեին հետևյալ սովորույթը: Որևէ մեկի քույլատրված չէ իբրև սեփականություն ունենալ կամ տուն, կամ փող, կամ որևէ ունեցվածք»: «Եվ ուստի, նրանք բոլորն աղքատ էին և ամեն ինչից կտրված»: Տես նույն տեղում, էջ 201-203: Տաճարականների կամոնն այս կետում հաստատում է. «Մենք հաստատակամորեն պահանջում ենք, որ ոչինչ չպահվի, և որ ոչ մի եղբայր չունենա որևէ բան՝ ոչ մթերային պաշարներ, ոչ սպիտակեղեն, ոչ բրդե հագուստ, ոչ որևէ այլ բան, քան պայուսակը»: Տես L. Dailliez, Règle et statuts de l'Ordre du Temple, Paris, 2^{ème} éd. augmentée par J.-P. Lombard, 1996 (1^{ère} éd., Paris, 1972), p. 111 (11-րդ հոդված).

⁸⁶ Michel le Syrien, ԳՂՎ. աշխ., էջ 202:

⁸⁷ Լույն տեղում: Տաճարականների կամոնադրությունում կարելի է կարդալ. «Թող որ բարոյական անաղարտության ծաղիկը միշտ անպակաս լինի մեզմիջոց»: Տես L. Dailliez, ԳՂՎ. աշխ., էջ 114 (հոդված 53): Ինչպես նաև. «Մենք հավատում ենք, որ ցանկացած կրոնի համար կանանց դեմքին մայրը կործանարար է: Եվ դրա համար թող որ ձեզմիջոց ոչ մեկն իրեն թույլ չտա համբուրել կնոջը, այրուն, կույսին, ոչ էլ իր մորը, իր քրոջը, իր մորաքրոջը, և ոչ էլ որևէ այլ կնոջ: Այսպիսով, Գիսուս Քրիստոսի ասպետները պետք է ամեն ձևով խուսափեն կանանց համբուրելուց, որի հետևանքով տղամարդիկ բազմաթիվ առիթներով ընկել են: Թող որ նրանք Աստծո առջև կարողանան հավերժորեն պահպանվել և ապրել մաքուր խղճով ու հաստատուն կյանքով» (նույն տեղում, էջ 118, հոդված 68): Եվ կամ. «Բարոյական անաղարտությունն արիության գրավակամն է և մարմնի առողջությունը, որովհետև եթե որևէ եղբայր չի խոստանում լինել բարոյապես անաղարտ, նա չի կարող հասնել ոչ հավիտենական հանգստի և ոչ էլ տեսնել Աստծոն և այլն» (նույն տեղում, էջ 106-107, հոդված 27):

⁸⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 158, թիվ 114:

⁸⁹ Michel le Syrien, ԳՂՎ. աշխ., էջ 202: Պատրիարքն ավելացնում է. «Տարվա վերջին նրան, ով համաձայնվում է և խոստանում կրել լուծը՝ նրանք աղոթում են և հազցնում իրենց հագուստները»: Հնազանդության խոստումի առիթով տաճարականների կամոնադրությունում գրված է. «Այն բոլոր եղբայրների համար, ովքեր երդում են տալիս, պատշաճ է, որ [...] նրանք հաստատակամորեն հնազանդ լինեն տիրոջը, քանզի Գիսուս Քրիստոսի համար հնազանդությունից թանկ ոչինչ չկա»: Տես L. Dailliez, ԳՂՎ. աշխ., էջ 109 (հոդված 35):

⁸⁰ Ավետարան ըստ Յովհաննեսի, 12, 26:
⁸¹ Ավետարան ըստ Մատթեոսի, 18, 20:
⁸² V. Langlois, ԳՂՎ. աշխ., էջ 141-143; E. Strehlike, ԳՂՎ. աշխ., էջ 65-66, թիվ 83; K. Forstreuter, ԳՂՎ. աշխ., էջ 235-236:
⁸³ Grigor Yerets, ԳՂՎ. աշխ., էջ 171-172; Matthieu d'Edesse, ԳՂՎ. աշխ., էջ 337-339; A. E. Dostourian, ԳՂՎ. աշխ., էջ 262-264: Գեղիմակը կրկին բնորոշում է տաճարականներին իբրև «Քրիստոսի զորք»: Տես Grigor Yerets, ԳՂՎ. աշխ., էջ 188; Matthieu d'Edesse, ԳՂՎ. աշխ., էջ 354-357; A. E. Dostourian, ԳՂՎ. աշխ., էջ 273-277:
⁸⁴ La Chronique attribuée au Connétable Smbat, p. 59, 116-117.

Ասպետական միաբանությունների առօրեական կյանքը ևս Միխայել Ասորու առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է: Աղոթքները⁹⁰ կարևոր տեղ են զբաղեցնում եղբայրների գործունեության ոլորտում, սակայն պատրիարքը դրանց վրա չի ծանրանում⁹¹: Գրիչ Հուսիկի հիշատակարանում շատ ավելի արտահայտիչ ձևով նշմարելի է ժամերգությունների կարևորությունը (Պաղոսի) տաճարականների համար: «Եւ անդադար Սայմոսիւ եւ աւրհնութեամբ, ի սուէ եւ ի զիշերի, երգովք հոգեւորաւք եւ ձայնիւք քաղցրութեամբ փառաւորեն զամենատուրք երբորդութիւն, որ է աւրհնեայ յաւիտեան»⁹²:

Միխայել Ասորին հետաքրքրվում է նաև, թե իրենց միաբանության շրջանակում տաճարականներն ինչպես են կազմակերպվում (նա հիշատակում է միաբանության մեջ մտնելու ձևերի, եղբայրների միջև առաջադրանքների բաշխման, անդամների միջև աստիճանակարգության մասին)⁹³, սննդի⁹⁴ և հանդերձավորման⁹⁵ հարցերում՝ նաև վանականի կենսակերպին համապատասխանող նրանց սովորություններով:

Աղքատների նկատմամբ զվթարությունը բոլոր կրոնական միաբանություններին բնորոշ պարտականություններից է, անկախ այն բանից՝

⁹⁰ Միաբանության նախնական կանոնադրությունում ամրագրված է, որ տաճարականները պետք է «միշտ, անկեղծ ցանկությամբ լսեն ժամերգության առաջին մասը և ժամերգությունն ամբողջությամբ՝ խստազույնս հետևելով կանոններին և երուսաղեմ Սուրբ քաղաքի վանական առաջնորդների սովորություններին» (այն է՝ Աստծո գերեզմանի կանոնիկոսներին): Հաշվի են առնվում նրանց առաքելության առանձնահատկությունը և դրա հնարավոր հետևանքները, քանզի այնուհետև՝ ճշգրտվում է. «Սակայն, երբ միաբանության և Արևելքի քրիստոնեության կարիքների համար, մի բան, որը հաճախ կպատահի, մի եղբայր միաբանությունից դուրս է ուղարկվում և չի կարողանում Աստծոն ծառայել, նա «հայր-մերը» ժամերգության առաջին մասում պետք է ասի տասներեք անգամ, իսկ ժամերգություններից յուրաքանչյուրի ժամանակ՝ յոթ անգամ, երեկոյան ժամերգության ժամանակ՝ ինն անգամ»: Բայց մեքքե Նախքնություն ենք, որ նա ժամերգությունն ասի ամբողջությամբ»: Տես **L. Dailliez**, նշվ. աշխ., էջ 101-102 (հոդվածներ 9 և 10):

⁹¹ «Նրանք աղոթում են»: Տես **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 202:

⁹² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 158, թիվ 114:

⁹³ **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 202:

⁹⁴ «Նրանց սնունդը (կարգավորված է) այս կերպ. կիրակի, երեքշաբթի և ուրբաթ օրերին նրանք ուտում են միս, իսկ մյուս օրերին՝ ձու, պանիր, խմում են կաթ: Ամեն օր հացի հետ զինի խմում են միայն իրենց եկեղեցիներում ժամերգություն անցկացնող քահանաները, ինչպես նաև զինվորները, այն է՝ հեծյալներն իրենց վարժարաններին և հետևակայինները՝ մարտերի ժամանակ»: Նույն տեղում, էջ 202: Ըստ տաճարականների կանոնադրության՝ եղբայրները կարող են միս ուտել շաբաթական երեք անգամ, որը համապատասխանում է Միխայել Ասորու խոսքերին. մյուս օրերին նրանք սնվում են բանջարեղեններով կամ պաղրով: Տես **L. Dailliez**, նշվ. աշխ., էջ 104, հոդվածներ 17, 19 և 20 (վերջին հոդվածը վերաբերում է պասի ժամանակահատվածներին): Ասպետական միաբանությունների անդամների սննդին առնչվող սովորույթները ճշգրտվել են նրանց ռզազական գործունեության լույսի ներքո:

⁹⁵ «Նրանց հանդերձանքը բաղկացած է շատ պարզուրակ սպիտակ հագուստից և բացի դրանից, նրանք ուրիշ ոչինչ չեն կարող հագնել: Երբ նրանք քնում են՝ իրավասու չեն հանելու հագուստը կամ սանձը ձեռքից բաց թողնելու»: Տես **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 202: Կանոնադրությունը կարգավորում է եղբայրների թիկնոցների գույները՝ սպիտակ քիլոնց սպաների համար, սև քիլոնց զինակիրների և սերժանտների համար: Տաճարականների հագուստի մասին տես **L. Dailliez**, նշվ. աշխ., էջ 106-108 (հոդվածներ 27, 28, 29 և 30):

ասպետական է, թե ոչ, և տաճարականները, հիվանդախնամներն ու տևտոնականներն այս ասպարեզում բացառություն չեն: Ռայմոնդ-Ռուբենն այստեղ չի սխալվում, երբ հիվանդախնամների առիթով նշում է «Երուսաղեմի հիվանդանոցի աղքատների միաբանություն» մասին⁹⁶: Հետևում Ա-ն ու Ջաբելը ևս չեն սխալվում, երբ տևտոնականների Սուրբ Մարիի միաբանությունը շնորհվող հրովարտակում հաղորդում են, որ վերջիններս «միշտ բնծաներ են հասկացնում աղքատներին՝ նրանց [կարիքների համար]»⁹⁷: Այս առիթով Միխայել Ասորին բավական պարծախոս է, որը երբեմն արտահայտվում է փոքր-ինչ բնդհանուր ձևով. «Նրանք յուրային են և դիմասիրտ բոլոր նրանց համար, ովքեր պաշտում են խաչը»⁹⁸: Սակայն այս թեմայի շուրջ նա հանդես է գալիս նաև ավելի հստակորեն⁹⁹: Նա հիշատակում է նմանապես սովի ժամանակ երուսաղեմում տաճարականների բաժանած սննդի, ինչպես նաև այն մասին, որ Քրիստոսի այս ասպետները դիտակցաբար անձնագոհություն են դիմել, քանզի ցանկացել են այդուհետև ևս աղքատներին հատկացնել հացահատիկի միևնույն քանակը, չնայած իրենց պաշարների անհանգստություն պատճառով նվազմանը: Ուկերված՝ Միխայել Ասորին հիշատակում է մի աստվածային հրաշքի մասին, որը եղբայրներին թուլաբարել է իրենց մեծահոգի վճար կայացումից հետո իրենց նկուղները կրկին լեցուն տեսնել¹⁰⁰:

Հիվանդախնամների և տևտոնականների միաբանություններին ևս բնորոշ են հիվանդների նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունը և հիվանդախնամային գործունեությունը¹⁰¹, որը հատուկ է տաճարականների

⁹⁶ **Delaville-le-Rouix**, նշվ. աշխ., էջ 122-123, թիվ 1355:

⁹⁷ **V. Langlois**, նշվ. աշխ., էջ 141-143; **E. Strehlike**, նշվ. աշխ., էջ 65-66, թիվ 83; **K. Forstreuter**, նշվ. աշխ., էջ 235-236:

⁹⁸ **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 203:

⁹⁹ «Հացահատիկի և այլնի բերքահավաքներից, ինչպես նաև զինուց ստացվող հասույթի տասներորդ մասը նրանք բաժանում են աղքատներին: Ամեն անգամ երբ իրենց տներից մեկում նրանք հաց են թխում՝ տասից մեկը պահում են աղքատների համար: Այն օրերին, երբ նրանք սեղան են պատրաստում կամ եղբայրները հաց են ուտում, այն ամենն, ինչ մնում է՝ տրվում է աղքատներին: Շաբաթական երկու անգամ, նրանք հատկապես աղքատներին բաժանում են հաց և զինի»: Նույն տեղում, էջ 202-203: Պատրիարքը հետաքրքրվում է, որոշակի առանձնահատուկ պայմաններում ամենաընչազուրկների համար նախատեսված ընծաներով. «Երբ որևէ մեկը վախճանվում է՝ նրա համար նրանք քառասուն պատարագ են մատուցում: Նրա համար նրանք աղքատներին կերակրում են քառասուն օր և օրական քառասուն անձի»: Նույն տեղում, էջ 202: Այստեղ, Միխայել Ասորու դատողությունները համապատասխանում են այն ամենին, ինչը կարելի է կարդալ տաճարականների կանոնադրությունում. «Մենք նաև խնդրում ենք և կարգադրում մեր հովվական իշխանությանը, որ աղքատը կերակրվի մտով և նրան զինի տրվի մինչ քառասուններորդ օրը՝ ի հիշատակ վախճանված եղբոր, կարծեք, նա դեռևս կենդանի է»: Տես **L. Dailliez**, նշվ. աշխ., էջ 102, հոդված 11: Գթարտության մասին տես նաև 21-րդ և 71-րդ հոդվածները (էջ 105, 118):

¹⁰⁰ «Այս ժամանակաշրջանում Երուսաղեմում մեծ սով բռնկվեց: Սակայն այս «փրկները» [...] ըստ իրենց սովորույթի, աղքատներին էին հատկացնում և բաժանում առանց նվազեցնելու [...]: Տե՛րը, [...] նրանց այցելեց: Դե՛նց որ կառավարիչները մերս մտան՝ տեսան, որ բոլոր նկուղներն առատորեն լեցուն են և լի են հացահատիկով, գարով, զինով և բանջարեղեններով»: **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 207-208:

¹⁰¹ Երուսաղեմի Սուրբ-Յովհաննեսի միաբանության եղբայրների հիվանդախնամային գործունեության մասին տես **S. Edgington**, *Medical Care in the Hospital of St John in Jerusalem.*— *The Military Orders. V. 2. Welfare and Warfare*, **H. Nicholson** (dir.), Aldershot, Ashgate, 1998 (այսուհետև՝ **Nicholson**, *Military Orders*), p. 27-33; տևտոնականների

գործքին: Հայ միապետներն այստեղ դյուրագգաց են. Ռայմոնդ-Ռուբենը Երուսաղեմի Սուրբ-Հովհաննեսի Հիվանդանոցը բնորոշում է իբրև «Երուսաղեմի Հիվանդանոցի Հիվանդանոցի միաբանություն»¹⁰², իսկ ըստ Հեթում Ա-ի և նրա կնոջ Զարեի՝ գերմանացիների Հիվանդանոցի միաբանությունը «նշանավորվել է և ամրապնդվել Հիվանդանոցի ցուցաբերած աջակցության ընթացքում»¹⁰³: Միխայել Ասորին նկարագրում է եղբայրների Հիվանդանոցին ուղեկցելու ընթացքը, անկախ այն բանից, թե նրանց Հովանավորյալների համար ինչպիսին է արդյունքը. «Իրենց բոլոր երկրներում, և, մասնավորապես, Երուսաղեմում, նրանք Հիմնադրեցին Հիվանդանոցներ, այնպես, որ ցանկացած օտարերկրացի, որը Հիվանդանում է, զբնայցում անող է գտնում: Նրանք աջակցում են նրան և հոգում նրա համար մինչ նրա բուժումը և այդ դեպքում՝ անզավոնություն համար նրան դրամ են հատկացնում ու խաղաղություն են ուղարկում, իսկ եթե նա վախճանվում է՝ նրանք հոգում են նրա հուղարկավորությունը ծախսը»¹⁰⁴:

Կրոնա-ասպետական միաբանությունների ընկալմամբ Միխայել Ասորին անցնում է փաստերի պարզունակ գունազարդման սահմանը, քանզի երբեմն գերբնական կամ նաև բնական, սակայն բացառիկ երկնային լուսատուների հետ կապված երևույթները համակցում է տաճարականների գործի մասին Հիշատակմանը: Մենք արդեն անդրադարձանք դրանց համառոտ ուղղագծին, երբ խոսքն առնչվեց Սուրբ քաղաքում միաբանության նկուղների միջնաբան պաշարների վերաբերող հրաշագործությունը: Պատրիարքը ևս Հիշատակում է արևի խավարման ժամանակ «քառասուն «Փրեր» հեծյալների [...] չորս հարյուր այլ քրիստոնյաների և սարկավազ Բար Գորուսայի հետ մեկտեղ» վախճանի մասին համակցելով երկու իրադարձությունը¹⁰⁵:

Ասպետական միաբանությունների անդամների կրոնական և հոգևոր շտապիկների վերջին ծայրահեղ կողմը, որը նշմարելի է արևելյան քրիստոնյաների աշխատություններում՝ հավատքն է, որը հասցրած է մինչ մոլոցյբի վերջին նահատակության սահմանգրին: Կեղծ Սմբատի ժամանակագրությունում դառնում ենք հանուն Աստծո սիրո՝ տաճարականների և Հիվանդանոցների միաբանության ծայրահեղ զոհաբերության ակնատեսը: Հաթինի Ջախախտման հետո, 1187 թ., Սալահ էլ-Դինն ասպետական միաբանությունների անդամներին առաջարկել է ուրանալ հավատքը և դարձի դալ իսլամի «նվերներին» և «պատրիկներին» զիմաց, սակայն եղբայրները, չնայած այս ձևաձևա առաջարկությանը, նախընտրել են մեռնել տաճարականների առաջնորդի՝ հեղինակի կողմից նրան վերադրվող սրտաճմիրի հորդորից հետո¹⁰⁶:

Եղբայրների նահատակությունը հատկորեն անդրադարձել են որոշ ժամանակագիրներ, ինչպես Գրիգոր Երեցը, որը Հիշատակել է քրիստոնյաների կողմից 1153 թ. Ասկաղոնի պաշարման մասին. «Այս պաշարման ընթացքում, մի ամբողջ տարի, Ֆրանկների քաջարի ազգը, ինչպես նաև նրանց խիզախ և սուրբ թաղավորը, շատ ուժասպառ եղան: Նրանցից և եղբայրներից շատերն արժանացան նահատակի լուսապսակի»¹⁰⁷: Ըստ Միխայել Ասորու՝ տաճարականներն իբրև «նահատակների են դիտում նրանց, ովքեր ընկնում են ճակատամարտերում»¹⁰⁸: Այսպիսով, արևելյան քրիստոնյաների սկզբնաղբյուրների Հեղինակների համար գոյություն ունի նահատակ եղբայրների երկու տեսակ. նրանք, ովքեր մահացել են՝ քանզի չեն ցանկացել ուրանալ իրենց հավատքը (Կեղծ Սմբատ), և նրանք, ովքեր կյանքից զրկվել են իրենց գործի պատճառով, այն է՝ հանուն այն պայքարի, որը մղվել է Սուրբ երկրը քրիստոնյաներին վերադարձնելու համար՝ նրանց դեմ, ում իրենք դիտել են իբրև անհավատների, այն է՝ մահճեղականների (Գրիգոր Երեց և Միխայել Ասորի): Ասպետական միաբանությունների կրոնական և հոգևոր գործունեությունը շտապիկների այս վերջին բնորոշումը մեզ հնարավորություն է ընձեռում կապ հաստատել Քրիստոսի այս ասպետներին հատուկ արվեստին ներկայացման հետ:

Բ – Եղբայրների ռազմական կոչումը

Արևելյան քրիստոնյաներին ակնհայտ է թվում, որ կրոնա-ասպետական միաբանությունների անդամները շարքային զինվորներ չեն: «Անպարտելի գործը» և «Քրիստոսի գործը» արտահայտությունները, որոնցով նրանց բնորոշել է Գրիգոր Երեցը¹⁰⁹, վկայում են աստվածային այն առաքելությունների ներկայացման ձևի մասին, որով նրանք օժտված են:

Եղբայրների նախնական առաքելությունը կրում է որոշակի ռազմական բնույթ, որն, ի դեպ, բխում է հակաբյուզանդական պատերազմի աշխատություններից. «Բողոքն Ու-ի իշխանության սկզբում, մի Ֆրանկ մարզ [...] ցանկություն է հայտնել [...] վանական գառնալ այն բանից հետո, երբ երեք տարի շարունակ թե ինքը և թե՛ նրան ուղեկցող երեսուն հեծյալը թագավորին օգնել են պատերազմի ընթացքում [...]»: Երբ թագավորը և նրա մեծերը տեսել են, որ այս երեք տարվա ընթացքում նրանք պատերազմում հռչակվել են և իրենց ծառայությունները քաղաքին օգտակար եղել, այդ մարդուն խորհուրդ են տվել իր կողքին եղողների հետ միասին ծառայել գործում՝ վանական գառնալու և միայն իր հոգին փրկելու ուղղությամբ ջանքեր գործադրելու և այդ վայրերը գողերից պահպանելու փոխարեն»¹¹⁰: Իրոք, միաբանության Հիմնադրման նախնական նպատակը հանդի է ուխտագնացներին հովանավորելուն և սուրբ վայրերի

գործունեության մասին տես K. Milltzer, The Role of Hospitals in the Teutonic Order.– Nicholson, Military Orders, p. 51-59; B. Demel, Welfare and Warfare in the Teutonic Order: a survey.– Նույն տեղում, էջ 61-73:

¹⁰² Delaville-le-Roulx, նշվ. աշխ., էջ 70-71, թիվ 1262:

¹⁰³ V. Langlois, նշվ. աշխ., էջ 141-143; E. Strehlike, նշվ. աշխ., էջ 65-66, թիվ 83; K. Forstreuter, նշվ. աշխ., էջ 235-236:

¹⁰⁴ Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 203:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 235-236:

¹⁰⁶ «Եղբայրներ, ահա և վրա են հասել մեր հոգիների փրկության օրերը, որոնք մեզ հնարավորություն կտան հասնել Դրախտին. ես ձեզ վստահեցնում եմ դրանում, Քրիստոսին սիրելու հարցում եղեք համերաշխ և անսասան. մենք այսօր կխառնենք մեր արյունը քրիստոնյաների արյունը. չեք կորցնեք մրացից, ովքեր սպանում են մարդիկները և թույլ չտանք, որ անցողիկ կյանքի հրապույրները մեզ խաբեն»: Տես La Chronique attribuée au Connétable Smbat, p. 62-63. Այդուհանդերձ, թվում է, թե այս ելույթն ունեցել է ոչ թե ժերար դը Ռիդեֆորդ՝ միակ տաճարականը, ով այս պատահարից անվնաս է մնացել, այլ Նիկոլա կոչվող՝ միաբանության ասպետը (ըստ՝ L'itinerarium Peregrinorum et gesta regis

Ricardi, cité par S. Der Nersessian, The Armenian Chronicle, p. 753, note 40; Etudes, p. 362, note 40; La Chronique attribuée au Connétable Smbat, p. 62, note 64).

¹⁰⁷ Grigor Yerets, նշվ. աշխ., էջ 184; Matthieu d'Edesse, նշվ. աշխ., էջ 350-351; A. E. Dostourian, նշվ. աշխ., էջ 270-271:

¹⁰⁸ Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 202:

¹⁰⁹ Grigor Yerets, նշվ. աշխ., էջ 171-172, 188, 189; Matthieu d'Edesse, նշվ. աշխ., էջ 335, 337-339, 354-357; A. E. Dostourian, նշվ. աշխ., էջ 262-264 (թարգմանված է իբրև «Քրիստոսի սիրելիներ»), 273 («անապատելի ուժեր»):

¹¹⁰ Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 201:

պաշտպանութիւնը¹¹¹: Լատինական և նույնիսկ Հայ միապետների կողքին՝ տաճարականներն ալիքի ուշ են մասնակցել մարտերին:

Հայերի և ասորիների՝ եղբայրների պատերազմական գործունեութեան եղբի վրա նետած հայացքը նկատելի է այն մարտերի պատմութիւնների հենքի վրա, որոնց վերջիններս մասնակցել են անկախ այն բանին, թե խոսքն ինչին է վերաբերում՝ ռազմական արշավանքներին, թե տարածքների կամ ամրոցների պաշտպանութիւնը: Հիթում պատմիչն իր «Մաղիկք պատմութեանց արեւելից» գրքում ներկայացնում է, թե ինչ ձևով են տաճարականներ և հիվանդախնամներ ընդգրկող քրիստոնյա զորքերը, մոնղոլ խան Լադանի կանչով ժողովվել՝ մամելուկներին համատեղ դիմակայելու նպատակով¹¹²: Միևնույն հեղինակն իր ժամանակագրութիւնում հիշատակում է բազմաթիւ ճակատամարտերի մասին, որոնցում ասպետական միաբանութիւնների անդամները հռչակվել են և կամ հաճախ կնքել մահկանացուն¹¹³, օրինակ՝ 1289 թ. ապրիլին, Կալաուն սուլթանի կողմից Տրիպոլի գրավման ժամանակ¹¹⁴: Բազմաթիւ գրիչներ և պատմիչներ իրենց հիշատակարաններում հազորդում են, թե 1291 թ. ասպետական միաբանութիւններն ինչպես են սպարդուսն պաշտպանել Սեն-Ժան-դ'Ակրան¹¹⁵: Ինչ վերաբերում է Կեղծ Սմբատին, ապա՝ նա հիշատակում է եղբայրների մասնակցութեան մասին բազմաթիւ մարտերի, մասնավորապես, Հաթինում, ինչպես արդեն առիթն ունեցանք տեսնել¹¹⁶: Այդուհանդերձ, այս սկզբնաղբյուրները բավարարում են ռազմի դաշտում կամ պաշարման ժամանակ ասպետական միաբանութիւնների մասնակցութեան մասին պարզունակ հիշատակմամբ: Դրանք չեն ծանրանում մարտը վարելու նրանց հմտութեան, կիրառված միջոցների կամ ռազմավարութեան վրա, այլ հիշատակում են միայն հանդիպումների ավարտի մասին, և եղբայրներին ներկայացնում հիթմանակի, ինչպես նաև պարտութեան պարագայում՝ վկայելով այն ճակատագրի մասին, որը նրանց վիճակված էր անհաջողութեան դեպքում:

Երբեմն տաճարականները, հիվանդախնամներն ու տևտոնականները պարտութեան արդյունքում ներկայացված են իբրև գերիներ: XII դարի հայկական հիշատակարանում Սալահ Էդ-Դինի մասին գրիչը գրում է. «Եւ ձերբակալ արարեալ զթագաւորն եւ զարս պատերազմողս, որ կոչին փրբք»¹¹⁷: Վերստին Հաթինի ճակատամարտի առիթով՝ Անանուն եղեսացին ավելի հանգամանորեն հազորդում է. «Ավելի քան հարյուր հիսուն ազնվական տաճարականների և հիվանդախնամների եղբայրների թվից, բունվեցին և ուղարկվեցին Դամասկոսի բանտ, բացի ձեր իշխան Թեոֆիլից, որին զլսատեցին Սալահ Էդ-Դինի ներկայութեամբ՝ շատ այլ առաջնորդների հետ մեկտեղ, ովքեր սպանվեցին նրա վրանի առջև»¹¹⁸:

¹¹¹ Տաճարականների միաբանության հիմնադրման մասին տես A. Demurger, Les Templiers. Une chevalerie chrétienne au Moyen Age, Paris, 2005, p. 27-31; *Մույնի* Chevaliers du Christ, p. 36-40; M. Barber, The New Knighthood. A history of the Order of the Temple, Cambridge, 1994, p. 1-37.

¹¹² Haythou, ցվ. աշխ., էջ 196-199 (լատիներեն տարբերակում՝ էջ 320-321); «La Fleur des histoires de la terre d'Orient», p. 851-852.

¹¹³ Յեթում պատմիչի ժամանակագրությունը (XIII դ.), էջ 60, 65, 66, 67, 68, 74, 75-76, 77:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 79:

¹¹⁵ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 701-703, թիվ 570; էջ 706-713, թիվ 574; էջ 718-720, թիվ 579:

¹¹⁶ La Chronique attribuée au Connétable Smbat, p. 62-63.

¹¹⁷ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 272, թիվ 280:

¹¹⁸ Anonyme syriaque, p. 148-149.

Արևելյան քրիստոնյաների սկզբնաղբյուրներում հաճախ է հիշատակվում կրոնա-ասպետական միաբանութիւնների եղբայրների մահվան մասին, անկախ այն բանից, թե որտեղ է դա տեղի ունեցել՝ մեծ ճակատամարտերի ընթացքում, ինչպես Հաթինում՝ 1163 թ.¹¹⁹, թե Հաթինում՝ 1187 թ.¹²⁰, պաշարումների ժամանակ, օրինակ՝ քրիստոնյաների կողմից Ասկաղոնի գրավման ժամանակ՝ 1153 թ. օգոստոսի 19-ին¹²¹, կամ գուցե նվազ նշանակալից մարտերի կապակցութեամբ: Այդ մահը հաճախ ստանում է առանձնահատուկ, արտասովոր բնույթ, քանզի այն, ինչպես տեսանք վերը, մերձենում է նահատակութեանը:

Արևելյան քրիստոնյաները հաշվի են առել նաև եղբայրների տիրապետության տակ գտնվող քաղաքների և ամրոցների՝ օրինակ 1268 թ. տաճարականների Պաղրաս բերդամրոցի¹²² կամ հիվանդախնամների՝ Ասպետների Կրակ ամրոցի և 1271 թ. տևտոնականների Մոնֆոր ամրոցի կորուստը¹²³: Ամենաակնհայտ պարագան, որը տարբեր պատմութիւններում ամենահաճախ է կրկնվում՝ վերաբերում է Սեն Ժան դ'Ակրս քաղաքի կորստին¹²⁴:

Չնայած որոշ ժամանակագիրների՝ եղբայրների հանդեպ դրսևորած հարգանքին, Գրիստոսի ասպետների անվեհերութիւնն ու ռազմական արժանիքները երբեմն կասկածի են ենթարկվում. դա հավաստվում է Հովհաննես Երզնկացու գրած հիշատակարանում, որը ևս աննչվում է Ակրայի անկմանը. «Իսկ Չն (1291) թիւին, որդին Ալֆէ մելիք Աչրաֆ անուն, խակամիտ և բազանարարու, առ զմեծահռչակ և բազմամարտ քաղաքն Աքաքս, զոր ունէին ազգ ֆրերացն, տունն Դամրուս և Ոսպեթալին, անարի և թոյլ գտեալ ազգն արիական առաջի անաւրինացն: Մատնեցաւ քաղաքն ի պաշարումն և առաւ, և սպառեցան սպանմամբ սրոյ և դերութեամբ»¹²⁵:

Հարկ է նկատի ունենալ միաբանութիւնների ռազմական դերի ընկալման մեկ այլ դրսևորում: Խոսքը վերաբերում է այն բանին, թե ինչ ձևով են հայկական թագավորական պետական դիվանից ելնող տարբեր հրովարտականների հենքի վրա միապետներն ընկալել յուրաքանչյուր միաբանութիւն: Այսպիսով, ներկայացման այս եղանակը ձևափոխվում է ըստ միապետի (որին վերաբերում է խոսքը) և հրովարտական հիշատակված միաբանութեան միջև գոյութիւն ունեցող հարաբերութիւնների: Իրբև օրինակ նշենք, որ Լեոն Ա-ն գրեթե մշտապես գանգատվում է իր նկատմամբ տաճարականների թշնամական դիրքորոշումից, քանզի թշնամանքը երբեմն հասնում էր մինչ բացահայտ

¹¹⁹ «Նուր Էդ-Դինը պաշարեց Հարինը: Այդ ժամանակ հինգ իշխան՝ Անտիոքի իշխանը, Տրիպոլի կոննը, Թորոս Կիլիկեցին, Իույն Դուկաս Տարսուցեցին և Եղբայրների առաջնորդը շուրջ տասներեք հազար հեծյալով և հետևակայինով միավորվեցին: Նրանք հաճախեցին Նուր Էդ-Դինի հետ և ֆրանկներն անփառունակ կտրատվեցին մասերի: [...] Բոլոր եղբայրները սպանվեցին: [...] Նուր Էդ-Դինը գրավեց Հարինը և հունական Սիմոն վանքը»: Տես Michel le Syrien, ցվ. աշխ., էջ 324-325: Միևնույն ատվածք՝ գրեթե տառացիորեն, կարելի է գտնել Բար Յերբոսի մոտ: Տես Bar Hebraeus, ցվ. աշխ., էջ 288:

¹²⁰ La Chronique attribuée au Connétable Smbat, p. 62-63.

¹²¹ Grigor Yerets, ցվ. աշխ., էջ 184; Matthieu d'Édesse, ցվ. աշխ., էջ 350-351; A. E. Dostourian, ցվ. աշխ., էջ 270-271:

¹²² Հիշատակել է Յեթում պատմիչը. տես Յեթում պատմիչի ժամանակագրությունը (XIII դ.), էջ 74:

¹²³ Նույն տեղում, էջ 75:

¹²⁴ Stépannos Orbélian, ցվ. աշխ., էջ 245-246; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 701-703, թիվ 570; էջ 706-713, թիվ 574; էջ 718-720, թիվ 579:

¹²⁵ Խոսքը վերաբերում է մամելուկյան սուլթան ալ-Աշրաֆ Խալիլին:

¹²⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 711, թիվ 574:

առճակատման¹²⁷, որովհետև տաճարականների միաբանությունը զորավիգ էր Տրիպոլիի կոմսի շահերին: Ի վնաս Կիլիկյան Հայաստանի թագավորի եղբոր թոռան Ռայմոնդ-Ռուբենի: Ի Հեճուկա Լեոնը հրճվում էր հիվանդախնամների՝ այս առճակատման ընթացքում դրսևորած զուսպ դիրքորոշմամբ¹²⁸: Այս թագավորը, իսկ ավելի ուշ Հեթում Ա-ն, երախտագիտությունը են հիշատակում երուսաղեմի Սուրբ-Հովհաննեսի և տևտոնականների Սուրբ-Մարտի հիվանդանոցների միաբանությունների՝ իրենց թագավորությունը ցուցաբերած ռազմական աջակցություն¹²⁹:

Արևելյան քրիստոնյա որոշ հեղինակների հետաքրքրում է ասպետական միաբանությունների ստորակարգությունը: Միխայել Ասորին ջանում է վերականգնել, ընդհանուր գծերով, միաբանությունների ներքին կառուցվածքը՝ հիշատակելով ոմանց պարտականությունների մասին. «Ամեն օր Հացի հետ միասին գինի են խմում միայն իրենց եկեղեցիներում պատարագ մատուցող քահանաները, ինչպես նաև գինիորները, այն է՝ հեծյալներն իրենց վարժությունների ժամանակ և հետևակայինները՝ մարտերի ընթացքում: Աշխատավորներից յուրաքանչյուրը զբաղվում է իր արհեստով, նույն ձևով են վարվում դաշտերի աշխատավորները: Յուրաքանչյուր քաղաքում ու գյուղում, ուր նրանք առև՝ ունեն՝ կա մի ավագ և տնտեսությունը վարող և նրանց կարգադրությանը՝ այդպիսի գտնվողներից յուրաքանչյուրը զբաղվում է իր գործով: Բոլորի վերադասը երուսաղեմում է: Եւ դեկավարում է ամենքին և նրանցից ոչ մեկին երբևէ չի թույլատրվում սեփական նախաձեռնությունը որևէ բան անել»¹³⁰:

Իրոք, ասպետական միաբանությունների անդամները թվում կարելի էր հանդիպել հոգևորական եղբայրների, քահանաների կամ երգչախմբային եղբայրների, ովքեր անցկացնում էին ժամերգությունը և աշխարհիկ եղբայրների, հեծյալների ու սերժանտների, ովքեր մարտնչում էին: Կար նաև անձնակազմ՝ միաբանությունների կյանքի համար անհրաժեշտ՝ գյուղատնտեսությունը և արհեստագործությունը զբաղվելու համար: Ինչ վերաբերում է Հեթում պատմիչին, ապա նա միաբանությունների առաջնորդների մասին ունի հիմնավոր իմացություն, քանզի իր ժամանակագրությունում ճշգրտում է ասպետական երեք մեծ միաբանությունների գնանդան առաջնորդների ինքնությունը և նրանց հիշատակում ըստ այն իրադարձությունների և երբեմն նույնիսկ բարձրաստիճան անձանց ու անդրադառնում է, ինչպիսին է տաճարականների մարեշալը¹³¹:

Գ – Քաղաքական շառավիղը

Այս միաբանությունների ռազմական կոչումին հավելվում են ինքնուրույն քաղաքական գործողությունները: Դրանք նշմարելի են գնանդան հարթություններում: Մի կողմից իրենց սիրապետության տակ հաճախ

գերիշխող դիրքեր զբաղեցնող ամրոցներ (արդեն տեսանք Պաղրասի և Սելեկիայի պարագաները) և քաղաքներ (օրինակ՝ Ակրան) ունենալը, միաբանությունների և դրանց առաջնորդներին ընձեռում են վճռական դեր, որը քրիստոնյա առաջնորդների համար անհնար էր արհամարհել անկախ այն բանից՝ Մերձավոր Արևելքում հաստատված կաթինական (և կամ հայ) իշխանների, թե՛ մահմեդականների դեմ հնարավոր հարձակումների նպատակով հենց նոր ափ ելած խաչակիրների համայնքման ժամանակ: Բացի դրանից, արևելյան քրիստոնյաների՝ մասնավորապես հայերի համար, եղբայրներն ի կատար են ածում նաև դիվանագիտական առաքելություն, որը հնարավոր է արհամարհել: Այսպես, իր միաբանության հրահամար տևտոնական մի ասպետ ստանձնում է Իննովիկենտիոս III-ի մոտ Լեոն Ա-ի շահերի պաշտպանությունը¹³²: Ինչ վերաբերում է հիվանդախնամ եղբայրներին, ապա Կիլիկյան Հայաստանի թագավորին տված փոխառությունը՝ նրանք նպատակում են նրա դուստր Ռիթայի մեծնությունը ֆինանսավորմանը երուսաղեմի թագավոր Հովհաննես Բրինցու հետ¹³³: Իսկ տաճարականներին, ի դեպ՝ Լեոն Ա-ի նախկին հակառակորդներին, հաջողվում է ձախողել թագավորի դեմ հյուսված դավադրությունը՝ դավադրներին մերկացնելու միջոցով¹³⁴: Իրենց աշխատություններում հայերը հավաստում են ասպետական միաբանությունների ամենահասունությունն Արևելքի լատինական երկրների և Կիլիկիայի հայկական թագավորության կյանքում՝ թե՛ ռազմական և թե՛ քաղաքական ասպարեզներում:

Գ – Կրոնա-ասպետական միաբանությունների հարստության ընկալումը

Ասպետական միաբանությունների գործունեության տնտեսական շառավիղն արևելյան քրիստոնյաների սկզբնաղբյուրներում ի հայտ է գալիս եղբայրների շարժական թե՛ անշարժ, ունեցվածքի ներկայացման միջոցով:

Սովորաբար, այս միաբանությունների հարստության ընդհանուր պատկերը ներկայացնում է Միխայել Ասորին: Նախ, նա հիշատակում է նրանց արված առաջին նվիրատվությունների մասին. «Թագավորը նրանց տվեց Սողոմոնի տունը բնակվելու համար և գյուղեր՝ գոյությունը պահպանելու համար: Պատրիարքը ևս նրանց տվեց եկեղեցուն պատկանող մի քանի գյուղ»¹³⁵: Այնուհետև պատրիարքը բացահայտում է նրանց ծավալման եղանակներից մեկը՝ նոր անդամների ընդունելությունը. «Յուրաքանչյուրն, ով դառնում էր նրանց եղբայրը, համայնքին էր տալիս այն ամենն, ինչ ուներ՝ կամ գյուղ, կամ քաղաք, կամ որևէ այլ բան: Նրանք ստվարանում էին, զարգանում և դառնում երկրների տիրակալներ ոչ միայն Պաղեստինի տարածաշրջանում, այլև, մասնավորապես, Իտալիայի և Հռոմի հետավոր տարածաշրջաններում»¹³⁶: Եզրափակելուց առաջ՝ նա իր գարմանքն է հայտնում այս միաբանությունների

¹³² Տե՛ս Իճնովկենտիոս III-ի՝ Լեոն Ա-ին հղած նամակը: Յմմտ. Innocent III. – PL, t. 216, col. 54-56, N 45.

¹³³ Delaville-le-Roulox, նշվ. աշխ., էջ 165-166, թիվ 1427:

¹³⁴ 1217 թ. այս դավադրության պատասխանատուն Ռայմոնդ-Ռուբեն էր. «Then Liðn, the king of the Armenians, the brother of Rûfin the Armenian, because he, Rûfin the Frank, was the son of his brother's daughter, was enraged and he came to Antioch; and he made the people of Antioch swear oaths of fealty to him. Then this stupid man seeing that he was reigning became puffed up with pride and he wished to seize Liðn, who had made him king, so that he might reign over Cilicia also. Then when the Brethren (Frères) knew of the plot they informed Liðn concerning him, and he escaped without injury»: Տե՛ս Bar Hebraeus, նշվ. աշխ., էջ 370:

¹³⁵ Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 201:

¹³⁶ Լույն տեղում, էջ 201-202:

¹²⁷ Տե՛ս Լեոն Ա-ի՝ Իճնովկենտիոս III պապին հղած նամակը. հմմտ. Innocent III. – PL, t. 215, col. 687-692, N 119.

¹²⁸ Լույն տեղում:

¹²⁹ Delaville-le-Roulox, նշվ. աշխ., էջ 115-116, թիվ 1344; էջ 118-119, թիվ 1349; V. Langlois, նշվ. աշխ., էջ 117-120; E. Strehlke, նշվ. աշխ., էջ 37-39, թիվ 46, էջ 65-66, թիվ 83; K. Forstreuter, նշվ. աշխ., էջ 234, 235-236:

¹³⁰ Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 202:

¹³¹ Դեթում պատմիչի ժամանակագրությունը (XIII դ.), էջ 60:

Հարստության առիթով. «Նրանք ունեին ամրոցներ և քրիստոնյաների տիրապետության տակ դանվող բոլոր երկրներում իրենք իսկ կառուցում էին ամրոցներ: Նրանց Հարստությունը բազմապատկվեց ոսկով և ցանկացած ընտելի ալլ բաներով ցանկացած տեսակի սպառազինություններով, ոչխարների, եղջերուների, խոզերի, ուղաների, ձիերի Հասերով, ինչը գերազանցում էր բոլոր թագավորների ունեցվածքը»¹³⁷: Ըստ Հուլիանի, ասպետական միաբանություններն իրենց տնօրինության տակ ունեին բազմաթիվ զավառակներ, գյուղեր, քաղաքներ և դոյակներ՝ տնամերձ տարածքներով, սակայն ասել, թե նրանք իրենց տիրապետության տակ ունեին ամբողջ երկրներ՝ չափազանցություն է, քանզի «երկրներ» բառի իմաստն այն ժամանակ կարող էր ավելի մոտ լինել «տարածաշրջաններ» բառի իմաստին¹³⁸:

Ավելի ուշ և ավելի հասակորեն ասպետական միաբանությունները տիրապետության տակ դանվող տարածքների զանազան տեսակները նկարագրված են Հայ գահակալների նվիրատվական փաստաթղթերում: Դա կարելի է, օրինակ, տեսնել 1212 թ. ապրիլին՝ տեսնական ասպետներին Լևոն Ա-ի շնորհած հրովարտական. «Ես տալիս եմ և նվիրում այսուհետև և մեկընդմիջ շատ լավ և չափազանց ընդարձակ տիրույթներ և զավառակների հողային տարածքներ [...]: Առաջին հերթին՝ Ամուղա կոչվող նշանավոր զոյակը և դրան կից ստորև նշված զավառակները՝ իրենց սեփականությունում և իրենց սահմաններով [...]

Միևնույն հրովարտական Լևոնը եղբայրներին արտոնություններ է ընձեռում, թույլատրելով նրանց գնել և վաճառել այն ամենն, ինչն անհրաժեշտ է իրենց ապրուստի համար:

Էլ ավելի ուշ կրոնա-ասպետական միաբանությունների ունեցվածքի մասին արձագանքներ հնչում են հիշատակարաններում, որոնք հիշատակում են այս կամ այն ամրոցի՝ իբրև այս կամ այն միաբանության սեփականության մասին¹³⁹:

Արևելյան քրիստոնյաների կողմից ասպետական միաբանությունների սեփականության ներկայացման հիման վրա կարելի է պատկերացում կազմել

¹³⁷ Լույս տեղում, էջ 203:

¹³⁸ Ասպետական միաբանությունների սեփականության և ֆինանսական գործունեության մասին ընդհանուր առմամբ տես A. Forey, The Military Orders from the Twelfth to the Early Fourteenth Centuries, London, 1992, p. 58-77, 98-132; A. Demurger, Chevaliers du Christ, p. 160-162; Ինչն ավելի մասնավորապես վերաբերում է հիվանդախնամներին՝ տես J. S. C. Riley-Smith, The Knights of St John in Jerusalem and Cyprus, 1050-1310, Edimbourg, 1967, p. 421-469; M. Ballard, I possedimenti degli Ospedalieri nella Terrasanta (secoli XII-XIII). - J. Costa-Restagno (dir.), Cavalieri di San Giovanni e Territorio, Bordighera, 1999, p. 473-505. Տաճարականների մասին տես M. Barber, Գշվ. աշխ., էջ 229-279; A. Demurger, Les Templiers, p. 273-329. Տաճարականների մասին տես K. Toomaspoeg, Histoire des Chevaliers teutoniques, Paris, 2001, p. 77-95.

¹³⁹ V. Langlois, Գշվ. աշխ., էջ 117-120; E. Strehlke, Գշվ. աշխ., էջ 37-39, թիվ 46; K. Forstreuter, Գշվ. աշխ., էջ 234:

¹⁴⁰ Օրինակ՝ Դեթումի ժամանակագրության մեջ հեղինակը հիշատակում է տետրոնականների կողմից Մոնֆոր դոյակի կառուցման մասին (էջ 64), Պաղրասի և Լա Ռոշ Ռուսելի՝ իբրև տաճարականների սեփականության մասին (էջ 74) կամ կրկին Ասպետների Կրակի՝ իբրև հիվանդախնամների սեփականության մասին (էջ 75): Բար Դեբրեոսը մեզ հաղորդում է, որ Սելևկիան պատկանում էր եղբայրներին (հիվանդախնամ) (Bar Hebraeus, Գշվ. աշխ., էջ 381), իսկ թագավոր Դեթում Բ-ն իր «ժամանակագրական աղյուսակում» հիշատակում է Պելերին դոյակում տաճարականների ներկայության մասին և վերստին գերմանացի եղբայրների մասին՝ Մոնֆորում (RHC, DA, t. 1, p. 484, 485):

վերջիններիս տիրապետության տակ դանվող տարածքների և Հարստության մասին: Այդուհանդերձ, այդ ընկալումը խիստ սահմանափակ է, քանզի ոչ մի տեղեկություն չի հաղորդում նրանց տիրույթների շահագործման եղանակի, դրանցից զանձվող զանազան հարկերի վերաբերյալ կամ տնտեսական գործունեության այլ ոլորտներում եղբայրների մասնակցություն, կամ առնվազն ներդրման մասին: Չնայած այդ ամենին, նրանց ֆինանսական գործունեության ասպարեզներից մեկի՝ փոխառություն մասին, հիշատակվում է Լևոն Ա-ի 1214 թ. ապրիլի 23-ի թվակիր հրովարտական: Թագավորը վկայում է, որ հիվանդախնամների առաջնորդ Գարին դը Մոնտեգյուից ստացել է սարակինոսյան 20000 բեսան՝ որն օժանդակել է նրա դատեր՝ Ռիթայի ամուսնույթյան ֆինանսավորմանը Հովհաննես Բրիենցու հետ: Քանի որ այդ դումարը վերագրվել էր միաբանության հանդանուրներին, Լևոնն այդ պարտքը վերագրվելու համար գրավ է դնում ձկների տարածքը և այնտեղ գտնվող բոլոր կաղանքերը¹⁴¹:

Հայերի և ասորիների կողմից ասպետական միաբանությունների ընկալումը դրանց ինքնատիպության և համամասնության բոլոր հիմնական շառավիղներով հանդերձ, բացահայտում է արևելյան քրիստոնյաների առանձնահատուկ ուղարկությունն այսպիսի արտասովոր առաքելություն ստանձնած այս վանականների հանդեպ: Այս առաքելությունից է սկիզբ առնում նրանց ռազմական ուժը, ինչպես նաև ընդարձակ տարածությունների և ռազմավարական նշանակություն ունեցող ամրոցների գավթումը, ինչը միաժամանակ ենթադրում է միաբանությունների թե՛ հաստատուն քաղաքական դերը, որն անհնար էր անտեսել, և թե՛ անառարկելի Հարստությունը: Այդուհանդերձ, արևելյան քրիստոնյաներին շատ ավելի ապշեցրել են եղբայրների հոգևոր գործունեության շառավիղները և ցանկացած անձնական շահարկալից գործունեությունը բացառող ու նյութական բավարարվածություն չհանկարտող՝ միայն Աստծո անունից մղվող նրանց պայքարը: Չնայած այս ամենին, սկզբնաղբյուրների բոլոր հեղինակները, որոնց վերաբերում է այստեղ խոսքը, համաձայն չեն նրանց այդ նկարագրի հետ: Ընդհանուրապես՝ նրանցից յուրաքանչյուրն այս միաբանությունների և նրանց փաստաթղթերի վրա տարբեր հայացք է նետում և երբեմն նույնիսկ տարբեր կարծիքներ հայտնում նրանց մասին:

III – Խիստ և անզիջում գնահատականից դեպի ներքողում

Ա – Ասպետական միաբանությունների հասցեին արված հանդիմանությունները

Ընդհանուր առմամբ՝ արևելյան քրիստոնյաների կողմից ասպետական միաբանությունների ընկալումը համեմատաբար բարեհաճ է: Այնուամենայնիվ, որոշ պարագաներում նրանք հայտնում են անզիջում կարծիք այն ամենի հանդեպ, ինչն իրենք ավելի հաճախ համարում են նրանց (անկախ այն բանից հոգևոր, թե ռազմական) արժեքների արժեզրկում: Այլ հեղինակներ որոշակիորեն սահմանադատվում են նրանցից համեմատաբար հատու ձևով հիշատակելով նրանց առնչվող փաստերի մասին, առանց համակրանքով վերաբերվելու նրանց ճակատագրին կամ գովելու նրանց խիզախությունը և կամ առանց արհամարհանքի արտահայտվելու նրանց մասին:

¹⁴¹ Delaville-le-Rouix, Գշվ. աշխ., էջ 165-166, թիվ 1327:

Կրոնա-ասպետական միաբանություններին արվել է երկու բնույթի հանդիմանություն. առաջինը, որը պակաս նշանակալից չէ՝ նրանց հաստատությունների այլասերումն է և նրանց առաքելությունն նախնական բնույթի ձևափոխումը, որը ձևափոխվել է Ներսես Լամբրոնացին¹⁴² «Մտորումներ կեղեցիկ հաստատությունների մասին» աշխատությունում:

«Նրանք զստան կրոնական միաբանություններ, որոնք ղեկավարվում էին սարբեր օրենքներով, որոնք միավորում են վանական հաստատությունները, աշխարհում ապրելով գինվորական հանդերձանքով, և որոնք հետապնդում էին հարեանությունը գտնվող թշնամիների հետ անողոք պայքարի նպատակ: Այս միաբանությունն ծագումն արժանի է գովեստի, եթե սատանան, այդուհանդերձ, վերջնականապես բարին չի գանազանում չարից, հետևելով այն խոսքին, որն ըմբոստ մարդիկ կարող են մեզ ուղղել և որով մենք կարող ենք նրանց առարկել, որը մենք նաև չենք արհամարհում: Սակայն, հետագայում, այս միաբանության հաստատությունները դադարեցին լինել այն, ինչի համար, ըստ էության, կոչված էին»¹⁴³:

Այսպիսին է միաբանությունների զարգացման այն եղանակը, որը հանդիմանել է Տարսուհի արքեպիսկոպոսը: Բացի վերոնշյալ դատողություններից, հարկ է նմանապես ընդգծել այն փաստը, որ Հայոց եկեղեցում ընդունված չէր, որ վանականները մարտնչեին կամ նույնիսկ զենք կրեին (բացառությամբ այն իրավիճակների, երբ ենթակա էին իրական վտանգի): Ներսես Շնորհալու¹⁴⁴ «Թուղթ ընդհանրական» այս առումով պերճաշուք [սկզբնաղբյուր] է. «Ձի գէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր, որպէս հրամայէ առաքելն, այլ հոգեւոր և աստուածային: [...] վասն որոյ, աղաչեմք ի բաց լինել այսմ կայսրս սովորութենէ ասարկ»¹⁴⁵:

Հայոց եկեղեցին և նրա ամենանշանավոր ներկայացուցիչները, կարելի է կարծել, որ, այսպիսով, ասպետական միաբանությունների հանդեպ ունեին անբարեհավատ նախապաշարում, որովհետև հղելով Ավետարանի, մասնավորապես, Պողոսի պատգամները («Առ Հռոմ», 13, 12), Ներսես Շնորհալուի քահանաներին խորհուրդ է տալիս «զգնել լուսոյ զգեներուլ», այլ ոչ թե խավարի զբահը կրել¹⁴⁶: Դա բացառում էր ցանկացած համատեղելիություն հոգևոր կյանքի և ռազմական գործի միջև: Բայց, եթե թվում է, թե Ներսես Լամբրոնացին՝ ելնելով նրա դատողություններից, ընդունում է պատերազմ/վանականություն

զուգահեռությունը, տաճարականների միաբանությանն ուղղված նրա բնադատությունները թվում են համեմատաբար վաղաժամ¹⁴⁷:

Ձինվորական հողի վրա, եղբայրների մասին երբեմն արվել են անզիջում դատողություններ, հատկապես, երբ նրանք ի վիճակի չեն եղել արդյունավետորեն պաշտպանել իրենց վստահված տարածքը կամ քաղաքը: Արդեն նշեցինք Հովհաննես Երզնկացու պարագան, ով տաճարականներին և հիվանդախնամներին՝ ալ-Աշրաֆ խալիֆի կողմից Սեն-ժան դ'Ակրայի գրավումից հետո անվանում է վախկոտներ¹⁴⁸:

Սառվել Անեցու շարունակողը ևս մատնանշել է տաճարականների անհավատարմությունը.

«Գերմանական միապետը եկավ Կիպրոս կղզի՝ բազմաքանակ բանակով և ուխտագրություն գնաց Երուսաղեմ: Տաճարական եղբայրները զրեցին եգիպտոսի սուլթան Կամելին, որ նրան կհանձնեն կայսրին. սուլթանը նրանց նամակը փոխանցեց կայսրին՝ համոզելու համար նրան իր ազգին պատկանողների դավաճանության մեջ և Երուսաղեմում նրան ընդունեց բարացակամությամբ: Քանի որ նրանց միջև խղճողություն հաստատվեց, կայսրը եկավ և ցատումնալից սպառնաց եղբայրներին»¹⁴⁹:

Եթե այսպիսի նամակի գոյությունը նույնիսկ չի փաստվել, այս դավաճանության արձագանքը, ինչպես նաև այս փաստաթղթի մասին հիշատակում կարելի է գտնել Մատթեոս Փարիզեցու հիշատակարանում¹⁵⁰, որն օգտագործել է Ե. Կանտորովիցը¹⁵¹: Բացի դրանից, Մլրտ իբն ալ-Ջավզի ժամանակագիրը հիշատակում է տաճարականներից ելնող կայսեր սպանության սպառնալիքի մասին¹⁵²:

Նա, ով ամենամանողոք Հայացքն է նետում տաճարականների վրա, ամբողջությամբ բնդունելով զոհի կեցվածք՝ Լևոն Ա թագավորն է իննովկենսիոս III պապին հղած իր նամակներում: Նա գանդատվում է

¹⁴² Ներսես Լամբրոնացին (1153-1198), որը եղել է Ակոնայի վանքի վանահայրը և Տարսուհի արքեպիսկոպոսը, գրել է բազում աշխատություններ, որոնց թվում են «Սեկնութիւն խորհրդոյ պատարագին» (1177), (1178), «Թուղթ առ Լևոն արքայն» (1195 թ. շրջանում) և այլն: Ներսես Լամբրոնացու կյանքի մասին տես Գ. Ներսես Այկնեան, Ներսես Լամբրոնացի՝ արքեպիսկոպոս Տարսուհի, Վիեննա, 1956; Գ. Հակոբյան, Ներսես Լամբրոնացի, Երևան, 1971; Ն. եպս. Պողարեան, Հայ գրողներ, Ե-ժ դարեր, Երուսաղեմ, 1971, էջ 253-259; L. Zekiyan, Nersès de Lambroun. – Dictionnaire de spiritualité, t. XI, col. 122-134.

¹⁴³ Réflexions sur les institutions de l'Eglise et explication du mystère de la messe. – RHC, DA, t. 1, Paris, 1869, p. 571.

¹⁴⁴ Ներսես Շնորհալու (1102-1173) 1166-1173 թթ. եղել է կարողիկոս:

¹⁴⁵ Մենք շնորհակալություն ենք հայտնում տիկին Մարիամ Վաներյանին՝ սիրալիրաբար մեզ տրամադրելու համար «Թուղթ ընդհանրականի» իր թարգմանությունը, որից մի հատված այստեղ ներկայացրինք: Տես նաև Ներսես Շնորհալուի, Թուղթ ընդհանրական, Երևան, 1995, էջ 138:

¹⁴⁶ Սույն տեղում, էջ 139:

¹⁴⁷ Այդուհանդերձ, կրոնա-ասպետական միաբանությունները թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում, ի սկզբանե, տեղիք են տվել տարբեր քննադատությունների: Նրանց մեղադրել են նախանձ, ժխտ, ամբարտապան, նեղ, դաժան և այլն լինելու մեջ: Տես H. Nicholson, Templars, p. 129.

¹⁴⁸ Հայերեն ծեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 711, թիվ 574: Տես վերը:

¹⁴⁹ Samuel d'Ani. Եզվ. աշխ., էջ 471:

¹⁵⁰ Matthaei Parisiensis, monachi sancti Albani, Chronica majora, H. R. Luard (éd.), t. III, A. D. 1216 à A. D. 1239, Londres, 1876, p. 177-179.

¹⁵¹ L'empereur Frédéric II, Paris, rééd. de 2000, p. 177.

¹⁵² Chroniques arabes des croisades, textes recueillis et présentés par F. Gabrieli, Paris, 2^{ème} éd., 1996, p. 302. Ֆրիդրիխ II Յոհնեստաուֆենը չէր կարող բարեհաճորեն տրամադրված լինել տաճարականների միաբանության նկատմամբ այն պատճառով, որ 1227 թ. Գրիգոր IX պապը գերմանական կայսրին բանադրել էր: Այդուհանդերձ, չնայած պապական արգելքին, կայսրը ծեռնարկել էր խաչակրաց վեցերորդ արշավանքը՝ ծով դուրս գալով 1228 թ. հուլիսին և դրանով իսկ իրենից վանելով սապետական միաբանությունների (բացառությամբ տևոնական ասպետների) աջակցությունը: Տաճարականների՝ կայսրի հանդեպ ունեցած թշնամանքի հետևանքով, վերջինս ցանկություն է դրսևորել պաշարել Գրանց միաբանությունը Ակրայում: Այդուհանդերձ, նա հարկադրված է եղել նահանջել, քանզի ժամանակ չի ունեցել հասակեցնելու իր ծրագիրը՝ Սիցիլիայի իր թագավորությունը Հովհաննես Բրիենցու ներխուժման պատճառով: Եթե հիվանդախնամներն, ի վերջո, Ֆրիդրիխ II-ի հանդեպ որդեգրել են ավելի հաշտվողական դիրք, ապա դա չէր կարող վերաբերվել տաճարականների պարագային, ովքեր Գրանց դիմակայելու համար միավորվեցին Սուրբ երկրի բարոնների հետ: Տես J. Richard, Histoire des croisades, Paris, 1996, p. 321, 323.

միաբանությունը իր հանդեպ ունեցած բացասական տրամադրությունից, թագավորության սահմանները պաշտպանելու համար իր կողմում մարտնչելու նրա հրահրումից, այնուհետև, ինչն ավելի ծանր է, իր շահերի և քրիստոնյաների դեմ ուղղված (անընդունելիության բարձրագույն աստիճանը) նրա ուսման և գործողություններից¹⁵³: Հայ միապետը, որն անձամբ էր ներքաշված, տաճարականների միաբանությունը ներկայացնում է, այսպիսով, խիստ բացասական երանգներով, որովհետև չկարողանալով լինել միաժամանակ թե՛ դատավոր և թե՛ մասնակից, նա էլ էր կարող լինել անկողմնակալ: Բացի դրանից, Լևոն Ա-ն հրահրվելով եղբայրներին զիջել նրանց նախկին ամբողջ Պաղարսը, որն անձամբ ինքն էր ետ վերցրել Սալահ Էդ-Դինի նվաճումից հետո, էլ էր կարող հույսեր տաձել նրանց հաշտվողական դիրքորոշման հանդեպ:

Բ – Չեզոք տեսակետ

Գրողների մեկ այլ խումբ, որը շատ ավելի նվազ կրքոտություններ է համակված, ջանում է մարտնչող եղբայրներին վերաբերող փաստերը շարադրել համեմատաբար չեզոք ձևով, նրանց բնութագրելու համար չօգտագործելով արհամարհական կամ վայելուչ ածականներ: Նրանց ավելի հետաքրքրում է բուն տեղեկությունը, քան մեկնաբանությունը, որին նրանք զբաղվելու կարող են հանգել: Այս առումով հատկանշական է Հեթում պատմիչի «Ժամանակագրությունը»: Առանց հանդիմանելու կամ գովաբանելու կրոնա-ասպետական միաբանությունների անդամներին, Հեթումը հետաքրքրվում է բոլոր կարևոր իրադարձություններով, որոնք ուրվագծում են նրանց պատմությունը, անկախ այն բանից, թե ինչին է վերաբերում խոսքը՝ նրանց հիմնադրման տարիքից, նրանց առաջնորդների և որոշ գլխավոր աստիճանավորների վախճանին, նրանց ամբողջների կառուցմանը, թե կրթություն, այն արշավանքներին, որոնց նրանք մասնակցել են, նրանց պաշտպանողական մարտերին, այդ առճակատումների հանգուցալուծմանը, նրանց օգտին արված նվիրատվություններին և վաճառքներին, նրանց դիվանագիտական գործունեությանը և նրանց առնչվող մի քանի զվարճալի պատմությունների¹⁵⁴: Տաճարականների և տեստոնական ասպետների մասին հիշատակելու համար Հեթումը Բ-ն իր «Ժամանակագրական աղյուսակում» դիմում է միևնույն քայլին¹⁵⁵, մի մոտեցում, որը վերստին որդեգրվել է նաև ձեռագրերի որոշ հիշատակարաններում¹⁵⁶: Իսկ ասորական մամանակագիրների թվում անանուն մի հեղինակ եղբայրների մասին հիշատակում է Սալահ Էդ-Դինի դեմ մղվող մարտի ընթացքում և Հաթինի ջախջախումից հետո նրանց գերեվարության կապակցությամբ՝ առանց որևէ կարծիք հայտնելու մարտը վարելու նրանց եղանակի կամ նրանց ճակատագրի մասին¹⁵⁷:

¹⁵³ Գմմտ. Innocent III.— PL, t. 214, col. 810-812, N 252; col. 1003-1006, N 43; t. 215, col. 687-692, N 119.

¹⁵⁴ Haythom, ԳՂ. աշխ., էջ 60, 65-68, 74-77, 79: Դեթում Կոռնիկոսցին միաժամանակ չեզոք ձևով է հիշատակում տաճարականների և հիվանդախնամների միաբանությունները: Stéu Haythom, La flor, p. 196-199 (լատիներեն տարբերակում է՝ էջ 320-321); «La Fleur des histories de la terre d'Orient», p. 851-852.

¹⁵⁵ RHC, DA, t. 1, p. 484-485.

¹⁵⁶ Գայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 701-703, թիվ 570; էջ 718-720, թիվ 579:

¹⁵⁷ Anonyme syriaque, p. 148-149.

Գ – Ասպետական միաբանություններին ուղղված բարենպաստ և բարեհաճ հայացք

Կարելի է ասպետական միաբանությունների անդամների մասին հիշատակող սկզբնաղբյուրների հետնախորքի վրա հավաստել դրանց հեղինակների դրսևորած հարգանքի, իսկ երբեմն նույնիսկ հիացմունքի աստիճանական աճ: Երբ Լևոն Ա-ն կամ Ռայմոնդ-Ռուբենը նվիրատվական կամ արտոնումի հրովարտական են շնորհում հիվանդախնամներին, նրանք միաբանությունը բնորոշում են իբրև «սուբբ» կամ «սրբազնագույն միաբանություն», իսկ առաջնորդի անվանը միշտ նախորդում է «պատվարժան» մակդիրը¹⁵⁸:

Տաճարականների ընկալումը Կեղծ Սմբատի կողմից, որոնց նա անվանում է «խաչով նշված հանդերձանքներով եղբայրներ», հանգում է ներքոյի, նկարագրելու համար, մասնավորապես, նրանց քաջությունը Սալահ Էդ-Դինին դիմակայելու ընթացքում, երբ Հաթինի ջախջախումից հետո նրանց ընձևովել էր բնորոշության հնարավորություն¹⁵⁹: Այդուհանդերձ, չնայած մամանակագիրը հիշատակում է Կիլիկյան Հայաստանում տաճարականներին և հիվանդախնամներին վերաբերող կարևորագույն իրադարձությունների մեծ մասը, նա չի հիշատակում Անտիոքի ժառանգության շուրջ ծագած վեճի մասին, որի գլխավոր կերակատարները նրանք են եղել Տրիպոլիի կոմսի, Ռայմոնդ-Ռուբենի և Լևոն Ա թագավորի հետ մեկտեղ, հավանաբար, եղբայրների նկարագիրը պահպանելու մտահոգությունից զրկված, ինչը կարող էր արտասովորվել եթե հիշատակեր առճակատման մեջ նրանց ներգրավված լինելու մասին:

Իր «Ժամանակագրությունում» Բար Հեբրեոսը գտնում է, որ 1156 թ. ի վեր, երբ Ռենո Շատրյոնցին Հայոց իշխան Թորոս Բ-ի դեմ հարձակում է ձեռնարկում¹⁶⁰, տաճարականները «գործում են ինչնով բոլոր քրիստոնյաների շահերից»¹⁶¹: Տաճարական եղբայրները շարունակում են սլահայատում են Ռայմոնդ-Ռուբենի հյուսած զավաղություններ, ով նպատակ ուներ առևանգել նրան ու թագավորել նրա փոխարեն¹⁶²: Հեղինակը հաղորդում է նաև այն իրադարձության մասին, որ հիվանդախնամները, որոնց մոտ Ջաբելն ապաստանել էր իր ամուսնու վաղժամ վախճանից հետո, թագուհուն «պաշտպանել են պատվով»¹⁶³ և ասել՝ նրան իրենցից պահանջող Կոստանդինին. «Մեր տները և մեր փոքր ամբողջները քրիստոնյաներին ապաստանող գյուղեր են, և մենք չենք կարող հանձնել մի կնոջ, թագուհու, ով ապաստանել է մեզ մոտ»¹⁶⁴: Մեծ մեծորդական ընդգրկվում է, այսպիսով, այն եղանակը, որով քրիստոնյաների թվում, սվբեր ըմբռնում են, թե ասպետական միաբանությունների ստանձնած առաքելությունն ինչ իմաստ և նպատակ ունի և բացահայտում է զբաղվող բխող որոշ

¹⁵⁸ Delaville-le-Roulx, ԳՂ. աշխ., էջ 70-71, թիվ 1262; էջ 71, թիվ 1263; էջ 115-116, թիվ 1344; էջ 122-123, թիվ 1355; էջ 164-165, թիվ 1426; էջ 165-166, թիվ 1427, էջ 175, թիվ 1441; էջ 176, թիվ 1442:

¹⁵⁹ La Chronique attribuée au Connétable Smbat, p. 59-63.

¹⁶⁰ Գարձակունք ձեռագրավել է բյուզանդական կայսր Մանվել Կոմենենոսի հրահրմամբ: Անտիոքի իշխանի իրական նպատակն, այդուհանդերձ, Ամանոսի ամբողջը եղբայրներին վերադարձնելն էր, որոնք ճակտիցում ֆրանկներից վերցրել էին հույները:

¹⁶¹ Bar Hebraeus, ԳՂ. աշխ., էջ 283:

¹⁶² Լույն տեղում, էջ 370:

¹⁶³ Լույն տեղում, էջ 381:

¹⁶⁴ Լույն տեղում, էջ 389-390:

առանձնահատկություններ ու արժանիքներ, ինչպիսիք են նրանց հավասարմությունը և քրիստոնյաներին ապաստանելու պատրաստակամությունը:

Արևելյան քրիստոնյաների սկզբնաղբյուրներում՝ ասպետական միաբանությունների նկատմամբ տածվող հարգանքն ավելի խորն է, և երբեմն զրանցում իսկական ներքող է հնչում:

Գ – Ներբողական ընկալումը

XII դարի մի քանի ժամանակագրություններում և XIII դարի առաջին կեսի որոշ հրովարտականներում կարելի է գանգաճանկ ասպետական միաբանությունների ծայրահեղ ներբողական ընկալումը: Գրիգոր Երեցի համար տաճարականները «երկնքի դեսպանորդներն են»¹⁶⁵, «զորք, որը սիրում է Քրիստոսին»¹⁶⁶ և «անպարտելի զորք»¹⁶⁷: Նրանք արժանանում են «նահատակի պսակի»՝ մարտնչելով մահմեդականների դեմ¹⁶⁸: Բացի դրանից, հայ ժամանակագիրն ընդգծում է տաճարական ասպետների աջակցությունը հայերին, որը միաժամանակ ուներ թե՛ ռազմական բնույթ և ուղղված էր Մանվել Կոմնենոսի անուխից գործող սելջուկյան սուլթանի դեմ¹⁶⁹ և թե՛ նաև զիվանագիտական, քանզի տաճարականները պաշտպանում էին թորոս Բ իշխանի գործն այդ նույն կայսեր առջև¹⁷⁰:

Միևյակ Ասորին ավելի քան այլք, մանրամասնում է ասպետական միաբանությունների կենսակերպը: Այդ իսկ պատճառով, նա գովեստներ է շտալում եղբայրների կողմից իրենց իսկ պարտադրվող կարգապահության, ինչպես նաև նրանց ներկայության շահեկանության հասցեին՝ թե՛ մարտի դաշտում և թե՛ ընչազուրկներին ու հիվանդներին մշտապես անդուլ օգնության ձևով մեկնելու ասպարեզում¹⁷¹: Պատրիարքը ևս անդրադառնում է նրանց շխտակությունն ու ազնվությունը, երբ հիշատակում է Բարսումայի վանքի ռազմապայման ու կողոպտելի մասին, որը տեղի է ունեցել 1148 թ. հունիսի 18-ին կոմս Ժոսլինի կողմից¹⁷²: Նա մեզ տեղեկացնում է այս իրադարձությանը հետևած՝ տաճարականների արձագանքին. «Մի քանի ֆրանկ, ովքեր նրան ուղեկցում էին, փրկեցին, այն է՝ «եղբայրները» թվում էին: Տեսնելով այս, նրանք նրան ասացին. «Մենք քեզ հետ եկել ենք թուրքերի դեմ պատերազմելու և քրիստոնյաներին օգնելու, այլ ոչ թե եկեղեցիներն ու վանքերը կողոպտելու

համար», և նրանք «նրան լքեցին ու հեռացան՝ առանց հաց ուտելու կամ ջուր խմելու»¹⁷³:

Հուսիկ գրչի հիշատակարանը կարելի է դասել ասպետական միաբանությունները ներքող այս սկզբնաղբյուրների շարքում, որովհետև դրա հեղինակն իսկական հիացմունքով է արտահայտվում տաճարականների մասին, որոնց եռանդը գովաբանում է, հիշատակելով նրանց բարոյական անաղարտության և ռազմական գործունեության ասպարեզի մասին¹⁷⁴:

Միաբանությունների ներբողական ընկալումը հաճախ առնչվում է նրանց հավատքի, մեծահոգության և ռազմական որակների հիշատակման հետ: Այսպես, եղբայրներին ավելի սիրաշահող զիվանագիտական փաստաթղթերը՝ հայ միապետների պետական զիվանի տեստականների Սուրբ Մարիի միաբանությանը հատկացրած երկու նվիրատվական հրովարտականն են, որոնք առիթն ունեցանք ներկայացնելու միաբանությունների հոգևոր գործունեության շտապի նկարագրության ժամանակ: Առաջինում, որը թվագրված է 1212 թ. ապրիլով, Լևոն Ա-ն տեստականներին նմանեցնում է մակարայցիների հետ և հիշատակում նրանց «բարեգործությունների» և «աղոթքների» մասին: Միաբանության հանդեպ նրա բարեհաճությունն աճում է, երբ նա կարգադրում է, որ իր մարդիկ «այս նույն եղբայրներից ուժով չպահանջեն որևէ ծառայություն կամ տուրք (tributum), կամ բահր (բնամթերքով) (angarium), կամ անկախ այն բանից, թե ինչ ձևով՝ Հարկի որևէ գանձում, այլ ընդհակառակը, որ նրանք պարտավորվեն նրանց սիրել, մեծարել և հարգել ամեն ինչի համար և ամեն ինչում, ինչպես պատշաճ է ստովածաժախ մարդկանց»¹⁷⁵: Երկրորդ հրովարտականում, որը 1236 թ. հունվարի 22-ին հրապարակել են Հեթում Ա-ն ու Ջաբելը, հիշատակվում է եղբայրների զթաարտության և մարտի դաշտում նրանց անվեհերության մասին: Այս միաբանության նկատմամբ նրանք առավել ևս բարեհաճ են տրամադրված, քանզի իրենք դրա «միաբաններն» են, իսկ տեստական ասպետները հայտարարել էին, որ իրենք նրանց կպաշտպանեն այնպես, ինչպես իրենց թագավորությունը¹⁷⁶:

Ասպետական միաբանությունների գործողությունների և անվեհերության գնահատումը հսկայական չափով աատանվում է՝ կապված հեղինակների տիրույթի, այս միաբանությունների հետ նրանց անմիջական շփումների, հնարավոր վիճելի հարցերի կամ, ընդհակառակը, մատուցված կամ մատուցվելիք ծառայությունների ճանաչման հետ:

Այն դեպքում, երբ կարող էինք խորհել կրոնա-ասպետական միաբանությունների հանդեպ արևելյան քրիստոնյա հեղինակների տեսականների նմանության մասին՝ աշխարհագրական տեսանկյունից նրանց մոտ գտնվելու և մշակութային որոշ հոգեհարազատության պատճառով, իրականությունը բացահայտվում է բոլորովին այլ տեսքով: Իրոք, հայկական և ասորական հասարակությունները տարբեր են և դա զգացվում է ժամանակագրությունների հնչեղության հենքի վրա: Ասորիների դրած ժամանակագրությունները շեշտը դնում են իրադարձությունների տնտեսական

¹⁶⁵ Grigor Yerets, ԳՂՎ. աշխ., էջ 171-172; Matthieu d'Edesse, ԳՂՎ. աշխ., էջ 338; A. E. Dostourian, ԳՂՎ. աշխ., էջ 263:

¹⁶⁶ Grigor Yerets, ԳՂՎ. աշխ., էջ 171-172; Matthieu d'Edesse, ԳՂՎ. աշխ., էջ 338, 354; A. E. Dostourian, ԳՂՎ. աշխ., էջ 273:

¹⁶⁷ Grigor Yerets, ԳՂՎ. աշխ., էջ 189; Matthieu d'Edesse, ԳՂՎ. աշխ., էջ 335; A. E. Dostourian, ԳՂՎ. աշխ., էջ 273:

¹⁶⁸ Grigor Yerets, ԳՂՎ. աշխ., էջ 184; Matthieu d'Edesse, ԳՂՎ. աշխ., էջ 350-351; A. E. Dostourian, ԳՂՎ. աշխ., էջ 270:

¹⁶⁹ Grigor Yerets, ԳՂՎ. աշխ., էջ 189; Matthieu d'Edesse, ԳՂՎ. աշխ., էջ 338; A. E. Dostourian, ԳՂՎ. աշխ., էջ 263:

¹⁷⁰ Grigor Yerets, ԳՂՎ. աշխ., էջ 188; Matthieu d'Edesse, ԳՂՎ. աշխ., էջ 354; A. E. Dostourian, ԳՂՎ. աշխ., էջ 273:

¹⁷¹ Michel le Syrien, ԳՂՎ. աշխ., էջ 201-203, 207-208, 235, 314, 324:

¹⁷² Այս իրադարձության հանգամանքների մասին շատ ավելի մանրամասնոր տես Anonyme syriaque, p. 113-115; G. Dédéyan. Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés. Etude sur les pouvoirs arméniens dans le Proche-Orient méditerranéen (1068-1150), Lisbonne, 2003, p. 1238-1239.

¹⁷³ Michel le Syrien, ԳՂՎ. աշխ., էջ 287:

¹⁷⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 158-159, թիվ 114: Հիշատակարանի հատվածներից կատարված հղումները՝ տես վերո:

¹⁷⁵ V. Langlois, ԳՂՎ. աշխ., էջ 117-120; E. Strehlke, ԳՂՎ. աշխ., էջ 37-39, թիվ 46; K. Forstreuter, ԳՂՎ. աշխ., էջ 234:

¹⁷⁶ V. Langlois, ԳՂՎ. աշխ., էջ 141-143; E. Strehlke, ԳՂՎ. աշխ., էջ 65-66, թիվ 83; K. Forstreuter, ԳՂՎ. աշխ., էջ 235-236:

և կրոնական կողմերի վրա, այն դեպքում, երբ հայերի գրած ժամանակագրությունները (ովքեր ապրում էին ավատատիրական բնույթի հասարակությունում), ավելի բևեռված են ռազմական կողմի վրա: Մեզ է ներկայանում հիշատակման զանազան ձևերի, դասհատման եղանակների, միաբանությունների գերի ընկալումների ամբողջ բազմաբանություն: Այդուհանդերձ, կարող ենք ջանալ առանձնացնել որոշ հիմնական միտումներ: Ընդհանուր առմամբ, ասորի հեղինակները (հատկապես Միխայել Աստրին) բարեհաճ են տրամադրված ասպետական միաբանությունների հանդեպ, որոնց կենսակերպը նրանց հայտնի է, սակայն ինչ վերաբերում է այլ բաների նրանք այնքան էլ ստույգ չեն, մասնավորապես երբ խոսքն առնչվում է տաճարականներին հիվանդախնամներից զանազանելուն, որոնց բոլորին նախընտրում են անվանել «եղբայրներ»: Հայ հեղինակների գերակշռող մասը, անկախ այն բանից՝ կաթողիկոս, եպիսկոպոս, թե վանական դպրոցների պատասխանատուներ, ավելի դժնի հայացք են նետում կրոնա-ասպետական միաբանությունների վրա, գտնելով, որ վերջիններս այլևս հարգարկից վերաբերմունք չեն դրսևորում այն առաքելության հանդեպ, որին նրանք հետամուտ էին (և դա արդեն XII դարի վերջից): Բացի դրանից, Հայոց եկեղեցու այդ վերնախավի համար ըմբռնելի չէր վանական կյանքի և ռազմական գործունեության համատեղելիությունը: Ավելի համեստ պարտականություններ կատարող Հայ գրիչները չէին թաքցնում իրենց հիացմունքը տաճարականների հանդեպ, որոնց դիտում են իբրև առաքինության և ինքնագոհության տիպարներ: Ինչ վերաբերում է Հայ միապետներին և նրանց ընտանեկան շրջապատին, ապա ասպետական միաբանությունների նրանց ներկայացրած պատկերը զանազանվում է ըստ քննարկվող վավերագրերի. իրավարանական արժեք ունեցող փաստաթղթերը հաճախ խիստ ներբողական են (միայն տաճարականների նկատմամբ), իսկ պատմական բնույթի վավերագրերը շատ ավելի անկողմնակալ և չեղոք պատմություններ են: Այդուհանդերձ, հստակորեն զգացվում է, որ հեղինակների այս վերջին խումբն է լավագույնս իրազեկ ասպետական միաբանություններին, նրանց առաջնորդներին, գլխավոր բարձրատիճան անձանց և նրանց առնչվող իրադարձությունների մեծամասնությանը:

Հայկական սկզբնաղբյուրներում տաճարականներին, հիվանդախնամներին ու տևտոնականներին վերաբերող հիշատակումների մեծամասնությունն առնչվում է ռազմական իրադարձությունների, անկախ այն բանից, թե ինչին է վերաբերում խոսքը՝ մարտերի, թե գերեվարված կամ սպանված ասպետների և այլնի: Ջարմանայի չէ հավաստելը, որ սկզբնաղբյուրներում ավելի հաճախ հանդիպում ենք կրոնա-ասպետական միաբանությունների այս առանձնահատկությանը, քանզի ժամանակագրությունների և պատմությունների նպատակն այս բնույթի իրադարձությունների նկարագրությունն է: Այնուամենայնիվ, այս միաբանությունների անդամների երկակի ինքնության հավաստումը հաճախ ընդգծվել է այնպիսի բառերի միակցմամբ, ինչպիսիք են «երկնքի ղեկավարողները» կամ «Քրիստոսի գործը»: Բացի դրանից, որոշ հեղինակներ նախաձեռնում են խոսել եղբայրների վանական կյանքի մասին ավելի ծավալուն ձևով: Ասպետական միաբանությունների պատկերը ներկայացնելը շատ ավելի տատանվում է ըստ հեղինակների, քան ըստ ժամանակի, որովհետև նրանց հասցեին կարելի է հատու քննադատությունների, ինչպես նաև ներբողական խոսքերի հանդիպել թե՛ XII և թե՛ XIII դարերում:

Թեպետ յուրաքանչյուր ընկալում ունեցել է իր առանձնահատկությունը՝ ոչ մի հեղինակ չի կարողացել ձերբազատվել իր գաղափարի ու միջավայրի

այլաձևող պրիզմայից (քանի որ նրա վկայությունը եղել է իր գրած փաստաթղթի և այն հասարակության, որը ներկայացնում է, միակցումը), արևելյան քրիստոնյա հեղինակների աշխատություններում նշարվում է մեկ ընդհանուր կրոնա-ասպետական միաբանություններն իբրև ցանկացած նյութական բարիքների հանդեպ շահագրիտություն չունեցող մարտնչողների ներկայացնելու միտումը, որոնք ներկա են բոլոր ռազմաճակատներում և կյանքը գոհարբում են իրենց հավատքի զոհասեղանի վրա:

Ֆրանսերենից թարգմանելով
ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

Հ. ՕՐԲԵԼՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՄՈՎՍԻ ԵՎ ԱՌՀԱՍԱՐԱԿ ՀԱՅԵՐԻ ԲԱՐԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Մոկսի բարբառը հայերենի այն կարևորագույն բարբառներից է, որը մինչև այժմ չի եղել առանձին, համեմատաբար լայն ուսումնասիրության առարկա: Ավանդական բարբառագիտական աշխատություններում, զբված հատկապես Հ.Աճառյանի և որիշների կողմից, այս բարբառին հատկացվում է շատ աննշան, կարելի է ասել ոչ կարևոր տեղ¹: Հետագա աշխատանքներում այդ բարբառն ընդգրկվում է իբրև ընդհանուր, տարբեր կարգի հատկանիշներից մեկի կամ մյուսի որոշակի արտահայտիչ, և ըստ այդմ ընդգրկվում է ոչ հիմնավոր տվյալների օգտագործմամբ²: Այլ կերպ ասած՝ դեռևս 20-րդ դ. առաջին տասնամյակի սկզբներին երիտասարդ Հ.Օրբելու ջանքերի շնորհիվ «աչքատես» (de visu) ի մի բերված բարբառագիտական, եթե ոչ նաև ազգագրական նյութը, ամենայն հավանականությամբ անմատչելի լինելու, ինչպես նաև այլ նկատառումներով (բարբառագիտական դպրոցի և այլն տարբերության), բոլորովին չի արժանանում գիտահետազոտական ուշադրության, այսինքն՝ չի ընդգրկվում նաև հետագա տասնամյակներում երևան եկած բարբառագիտական աշխատանքների մեջ:

ա) Այս տեսակետից մեծ կարևորություն ունի տաղանդավոր բարբառագետ հանգուցյալ Մ.Մուրադյանի մի հատուկ աշխատությունը³, որն աչքի է ընկնում ոչ միայն գիտական պատշաճ մակարդակով, այլ ուշադրություն առարկա խնդրի լուծման գրեթե սպառիչ վիճակով: Այդ ուսումնասիրության մեջ մեծապես օգտագործված է Հ.Օրբելու ձեռագիր աշխատանքը, որն ինչ-որ չափով համալրվել է նաև իր իսկ հեղինակի լրացուցիչ նյութերով:

բ) Մոկսի բարբառի առաջին ուսումնասիրողը Հ.Օրբելին է: Նրա աշխատանքը պարունակում է նույն բարբառի ընդարձակ բառարանը, ինչպես նաև բանասիրական ու բանագիտական (ազգագրական) նյութերը, որոնց մշակումն այդպես էլ չի հասցվել վերջնական վիճակի: Այդ բացը լրացվել է հետագայում: Այդ նյութերը գիտական լայն շրջանառության մեջ են դրվել համեմատաբար վերջին տարիներին, թեև հրատարակության պատրաստված են եղել հավաքումից բավականին ուշ՝ շնորհիվ ժամանակին այդ դործում անուրանալի լուծա ներդրած Մ.Մուրադյանի⁴: Նկատենք, որ թերևս Հ.Օրբելու բարբառագիտական այդ նյութերին ծանոթանալու և գիտական

հրատարակության պատրաստելու առիթով է, որ աշխարհագրական նույն տարածքին հարող մեկ այլ լեզվական միավորը՝ Շատախի բարբառի ուսումնասիրող Մ.Մուրադյանը ձեռնամուխ է լինում նաև Մոկսի բարբառի հետազոտմանը⁵: Ավելացնենք նաև, որ այսօր ունենք Շատախի, Մոկսի և Ողմի բարբառներին նվիրված ուսումնասիրություններ, որոնք թեև զբված են այսպես կոչված Աճառյանի դպրոցի հետևություններով (հեռու այնպիսի դպրոցից, որի հիմքերը ժամանակին դրել էին Ռուսաստանում Ք.Պատկանյանը, Լ.Մանրյանցը և ուրիշները), այնուամենայնիվ որոշակի պատկերացում են տալիս հիշյալ տարածքի (պատմական Հայաստանի Մոկսյց աշխարհի) լեզվական – հաղորդակցական վիճակի մասին:

գ) Հ.Օրբելու աշխատանքը, նվիրված Մոկսի բառարանի ստեղծմանը, բանասիրական, բանագիտական և այլ կարգի նյութերի հավաքմանը, ինչպես դիտենք, իրականացվել է տեղում (in situ) Արևմտյան Հայաստանում, 1911-1912թթ., երբ երկրասարդ ուսումնասիրողը գտնվում էր գիտական հատուկ գործուղման մեջ՝ Ն.Մառի անմիջական հանձնարարությամբ: Մակայն այդ աշխատանքը լույս է տեսնում անհամեմատ ավելի ուշ՝ Հ.Օրբելու գիտական ժառանգությունը հրատարակության պատրաստողների ջանքերի շնորհիվ, հատկապես արևելագետ–կովկասագետ Պ.Մուրադյանի մանրակրկիտ աշխատությամբ և խմբագրմամբ⁶:

դ) Մոկսի բարբառի բառարանը, հնչույթային և ձևաբանական որոշակի հատկանիշների առանձնացումը, ինչպես նաև բանասիրական, բանագիտական և այլ կարգի նյութերը, հավաքված և ինչ-որ չափով դասակարգված էր երիտասարդական ավյուրով լցված ներհուն հետազոտողի, հետագայում համաշխարհային ճանաչում ստացած գիտնականի ձեռքով, այսօր գրեթե անփոխարինելի և շատ կողմերով վստահելի տվյալներ կարող են տրամադրել ոչ միայն կոնկրետ այդ բարբառի, այլև առհասարակ հայերենի բարբառների գիտական ավելի լայն, նոր սկզբունքներով ուսումնասիրության համար:

Այսպես, առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում այդ բարբառի ձայնավորները, երկբարբառների և բաղաձայնների համակարգերը, որոնք ի հայտ են բերում ոչ միայն հնչյունախոսական, այլև առհասարակ հնչյունաբանական որոշակի առանձնահատկություններ կապված այսպես կոչված քմայնացման (ավանդական ընթացակարգում) հասկանալի և սովորական, մեկ այլ դեպքում՝ դեռևս ոչ այնքան պարզ, ուստի և արտասովոր), տարբերակիչ այլ հատկանիշների պարունակման, արտասանական տարբերակման և այլ երևույթների հետ⁷: Ավելացնենք, որ Հ.Օրբելին ժամանակին կարողացել է ըստ ամենայնի մանրամասն և ճիշտ գրանցել բարբառի հնչյունական-հնչյունաբանական երևույթները արտասանական տարբերությունները, վերջիններին նրբերանգները և այլն, սակայն այդպես էլ չի կարողացել գիտական վերջնական տեսքի բերել հնչյունական դրանցումների ստառագրման համակարգը, և ինչպես նշում է նաև Մ.Մուրադյանը, «չնայած այս հանգամանքին, ուշադր գննում կատարելու դեպքում Հ.Օրբելու նրբերանգային դրանցումները խիտ հետաքրքրական և նույնիսկ անսպասելի իրողությունների բացահայտման բանալի են տալիս»⁸: Այստեղ մեզ առավել հետաքրքրում է Հ.Օրբելու կողմից կատարված այն կենդանի գրանցումը հնչույթային համակարգի այն երևույթը, որն առաջին հերթին վերաբերում է

¹ Տե՛ս H.Adjarian, Les explosives de l'ancien arménien, étudiés dans les dialectes modernes, “La parole”, I, 2, Paris, 1899, pp. 119-127: Նույնի՝ Classification des dialectes arméniens, “Bibliothèque de l'école des hautes études: Sciences historique et philologiques” 173, Paris, 1909: Հ.Աճառյան, Հայ բարբառագիտություն. ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների (բարբառագիտական բարոեգոծ). «Եմինյան ազատագրական ժողովածու», հ. 8, Մոսկվա - Նոր Նախիջևան, 1911: Նույնի՝ Բնութագրում Վանի բարբառի, Երևան, 1953: Ա.Ղարիբջյան, Համառոտություն հայ բարբառագիտության, Երևան, 1941:

² Հմմտ. Գ.Ջուլիակյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:
³ Մ.Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի. «Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր)», I, Երևան, 1982, էջ 108-113:

⁴ Տե՛ս Մ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 110-113: Ի.Ա.Օրբել, Избранные труды в двух томах, том II, составитель и редактор тома П.М. Мурадян, Ереван, 2002, с.VI:

⁵ Մ.Մուրադյան, Շատախի բարբառը, Երևան, 1962:
⁶ Ա.Ի.Օրբել, Избранные труды в двух томах, том II, Ереван, 2002:
⁷ Ավելի մանրամասն տե՛ս Մ.Մ.Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի, էջ 114-133:
⁸ Մ.Մ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 112:

ձայնավորներին, ինչպես նաև պայթական բաղաձայններին: Հատկապես հայերենի որոշ բարբառների պայթական բաղաձայնական համակարգին վերջին տարիներին լույս տեսած համեմատաբանական և տիպաբանական աշխատություններում արվում է առավել հնուցություն, որի հիման վրա առաջարկվել է վերանայել հնդեվրոպական նախալեզվի ավանդական համակարգը: Այս տեսակետից Մոկսի բարբառը ինչպիսի՝ լրացուցիչ հնարավորություն կարող է ստեղծել:

2. Հայերենի բարբառները գրեթե մշտապես եղել են յեզվաբանական գիտության մասնագետների ուշադրության կենտրոնում: Նախորդ դարի երկրորդ կեսին Ռուսաստանում մեծ հետաքրքրություն ուսումնասիրվել են այդ բարբառներից մի քանիսը՝ ոչ միայն հայազգի, այլև օտար հետազոտողների կողմից: Ձևավորվել էր որոշակի դպրոց, որն այնպես էլ չունեցավ շարունակություն մեկ այլ դպրոցի՝ Ա.Մեյենի ժամանակին աշակերտած Հ.Աճառյանի բարբառագիտական աշխատանքների բերած ավանդույթի տարածվելու և աստիճանաբար տիրապետող դառնալու պատճառով:

ա) Աճառյանական դպրոցի հեռուվյթումը հատկապես 20-րդ դ. երկրորդ կեսին սկսեցին գրվել մի շարք աշխատանքներ, որոնք հիմնականում վերաբերում էին այս կամ այն բարբառի առանձին նկարագրությանը՝ ի համեմատություն հատկապես հին գրական լեզվի (գրաբարի), քանի որ ստեղծվել էր մի կայուն, գրեթե անշրջանցելի ավանդույթ՝ համաձայն որի հայերենի բարբառները ոչ այլ ինչ են, եթե ոչ հին գրական հայերենից հետո երևան եկած խոսակցական տարբերակվածություն արդյունք: Հակառակ մոտեցումը կամ կարծիքը կարող էր առարկություն հանդիպել, և այդպես էլ լինում է: Եվ պատահական չէ, որ անցյալ դարի 50-ական թթ. վերջերին և 60-ականի սկզբներին ոչ միայն մեկանում, այլև նախկին խորհրդային դիտական մամուլում տեղի ունեցավ լայն ընդգրկվածով բանավեճ, որին մասնակցեցին թե՛ հայ և ռուս, թե՛ օտարազգի լեզվաբաններ: Հայերենի բարբառների ստատիկ նկարագրության ավանդույթն այնքան մեծ էր, որ բանավեճի ընթացքում առաջ քաշված շատ կարևորագույն գաղափարներ և վերլուծություններ (հատկապես Հ.Ֆոդատի, Է.Բեննվենստի, Վ.Իվանովի և ուրիշների), այդպես էլ հետագա տարիներին գրված (հատկապես մեզանում երևան եկած) բարբառագիտական աշխատանքներում որևէ արձագանք չունեցան կամ ընդունելություն չգտան:

բ) Նկատի ունենալով հատկապես այս և նման մի շարք հանգամանքներ՝ հարկ ենք համարում նշելու, որ Հ.Օրբելու հավաքած բարբառագիտական նյութերը ևս մեծ հետաքրքրություն են ներկայացնում, որովհետև լինելով կենդանի և անմիջական գրանցման արդյունք՝ համեմատաբար ավելի վստահելի փաստեր են տրամադրում ասպեզա ուսումնասիրողին, մանավանդ որ՝ հայերենի բարբառներին այսօր ավելի մեծ ուշադրություն է դարձվում հատկապես հնդեվրոպական լեզուների համեմատական և տիպաբանական ուսումնասիրություններում: Այս վերջին գրություն էլ առաջնային ենք համարում հայերենի բարբառների, այդ թվում նաև Մոկսի բարբառի ընդհանուր նյութերի տեսական, ընդհանուր տիպաբանական ուսումնասիրության հեռանկարի տեսակետից:

գ) Մոկսի բարբառն ունի ոչ միայն պարզ, այլև քմայնացած հետնալեզվային և այլ կարգի բաղաձայններ՝ բ, գ, դ, ձ, ջ, այլև բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛, որոնք արժանի են հատուկ ուսումնասիրության: Այնուհետև, այս բարբառում հանդիպում է նաև, այսպես կոչված, նախակորորային բաղաձայն կ, որը սովորաբար

ընդորշվում է, «իրբև արգյունք դկ հնչյունակապակցության ձուլման»¹⁰: Կարծում ենք, որ հետնալեզվային այս կարգի հնչույթների ոչ այնքան ստատիկ, որքան տարածմանակալ ուսումնասիրությունը մեծ կարևորություն կարող է ունենալ ոչ միայն հայերենի պատմության, այլև հնդեվրոպական լեզուների լայն նկարագրության համար:

դ) Մոկսի բարբառը, ինչպես նաև հայերենի ուրիշ շատ բարբառներ, աչքի է ընկնում ձայնավորների, երկբարբառների և եռբարբառների բավականին հարուստ համակարգով: Հին գրական հայերենն այս տեսակետից բավականին սահմանափակ է: Հայոց լեզվի նախադրային շրջանի պատմության ուսումնասիրության տեսակետից հետաքրքիր է այն հարցը, թե ձայնավորների նման տարբերակվածությունը նո՞ր ձևաբանում է, թե ունի ավելի խորը հիմքեր:

3. Ելնելով նախորդ կետերում նշվածից, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայոց լեզվի համեմատական և տիպաբանական ուսումնասիրությունը թեևակուսել է նոր փուլ՝ հատկապես օտարազգի լեզվաբանների գիտական ջանքերի շնորհիվ, նկատենք, որ հայերենի բարբառների տեսական, ինչպես նաև պատմական տարածմանակալ քննության հարցերը հայերենագիտության զարգացման արդի փուլում անհրաժեշտաբար պիտի դառնան առանձին, լայն ուշադրության առարկա:

ա) Հայոց լեզվի պատմությունը, կարծում ենք, բավականին ուշագրավ երևույթ է ոչ միայն ինքնին, այլև մյուս լեզուների պատմական և մշակութային ուսումնասիրության առումով: Եվ արդեն մի քանի տասնամյակ է, որ հնդեվրոպական լեզուների համեմատական և տիպաբանական վերլուծությանը վերաբերող աշխատանքներում, գրված համաշխարհային ճանաչում գտած լեզվաբանների կողմից, հայերենին տրվում է խիստ կարևոր, նույնիսկ նախկինում բավականին մեծ համարում (prestige) ստացած լեզուներից կարևոր տեղ¹¹: Նման մոտեցումը եղնում է, օրինակ, դեռևս նախանցյալ դարի վերջին նկատված, այլև անցյալ դարի սկզբներին կանխատեսված այն կարևորագույն դիտարկումից, որ հայերենի որոշ բարբառներում նկատվում է պայթական բ, գ, դ և այլն ձայնեղ բաղաձայնների շնչեղությունը ուղեկցող արտասանություն հատկապես բառակազմի դիրքում, ձայնավորից առաջ¹²:

Եվ ըստ այդմ վերջին ժամանակներս առաջ է քաշվել գիտական այն դրույթը, որի համաձայն հայերենը, որ համեմատաբար ավելի ուշ է գրի առնվել (մ.թ. Վր.), քան հնդեվրոպական որոշ լեզուներ (օրինակ խեթայուական կամ հինանատոլիական, նախահունական, իրանական և այլն), այնուամենայնիվ պարունակում է այնպիսի հնագույն (արխայիկ) գծեր, որոնք համեմատաբար ավելի իրական և վստահելի են հնդեվրոպական, օրինակ՝ բաղաձայնական համակարգի հավանական վիճակը վերականգնելու համար:

բ) Այնուհետև, հայերենի որոշ բարբառներին խիստ ընտրոջ հնչյունական մի շարք հատկանիշներ հնարավորություն են ընձևում ցեղակից մյուս լեզուների հնչյունական համակարգերի ավելի ստույգ մեկնաբանության, ընդ որում հարցի առնչությամբ նախկինում երևան եկած տարբեր կարգի տեսությունների վերանայման համար:

¹⁰ Մ.Մորաշյան, Ուրվալիմ Մոկսի բարբառի, էջ 130:

¹¹ Տե՛ս Т.В.Гамкрелидзе, Вяз. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, I – II, Тбилиси, 1984, с. 9, այլև 5-45:

¹² Հմմտ. E.Sievers, Altgermanische Metrik. "Sammlung kurzer grammatiken Germanischer Dialekte", Halle, 1893: H.Pedersen, Armenisch und die Nachbarsprachen. "Zeitschrift für Vergleichende Sprachforschung auf dem Gebiete der Indogermanischen Sprachen", Bd. 39, H. 2, 1904, SS. 334-484: Հ.Պեդերսեն, Հայերեն և դրսի լեզուները, Վիեննա, 1907:

⁹ Այդ բանավեճն նյութերին այստեղ չենք անդադարում՝ հասկանալի պատճառներով, այդ մասին մանրամասն տես՝ "Армянский консонантизм в оценке международной лингвистики (ретроспективная информация)" (Ереван, 1975, 128 с.) ժողովածուի մեջ:

Թե որքանով էր անհրաժեշտ կամ դիտականորեն ավելի ճիշտ հայերենի բարբառները հնչյունական համակարգը համեմատել հին գրական լեզվի (գրաբար) նույնպիսի համակարգի հետ, ավելին բխեցնել վերջինս համակարգից, մենք ոչ մի հնարավորություն չունենք այստեղ մանրամասն անդրադառնալու: Բայց որ գրաբարի (հին գրական լեզվի), օրինակ, բաղաձայնական համակարգի ուղղախոսական և ուղղագրական համամասնություն կամ ներդաշնակության վերաբերյալ մինչև վերջին ժամանակներս դեռևս հայտնվում են որոշակի վերապահություններ դատողություններ, դա նույնպես իրողություն է, և դրան մեր օրերի հայերենագիտության պարզացման պայմաններում, կարծում ենք, անհրաժեշտ է դարձնել որոշակի ուշադրություն¹³:

դ) Մոկսի բարբառը, կարծում ենք, հայերենի այն բարբառներից է, որն ունի պայթական բաղաձայնական համակարգի որոշակի տարբերակվածություն: Կիսաշփական բաղաձայններն ի հայտ են բերում ոչ այնքան ցայտուն հնչարտաբերական տարբերություններ: Այնուհետև, նկատելի է, որ արտասանական որոշակի տարբերակվածություն ունեն նաև ձայնավորները, ինչպես նաև երկբարբառներն ու եռաբարբառները: Ձայնավորներին առավելապես բնորոշ են քմայնացումը և շրթնայնացումը, որոնք հակադրվում են սովորական արտասանություն ունեցողներին (Հմմտ. ա, ան, մ և այլն):

դ) Մոկսի բարբառի հնչյունական համակարգի լիարժեք գրանցման համար ևս, ինչպես ընդունված է հայ բարբառագիտական աշխատությունների մեջ, կիրառվում է մեսրոպյան այբուբենը: Այս դեպքում ևս մեսրոպյան գրերը չէին կարող բավարար լինել արտահայտելու այդ բարբառի հնչյունական ողջ բազան, ուստի Հ.Օրբելին իր կազմած բառարանի սկզբում դնում է հնչյունների տառագրածման մի այնպիսի «այբուբեն», որի մեջ օգտագործված են մեսրոպյան այբուբենի գրանշանները, ինչպես նաև օտարլեզվյալ տարբեր կարգի գրանշաններ: Ընդ որում թե՛ մեկ և թե՛ մյուս կարգի գրանշանները համարված են ինքնօրինակ տարբերիչ (դիափրիտիկ) նշաններով:

Չունենալով հնչյունական լեզվի գրանցման, այսինքն՝ գրային-տառագրածական լեզվի արտահայտման մշակված և հանրաճանաչ նախօրինակ, որը կիրառվելիս լինել հատկապես հայերենի բարբառների համար, Հ.Օրբելին որոշ դեպքերում դիմել է այս կամ այն հնչյունի գրային նշանակման ինքնահնար միջոցի¹⁴: Թերևս այս հանգամանքն է եղել պատճառը, որ այդ բարբառն ուսումնասիրող երիտասարդ գիտնականի աշխատանքը հետագայում հրատարակության պատրաստելու բերումով, ինչպես գիտենք, հարկ է եղել կատարելու որոշակի շտկումներ և ճշգրտումներ հատկապես տառագրածմաների հարցում: Իրանք ժամանակին իրականացրել է բարբառագետ Մ.Մուրադյանը: Ավելացնենք, որ այս դեպքում ևս, նկատի ունենք հատկապես պայթական բաղաձայնների տառագրածումը, ձայնավորների տարբեր կարգի երանգավորումը և այլն, որոնց նշանակումները մնում են ոչ միանշանակ ու վերջնական¹⁵:

Այսպես, օրինակ, Մոկսի բարբառում հետնալեզվային և բաղաձայնը քմային (կ') և պարզ (կ) արտաբերությունից բացի ունի նաև, այսպես կոչված, «դ ձայնի թուլ երանգով» հետնալեզվային տարբերակը, այսինքն պայթական մի հնչյուն, որ Հ.Օրբելու գրանցման մեջ նշանակված է այլ կերպ (կ), իսկ Մ.Մուրադյանի հիշյալ աշխատության մեջ՝ մեկ այլ կերպ (կ); Հմմտ. կնյր/կնյր «1. կեղծ, նմանակված, սխալ», 2. նենգ, խարդախ, և կնյր/կնյր «կեղծ, խարդախ», Հօրծողիկ/Հօրծողիկ «առաքել, ուղարկել» (նաև օրարկիկ/ օրակիկ «նույն լուսատու») և Հօրծողիկ/Հօրծողիկ «ուղարկել» և այլն¹⁶:

Ուստի հակված ենք կարծելու, որ սովյալ դեպքում գործ ունենք ոչ թե (ավանդական Աճառյանի ժամանակակից եկող բնութագրումով) նման որակի հնչյունի, այլ նախակոկորդային արտասանությամբ պայթական բաղաձայնի հետ. նման ենթադրության հիմք են տալիս հայերենի և հնդեվրոպական ուրիշ լեզուների համեմատական և տիպաբանական այն ուսումնասիրությունները, որոնք երևան են եկել հատկապես վերջին երկու-երեք տասնամյակի ընթացքում:

4. Գիտական գործուղման ընթացքում Հ.Օրբելու հիմնական աշխատանքը, մեզ հետաքրքրող խնդրի հետ կապված, եղել է Մոկսի բարբառի բառարանի կազմումը, որը մեր մոտավոր հայտնաբերով պարունակում է շուրջ հազար ութ հարյուր բառ կամ բառային միավոր (հարյուր ձևեր, կայուն կապակցություններ, արտահայտություններ, ոճեր և այլն): Դրանք ներկայացված են ավելի շուտ պարզ բառացանկի ձևով, ընդ որում ոչ միայն տարբերակային ձևերով (եթե դրանք, իրոք, գոյություն են ունեցել բարբառում), այլև առևանքներ թարգմանություն-բացատրությամբ, քերականական և այլ կարգի կարևորագույն նշումներով, նույնիսկ հոմանիշների, բառակապակցությունների մեջ գործածման օրինակները մատնանշումով և համեմատումով:

Ուստի նկատի ունենալով վերը նշված հանգամանքները՝ Հ.Օրբելու կազմված բառարանի նյութը կարելի է բնութագրել բառագիտական-իմաստաբանական հետևյալ առանցքային հատկանիշներով:

ա) Բառարանում գլխաբառերը հանդես են գալիս կամ ինքնին, կամ տարբերակային, ինչպես նաև կապակցական ձևերով: Տարբերակային կամ կապակցական ձևերը սովյալ դեպքում ունեն մեկ բառի արժեք (հանդիսանում են մեկ լեքսիկական միավոր): Օրինակ՝ անխկուց/անխըկուց, անկանկողին/անկանկողին, անղչել/անղչելի/անղչելի, անսպանման անսպանման, անվերսնվուր անիլ, անարև անիլ և այլն:

Նման տարբերակայնությունը պայմանավորված է թե՛ բարբառային մեկ օջախի և թե՛ տարբեր օջախների (քաղաքայնական, գյուղաբնական և այլն) խոսքում ներքին հնչյունական-բառակազմական տարբերությամբ:

բ) Գրանցված բառերը կամ բառային միավորները որոշակի պատկերացում են տալիս բարբառի մեջ բնիկ կամ փոխառյալ շերտերի հնարավոր իրացումների վերաբերյալ: Այսպես, բառացանկում հանդիպում ենք ոչ միայն բնիկ հայերեն (հնդեվրոպական ծագման) բառեր, այլև օտար լեզուներից կատարված փոխառություններ: Նկատենք, որ որոշ դեպքերում բացակայում են բառիմաստային (թեմատիկ) այս կամ այն խմբին պատկանող ամենահիմնական բառերը: Օրինակ մարմնի մասերի անվանումներից չենք հանդիպում այնպիսի

¹³ Հմմտ. М.Майерхофер, Санскрит и языки Древней Европы (два века открытий и диспутов). "Новое в зарубежной лингвистике", вып. XXI, 1988, с. 530.

¹⁴ Տե՛ս Н.А.Орбели, указ. соч., с. 48.

¹⁵ Նշենք, որ վերջին տարիներին ՀՀ ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտի մի խումբ բարբառագետների կողմից փորձ արվեց մշակելու հայերենի բարբառների գիտական տառագրածման մի ընդհանուր համակարգ, որն էլ, ցավոք, մնաց իր վերջնական ավարտին չի սատար:

¹⁶ Տե՛ս Н.А.Орбели, указ. соч., сс. 257, 279: Մ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 131: Ի դեպ՝ Հ.Օրբելու հիշյալ աշխատանքի տպագրության մեջ նկատելի է այս կետում սրբագրական-տպագրական անհետևողականություն:

բառերի, ինչպիսին են երես (սպասելի էր՝ է-ով), մարմին (կա մամրմնանոր), միս (կա մրսէղէն), նյարդ, ջիղ, ուռնգն (ուռնի՝ պինչ), քիմք և այլն:

դ) Գրանցված են նաև Հայոց լեզվի դարգացման տարբեր շրջաններում երևան եկած փոխառյալ բառեր, օրինակ՝ նրսամփ, այլև ինսամփ «սուստածեռն, կամեցող բացսիրտ», նրսամփսրզ «մլատ, կծծի», շնշնք՝ «առաջին ծինն ունեցած կամ չծնած ոչխար, մաքի», փնրգ՝ միս «անասնագոմ», փնրգամ «վարագույր ծածկոց», փինամ «կոշիկի կարկատան», փօլթկուլթիւն (պոլիտիկա բառից), ք՛ամթիրդամ/ք՛ամթխողամ «Հարուստ, ունևոր շինական՝ գյուղացի» և այլն:

դ) Հ.Օրբելու սույն բառարանն ունի որոշակի արժեք ոչ միայն բնագիտության գործածական (մյուս բարբառներում և գրական լեզվում ևս Հանդիպող), այլև միայն սույն բարբառին (թերևս նաև այդ տարածքի մյուս բարբառներին) բնորոշ, յուրահատուկ բառերի գրանցման տեսակետից: Նման բառերի առանձնացումը խիստ պայմանական կարող է լինել, եթե համեմատության մեջ չեն դրվում այլ տարածքների բարբառների տվյալների հետ: Նշանակում է՝ այդ կարգի բառերի առանձնացումը բոլոր դեպքերում ժամանակաորակա հնարավոր է. նման սկզբունքով է առաջնորդվել Մ.Մուրադյանը, երբ իր աշխատանքում թվարկում է «գրարարում չվկայված և արդի գրական արևելահայերենին անծանոթ տարբեր բնագավառների վերաբերող բառեր»¹⁷:

Իբրև ամփոփում ուզում ենք նշել հետևյալը: Հ.Օրբելու աշխատանքը՝ նվիրված Մոկսի բարբառին և բանահյուսությանը, կարևոր ձեռքբերում է Հայերենի պատմության ուսումնասիրության տեսակետից, մանավանդ եթե նման ուսումնասիրության ձեռնամուխ ենք լինում Հայերենին վերաբերող, հատկապես վերջին տարիներին լույս տեսած Հայերենագիտական և հնդեվրոպագրանական հետազոտությունների տվյալները ճանաչելով: Վերջիններս նոր լույս են սփռում Հայոց լեզվի գեղուս վերջնական լուծում չստացած շատ հարցերի ավելի հիմնավոր ու մանրազնին անդրադառնալու վրա: Մոկսի բարբառի գրանցումը որքան վստահելի է ու իրական, նույնքան կարող է իր տվյալները տրամադրել Հայերենի լայն ուսումնասիրության գործին:

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱՂ-ՅԱՆ

«ՆԱՐԵԿԻ» ԳԻՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
(Կ.Պոլիս, 1774)

Ա. «Մատենան ողբերգութեան» 1985 թ. երևանյան հրատարակությունը, աշխատասիրողների իսկ հաշվումներով, 60-րդն է: 2003 թ. լրացած հազարամյակի ավարտին, հրատարակությունների կամ առավել ստույգ վերահրատարակությունների թիվն ավելացել է շուրջ մեկ տասնյակով, և նրանցից մեկը տրիտոսաթերթին կրում է «Հազարամեակի հրատարակություն» պարտավորեցնող վերաստույթունը: Խմբագիր Զարեհ Եպս. Ազնավորյանի «Բացատրականում» «Նարեկի» բնագրի կապակցությամբ ասված է. «Մատենան ողբերգութեանը» հիմնականին մէջ 1986-ին Անթիլիաս, «Գէորդ Մելիտինցի» գրական մրցանակի մատենանշարին մէջ տպուած բնագիրն է, խմբագրութեամբ Արտաւազդ արք. Թրթռեանի, որ իր կարգին բաղդատական բնագիր մըն էր, կազմուած երեք տարբեր հրատարակութիւններէ - Վենետիկեանէն [1840 թ.], Գարեգին Եպս. Տրապիզոնէն [Պուէնոս Այրէս, 1948], եւ Հայկական ՍՍՀ Գիտութիւններու ակադեմիային կողմէ հրատարակուած քննական բնագրէն [1985]»¹:

Եթե մի կողմ թողնենք Գարեգին պատրիարքի գրաբար-աշխարհաբար հանդիպադիր հրատարակությունը, որի նպատակը ոչ այնքան բնագիրը սրբազրելն է, որքան ստույգ ու տաղաչափյալ թարգմանությունն ալը², մյուս երկու տպագրությունները, փաստորին, ամփոփում են «Նարեկի» պահպանված ձեռագրերի բնագրական գրեթե բոլոր ընթերցումները, նարեկագետների (Հ. Նայյան, Գ. Ավետիսյան, Թ. Գուշակյան և այլք) առաջարկած հիմնավոր սրբագրութունները և կարևորագույն տպագրությունների բերած նորությունները: Եվ այնուամենայնիվ, «Հազարամեակի հրատարակութեան» խմբագիրը անհրաժեշտ է համարել ձեռնպահ չմնալ նոր վերանայումներից. «Ներկայ հրատարակութեան մէջ վերստին բաղդատութեամբ յաւելեալ սրբագրութիւններ կատարուած են, եւ կարևոր պակասներ լրացուած, որոնց մէկ առ մէկ յիշատակուածը գանց կ'ընենք»³: Դժվարանում ենք ասել, թե խոսքը ի՞նչ «կարևոր պակասներ» լրացնելու մասին է, մանավանդ որ չի մասնավորեցվում բնագրական ի՞նչ հիմքի վրա են կատարված լրացումները: Հարկավ աշատեղ նույնպես խմբագիրը նկատի է առել թվարկած հիմնական հրատարակություններից որևէ մեկի ընթերցումը կամ բնագիր մուծել «Նարեկի» մեկնաբանների ու թարգմանիչների ծանոթագրություններից քաղված բառային կամ քերականական իրողությունը⁴:

Բ. Անկախ «Նարեկի» վերոհիշյալ հրատարակությունների գիտական, քննական կամ համեմատական որակումներից ու նրանց հիմքում դրված ձեռագրա-

¹ Ա. Գրիգոր Նարեկացի. Մատենան ողբերգութեան եւ այլ երկասիրութիւնք: Հազարամեակի հրատարակութիւն: Տպարան կաթողիկոսութեան Հայոց Սեփ Տաճն Կիլիկիոյ, Անթիլիաս, 2003, էջ 5:

² Այդ հրատարակութեան հանգամանակի գնահատությունը տես Յ. Գ. Սիրունի, Գարեգին Պատրիարք Խաչատուրեան. մենագրութիւն, Ստանպուլ, 2003, էջ 83-131:

³ «Հազարամեակի հրատարակութիւն», էջ 5-6:

⁴ Խմբագիր Հայրը մշում է միջամտություններ ու բարվոքումներ, որոնք, սակայն, բովանդակային առանձնակի բեր չեն կրում:

¹⁷ Հմմտ. Մ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 134 և շար.

կան ընդօրինակութիւնների քանակից, նրանց բնագրական ընթերցումները նկատելիորեն նույնական են: Այս պարագան, կարծում ենք, կարոտ է որոշ բացատրութեան.

1. Նարեկացու սրբացումը, անշուշտ, հետեանք է նրա Մատյանի «աղօթագիրքը» ճանաչելու. «...երբ որ անով կաղօթես, — ամփոփում է Հակոբ Սիրունին, — խրթին չի թուիր ան քեզի, աւելին՝ հաճելի է կարծես քեզ իր խրթնութիւնը. խրթին չի թուիր քեզի, երբ որ հրաշք կաղերսես անկէ. առանց իր խրթնութեան, կարծես պիտի չգոյ հրաշքը»⁵: Բազում գրվագների իմաստի ընդգծված խորհրդավորութիւնը, ստորագրելիների անսովոր կուտակումը, հասկանալիութեան բարդութիւնները, խրթնութիւնները սպասելի էր, որ ընդօրինակութիւնները ընթացքում ծնունդ տային բազում և բազում ազավաղումների, իմաստակիր և նույնիսկ անիմաստ այլընթերցումների, տարբերակներ կամ խմբագրութիւններ առաջ բերելին: Բայց այդ ամենը տեղի չի ունեցել, որովհետև ընդօրինակելիքը Ս. Գրոց պես պաշտամունքի մատյան է եղել, սրբի հորինվածք, միջամտութեան անհնթակա, ուստի հեղինակին բնագրից եղած հեռացումները հիմնականում վրիպյալ ընթերցման (մանավանդ բուռնաբանման կամ անճշտ իմաստավորման) արդյունք են: Այս պարագան մեծապես օժանդակել է բնագրագետներին՝ ճիշտ որոշելու հեղինակային ընթերցումը: Պատահական չէ, որ ձեռագրական տարբեր հիմքեր ունեցող հրատարակութիւնները միմյանցից այդքան քիչ տարբերութիւններ են ներկայացնում⁶:

Սուրբ հեղինակի խոսքի հանդեպ գրիչների երկյուղածութեան աստիճանի վիճակութիւն է և այն, որ Նարեկացու երկում հանդիպող ոճական, քերականական, բառային-իմաստաբանական անկանոնութիւնները սրբագրութեան չեն ենթարկվել (դիլի/դիլիցի, լւււ/լւեցո՞, երբքի, անկաւ ստինք և բազում այլ իրողութիւններ): Այլ հարց է, թե նման տարբերակները բարբառից են գայլի, թե՞ հեղինակային հնարանք են: Չմոտանանք, որ այդպիսիք առկա են նաև հեղինակային հիշատակարանում (ընդունեցաւ թշնամիք, կաւուցի, դիլի): Ի վերջո, ասենք, որ Նարեկացու դարաշրջանում, նրա իսկ ասլում միջավայրում գրչի մարդիկ բարբառային տարբերակից կամ արտասանութիւնից այնքան էին խուսափում, որ պատրաստ էին ծայրահեղութեան դնալ և Աղթամարի վանքի պատին Ստեփանոս Նախավկայի քանդակի կողքին փորագրել «ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱՀԱՎԿԱ» կամ «Շատարի»-ի փոխարեն «Շատահ» գրել մի հիշատակարանում⁷:

2. Տարբերութիւնների սակավութեան կարևոր պատճառներից մեկն էլ «Նարեկի» վաղ ընդօրինակութիւններից մի քանիսի պահպանվածութիւնն ու տպագրիչներից շատերի հիմքում ընկած լինելն է: Արդեն Ներսես Լամբրոնացու պատվերով 1173 թ. ոչ ուշ գրված, գրչի ու ստացողի սրբագրութիւններ բովանդակող գրչագրի առկայութիւնը (Մատ. №1568) հրատարակչներին ու աշխատասիրողներին ազատում է հետագա ընդօրինակութիւնների մեջ թարթափելու բազում

հոգսերից: Բնականաբար երևանյան (1985 թ.) հրատարակութեան հիմքում այն պետք է դրվեր, ինչը և կատարված է⁸: Աշխատասիրողները պահանջվելիք հիմնութեամբ ու պարզութեամբ որոշել են համեմատութեան առնվող 61 ձեռագրերի խմբային պատկանելութիւնն ու միմյանց հարաբերակցութիւնը: Ինչ վերաբերում է 1985-ին նախորդած և գրիթե համեմատված գրչագրերի թվին հավասար տպագրիչների բնագրական գնահատութեանը, սպա բացատրութիւնը հետևյալն է. «Ելնելով այն հանգամանքից, որ ներկա բնագիրը պատրաստված է չափազանց մեծ թիվ կազմող ձեռագրերի (61) հիման վրա, և որ բուն գրչագրից անմիջականորեն ծագող տպագրիչները հիմնականում ոչ թե բնագրային նոր տարբերութիւններ են ի հայտ բերում, այլ գլխավորապես, տպագրական վրիպակներ, նաև այնպիսի տարբերակներ, որոնք Նարեկացու բնագիրը ճշգրտելու իմաստով էական արժեք չեն կարող ներկայացնել, — ձեռագրերում բացակայող այդ հազվագյուտ տարբերութիւնները վկայակոչվում են ծանոթագրութիւնների բաժնում»⁹:

Գ. Այսպիսի բնդհանրացած գնահատականը «Նարեկի» տպագրերի պարագայում բավականաչափ հիմնավոր չէ, որովհետև նրանցից մի քանի կարևորների հիմքում ընկած ձեռագիր բնագրերն այսօր հայտնի չեն կամ իրապես կորած են: Նրանց ունեցած տարբերութիւնները «տպագրական վրիպակներ» որակելը հարցի լուծման պարզունակ, հետևաբար և ոչ ընդունելի ճանապարհ է: Այդ իմաստով առանձնահատուկ ուշադրութեան է արժանի հայագետ տիկին Շուշանիկ Նազարյանի «Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի ինքնագրի հարցի մասին» փաստալից հոդվածը¹⁰, որ լույս տեսավ Մատյանի երևանյան հրատարակութիւնից երկու տարի հետո և, դժբախտաբար, ուշադրութեան չառնվեց աշխատասիրողների միևնադրական ուսումնասիրութիւններում և հազարամյակի առթիվ լույս տեսնող այդոց հրատարակութիւններում: Ընչու է, տպագրիչների ներկայացման բաժնում աշխատասիրողներն արձանագրում են, որ Կ. Պոլսի 1774 թ. հրատարակութիւնը «նոր մակարդակ նշանավորեց Նարեկացու երկի հին հրատարակութիւնների պատմութեան մեջ: Մատյանի հետագա տպագրութիւնները համար դարձավ տիպար — օրինակ մինչև Վենետիկի 1840 թ. հրատարակութեան երևան գալը»: Դարձյալ իրենց իսկ ամփոփմամբ՝ «1774 թ. հրատարակութիւնը բնագրագրական նվաճում էր, թերևս ամենակատարյալը հայ մատենագրութեան հուշարձանների հին տպագրիչների մեջ»¹¹, սակայն այդ գնահատականը հիմնավորվում է հրատարակութեան «բազմաթիվ բանասերների տքնանք» լինելու, «չուրք երեսուն ձեռագրի և նախկին տպագրիչների համեմատութեամբ» պատրաստված լինելու, «Բան»-երը պարբերութիւն — հատվածների բաժանած ունենալու հանգամանքով:

Տիկին Շ. Նազարյանին այս գնահատութիւնը չի դժնայրել, որովհետև պատշաճ ուշադրութեան չի առնվել 1774 թ. հրատարակութեան առաջարկում եղած տեղեկութիւնը, թե «ի քաղաքաց-քաղաքաց Հայաստանեայց և ի բուն իսկ ի Սոկոց գաւառէ՛ մեծայան փութով դտեալ օրինակս բնաիրս՝ հնագորոնս՝ անձեռամերձս, յորոց գերկուցն՝ սրբոյս իսկ պնդէին լինիլ ձեռաց զիր, յորս էր որ զմատեանս, և էր որ գտարբերութեանց նոցա զգանազանութիւնս աւձեռն բերեալ, մինչև թիւ օրինակացն հնոց և նորոց ժամանել ի համար երբեակ տասանց, և խրափուսեաց զմեզ աշխատակցիլ»¹²: Ասել է թե՛ հրատարակութեան հիմքում

⁵ Յ. Ե. Ս ի ը ու Ե ի. Աշխ. Եջ: 90:

⁶ Պաշտամունքային գրքեր ընդօրինակող միջնադարյան գրիչները, անշուշտ, հիշում էին Գովհաննու Չայտնուրյան անձնը. «Թէ որ յաւելցէ ի սա՛ յաւելցէ Աստուած ի վերայ նորա զեւթն հարուածսն գրեանս ի գիրս յայս: Եւ թէ որ պակասեցուցէ ի բանից մարգարէութեան գրոցս այսմիկ՝ պակասեցուցէ և հատցէ Աստուած գրածին նորա ի ծառոյն կենցազ և ի քաղաքես սրբոց, որ գրեալ է ի գիրս յայս» (Յայտն. ԻԲ, 18-19):

⁷ Դմմտ. Documenti di architettura Armenia. Aghdamar, Milano, 1974, doc. fotogr. 21/ 22, Գ. Յ ո վ ս ե փ ե ա մ, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիսսա, 1951, էջ 182: Ս. Ք ո լ և մ - ջ ե ա մ, Նորահայտ պատարիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի գրչագրից, - «Բանբեր Մատենադարանի», 1960, -5, էջ 227: Դմմտ. Ս. Ա. Ա վ ա գ յ ա մ, Վիմսկան արժանագրութիւնների հնչյունափոխություն, Երևան, 1973, «Ժամանակագրական տախտակ» (Խ-ի տեղում 3):

⁸ Գ ը ի գ ո ը Ն ա թ ե կ ա ց ի, Մատեան ողբերգութեան: Աշխատասիրութեամբ Պ. Ա. խաչատրյանի և Ա. Ա. Ղազարյանի, Երևան, 1985, էջ 24-26, 240:

⁹ Նույն տեղում, էջ 224-225 (ընդգծումը մերն է - Պ. Ա.):

¹⁰ ՊԲԳ, 1987, N 4, էջ 104-112:

¹¹ Գ ը ի գ ո ը Ն ա թ ե կ ա ց ի, էջ 205:

¹² «Գիրք աղօթից», Գրիգորի Նարեկացույ՝ հոգելիքի հռետորիկ, Կ. Պոլիս, 1774, էջ 11-12:

գրված են «անձեռամերձ» (անաղարտ պահպանված, ձեռք չափած) ձեռագրեր, որոնցից երկուսը Նարեկացու ինքնագրեր են ճանաչվել («պնդէին լինիլ»): Ընդ որում առաջարկում է հատկապես ասել, թե «Յուզղագրութիւն մատենին ոչինչ ի մէնջ և ոչինչ ըստ հաճոյից կամայ մերոց սրբադրեցաք... առանց համեմատելոյ զնոսա ընդ հաւատարիմ օրինակաց»¹³:

Դ. Առաջաբանի տեղեկությունները քննարկելիս Ծ. Նազարյանը գտել և բերել է լրացուցիչ վկայություններ: Դրանցից մեկը «Թուղթ ի Յակոբայ առ երջանիկ տէրդ իմ և Հայր Կարապետ մաքրագան վարդապետ» խորագիր ունեցող դրատում է, թե ինչպես է ինքը՝ Հակոբ վարդապետը, Կոտուցի վանահայր Կարապետ վարդապետի հորդորով Մոկա հասել արթուն հսկողի «ճգնակ մատենին ինքնագրիմ տառին», այսինքն՝ Գրիգորի ճգնության գրոց ինքնագիր օրինակ գտնելու և «զհաւաստին կշռել զհանդամանս»՝ ձեռագրի հեղինակային լինելու հանգամանքները քննելու համար: Հրաշագործության գործությամբ («Նարեկի» դեպքում ինքնին հասկանալի է) հավաստիանալով («ասալ որոյ և մերս հաւատ ընկալեալ»), ջանասիրտությամբ Հակոբ վարդապետը ձեռնամուխ է եղել ունեցած տեքստի համեմատությանը գաղափար օրինակի հետ և ըստ այնմ սրբագրելուն («ձեռնարկի ջանիս զըսպակի հանգոյն գաղափարին դտեալ սրբեցի»): Ձեռնպահ է մնացել «մտահաճ աճեցումից» և մանավանդ «լուսատու բանին» վիճեցնելուց (իմա՝ բանաստեղծությունը խաթարելուց), բայց և զգուշ է եղել՝ «զի մի՛ գառ իւրէք զանց լիցի», գաղափար օրինակի համեմատությանը ավելորդ դիտված ընթերցումները կետերով շրջագծի մեջ է առել, իսկ պակասող ընթերցումները լուսանցում «ծիրաճիք նշանաւ արձան կառուցի»:

Ինչպես տեսնում ենք, Հակոբ վարդապետը հետևել է տեքստաբանական կայուն և հետևողական սկզբունքների, ուստի նրա հայտնաբերած «ինքնագրիմ տառի» խախտումները կասկածի ենթարկելու առիթ չունենք: Այս հաղորդման հավաստիությունը վստահելի դարձնելու համար Ծ. Նազարյանը բերել է նաև Հակոբի «Թուղթն» ընդօրինակող և 1774 թ. հրատարակության մասնակից, Իսկուստարի Ս. Խաչ եկեղեցու սարկապազ, պատվի վարժապետ Մարտիրոսի հիշատակագրությունը, ուր մեկնաբանվում են Հակոբ վարդապետի հաղորդումները՝ մանրամասնելով այդպիսիք. սնխաթար գրչագիր պրպտում նախաձեռնողը Գասպար ամիրա Մուրադյանցն է, որը նամակ է գրում Կոտուց անապատի Կարապետ վարդապետին «զի առաքեսցէ զոմն հանճարեղ յերկիրն Մոկաց առ ի գտանել զձեռագիրն երանելոյն Գրիգորի Նարեկացոյն, և անտի սրբագրելու զՆարեկն սուրբ յղիցէ մեզ»¹⁴: Այդ ամենը՝ Գասպար ամիրայի դիմումը Կարապետ վարդապետին, Հակոբ վարդապետի մեկնումը Նարեկավանք, ձեռագրի գյուտն ու համեմատությունն առկա տեքստի հետ, Հակոբի «Թղթի» շարագրումը և այդ «Թղթի» ու սրբագրյալ Նարեկի ուղարկումն ամիրային տեղի է ունեցել «ի ՌՄԺԸ (1769) թուին մերոյ»: Ուրեմն՝ Նարեկի 1774 թ. հրատարակությունը գյուտն է բերվել չուրջ հինգ-վեց տարվա «ոչ միոյ ուրուք կամ երկուց ոմանց» համբերատար ու վերահասու աշխատանքով: Ի դեպ, գործի ընթացքին տեղյակ է եղել Հ. Նայյանի երեկելի աշակերտներից մեկը՝ Սարգիս եպիսկոպոս Սարաֆյանը (1699-1773), որը տեսնելով «գնոյն գիր... իսկոյն հիացմամբ ասաց. Ո՛ր երկիր Հայոց, գեուևս գտանի՞՝ արդեօք ի քեզ այսպիսի շարագրութիւն աւնող»¹⁵:

Ե. «Նարեկի» հեղինակային ինքնագրի գոյությունը փաստող վկայություններ կան նաև Լիմ անապատի վանահայր Հովհ. վարդապետ Հյուսիսյանի կազմած անտիպ ձեռագրացուցակում¹⁶: Այս ամենի թեկադրանքով է, որ ուշ միջնադարի և նոր ժամանակների հայ գրականության հարցերին լավատեղյակ գոկտոր Շ. Նազարյանը անբավական է «Նարեկի» 1985 թ. հրատարակությունից և համոզված է, թե «Ճարակուսանքից վեր է, որ «Մատենան ողբերգութեան» գիտական հաջորդ հրատարակության հիմքում կղբի նաև 1774 թ. հրատարակության ընագիրը: Դա կլինի «...ևրախտագիտության տուրք այն գործիչների հիշատակին, որոնք «անսպառ ջանիւք» և «հրաշիւք» հայ սերունդներին են հանձնել այս անմեռ կոթողը»¹⁷:

Զ. Նման եզրակացությունը հիմնավոր առարկությունների տեղ չի տալիս, բայց և պիտի խոստովանել, որ այն կատարված է բացառապես արտաքին և կողմնակի հաղորդումների ու վկայությունների հիման վրա: Ի՞նչ պատկեր է պարզում Մատյանի 1774 թ. և նորագույն գիտական հրատարակությունների ընդդրերի համադրական ուսումնասիրությունը: Ստորև կվկայակոչենք այն արդյունքները, որոնք ստացել ենք իրարից հավասարապես հեռու «Նարեկի» չորս «գրութիւնների» կամ Բան-երի (Ա, Լ, Կ, Ղ) քննությունից: Ըստ երևանյան հրատարակությունից ստացվող տողատարածությունների հաջորդող ընթերցումը ներկայացնում է այդ իսկ հրատարակության բնագիրը: Նրանից սուղանկյուն վակագծով բաժանված միավորը Կ. Պոլսի 1774 թ. հրատարակության տարբերակումն է նախորդի համեմատությամբ, իսկ «Հազարամեակի հրատարակութիւն» կոչվածը նախորդ երկուսին հարաբերելու արդյունքը արտացոլված է ընթերցման նույնականությունն արտահայտող շղագրումով:

Ա Ա 1 ողբոց սրտից] սրտի ողբոց
 9 յաւղուածս բանից] բանիցս յօղուած՝
 Բ 36 ժամանելն] ժամանել
 38 Աւրինակ առեալ] առօրինակեալ
 45 Կերպարենն] կերպարանեն
 51 Հարուածսն] հարուածս
 Կըսմայեցւոց] եղովմայեցւոց
 59 գծագրենն] գծագրել
 60 Ամէն]

Լ Բ 20 ոչ համարձակի] ոչ երբէք համարձակի
 գաւրքայութիւնն] գարքայութիւն
 Գ
 Դ 73 գարեաց] գարեացն
 86 եւ եթէ] եթէ
 Ե 99 գերելոյս] գերելոյս
 Կ Ա 31 ըստ գործս նոցա] գործս նոցա
 Բ 43 ի պատնիչէ] ի պատն(ը)չէ
 53 գհետս Կենացն] գհետս Կենաց
 Գ 84 Ուղղոց վայել է] Ուղղոց վայելէ

¹³ Նույն տեղում, էջ 11:
¹⁴ Երևանի Ս. Սաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ ՄՍ), ձեռ. N 5037, էջ 162:
¹⁵ Նույն տեղում, էջ 162: Այս տեղեկությունն առկա է նաև Ղալաթիոյ Ազգային մատենադարանի N 191 ձեռագրում (տես Բ ա բ գ է ն Ա թ ո ռ ա կ ի ղ և Ա թ ո ռ ի ղ կ ո ս, Յուզակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային մատենադարանի Դայոց, Անթալիս, 1961, սյուն. 1088): Սարգիս եպ. Սարաֆյանի կյանքի ու գործունեության մասին տես Գ.

Բ ա մ պ ու ը ճ ե ա ն, Յովհաննես Պատրիարք Կոլոտ (1678-1741) և իր աշակերտները, Ստանպուլ, 1989, էջ 185-200:
¹⁶ Տես Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, N 92, էջ 10-11: Գմմտ. Ձուցակ ձեռագրաց Մաշտոցի անվ. Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, էջ 98: Գմմտ. Շ. Ն ա գ ա ղ ա ղ ա ն, Ազվ. աշխ., էջ 110:
¹⁷ Շ. Ն ա գ ա ղ ա ղ ա ն, Ազվ. աշխ., էջ 112:

- 95 ի յարհնակալ] ի յորհնակալն
- Դ 109 Յաւասականացն] Յաւանականացն // Յաւանականացն
- 110 Քոմոլսայ] Քամոլսայ
- 111 կանացեացն] կանացեաց
- Ե 134 Եւ ի նեղել նոցա] թէ ես ի նեղել նոցա
- 145 զզարավարութիւն] զօրավարութիւնն
- Մովսեսի*] Մովսէսի
- 152 զմիարանեալ] զմիարանեալ
- Զ 173 զիպուած] զիպուածն
- 176 Անիծեալ] անիծանել
- 183 յիշատակ] յիշատակաց
- 189 Հոգովդ] Հոգւովդ
- Ղ Ա 6 անքնին] անքննին
- Բ 43 որ] յոր
- Գ 59 սատակչաց] սատակչացն
- 60 Հնարաւորութեամբ] Հնարաւորութեան
- Ի 73 խաղրիցն] Հաղրիցն
- 99 և թէ] և եթէ
- Ե 118 անթարգմանելոյդ] անթարգմանելոյդ
- 126 լիցի] եղիցի

542 Համարակալ բանաստեղծական տող կազմող այդ չորս Բան-երբ, Հիշյալ երեք Հրատարակութիւններ շրջանակում, ունեն 38 տարբերակներ, որոնցից 10 որոշյալ - անորոշ առմանն է վերաբերում (ժամանեյն/ժամանել, Հարուածսն/Հարուածս, զարքայութիւնն/զարքայութիւն, չարեաց/չարեացն և այլն)¹⁸: Տարբերութիւններն այսպիսիս ապագրութիւն է (Եղոմայեցոց/Եղովմայեցոց, Յաւասականացն/Յաւանականացն, Քոմոլսայ/Քամոլսայ, Մովսեսի/Մովսէսի, Հոգովդ/Հոգւովդ և այլն): Բառերի ետևառաջութեան երկու օրինակ կա (ոդրոց սրտից/սրտի ոդրոց, յաւուածս բանից/բանիցս յօդուած): Ունենք ոճական - քերականական այլազարութեան 9 դեպք, երբ առանց բովանդակութեանը վնասելու կարելի է ընտրել մեկը կամ մյուսը (աւրինակ առեալ/առօրինակեալ, կերպաւորեն/կերպարանեն, զծագրեն/զծագրել, ի պատնիշէ/ի պատն(ը)շէ, անիծեալ/անիծանել, յիշատակ/յիշատակաց, անքնին/անքննին, լիցի/եղիցի և այլն): Եւ-ի առկայութեան կամ բացակայութեան, թէ/եթէ-ի ընտրութեան, ըստ/զ նախդարմոխութեան, կամ եւ/թէ փոխաբանման 5 օրինակ ունենք, որոնք, Հասկանալի է, հական բան չեն փոխում: Եթե այս ամենին գումարենք նաև Ս. Գրքից եղած քաղումներն մեջ պատահող այլազարութիւնները, ապա կունենանք ընդամենը մեկ-երկու դեպք, երբ մտածելու է, թե նախընտրութիւնը իմաստավորման որ տարբերակին տալ:

Բան Դ-ի 42-43-րդ տողերում 1985 թ. Հրատարակութիւնն ունի

Երանութիւն անձկալի,

Որ զկենդանութիւն շնչոյս լքանելն է ախորժելի:

Դատելով տարբերակներում բերված օրինակներից (էջ 931, տ. 43) 1985 թ. Հրատարակութեան աշխատասիրողները մեր ընդգծած որ-ի դիմաց ունեցել են միայն մեկ սրբագրված ընթերցում (e որ սրբվ. որ քան), մինչդեռ Պոլսի 1774 թ.

* Մովսեսը, հարկավ, տպագրական վրիպակ է:

¹⁸ Բաժանարար գծից առաջ եղածը 1985 թ. հրատ. ընթերցումն է, հաջորդողը 1774 թ.

Հրատարակութիւնը տալիս է յոր, ինչը այլ մեկնաբանութիւն է թելադրում. շնչի կենդանութիւնը լքելն ախորժելի է անձկալի երանութեան մեջ և ոչ նրա առկայութեան պարագայում, ինչպես մակաբերվում է որ-ի դեպքում: Ի դեպ, «Հաղարամեակի Հրատարակութիւնը» հետևում է Հակոբ վարդապետի ընտրութեանը:

Ուշադրավ է նույն Բանի Գ 60 տողի պարագան.

Եւ զյարուցեալ գումարս սատակչաց,
Եթէ սպառագէնք այսական դժնեայ Հնարաւորութեամբ
Բուռն մարտակցաց պատկանեալ զինուք,

Մերժեցե՛ս, Հանցե՛ս, Հատցե՛ս, խափանեցե՛ս...

Եթե «Հնարաւորութեամբ»-ը դիտենք իբրև դժնեայ-ի ստորագելի, ապա նախընտրելի է «Հնարաւորութեանը» («դժնեայ Հնարաւորութեան»), իսկ եթե Հարաբերենք Հաջորդ տողի «զինուք» գործիականին՝ ընդունելին 1985 թ. ընթերցումն է՝ «Հնարաւորութեամբ», որպիսին եղել է նաև Ն. Լամբրոնացու ձեռագրում: Այս դեպքում էլ, սակայն, «Հաղարամեակի Հրատարակութիւնը» հետևում է 1774 թ. ընտրութեանը:

Գերազանցապես թվաբանական այս արծարծումն ավարտելու համար ասենք, թե արձանագրված 38 ընթերցումներից 26-ի դեպքում «Հաղարամեակի Հրատարակութեան» խմբագրողը հետևել է 1774-ի ընթերցումներին, 10 ընթերցում նույնական են երևանյան Հրատարակութեան հետ: Մեկ դեպքում Հարատում է երկուսի ընթերցումը (Յաւասականացն/Յաւանականացն = Յաւանականացն), մեկ դեպքում էլ 1985-ի պես Հավելում է «Ամէն»:

Է. Այժմ, կարծում ենք, տեղին է հարց տալ, թե ի՞նչ պարագաներ կարող էին 1774 թ. Հրատարակութիւնն օժտել նրանից երկու հարյուր տարի հետո աղաղեմիական միջավայրում և կրկնակի քանակությամբ ձեռագրերի համադրությամբ կազմված ու նարեկագիտութեան կուտակած սրբագրութիւններն ու ընտրութեան փորձն ամփոփող բնագիրը Հավասարակշռելու և երբեմն նույնիսկ նախընտրելի ընթերցումներ առաջարկելու կարողութեամբ: Որքան էլ բացառիկ նկատենք Հրատարակութիւնը նախաձեռնող Գասպար ամիրա Մուրադյանցի, բնագրագիտական Համադրութիւնը կատարած և նախընտրելի ընթերցումները նշանակած Հակոբ վարդապետի և աշխատակցող մյուս անձանց (այսօր կասեինք խմբագրական Հանձնաժողովի) տեական աշխատանքն ու Հատուցութիւնը, միևնույն է պիտի Հիշենք նրանց զուշացումը, թե «Յուզողագրութեան մատենիս՝ ոչ ինչ ի մէնջ, և ոչ ինչ ըստ Հաճոյից կամաց մերոց սրբագրեցաք» և որ ամեն ինչ արել են Համեմատելով «ընդ Հաւատարիմ օրինակաց»: Ուրեմն՝ Հիրավի 1774 թ. «Նարեկի» Հրատարակիչները ձեռքի տակ ունեցել են Հեղինակային բնագրին Հավատարիմ օրինակ և որ ոչ պատահականորեն են Մոկսից բերած զբնագրերը որակում «ընտիր», «Հնագոյն», «անձեռամերձ», «սրբոյս իսկ պնդէին լինիլ ձեռաց գիր»:

Ձեռագրերը, ինչպես երևում է, մանրամասնութիւններ բովանդակող Հիշատակարան չեն ունեցել, բայց որ դրանք, իրօք, Լամբրոնացու օրինակին ժամանակակից կամ գուցե նրան կանխող միավորներ են եղել՝ կարելի է հավաստիանալ վերևում կատարված բնագրագիտական քննութեամբ: Ընդամին՝ Հիշյալ չորս Բան-երի (Ա, Լ, Կ, Ղ) շրջանակում բնագրի կրած փոփոխութեան աստիճանն ակնհեր քարձնելու համար բերենք նրանց համադրական տախտակից կատարած մեր դատումը:

Համեմատովող Բան-երի տարրն թերցումները
ըստ «յայլոց ձեռագիրը կամ տպագիր օրինակաց»

Մեք հղաք բոս ձեռագրաց	Իսկ այլք եղեալ էին
Բան Ա, « 1 Հեծութեան սրտի՝ ողբոց աղաղակի՝ քեզ « 2 դիպուածոցն « 2 առօրինակեալ « 2 նորին վերակցումն անդ	Հեծութեան ողբոց սրտից աղաղակի թեզ դիպուածոցն օրինակ առեալ նորին վերացումն: Անդ
Բան Լ « 1 Հասողին փաղջօղ « 2 տաչտք կրեցեալք	Հասողին փախջօղ տաչտք երկու կրեցեալք
Բան Կ « 1 ծանակեցից « 2 ջնեալ « 2 ասուն կենդանեաց « 3 բազմակիս « 4 յունականացն	ծածկեցից ջնջեալ անասուն կենդանեաց բազմակիս յունականացն կամ յունականացն կամ յունականացն
Բան Ղ « կրթարան կամաց	կրթարան մտաց

Ը. Մեր այս կարծառոտ քննութիւնը վերջացնելու համար, նկատենք, որ «Նարեկի» 1774 թ. հրատարակութեան հեղինակային բնագրին հաջորդում է Նարեկացու հանրահայտ Հիշատակարանը (էջ 344-345), ապա և՛ «Յիշատակ վարուց հոգեկիր Հոսեոտրի սրբոյն Գրիգորի» վաղբը¹⁹: Բառագիտական և բառարանագիտական ինքնուրույն արժեք են ներկայացնում Հիշյալ բնագրերին հաջորդող «Նշանակութիւնք խրթին բառից ինչ մտենիս» (էջ 347-386) և «Ցուցակ գլխավոր տարբերութեանց ինչ մերումս յայլոց ձեռագիր կամ տպագիր օրինակաց» (էջ 387-394) բառարան ցանկերը:

Իր Հիմքում գրված և այսօր հայագիտութեան անհայտ անխաթար ձեռագրերի առկայութիւնը, բնագիրը կազմելիս ցուցարբրած անվերապահ հմտութիւնը և մեր իսկ օրերում քննութիւն բունող սկզբունքների օրգեզումը թույլ են տալիս Կ. Պոլսի 1774 թ. հրատարակութիւնը նկատել աննախադեպ իրողութիւն հայագիր բնագրերի հրատարակութեան մեջ և նրա հանդեպ արված վերապահումները անզրոյշ և չարդարացված:

Ցավոք, «Հայոց նոր վկաները» կազմող մեր Հեղինակութիւններն անձանոթ են մնացել Հակոբ վարդապետի կատարած գործին ու Տիգրանակերտում (իմա Ամիրտում) հանուն հավատքի նրա նահատակութեան պատմութեանը:

«Նարեկի» գիտական անդրանիկ հրատարակութեան (1774թ.) ծանոթագրված վերահրատարակութիւնը աշխատասիրողների հանդեպ նոր սերնդի պարտքը

¹⁹ «Վարքի» և նրանում եղած վրիպումների մասին տես Արշալույս Ղազի-ն Ե և Ա. Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, Անթիլիաս, 1995, էջ 16-17: «Վարքի» ներկայությունը ամենևին չի նշանակում, թե 1774 թ. հրատարակութեան հիմք ձեռագիրը Լամբրոնացու ժամանակներից հին չի եղել: Այն չի նույննում «Վարքի» Ա և Բ խմբագրությունների հետ (նրանց բնագրերը տես 1985թ. հրատարակութեան 169-174 էջերում): Հայաստանի տարբերակվող խմբագրություններ տես Գրիգոր Մարգվանցու տպարանում տպված (1179/1730) Յայսմաուրքի 394-395 էջերը, նաև՝ Le Synaxaire arménien de Ter Israel. Public et traduit de Dr. Bayan, VII, Mois de Mehek, Paris, 1927, pp. 100-102.

կատարելուց բացի՝ մեծապես կնպաստի մերօրյա նարեկագիտութեան առաջընթացին: «Մանր ու զփուարին գործ է Նարեկի ուսումնասիրութիւնը, որ կրնայ ամբողջ կեանքեր գրաւել:— խոստովանել է մեր հմուտ նարեկագետներից Թորգոմ արքեպ. Գուշակյանը,— անոր անթերի հասկացութիւնը կը կարօտի մեծ տքնութեանց, ու կը մնայ դարձեալ ընդունակ միշտ վերատուգումի և սրբագրութեանց»²⁰:

Հավելված 1

ԲԱՆ ԱՌ ԲԱՐԵՄԻՏ ԸՆԹԵՐՑՕՂ ՄԱՏԵՆԻՍ

Ի բազում ամաց՝ բազում ստէպ ակնարկութեանց ի գեղեցիկ ստեղծուածս մտացն յաստուածային գրուածս ճառից սրբոյ Հօրս մերոյ Հոգեկիր Հոսեոտրի Գրիգորի Նարեկացոյ՝ բազում յոյժ մխիթարութիւնս ընկալեալ և յաւէտ վայելեալ ի խրատոյս բանից նորս, փոյթ յանձին կալաք և զերախտիս իմն, անշուշտ՝ աննախանձ՝ անստերիւր երախտեաց նորս հատուցանել, բազմալոյճ՝ աշխատալոյ՝ մանրակրկիտ ուղղադրութեամբ ածեալ ի լոյս տպագրութեան գլուսաւորս նորին մատենան. յայն իսկ և յաջողուած տպագրութեան ստրին ո՛չ եղև ըստ օրինակի հասարակ օրինակաց՝ ցայժմ տպագրելոց: Ապա հարկ է մեզ առ նախածանօթ զընթերցասէրսդ առնելոյ նախերգութեամբ յառաջարանել աստէն սակաւութիւնը:

Նախ՝ թէ յի՞նչ պատճառաց յորդորեցաք յաշխատասիրութիւնս յայս ուղղագրութեան մատենիս. և երկրորդ թէ՛ որպիսի ինչ հանգամանօք աշխատասիրեցաք ի սմա. որպէս զի մի՞ ճգանք տարփանց սպասաւորութեանս մերոյ՝ Հարազատութեան բանից սրբոյս, յանդգնութեան կարծեօք ստգտանք համարեսցի՞ որոց նախքան զմեզ ձեռնամուխ եղեն ի սոյն. և կամ բամբասանօք անգիտութեան, իբրև անօգուտ ինչ նորաձեւութեան ինքնադիւտ աղճատանս՝ եպիքեսցի ի բանասիրաց:

ա. Արդ յուղղագրութիւն մատենիս յորդորեցաք հայեցեալ ի բազում այլայլութիւնս բառից և բանից, և վրիպանաց սպրդելոց մինչև ցարդ ի զբնաց և ի տպագրութեանց: Յորս էր որ կամայ ինքնակամ յանհմուտ իմաստակաց մուծաւ, որք ըստ քերթողահօրն Մովսէսի նախադրութեան, նախքան գտեսութիւն աստուածարանելով՝ սրբազրիչ սրբոց եղեն, և սխալ գանհասն մտաց իսկութեան իւրեանց համարեցան. և էր որ յանգլուշութենէ և յակամայ յանցանց զբնաց և տպագրաց սպրդեալ: Ապա յայսմ ամենայնէ ժամանակաց ի ժամանակս ձեռս ի ձեռաց անցանելով այնչափ այլայլութեամբ աղաւաղեալ էին բանք մատենիս օր ըստ օրէ, մինչև բազում ուրեք ամենևին օտարանալ նոցա ի Հարազատութենէ մտաց և գրութեան սրբոյս:

1. Եւ քեզ պապացոյց նախ առաջին՝ յառաջին մակագրութենէ վերտառութեան մատենիս, ուր բազում տպագիր ևս և ձեռագիր ինչ օրինակք եղեալ էին այսպէս Դրունք յոգնաթախանձ: Եւ ուրեք Դրութիւնք յոգնաթախանձ. որ ըստ հին և ըստ բուն ձեռագիր օրինակաց պարտի լինիլ Դրութիւնք յոգնաթախանձ. որպէս եղաք ի սմա: Եւ հաւաստէ զսոյն և խորագիր յիշատակարանի մատենիս, որ այսպիսի է ըստ ամենայն օրինակաց Յիշատակարան մատենիս գրութեան, և ի նոյն յիշատակարանին ասէ այսպէս զբազմաստեղծեան գրուածս գրութեան այսմ սոփերի: Եւ դարձեալ ի նոյն վերտառութեան այնպիսի օրինակք ինչ եղեալ էին այսպէս Գրիգորի Նարեկայ վանաց վանականի, Հոգեմատեան Հոսեոտրի, և Հայոց փիլիսոփայի, որ է անդէպ. քանզի ղէմք բանիցս են ի բերանոյ սրբոյս զոր, ըստ

²⁰ «Նարեկ, աղօթամատեան Ա. Գրիգոր Նարեկացոյ», արդի հայերենի վերածնց թորոս նախկուպոս, Գահիրէ, 1926, էջ 20:

խրատու իմաստնոյն, գովէին ընկերքն՝ և ո՛չ իւր բերանն. վասն որոյ ըստ Հին և ըստ բուն օրինակաց եղեալ էր միայն Գրիգորի Նարեկայ վանից վանականի. ըստ որոց և մեք եղաք այնպէս: Եւ ահա՛ ունիս իմաստասիրել, գի եթէ՛ յարտաքին գաւթին յատաջին իսկ մուտս մակարդութեան սեմոց մատենիս՝ այնչափ ինչ տեսեր այլայլութիւնս, իսկ ի ներքին մուտս տանցն յորովութեան բանիցն որչա՛փ ևս առաւելապէս տեսանել ունիս այլ ընդ այլոյ փոխանակութիւնս, խանգարմունս, վրիպանս սխալանաց բառից և բանից, և բաժանման նոցա, որով բազում ուրեք միաւորեալ էին զտարանջատս, իսկ զմիաւորեալսն տրոհեալ կետադրութեամբ և գլխագրով. յորոց զոմանս նշանակեսցուք՝ սկսեալ յառաջնոցն:

2. Ի բանն Բ. ի Համարն 2. ուր գրեթէ ամենայն բուն Հնագոյն և ընտիր օրինակք եղեալ էին բանական մաղթողիս, որպէս տեսանես և ի մերումս. այլ ի տպագիրս եղեալ էր բանից մաղթողիս. և ահա՛ որչափ զանազանութիւն է գործոյն ի պատճառէն, նովին չափով այլատարազ է ի սմա բանս տպագիր օրինակաց՝ ի բանից սրբոյս:

3. Նոյնպէս և Գ.՝ գրեթէ ըստ ամենայն ընտիր ձեռագիր օրինակաց եղեալ կայր ի կարգս աստուածային առատութեանց այսպէս. օտար մթութեանց սէր. որ այսինքն է՝ օտար ի մթութեանց: Քանզի սէրն՝ որ ըստ իմաստասիրաց է ներգործութիւն կոյր կարողութեան, բազում անգամ խաւարեցուցանէ ի մեզ զաչս ճանաչման մերոյ, վասն որոյ և սուրբս աստանօր սէր անուանէ զաստուած վերաբերելով, թէ օտար և Հեռի է ի մթութեանց. զսոյն և այլուրեմն ի ՀԶ՝ նշանակէ յասելն ո՛չ մթանս ի սիրոյ: Որպէս և սիրոյն աշակերտ, որ սէր անուանեց զԱստուած. Յովհ 4.8, վկայեաց անդրէն, թէ խաւար ի նմա չիք և ոչ մի .1.5: Այլ յայս ամենայն ո՛չ հայեցեալ ոմանց՝ սրբագրեալ են իբրև խորթ ինչ զբանս սրբոյս, և տպագիրքն զՀետ երթեալ նոցա եղեալ են Հաւատարմութեանց սէր. և պատրանաց խաբէութեան նոցա նպաստէ և Հին գրութիւնն, յորմէ զաւտար մթութեանցն՝ արարեալ են Հաւատարմութեանց, որ օտար է ամենեւին ի մտաց սրբոյս:

4. Իսկ եթէ այսպէս զամենայն մի ըստ միողէ քննեսցես, յերկարեն յոյժ. քանզի ի նոյն իսկ ի բանն Բ .2. փոխանկ զնելոյ ի յուսահատութեանէն աւուր շնորհեսցէս, որպէս եղաք ի մերումս աստ ըստ ամենայն ձեռագիր օրինակաց, եղեալ էին, ի յուսահատութեան աւուրն աւետարան շնորհեսցես: Ըստ այսմ՝

- Փոխանակ զնելոյ,
 - Բ. 3: զփառս Հերաց.
 - Գ. 2: առ ամենայն Հասակ.
 - 3: այս անձին բանի.
 - Դ. 1: երբէք խարելի.
 - Ձ. 4: ընդ ինքեամբք.
 - 4: ո՛չ անհատեսցէ.
 - Ժ. 2: զնեալ աստանօր.
 - 2: յաւէտ մեծացիս.
 - 2: թէ Հաւատաս ի նա՛.
 - Ժբ. 1: կապանօք բերիմ:
- Եւ այլ այսպիսի և առաւել քան զոտս վնասակար այլայլութիւնք մինչև զվիսնան մատենիս բազում են կարի յոյժ, զորս անհնար է մեզ թուել աստանօր: Թո՞ղ զայլ անհամար փոքր փոքր բիւրագիր այլայլութիւնս. քանզի անդրէն սկսեալ յառաջնոցն՝ ի Բանն Ե. 4.
- Փոխանակ զնելոյ,
 - որդի աստուծոյ կենդանուոյ.
 - Ձ . 1 : զամբարեալ շարաւ.
 - է . 3 : դատաւորին ճշմարտի յնդիմնացայց.

և դեալ էին.
որդի աստուծոյ բարձրելոյ:
զշարաւ ամբարեալ:
դատաւորին յանդիման եղէց

Ը . 1 : սաստիկ կշտամբանքն
Թ . 1 : զի եթէ զլիճ մի ծովուց

սաստիկ են կշտամբանքն:
զի թէ զլիճսն ծովուց:

Եւ այլ ասպիսիք ևս անթուելիք, որք թէպէտ և փոքունք, սակայն իբրև զաղուեսունս երգոց երգոյն 2.15, սպականիչք ամենեւին գեղեցկութեան այգույս պերճութեան բանից մատենիս:

5. Իսկ տարբերութիւնք և այլայլութիւնք բառիցն և բանից՝ թիւր միաւորութեամբ կամ սխալ բաժանմամբ նոցա, և խանգարումն կետադրութեանց և տեսաւորութեանց՝ թէ ի տպագիրս և թէ ի ձեռագիրս ինչ՝ մածեալ էր զմատենան առհասարակ, և պատեալ զամենայն բանիւք մատենիս՝ իբրև զբաղեղն վնասակար՝ զգեղեցիկ տնկովք, և ցամաքեալ զպտուղ խորին իմաստից նոցա:

Որպէս ի Բանն Գ. 2. փոխանակ անջատմամբ զնելոյ գե՛ր ելոց, միաւորելով եղեալ էին գերելոց. ահա ո՛րչափ օտար է ծառայն՝ ի տեսունէն, այնչափ վտար է և բանդ տպագրութեանց ի բանէն Հեղինակիս: Ըստ այսմ ունիս տեսանել միաւորութեամբ շփոթութիւնս. որպէս ի բանն ԽԸ. 5, ուր փոխանակ զնելոյ որ ո՛չ այնքան մեղաւ, որքան զՂԶացաւ, խառնութեամբ եղեալ էին որ ոչ այնքան մեղաւոր քան զՂԶացաւ:

ԿԴ . 3 : որով տացէ ըլխեսցէ.
ՂԳ . 4 : զօրութիւն տեսուն մատչելի.

որոտասցեք ըլխեսցէ:
զօրութիւն անմատչելի. և այլն:

Իսկ զսորին հակառակն՝ բազում ուրեք մի բանն և մի բանն Հատեալ էր յերկուս՝ չարանար տրոհմամբ: Որպէս ի բանն ԻԷ.3. փոխանակ զնելոյ ըստ բուն օրինակաց անդամունս անհնարաւորս, որ է ասել մտածմունս՝ կամ Հոգս անհնարինս, որպէս ունիս տեսանել ի վիսնանի մատենիս՝ ի կարգս մեկնութեան բառից, եղեալ էին անդ ամունս անհնարաւորս . որ է անտեղի: Ըստ այսմ զիպեալ էր բազում ուրեք և բառից բարդելոց՝ ի սրբոյս. որպէս անդանձառք . անդուղեկցութիւն . նախայլք. և այլք: Նմանապէս և ի կետադրութիւնս էին անթիւ ազաւազանք. որպէս ի Բանն Ա. 1, փոխանակ զնելոյ ելցէ՛ ի խորոց աստի զգայլութեանց խորհրդակիր սենեկին՝ վաղվաղակի ժամանել առ քեզ՝ կամաւորականս նուէր . եղեալ էին ելցէ՛՝ ի խորոց աստի զգայլութեանց խորհրդակիր սենեկին՝ վաղվաղակի ժամանել առ քեզ: Կամաւորական նուէր: Եւ ահա՛ յայտնի է, զի խախտեալ է ի սմա և ի Հիմանց տապալեալ՝ գեղեցիկ կազմած պարբերութեան բանիս, և ի բուն իմաստիցն իսպառ օտարացեալ . քանզի նուէրն՝ որ է տէր ելցէ՛ բային, Հատուածեալ և վտարեալ է ի տուն օտար տեսաւորութեամբ և զլխագրով: Ըստ այսմ է ի նմին Ա. 2. վերակացումն անդ ուրեմն. վերացումն: Անդ ուրեմն: և Ձ. 4 կանոնին կացցէ, իմացի . կանոնին կացցէ: Իմացի. և յայլ բազում տեղիս: Եւ զսորին հակառակն՝ բազում ուրեք զանջատ տունս բանիցն միաւորեալ, կամ զպիտանի կէտսն բարձեալ՝ աղարտեալ էին զբանս ամենեւին, զորոց մի ըստ միջոցէ ասել անհնարին է, և չէ իսկ պիտոյ մտաղիր ընթերցողին. բայց միայն նշանակեսցուք զմի ի բիւրուց: Ի բանն ՄԱ. 1 այսպէս ասէ սուրբս, առ երկրածին ոք պաղատեսցայց եթէ, ընդունայն է աղաղակելն. ուր մի միայն ստորակէտ առաջի եղեալ թէ՛ական շողկապիս եթէ՛՝ կերպարանէ գտեսութիւն մտաց բանին՝ յեղանակեալ յոճ չքնաղ գերահանձար սրբոյս. որպէս թէ՛ ասէր, եթէ՛ առ երկրածին ոք պաղատեսցայց, ընդունայն է աղաղակելն: Իսկ ի տպագիրս և յայլ ձեռագիրս ինչ՝ բարձեալ զնոյն ստորակէտն ի տեղուղէն, կորուսեալ է բանն և մեռեալ զլխովին իբրև անկերպաւոր ինչ ուրուական վիժած արգանդի մտաց. և այլ սոյնպիսի բազում: Ահա՛ յայտնիկ հայեցեալ յորդորեցաք ի սպասաւորութիւնս յայս ուղղագրութեան մատենիս: Իսկ թէ որպիսի՛ ինչ աշխատասիրեցաք ի սոյն՝ ասասցուք յառաջիկայք:

բ. Յուղղագրութեան մատենիս՝ ո՛չ ինչ է մէնջ, և ո՛չ ինչ ըստ հաճոյից կամայ մերոց սրբագրեցաք . քանզի այնպիսի սրբագրութիւն վրոց սրբոց Հարց և վարք

դասակարգ, առանց համեմատելու դնոսա ընդ հաւատարիմ օրինակաց ո՛չ է սրբութիւն նոցա յօտարոտի խտանից, այլ գրեթէ սեղանագրեմ յանդգնութիւն:

Վասն այսորիկ աշխատասիրութիւնս առաջիկայ ո՛չ կատարեցաւ միոյ ուրուք կամ երկուց ոմանց սպասաւորութեամբ. և ո՛չ վճարեցաւ երկից կամ չորից ամաց շրջանակութեամբ. և ո՛չ հաւատեցաւ ընդ հինգ կամ ընդ տասն օրինակաց համեմատութեամբ. այլ գլխովին նպաստիւք ազնւագարմ մահտեսի Գասպար ամիրայի Մուրաբանաց. որ ըստ բարեշնորհ աստուածապաշտութեան իւրոյ՝ ի մանկութենէ հետէ բարբառաց զփափաքանօք բորբոքեալ ի սէր լուսաւոր բանից սրբոյս յօժարեցաւ տպագրել զսոյնս՝ օրինաւոր ուղղագրութեամբ ի յիշատակ բարի նախնեաց և ծնողացն հանգուցելոց, և կենդանեացն իւրոց ազգայնոց՝ բարեսուն բարեմասնութեանն վիճակելոց. ուստի և ի քաղաքաց քաղաքաց Հայաստանեայց՝ և ի բուն իսկ ի Մոկաց դաւառէ՝ մեծաջան փութով գտեալ օրինակս ընտիրս Հնազոյնս՝ անձեռամբն, յորոց գերկուցն՝ սրբոյս իսկ պնդելին լինել ձեռաց գիր, յորս էր՝ որ զմատենանս, և էր որ զտարբերութեանց նոցա զզանազանութիւնս առձեռն յերեալ, մինչև թիւ օրինակացն Հնոց և նորոց ժամանել ի Համար երբեակ տասան, և խրատուեաց զմեզ աշխատակցիլ: Ընդ որս համեմատելով զոր ինչ Համաձայնութիւն ընտիր օրինակաց՝ ըստ յարմարութեան բանին՝ ըստ դատման ներհուն եղևոց առաջնորդեցին, գայն և եթ կալաք, որպէս օրէն է հաւատարիմ սպասաւորի հարադատութեան բանից սրբոց. և այն յերկար և մտալոյց քննութեամբ, ապաստանեալ առաւել քան զամենայն օգնութիւն մարդկային մտաց՝ ի զօրաւոր բարեխօսութիւն սրբոյս:

